

July 2017

Համաշխարհային Ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ձեռնարկ

ՄԱԿ-Ի ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՅՈՒՆԵՍԿՕ



Համաշխարհային
Ժառանգության
կոնվենցիա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործառնական ձեռնարկը պարբերաբար վերանայվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընդունած որոշումների արտահայտման նպատակով: Խնդրում ենք համոզվել, որ Դուք օգտագործում եք *գործառնական ձեռնարկի* վերջին տարբերակը՝ ստուգելով դրա ամսաթիվը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի՝ ստորև ներկայացվող կայքէջում:

Գործառնական ձեռնարկները (անգլերեն կամ ֆրանսերեն), Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տեքստը (հինգ լեզուներով), ինչպես նաև Համաշխարհային ժառանգությանը վերաբերող այլ փաստաթղթերը և տեղեկույթը հասանելի են Համաշխարհային ժառանգության կենտրոնում՝

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն
7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352
Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 4568 1104

Հղումներ. <http://whc.unesco.org/> <http://whc.unesco.org/en/guidelines> (English)
 <http://whc.unesco.org/fr/orientations> (French)

ՍԵՂՄԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	
I.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
I. A.	Գործառնական ձեռնարկ.....1-3
I. B.	Համաշխարհային ժառանգության կոնվենցիան.....4-9
I. C.	Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունները.....10-16
I. D.	Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունների գազաթնաժողովը.....17-18
I. E.	Համաշխարհային ժառանգության կոմիտեն.....19-26
I. F.	Համաշխարհային ժառանգության կոմիտեի քարտուղարությունը (Համաշխարհային ժառանգության կենտրոն).....27-29
I. G.	Համաշխարհային ժառանգության կոմիտեի խորհրդատվական մարմինները.....30-37
	ԻԿԿՈՒՄ.....32-33
	ԻԿՕՄՕՍ.....34-35
	IUCN.....36-37
I. H.	Այլ կազմակերպություններ.....38
I. I.	Համաշխարհային ժառանգության պաշտպանության գործընկերներ.....39-40
I. J.	Այլ կոնվենցիաներ, առաջարկություններ և ծրագրեր.....41-44
II.	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
II. A.	Համաշխարհային ժառանգության սահմանումը.....45-43
	Մշակութային և բնության ժառանգություն.....45
	Մշակութային և բնության խառը ժառանգություն.....46
	Մշակութային տեղանքապատկերներ (լանդշաֆտներ).....47
	Շարժական ժառանգություն.....48
	Համաշխարհային բացառիկ արժեք.....49-53
II. B.	Ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ.....54-61
	Համընդհանուր ռազմավարությունը Համաշխարհային ժառանգության ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ ցանկ ունենալու համար.....55-58
	Այլ միջոցառումներ.....59-61
II. C.	Նախնական ցանկ.....62-76
	Ընթացակարգը և ձևաչափը.....62-69
	Նախնական ցանկերը՝ որպես պլանավորման և գնահատման գործիք.....70-73
	Աջակցությունը և կարողությունների կառուցումը անդամ պետությունների համար նախնական ցանկերի նախապատրաստման նպատակով.....74-76

II. D.	Համաշխարհային ժառանգության արժեքի գնահատման չափորոշիչը.....	77-78
II. E.	Ամբողջականություն և/կամ իսկություն.....	79-95
	Իսկություն.....	79-86
	Ամբողջականություն.....	87-95
II. F.	Պահպանություն և կառավարում.....	96-119
	Օրենսդրական, կանոնակարգիչ և պայմանագրային միջոցներ պաշտպանությունն ապահովելու համար.....	98
	Արդյունավետ պաշտպանության համար սահմանները.....	99-102
	Պահպանական գոտիներ.....	103-107
	Կառավարման համակարգեր.....	108-118
	Կայուն օգտագործում.....	119
III.	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	
III. A.	Անվանակարգերի նախապատրաստումը.....	120-128
III.B.	Անվանակարգերի ձևաչափը և բովանդակությունը.....	129-133
	1. Հուշարձանի նույնականացումը.....	132.1
	2. Հուշարձանի նկարագրությունը.....	132.2
	3. Ընդգրկման հիմնավորումը.....	132.3
	4. Պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները.....	132.4
	5. Պահպանություն և կառավարում.....	132.5
	6. Մոնիթորինգ.....	132.6
	7. Փաստաթղթավորում.....	132.7
	8. Պատասխանատու անձանց կոնտակտային տվյալներ.....	132.8
	9. Անդամ պետության անունից ստորագրությունը.....	132.9
	10. Պահանջվող կրկնօրինակների քանակը (ներառյալ կից ներկայացվող քարտեզները).....	132.10
	11. Թղթային և էլեկտրոնային ձևաչափ.....	132.11
	12. Առաքում.....	132.12
III. C.	Տարբեր հուշարձանների անվանակարգերի նկատմամբ պահանջները.....	134-139
	Անդրսահմանային հուշարձաններ.....	134-136
	Սերիական հուշարձաններ.....	137-139
III. D.	Անվանակարգերի գրանցում.....	140-142
III. E.	Խորհրդատվական մարմինների կողմից անվանակարգերի գնահատումը.....	143-151
III. F.	Անվանակարգերի հետ կանչումը.....	1152
III. G.	Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումը.....	153-160
	Ընդգրկում.....	154-157
	Չներառելու մասին որոշումը.....	158
	Անվանակարգերի լրամշակում.....	159

	Անվանակարգերի քննարկման հետաձգում.....	160
III. H.	Արտակարգ պայմաններում քննարկվող անվանակարգերը.....	161-162
III. I.	Սահմանների փոփոխություն՝ համաձայն այն չափորոշիչի, որով հիմնավորվել է ընդգրկումը, կամ Համաշխարհային ժառանգության հուշարձանի անվանմանը համապատասխան.....	163-167
	Սահմանների ոչ էական փոփոխություններ.....	163-164
	Սահմանների էական փոփոխություններ.....	165
	Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար կիրառված չափորոշիչի փոփոխություններ.....	166
	Համաշխարհային ժառանգության հուշարձանի անվան փոփոխություն.....	167
III. J.	Ժամանակացույց – վերանայում.....	168
IV.	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	
IV. A.	Արձագանքող մոնիթորինգ169-176	
	Արձագանքող մոնիթորինգի սահմանումը.....	169
	Արձագանքող մոնիթորինգի նպատակը.....	170-171
	Անդամ պետություններից և/կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը.....	172-174
	Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումը.....	175-176
IV. B.	Վտանգված Համաշխարհային ժառանգության ցանկը.....177-191	
	Վտանգված Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման ուղեցույցը.....	177
	Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցուցակում ընդգրկելու չափորոշիչը.....	178-182
	Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու ընթացակարգը.....	183-189
	Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցուցակում ընդգրկված հուշարձանների պապանվածության վիճակի կանոնավոր վերանայումը.....	190-191
IV. C.	Համաշխարհային ժառանգության ցանկից հուշարձանները վերջնական դուրս հանելու ընթացակարգը.....192-198	
V.	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ	
V. A.	Առարկան.....199-202	
V. B.	Ընթացակարգը և ձևաչափը.....203-207	
V. C.	Գնահատումը և հետագա ընթացքը.....208-210	
VI.	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱՐԲԵՐԵԼՈՒ ԽՐԱԽՈՍՈՒՄԸ	
VI. A.	Նպատակները.....211	
VI. B.	Կարողությունների կառուցումը և հետազոտությունը.....212-216	
	Վերապատրաստման համաշխարհային ռազմավարությունը.....	213

վերապատրաստման ազգային ռազմավարությունները և տարածաշրջանային համագործակցությունը.....	214
Հետազոտություն.....	215
Միջազգային աջակցություն.....	216
VI. C. Հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում և կրթություն.....	217-222
Հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում.....	217-218
Կրթություն.....	219
Միջազգային աջակցություն.....	220-222
VII. ՀԱՄԱՀԵԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	
VII. A. Համաշխարհային ժառանգության հիմնադրամը.....	223-224
VII. B. Տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների համախմբումն ու գործընկերությունը՝ ի աջակցություն Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի.....	225-232
VII. C. Միջազգային աջակցությունը.....	233-235
VII. D. Միջազգային աջակցության սկզբունքները և առաջնահերթությունները.....	236-240
VII. E. Ամփոփիչ աղյուսակը.....	241
VII. F. Ընթացակարգը և ձևաչափը.....	242-246
VII. G. Միջազգային աջակցության հայտերի գնահատումը և հաստատումը.....	247-254
VII. H. Պայմանագրային կարգավորումներ.....	255
VII. I. Միջազգային աջակցության գնահատումը և հետագա ընթացքը.....	256-257
VIII. ՀԱՄԱՀԵԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ	
VIII. A. Նախաբան.....	258-265
VIII. B. Կիրառելիություն.....	266
VIII. C. Անդամ պետությունների պատասխանատվությունը.....	267
VIII. D. Համաշխարհային ժառանգության տարբերանշանի պատշաճ կիրառման աստիճանի բարձրացումը.....	268-274
Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման փաստը հավերժացնող տախտակների արտադրությունը.....	269-274
VIII. E. Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառման սկզբունքները.....	275
VIII. F. Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառումը լիազորելու ընթացակազմը Ազգային իշխանությունների պարզեցված պայմանագիրը.....	276-278
Բովանդակության որակի նկատմամբ հսկողության պահանջի պայմանագիր.....	276-277
Հաստատման ձևաչափի բովանդակությունը.....	278
VIII. G. Անդամ պետությունների իրավունքը որակական հսկողության իրականացման հարցում.....	279
IX. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	
IX. A. Քարտուղարության կողմից արխիվացված տեղեկույթը.....	280-284
IX. B. Համաշխարհային ժառանգության կոմիտե անդամների և այլ անդամ պետությունների համար յուրահատուկ տեղեկույթ.....	285-287
IX. C. Հանրության համար հասանելի տեղեկույթ և հրապարակումներ.....	288-290

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1 Վավերացման/միացման տիպային գործիք
Դրույթների ընդունման մասին տիպային գործիք
- Հավելված 2A Նախնական ցանկի ներկայացման ձևաչափը
- Հավելված 2B Նախնական ցանկի ներկայացման ձևաչափը անդրազգային և
անդրսահմանային անվանակարգերի համար
- Հավելված 3 Համաշխարհային ժառանգության ցանկում յուրահատուկ տիպի հուշարձանների
ընդգրկման ուղեցույց Հյուսիսային Աֆրիկայի ժայռապատկերների հուշարձանները
(2002 թ.) <http://www.icomos.org/studies/sarockart.htm>
- Հավելված 4 Իսկությունը՝ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի մասով
- Հավելված 5 Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկման
անվանակարգի ձևաչափը
- Հավելված 6 Խորհրդատվական մարմինների գնահատման ընթացակարգերը
անվանակարգերի համար
- Հավելված 7 Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման
պարբերական զեկույցի ձևաչափը
- Հավելված 8 Միջազգային աջակցության հայտի ձևաչափը
- Հավելված 9 Խորհրդատվական մարմինների կողմից միջազգային աջակցության հայտերի
գնահատման չափորոշիչները
- Հավելված 10 Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը
- Հավելված 11 Համաշխարհային ժառանգության հուշարձանների փոփոխությունները
- Հավելված 12 Խորհրդատվական մարմինների գնահատումներում փաստացի սխալների
ներկայացման ձևաչափը
- Հավելված 13 Անդամ պետությունների կողմից պահպանվածության վիճակի
զեկույցների ներկայացման ձևաչափը
- Հավելված 14 Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառման աղյուսակը

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ

ՍԵՂՄԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԴոԿոՄոՄո (DoCoMoMo)	Ժամանակակից շարժման հուշարձանների և վայրերի փաստաթղթավորման և կոնսերվացման միջազգային կոմիտե	International Committee for the Documentation and Conservation of Monuments and Sites of the Modern Movement
ԻԿԿՌՕՄ (ICCROM)	Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոն	International Centre for the Study of the Preservation and Restoration of Cultural Property
ԻԿՕՄՕՍ (ICOMOS)	Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ	International Council on Monuments and Sites
ԻՖԼԱ (IFLA)	Տեղանքապատկերային (լանդշաֆտային) ճարտարապետների միջազգային ֆեդերացիա	International Federation of Landscape Architects
Այ Յու Սի Էն (IUCN)	Բնության և բնական պաշարների կոնսերվացման միջազգային միություն	International Union for Conservation of Nature and Natural Resources
Այ Յու Ջի Էս (IUGS)	Երկրաբանական գիտությունների միջազգային միություն	International Union of Geological Sciences
ՄԱԲ (MAB)	ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու և կենսոլորտի ծրագիր	Man and the Biosphere programme of UNESCO
ՀԿ (NGO)	Հասարակական կազմակերպություն	Non-governmental organization
ԹԻՍՍԻՀ (TICCIH)	Արդյունաբերական ժառանգության պահպանության միջազգային կոմիտե	International Committee for the Conservation of the Industrial Heritage
ՅՈՒՆԷՊ (UNEP)	ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր	United Nations Environment Programme
ՅՈՒՆԷՊ – ՀԿՄԿ (UNEP-WCMC)	Համաշխարհային կոնսերվացման մոնիթորինգային կենտրոն	World Conservation Monitoring Centre (UNEP)
ՅՈՒՆԵՍԿՕ (UNESCO)	ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն	United Nations Educational, Scientific and Cultural Organization

I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I.A Գործառնական ձեռնարկ

1. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ձեռնարկը (հետայսու՝ գործառնական ձեռնարկ) նպատակ ունի խթանելու «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի (հետայսու՝ Համաշխարհային ժառանգության կոնվենցիա կամ կոնվենցիա) կիրարկումը՝ սահմանելով ընթացակարգեր՝
 - ա) Համաշխարհային ժառանգության և Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկերում հուշարձանների ընդգրկման,
 - բ) Համաշխարհային ժառանգության հուշարձանների պաշտպանության և կոնսերվացման,
 - գ) Համաշխարհային ժառանգության հիմնադրամի շրջանակներում միջազգային աջակցության տրամադրման,
 - դ) կոնվենցիային նպաստող ազգային և միջազգային աջակցության համախմբման համար:
2. Գործառնական ձեռնարկը պարբերաբար վերանայվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումներն արտացոլելու նպատակով:
3. Գործառնական ձեռնարկի հիմնական օգտագործողներն են՝
 - ա) Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունները,
 - բ) Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության միջկառավարական կոմիտեն, այսուհետ՝ Համաշխարհային ժառանգության կոմիտե կամ կոմիտե,
 - գ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնը՝ որպես Համաշխարհային ժառանգության կոմիտեի քարտուղարություն, այսուհետ՝ քարտուղարություն,
 - դ) Համաշխարհային ժառանգության կոմիտեի խորհրդատվական մարմինները,
 - ե) հուշարձանների կառավարիչները, մասնակիցները և այլ գործընկերներ, ովքեր ներգրավված են Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանության գործում:

Գործառնական ձեռնարկի մշակման ժամանակագրությունը հասանելի է <http://whc.unesco.org/en/guidelines-historical> հասցեով

I. B. Համաշխարհային ժառանգության կոնվենցիան

4. Մշակութային և բնության ժառանգությունը ոչ միայն յուրաքանչյուր ազգի, այլև ամբողջ մարդկության անգին և անփոխարինելի արժեքների շարքին է դասվում: Պահպանվածության վիճակի վատթարացման կամ անհետացման միջոցով նման արժեքներից յուրաքանչյուրի կորուստը նշանակում է աշխարհի բոլոր ժողովուրդների աղքատացում: Նման ժառանգությունը, շնորհիվ իր բացառիկ որակական արժանիքների, կարող է դիտարկվել որպես Համաշխարհային բացառիկ արժեք և արժանանալ հատուկ պաշտպանության շարունակաբար աճող վտանգներից:
5. Աշխարհի ժառանգության հավուր պատշաճի նույնականացումը, պահպանությունը, կոնսերվացումը և հանրահռչակումը հնարավորինս ապահովելու նպատակով 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետություններն ընդունեցին Համաշխարհային ժառանգության կոնվենցիան: Կոնվենցիան նախատեսում էր Համաշխարհային ժառանգության կոմիտեի և Համաշխարհային ժառանգության

հիմնադրամի հաստատում: Եվ կոմիտեն, և՛ հիմնադրամը սկսեցին գործել 1976 թ.-ից ի վեր:

6. 1972 թ.-ին կոնվենցիայի ընդունումից սկսած, միջազգային հանրությունը որդեգրել է «կայուն զարգացման հայեցակարգը»: Բնության և մշակույթի ժառանգության պահպանությունը և կոնսերվացումը կարևոր ներդրում է կայուն զարգացման գործի մեջ:
7. Կոնվենցիան նպատակ ունի նույնականացնելու, պաշտպանելու, կոնսերվացնելու, ներկայացնելու և փոխանցելու համաշխարհային բացառիկ արժեք ունեցող մշակութային և բնության ժառանգությունը գալիք սերունդներին:
8. Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման համար սահմանվել են չափորոշիչներ և պայմաններ, որպեսզի հնարավոր լինի գնահատել հուշարձանների համաշխարհային բացառիկ արժեքը և ուղղորդել անդամ պետություններին Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանության և կառավարման հարցում:
9. Եթե Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանին սպառնում են լուրջ և առանձնահատուկ վտանգներ, ապա կոմիտեն դիտարկում է այն Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ներառելու հարցը: Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու հիմնավորման ընթացքում օգտագործված Համաշխարհային բացառիկ արժեքի ոչնչացման դեպքում կոմիտեն քննության է առնում հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկից հանելու հարցը:

I. C. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունները

10. Պետություններին կոչ է արվում միանալ կոնվենցիային: Վավերացման/միացման և ուժի մեջ մտնելու մոդելները ներկայացված են 1-ին հավելվածում (ստորագրված տարբերակի բնօրինակը պետք է ուղարկվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին):
11. Կոնվենցիային միացած անդամ պետությունների ցանկը հասանելի է <http://whc.unesco.org/en/statesparties> հասցեով:
12. Կոնվենցիայի միացած անդամ պետություններին կոչ է արվում ապահովել մասնակցության լայն շրջանակը, այդ թվում՝ հուշարձանի կառավարիչների, տեղական, մարզային և համայնքային կառավարման մարմինների, տեղական համայնքների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և գործընկերների ներգրավումը Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտման, անվանակարգային փաթեթների պատրաստման և պահպանության գործում:
13. Կոնվենցիայի անդամ պետությունները պետք է քարտուղարություն ներկայացնեն կոնվենցիայի կիրարկման համար կառավարական մարմինների ազգային պատասխանատվությունների անունները և հասցեները, որպեսզի պաշտոնական գրագրության պատճենները և փաստաթղթերն անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի փոխանցել նրանց: Հասցեների ցանկը հասանելի է <http://whc.unesco.org/en/statespartiesfocalpoints> հասցեով:
14. Անդամ պետություններին կոչ է արվում կանոնավոր հիմունքներով կազմակերպել մշակութային և բնության ժառանգության փորձագետների հանդիպումներ՝ քննարկելու կոնվենցիայի կիրարկման ընթացքը: Անդամ պետությունները կարող են անհրաժեշտության դեպքում ներգրավել նաև խորհրդատվական մարմինների ներկայացուցիչներին կամ այլ փորձագետների:

15. Ամբողջությամբ հարգելով պետությունների ինքնիշխանությունը՝ որոնց տարածքում տեղակայված է մշակութային և բնության ժառանգությունը, կոնվենցիայի անդամ պետություններն ընդունում են միջազգային հանրության ընդհանուր շահագրգռվածությունը համագործակցելու ժառանգության պահպանության ուղղությամբ: Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունները պատասխանատվություն են կրում՝
- ա) իրենց տարածքում հայտնաբերված մշակութային և բնության ժառանգության բացահայտման, անվանակարգերի նախապատրաստման, պահպանության, կոնսերվացման, ներկայացման և գալիք սերունդներին փոխանցման համար, ինչպես նաև համապատասխան հայցի հիման վրա աջակցում են այլ անդամ պետություններին այդ առաջադրանքների իրականացման հարցում,
- բ) ընդունում են համընդհանուր քաղաքականություն՝ համայնքի կյանքում ժառանգության գործառույթի ապահովման նպատակով,
- գ) ժառանգության պահպանությունը ներառում են, ընդգրկում պլանավորման ծրագրերում,
- դ) ձևավորում են ժառանգության պահպանության, կոնսերվացման և հանրա-հոշակման ծառայություններ,
- ե) զարգացնում են գիտական և տեխնիկական հետազոտությունների իրակա-նացումը՝ բացահայտելու այն գործողությունները, որոնք կարող են կանխել ժառանգությանը սպառնացող վտանգները,
- զ) իրականացնում են անհրաժեշտ օրենսդրական, գիտական, տեխնիկական, վարչական և ֆինանսական միջոցառումներ՝ ժառանգության պաշտպանության նպատակով,
- է) խթանում են ազգային կամ տարածաշրջանային կենտրոնների հաստատման կամ զարգացման գործընթացները՝ ուղղված ժառանգության պահպանությանը, կոնսերվացմանը և հանրահոշակմանը, ինչպես նաև գիտական հետազոտու-թյունների իրականացմանն այդ ոլորտներում,
- ը) չեն ձեռնարկում այնպիսի դիտավորյալ միջոցառումներ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի վնասել իր կամ կոնվենցիայի այլ անդամի տարածքում գտնվող ժառանգությունը,
- թ) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար Համաշ-խարհային ժառանգության կոմիտեին են ներկայացնում համապատասխան հուշարձանների ցանկը (այսուհետ՝ նախնական ցանկ),
- ժ) կանոնավոր ներդրումներ են իրականացնում Համաշխարհային ժառան-գության հիմնադրամ, ինչը որոշվել է կոնվենցիայի անդամ պետությունների գագաթնաժողովի կողմից,
- ժա) քննարկում և խրախուսում են ազգային, պետական և մասնավոր հիմնադրամների կամ ասոցիացիաների հիմնադրումը՝ Համաշխարհային ժառանգության պաշտպանությանն ուղղված նվիրատվությունները խրախուսելու համար,
- ժբ) աջակցում են Համաշխարհային ժառանգության հիմնադրամի համար միջազգային մակարդակով կազմակերպված դրամահավաք արշավներին,
- ժգ) կիրառում են կրթական և տեղեկատվական ծրագրերը՝ հանրության մեջ կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներով մշակութային և բնության ժառանգության հանդեպ հարգանքը ամրապնդելու համար, ինչպես նաև հանրությանն իրազեկում են ժառանգությանը սպառնացող վտանգների մասին,
- ժդ) Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացնում են տեղե-կատվություն Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման և հուշարձանների պահպանվածության վիճակի մասին:
16. Անդամ պետություններին կոչ է արվում մասնակցել Համաշխարհային ժառանգության կոմիտեի և դրա խորհրդատվական մարմինների նիստերին:
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 6(1)-ին հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 4-րդ և 6(2)-րդ հոդվածներ
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 5-րդ հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 6(3)-րդ հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 11(1)-ին հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 16(1)-ին հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 17-րդ հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 18-րդ հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 27-րդ հոդված
- Համաշխարհային ժառան-գության կոնվենցիայի 29-րդ հոդված: Բանաձևն ընդունվել է անդամ պետությունների 11-րդ գագաթնաժողովի ընթացքում (1997 թ.)
- Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընթացակարգի 8.1-ին կանոն

I. D Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունների գազաթնաժողովը

17. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունների գազաթնաժողովը գումարվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի վեհաժողովի նիստի ընթացքում: Գազաթնաժողովն իր հանդիպումը կազմակերպում է կանոնակարգին համապատասխան, որը հասանելի է <http://whc.unesco.org/en/garules> հասցեով:
18. Գազաթնաժողովը որոշում է Համաշխարհային ժառանգության հիմնադրամ կատարվելիք և բոլոր անդամ պետությունների համար ընդունելի ներդրումների միասնական տոկոսադրույքը և ընտրում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամներին: Եվ գազաթնաժողովը, և՛ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վեհաժողովը Համաշխարհային ժառանգության կոմիտեից ստանում են զեկույց իրեն իրականացրած գործողությունների մասին:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 8(1)-ին հոդված, Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընթացակարգի 49-րդ կանոն

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 8(1), 16(1) և 29-րդ հոդվածներ, Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընթացակարգի 49-րդ կանոն

I. E Համաշխարհային ժառանգության կոմիտեն

19. Համաշխարհային ժառանգության կոմիտեն բաղկացած է 21 անդամից և հանդիպում է տարին մեկ անգամ (հունիս/հուլիս): Այն ձևավորում է իր բյուրոն, որի հանդիպումները գումարվում են կոմիտեի նիստերի ընթացքում՝ առանց սահմանափակման և ելնելով անհրաժեշտությունից: Կոմիտեի և դրա բյուրոյի կազմը հասանելի է <http://whc.unesco.org/en/committeemembers> հասցեով:
20. Կոմիտեն իր հանդիպումները կազմակերպում է իր կանոնակարգին համապատասխան, որը հասանելի է <http://whc.unesco.org/committeerules> հասցեով:
21. Կոմիտեի անդամների պաշտոնավարման ժամկետը վեց տարի է, սակայն անկողմնակալ ներկայացուցչությունը և հերթագայությունն ապահովելու նպատակով անդամ պետություններին գազաթնաժողովի կողմից կոչ է արվում կամավորության հիմունքով դիտարկել պաշտոնավարման ժամկետը վեց տարուց մինչև չորս տարի նվազեցնելու հնարավորությունը, ինչպես նաև չի խրախուսվում անընդմեջ պաշտոնավարելու ձգտումը:
22. Այն պետությունների համար, որոնք չունեն հուշարձաններ՝ գրանցված Համաշխարհային ժառանգության ցանկում, կարող են պահվել որոշակի քանակի տեղեր՝ գազաթնաժողովին հաջորդող նիստի ընթացքում կոմիտեի որոշման հիման վրա:
23. Կոմիտեի որոշումները պետք է հիմնված լինեն անկողմնակալ և գիտական ուսումնասիրությունների վրա, և նրա անունից որևէ գնահատում ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է համակողմանի և պատասխանատվությամբ ուսումնասիրել: Կոմիտեն ընդունում է, որ նման որոշումները կախված են՝
- a) ուշադրությամբ պատրաստված փաստաթղթերից,
 - b) մանրամասն ձևակերպած և արժանահավատ ընթացակարգերից,
 - c) որակավորում ունեցող փորձագետների գնահատումից,
 - d) անհրաժեշտության դեպքում փորձագետների երաշխավորագրերի օգտագործումից:
24. Անդամ պետությունների հետ համագործակցելով՝ կոմիտեի հիմնական գործառնություններն են՝

Համաշխարհային ժառանգության կոմիտեի հետ կարելի է կապվել քարտուղարության՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնի միջոցով:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 9(1)-րդ հոդված: Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 8(2)-րդ հոդված և Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ պետությունների 7-րդ (1989 թ.), 12-րդ (1999 թ.) և 12-րդ (2001 թ.) գազաթնաժողովների բանաձևեր

Անդամ պետությունների գազաթնաժողովի կանոնակարգ ընթացակարգի 14.1-րդ կետ

- a) նախնական ցանկի հիման վրա և անդամ պետությունների ներկայացրած անվանակարգային փաթեթներից բացահայտել համաշխարհային բացառիկ արժեք ունեցող մշակութային և բնության հուշարձանները, որոնք անհրաժեշտ է պաշտպանել կոնվենցիայով և դրանք ընդգրկել Համաշխարհային ժառանգության ցանկում,
- b) ուսումնասիրել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակը արձագանքող մոնիթորինգի (տե՛ս Գլուխ IV) և պարբերական զեկույցների ընթացակարգերի (տե՛ս Գլուխ V) միջոցով,
- c) որոշել, թե Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված որ հուշարձանը պետք է ներառել կամ դուրս հանել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկից,
- d) որոշել՝ արդյո՞ք հուշարձանը պետք է հանել Համաշխարհային ժառանգության ցանկից, թե ոչ (տե՛ս Գլուխ IV),
- e) սահմանել ընթացակարգ, համաձայն որի՝ պետք է քննության առնվեն միջազգային աջակցության հայտերը, ինչպես նաև կազմակերպվեն ուսումնասիրություններ և խորհրդատվություններ, որոնք անհրաժեշտ են որոշում ընդունելու համար (տե՛ս Գլուխ VII),
- f) որոշել, թե ինչպես պետք է օգտագործվեն Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցները՝ անդամ պետությունների համաշխարհային բացառիկ արժեք ունեցող հուշարձանների պաշտպանության գործին հնարավորինս արդյունավետ աջակցելու համար,
- g) միջոցներ փնտրել Համաշխարհային ժառանգության հիմնադրամի ընդլայնման համար,
- h) իր իրականացրած աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնել անդամ պետությունների գազաթնաժողովին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վեհաժողովին,
- i) պարբերաբար վերանայել և գնահատել կոնվենցիայի կիրարկումը,
- j) վերանայել և ընդունել գործառնական ձեռնարկը:
25. Կոնվենցիայի կիրարկումը խթանելու նպատակով կոմիտեն մշակում է ռազմավարական նպատակներ. դրանք պարբերաբար վերանայվում են կոմիտեի խնդիրներին և նպատակներին համապատասխանեցնելու համար, որպեսզի ապահովվի Համաշխարհային ժառանգությանն ուղղված նոր սպառնալիքների արդյունավետ կանխարգելումը:
26. Ներկայիս ռազմավարական նպատակներն (այսուհետ՝ 5 C-եր) են.
1. Համաշխարհային ժառանգության ցանկի արժանահավատության ամրապնդում,
 2. Համաշխարհային ժառանգության հուշարձանների արդյունավետ պահպանվածության ապահովում,
 3. անդամ պետություններում արդյունավետ կարողությունների կառուցման խթանում,
 4. Համաշխարհային ժառանգության համար հաղորդակցության միջոցով հանրային իրազեկվածության, ներգրավվածության և աջակցության աստիճանի բարձրացում,
 5. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործում համայնքների դերի բարձրացում:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 11(7)-րդ հոդված

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 11(7)-րդ և 29-րդ հոդվածներ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 11(4)-րդ և 11(5)-րդ հոդվածներ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 21(1)-րդ և 21(3)-րդ հոդվածներ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 13(6)-րդ հոդված

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 29(3)-րդ հոդված և Համաշխարհային ժառանգության կոմիտեի կանոնակարգի 49-րդ կետ

1992 թ. կոմիտեի հաստատած առաջին «Ռազմավարական ուղղությունը» ներկայացված է տվյալ փաստաթղթի 2-րդ հավելվածում WHC-92/CONF.002/12

2002 թ. Համաշխարհային ժառանգության կոմիտեն վերանայել է իր ռազմավարական նպատակները: Համաշխարհային ժառանգության մասին Բուդապեշտի հռչակագիրը հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://whc.unesco.org/en/budapestdeclaration>

31 COM 13B որոշում
Decision 31 COM 13B

I. F Համաշխարհային ժառանգության կոմիտեի քարտուղարությունը (Համաշխարհային ժառանգության կենտրոն)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն 7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352 Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 4568 4378
Կայքէջ: <http://whc.unesco.org/>

27. Համաշխարհային ժառանգության կոմիտեին աջակցում է քարտուղարությունը, որը ձևավորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից: Քարտուղարության գործառույթները ներկայումս իրականացվում են Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից, որը հիմնադրվել է 1992 թ.-ին այդ նպատակով: Գլխավոր տնօրենը նշանակում է Համաշխարհային ժառանգության տնօրենին՝ որպես կոմիտեի քարտուղար: Քարտուղարությունն աջակցում և համագործակցում է անդամ պետությունների և խորհրդատվական մարմինների հետ: Քարտուղարությունը սերտ համագործակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ ստորաբաժանումների և դաշտային գրասենյակների հետ:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 14-րդ հոդված: Համաշխարհային ժառանգության կոմիտեի կանոնակարգի 43-րդ կետ 2003 թ. հոկտեմբերի 21-ի N 16 շրջաբերական գրություն <http://whc.unesco.org/circs/circ03-16e.pdf>

28. Քարտուղարության հիմնական խնդիրներն են՝

a) գազաթնաժողովի և կոմիտեի նիստերի կազմակերպումը,

b) Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումների և գազաթնաժողովի ընդունած բանաձևերի իրականացումը, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,

c) Համաշխարհային ժառանգության ցանկի համալրման նպատակով ստացված անվանակարգերի ընդունում, գրանցում, ամբողջականության ստուգում, արխիվացում և փոխանցում համապատասխան խորհրդատվական մարմնին,

d) հետազոտությունների և գործողությունների համակարգում՝ որպես ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ ունենալու համաշխարհային ռազմավարության մաս,

e) պարբերական զեկույցների ներկայացման կազմակերպում,

f) արձագանքող մոնիթորինգի կազմակերպում և իրականացում, ներառյալ արձագանքող մոնիթորինգի առաքելությունների¹ կազմակերպում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խորհրդատվական առաքելության² համակարգում և նախապատրաստում,

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 14.2-րդ հոդված: Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 14.2-րդ հոդված և Համաշխարհային ժառանգության մասին Բուդապեշտի հռչակագիր 39 COM 11 որոշում

¹ Արձագանքող մոնիթորինգային առաքելությունները՝ նախատեսված կոմիտեի քարտուղարության և խորհրդատվական մարմինների կանոնադրությամբ, առանձին վտանգված հուշարձանների պահպանվածության վիճակի մասին հաշվետվությունների ներկայացման մասն են կազմում (տե՛ս 169-րդ պարբերությունը): Դրանք պահանջվում են կոմիտեի կողմից, շահագրգիռ անդամ պետության հետ խորհրդակցելով՝ պարզելու համար հուշարձանի վիճակը, դրան ուղղված վտանգները և հուշարձանի պատշաճ մակարդակով վերականգնման նպատակահարմարությունը կամ գնահատելու առաջընթացը, որը կատարվել է նման ուղղիչ միջոցառումների ընթացքում, ինչպես նաև ներառում են կոմիտեին զեկույցների ներկայացում հայտնաբերումների մասով (տե՛ս 176-ե պարբերությունը): Արձագանքող մոնիթորինգի տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընդունած որոշումներին համապատասխան, և լրամշակվում է անդամ պետության և համապատասխան խորհրդատվական մարմնի (մարմինների) հետ խորհրդակցելուց հետո: Արձագանքող մոնիթորինգային առաքելության հետ կապված ծախսերը իրականացվում են Համաշխարհային ժառանգության հիմնադրամի հաշվին:

² Խորհրդատվական առաքելությունները կանոնադրական կամ պարտադիր կատարման ենթակա միջոցառումների մաս չեն կազմում, քանի որ դրանք նախաձեռնում են անդամ պետությունները կամավորության սկզբունքի հիման վրա, և կախված են նման առաքելություն պահանջող անդամ պետությունների դիտարկումներից և դատումներից: Խորհրդատվական առաքելությունները պետք է դիտարկվեն որպես խնդր առարկայի վերաբերյալ անդամ պետությանը փորձագիտական խորհրդատվության առաքելություն: Դրանք կարող են վերաբերել «համապատասխանեցման» աջակցությանը և խորհրդատվություն տրամադրել հուշարձանների բացահայտման, նախնական ցանկերի պատրաստման կամ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հուշարձանների անվանակարգերի կամ այլընտրանքային տարբերակների մասով, ինչպես նաև կարող են առնչվել հուշարձանների պահպանվածության վիճակին և խորհրդատվություն տրամադրել հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի վրա հիմնական զարգացման ծրագրերի հնարավոր ազդեցությունը գնահատելու համար, կառավարման պլանների նախապատրաստման/վերանայման ընթացքում խորհրդատվության տրամադրմանը, կամ առանձին մեղմացման գործընթացում ձեռք բերված առաջընթացի մասով և այլն: Խորհրդատվական առաքելության տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է անդամ պետությունը, և լրամշակվում է՝ խորհրդակցելով Համաշխարհային ժառանգության կենտրոնի կամ համապատասխան խորհրդատվական մարմնի (մարմինների) հետ: Խորհրդատվական առաքելության հետ կապված ծախսերն իրականացնում է հրավիրող անդամ պետությունը, բացառությամբ, եթե անդամ պետությունը իրավասու է դիմելու համապատասխան միջազգային աջակցության կամ խորհրդատվական առաքելությունների համար ֆինանսավորման նոր բյուջետային գծից, որը հաստատվել է 38 COM 12 որոշմամբ:

g) միջազգային աջակցության համակարգում,

h) Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և կառավարման համար արտաբյուջետային միջոցների հավաքագրում,

i) կոմիտեի ծրագրերի և նախագծերի իրականացման համար աջակցության տրամադրում անդամ պետություններին,

j) Համաշխարհային ժառանգության և կոնվենցիայի հանրահռչակում, անդամ պետությունների, խորհրդատվական մարմինների և հանրության շրջանում տեղեկատվության տարածում:

29. Այս միջոցառումները բխում են որոշումներից և կոմիտեի ռազմավարական նպատակներից, ինչպես նաև անդամ պետությունների գազաթնաժողովի ընթացքում ընդունած բանաձևերից և իրականացվում են խորհրդատվական մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

I. G Համաշխարհային ժառանգության կոմիտեի խորհրդատվական մարմինները

30. Համաշխարհային ժառանգության կոմիտեի խորհրդատվական մարմիններն են՝ ԻԿԿՌՕՄ-ը՝ Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոնը, ԻԿՕՄՕՍՍ-ը՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդը, և Այ Յու Սի Էն-ը՝ Բնության և բնական պաշարների կոնսերվացման միջազգային միությունը:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 14.2-րդ հոդված

31. Խորհրդատվական մարմիններն ունեն հետևյալ դերակատարությունը.

a) խորհրդատվություն տրամադրել Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ իրենց մասնագիտացման ոլորտների մասին,

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 13.7-րդ հոդված 39 COM 11 որոշում

b) աջակցել քարտուղարությանը կոմիտեի փաստաթղթերի, նիստերի նախապատրաստման, ինչպես նաև կոմիտեի որոշումների իրականացման հարցերում,

c) աջակցել ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ ունենալու համաշխարհային ռազմավարության մշակման և իրականացման, միջազգային վերապատրաստման ռազմավարության, պարբերական զեկույցների ներկայացման, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության հիմնադրամի արդյունավետ օգտագործման հարցերում,

d) մոնիթորինգի ենթարկել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակը (ներառյալ արձագանքող մոնիթորինգի առաքելությունների՝ համաձայն կոմիտեի պահանջի և անդամ պետությունների հրավերով խորհրդատվական առաքելությունների միջոցով) և միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրությունները,

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 14.2-րդ հոդված

e) ԻԿՕՄՕՍՍ-ի և IUCN-ի դեպքերում, խորհրդակցելով և քննարկելով անդամ պետությունների հետ, գնահատել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով ներկայացված անվանակարգերը և կոմիտեին ներկայացնել իրենց կազմած գնահատման զեկույցները և այլն,

f) մասնակցել Համաշխարհային ժառանգության կոմիտեի և դրա բյուրոյի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 8.3-րդ հոդված

ԻԿԿՌՕՄ

32. ԻԿԿՌՕՄ-ը (Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրության միջազգային կենտրոն) միջազգային միջկառավարական կազմակերպություն է, որի կենտրոնակայանը գտնվում է Հռոմում՝ Իտալիայում: Հիմնադրվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1956 թ.-ին՝ ԻԿԿՌՕՄ-ի կանոնադրական գործառնություններից է հետազոտությունների, փաստաթղթավորման, տեխնիկական աջակցության, դասընթացների կազմակերպման և հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը՝ շարժական և անշարժ մշակութային ժառանգության պահպանության ամրապնդման նպատակով:

ԻԿԿՌՕՄ
Վիա դը Սան Միշել, 13
I-00153 Հռոմ, Իտալիա
Հեռ.՝ +39 06 585531,
Ֆաքս՝ +39 06 5855 3349
Էլ. փոստ՝ iccrom@iccrom.org
<http://www.iccrom.org/>

33. Կոնվենցիայի առնչությամբ ԻԿԿՌՕՄ-ի առանձնահատուկ գործառույթներից են՝ մշակութային ժառանգության պահպանության ոլորտում առաջնահերթ գործընկերություն, Համաշխարհային ժառանգության մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգ, անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրում, ինչպես նաև ներդրումների և կարողությունների կառուցման համար աջակցության տրամադրում:

ԻԿՕՄՕՍ

34. ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ) ոչ կառավարական կազմակերպություն է Փարիզում՝ Ֆրանսիայում, տեղակայված կենտրոնակայանով: Հիմնադրված լինելով 1965 թ.-ին՝ կազմակերպության դերը տեսական, մեթոդաբանական և գիտական տեխնիկայի կիրառումն է ճարտարապետական և հնագիտական ժառանգության կոնսերվացման ժամանակ: Աշխատանքը հիմնված է 1964 թ. Հուշարձանների և պատմական վայրերի պահպանման և վերանորոգման միջազգային խարտիայի (Վենետիկյան խարտիա) վրա:

ԻԿՕՄՕՍ
Սեմինար դը Կոնֆլանսի 11-րդ
փողոց
94220 Շարենտոն լը Պոն
Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 41 94 17 59
Ֆաքս՝ +33 (0)1 48 93 19 16
Էլ. փոստ՝ secretariat@icomos.
org
<http://www.icomos.org/>

35. Կոնվենցիայի առնչությամբ ԻԿՕՄՕՍ-ի առանձնահատուկ գործառույթներից են՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով ներկայացրած անվանակարգերի գնահատում, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգ, անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրում, ինչպես նաև ներդրումների և կարողությունների կառուցման համար աջակցության տրամադրում:

IUCN

36. Այ Յու Սի Էն-ը (Բնության և բնական պաշարների կոնսերվացման միջազգային միություն) հիմնադրվել է 1948 թ.՝ միավորելով պետությունների կառավարություններին, հասարակական կազմակերպություններին և գիտնականներին գործընկերության շուրջ: Կազմակերպության առաքելությունն է ազդել, խրախուսել և աջակցել աշխարհով մեկ սփռված հանրություններին՝ պահպանելու բնության ամբողջականությունը և բազմազանությունն այնպես, որ բնական ռեսուրսների յուրաքանչյուր օգտագործում լինի հավասարաչափ և չվնասի շրջակա միջավայրի կայունությունը: IUCN-ի կենտրոնակայանը գտնվում է Գլանդում՝ Շվեյցարիայում:

37. Կոնվենցիայի առնչությամբ IUCN-ի առանձնահատուկ գործառույթներից են՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով ներկայացրած անվանակարգերի գնահատում, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բնության հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգ, անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրում, ինչպես նաև ներդրումների և կարողությունների կառուցման համար աջակցության տրամադրում:

I. H Այլ կազմակերպություններ

38. Կոմիտեն կարող է հրավիրել համապատասխան իրավասություն և փորձաքնություն իրականացնելու փորձ ունեցող այլ միջազգային և հասարակական կազմակերպություններին՝ ծրագրերի և նախագծերի, ներառյալ արձագանքող մոնիթորինգի, իրագործմանն աջակցելու նպատակով:

39 COM 11 որոշում

I. I Համաշխարհային ժառանգության պաշտպանության գործընկերներ

39. Անվանակարգերի պատրաստման, կառավարման և մոնիթորինգի հարցում գործընկերային մոտեցումը հնարավոր է դարձնում ապահովել էական ներդրում

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության և կոնվենցիայի կիրարկման գործում:

40. Համաշխարհային ժառանգության պահպանության և կոնսերվացման ոլորտում գոյություն ունեցող գործընկերներ կարող են լինել այն անհատները և շահագրգիռ կողմերը՝ հատկապես տեղի համայնքները, տեղաբնիկները, կառավարական, հասարակական և մասնավոր կազմակերպություններն ու սեփականատերերը, որոնք շահագրգռված և ներգրավված են Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և կառավարման հարցում:

Տեղաբնիկների իրավունքների մասին հռչակագիր (2007 թ.)
39 COM 11 որոշում

I. J Այլ կոնվենցիաներ, առաջարկություններ և ծրագրեր

41. Համաշխարհային ժառանգության կոմիտեն ճանաչում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ ծրագրերի և համապատասխան կոնվենցիաների հետ իր աշխատանքների սերտ համակարգման կարևորությունը: Տե՛ս 44-րդ պարբերությունը՝ համապատասխան գլոբալ պահպանվածության ապահովման գործիքների, կոնվենցիաների և ծրագրերի ցանկի համար:
42. Համաշխարհային ժառանգության կոմիտեն քարտուղարության աջակցությամբ կապահովի անհրաժեշտ համակարգումը և տեղեկատվության փոխանակումը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի և այլ կոնվենցիաների, ծրագրերի և միջազգային կազմակերպությունների միջև, որոնք առնչվում են մշակութային և բնության ժառանգության պահպանությանը:
43. Կոմիտեն կարող է հրավիրել առնչվող կոնվենցիաների միջկառավարական մարմինների ներկայացուցիչներին՝ մասնակցելու իր նիստերին դիտորդի կարգավիճակով: Հրավերի հիման վրա կարող է նշանակվել ներկայացուցիչ՝ այլ միջկառավարական մարմինների նիստերին դիտորդի կարգավիճակով մասնակցելու համար:

44. **Մշակութային և բնության ժառանգության պահպանության առնչվող համաշխարհային կոնվենցիաները և ծրագրերը**

39 COM 11 որոշում

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաները և ծրագրերը

«Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիա (1954 թ.)

Արձանագրություն I (1954 թ.)

Արձանագրություն II (1999 թ.)

http://www.unesco.org/culture/laws/hague/html_eng/page1.shtml

«Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին» կոնվենցիա (1970)

http://www.unesco.org/culture/laws/1970/html_eng/page1.shtml

«Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիա (1972 թ.)

http://www.unesco.org/whc/world_he.htm

«Ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (2001 թ.)

http://www.unesco.org/culture/laws/underwater/html_eng/Convention.shtml

«Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիա (2003 թ.)

<http://unesdoc.unesco.org/images/0013/001325/132540e.pdf>

«Մարդը և կենսոլորտը» ծրագիր

<http://www.unesco.org/mab/>

«Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիա (2005 թ.)
<http://unesdoc.unesco.org/images/0014/001429/142919e.pdf>

Այլ կոնվենցիաներ

«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» (Ռամսար) կոնվենցիա (1971 թ.)
http://www.ramsar.org/key_conv_e.htm

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (ՍԻԹԵՍ) (1973 թ.)
<http://www.cites.org/eng/disc/text.shtml>

«Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (CMS) (1979 թ.)
http://www.unep-wcmc.org/cms/cms_conv.htm

Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիա (UNCLOS) (1982 թ.)
http://www.un.org/Depts/los/Convention_agreements/texts/unclos/closindx.htm

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (1992 թ.)
<http://www.biodiv.org/Convention/articles.asp>

«Գողացված կամ ապօրինի արտահանված մշակութային առարկաների մասին» ՅՈՒՆԵՍԿՈՒՄ կոնվենցիա (Հռոմ, 1995 թ.)
<http://www.unidroit.org/english/Conventions/culturalproperty/c-cult.htm>

ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա «Կլիմայի փոփոխության մասին» (Նյու Յորք, 1992 թ.)
http://unfccc.int/essential_background/Convention/background/items/1350.php

II. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

II. A Համաշխարհային ժառանգության սահմանումը

Մշակութային և բնության ժառանգություն

45. «Մշակութային և բնության ժառանգություն» հասկացությունը սահմանված է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներով:

Հոդված 1.

Սույն կոնվենցիայի նպատակների համար «մշակութային ժառանգություն» են համարվում.

- հուշարձանները՝ ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության ստեղծագործությունները, հնագիտական բնույթի փայտե կամ կառուցվածքները, արձանագրությունները, անձավային կացարանները և փայտե կամ քարե կառույցները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեքներ,

- համալիրները՝ մեկուսացված կամ իրար միացած կառույցների խմբերը, որոնք իրենց ճարտարապետության, միաստեռության կամ բնապատկերում իրենց տեղի շնորհիվ հանդիսանում են պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեքներ,

- տեսարժան վայրերը՝ ձեռակերպ աշխատանքները կամ մարդու և բնության համադրվող ստեղծագործությունները, ինչպես նաև հնագիտական տեսարժան վայրեր ընդգրկող գոտիները, որոնք հանդիսանում են պատմության, գեղագիտության, ազգագրության կամ մարդաբանության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեքներ:

Հոդված 2.

Սույն կոնվենցիայի նպատակների համար «բնության ժառանգություն» են համարվում.

- բնության հուշարձանները՝ կազմված ֆիզիկական և կենսաբանական կազմավորումներից կամ նման կազմավորումների խմբերից, որոնք հանդիսանում են գեղագիտության կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեքներ,

- երկրաբանական և ֆիզիոգրաֆիկական կազմավորումները և հստակ սահմանազատված գոտիները, որոնք ներկայացնում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք ունեցող և վտանգի ենթակա կենդանիների ու բույսերի տեսակների արեալներ,

- բնության տեսարժան վայրերը կամ խիստ սահմանազատված բնական գոտիները, որոնք ունեն գիտության, կոնսերվացման կամ բնական գեղեցկության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեքներ:

Մշակութային և բնության խառը ժառանգություն

46. Հուշարձանները համարվում են «խառը մշակութային և բնության ժառանգություն», եթե բավարարում են կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներով և մշակութային, և բնության ժառանգության համար տրված սահմանումները մասնակի կամ ամբողջությամբ:

Մշակութային տեղանքապատկերներ (լանդշաֆտներ)

47. Մշակութային տեղանքապատկերները մշակութային հուշարձաններ են և ներկայացնում են «բնության և մարդու համատեղ աշխատանքը», որոնք սահմանված են կոնվենցիայի 1-ին հոդվածով: Դրանք ժամանակի ընթացքում ֆիզիկական սահմանափակումներ և/կամ հնարավորություններ են՝ ներկայացված իրենց բնական միջավայրի և հաջող սոցիալական, տնտեսական և մշակութային ներուժի միջոցով՝ և արտաքին, և ներքին, մարդկության և բնակավայրերի զարգացման գործընթացի (էվոլյուցիա) բացատրություններն են:

Հավելված 3

Շարժական ժառանգություն

48. Այն անվանակարգերը, որոնք ամենայն հավանականությամբ անշարժից կվերածվեն շարժականի, բնության չեն առնվի:

Համաշխարհային բացառիկ արժեք

49. Համաշխարհային բացառիկ արժեքը նշանակում է մշակութային և/կամ բնության կարևորություն, որն ունի ազգայինի սահմաններից դուրս եկող բացառիկություն, ինչպես նաև ընդհանուր նշանակություն մարդկության ներկա և ապագա սերունդների համար: Այդ իսկ պատճառով նման կարգի ժառանգության մշտական պաշտպանությունն ունի ամենամեծ կարևորությունը միջազգային հանրության համար: Կոմիտեն սահմանել է չափորոշիչներ՝ հուշարձանները Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով:
50. Անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել մշակութային արժեք ունեցող և/կամ բնության հուշարձանների անվանակարգեր, որոնք համարվում են «համաշխարհային բացառիկ արժեք»՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով:
51. Հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելիս կոմիտեն ընդունում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն (տես 154-րդ պարբերությունը), որը հուշարձանի հետագա արդյունավետ պաշտպանության և կառավարման համար դառնում է հիմնական հիմնավորումը:

52. Կոնվենցիան միտում չունի ապահովելու մեծ հետաքրքրություն, կարևորություն կամ արժեք ունեցող հուշարձանների պահպանությունը՝ բացառությամբ միջազգային տեսանկյունից ամենաբացառիկ համարվողներն այդ ցուցակից: Չպետք է կարծել, որ ազգային և/կամ տարածաշրջանային կարևորություն ունեցող հուշարձանը մեքենայաբար կընդգրկվի Համաշխարհային ժառանգության ցանկում:

53. Կոմիտեին ներկայացված անվանակարգային փաթեթները պետք է ի ցույց դնեն անդամ պետության պարտավորությունն իր միջոցների հաշվին պաշտպանելու ժառանգությունը: Նման պարտավորությունը պետք է ձևակերպված լինի ընդունված համապատասխան քաղաքականության, իրավական, գիտական, տեխնիկական, վարչական և ֆինանսական միջոցներում, որոնք առաջարկվում են հուշարձանը և դրա համաշխարհային բացառիկ արժեքը պաշտպանելու համար:

II. B Ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ

54. Կոմիտեն ցանկություն ունի հաստատելու ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկը՝ իր 26-րդ նիստի (Բուդապեշտ, 2002 թ.) ընթացքում հաստատված չորս ռազմավարական նպատակներին համապատասխան:

Համաշխարհային ժառանգության մասին Բուդապեշտի հռչակագիրը (2002 թ.) հասանելի է <http://whc.unesco.org/en/budapestdeclaration> հասցեով

Համընդհանուր ռազմավարությունը Համաշխարհային ժառանգության ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ ցանկ ունենալու համար

55. Ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ ունենալու համար համընդհանուր ռազմավարությունը մշակված է բացահայտելու և լրացնելու Համաշխարհային ժառանգության ցանկի հիմնական բացթողումները: Այն կյանքի է կոչվում տարբեր երկրներին խրախուսելով դառնալ կոնվենցիայի անդամ պետություն և 62-րդ պարբերությանը համապատասխան՝ մշակել նախնական ցանկեր, ինչպես նաև կազմել անվանակարգային փաթեթներ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար (տես <http://whc.unesco.org/en/globalstrategy>):

«Գլոբալ ռազմավարության» մշակման հարցերով փորձագիտական հանդիպման զեկույցը և Համաշխարհային ժառանգության ներկայացուցչական ցանկի ձևավորման համար թեմատիկ ուղղությունները հաստատվել են Համաշխարհային ժառանգության կոմիտեի 18-րդ նստաշրջանի ընթացքում (Ֆուբենտ, 1994 թ.):

56. Անդամ պետություններին և խորհրդատվական մարմիններին կոչ է արվում մասնակցել համընդհանուր ռազմավարության իրականացմանը՝ համագործակցելով քարտուղարության և այլ գործընկերների հետ: Տարածաշրջանային և համընդհանուր ռազմավարության թեմատիկ հանդիպումները և համեմատական ու թեմատիկ ուսումնասիրությունները կատարվում են այդ նպատակով: Այդ հանդիպումների արդյունքները և ուսումնասիրությունները մատչելի են դարձվում անդամ պետություններին նախնական ցանկերի կազմման և անվանակարգերի նախապատրաստման նպատակով: Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացված փորձագիտական հանդիպումների և ուսումնասիրությունների հաշվետվությունները հասանելի են <http://whc.unesco.org/en/globalstrategy> հղումով:

«Գլոբալ ռազմավարությունը» նախաձեռնվել էր մշակութային ժառանգության հենքի վրա: Համաշխարհային ժառանգության կոմիտեի պահանջով գլոբալ ռազմավարությունը ընդլայնվել է՝ ընդգրկելով բնության ժառանգությունը և խառը՝ բնության և մշակութային ժառանգությունը:

57. Պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցները՝ Համաշխարհային ժառանգության ցանկում մշակութային և բնության ժառանգության միջև ողջամիտ հավասարակշռության պահպանման համար:

58. Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման ընդհանուր թվաքանակի պաշտոնական սահմանափակում գոյություն չունի:

Այլ միջոցառումներ

59. Ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկի հաստատումը խթանելու նպատակով անդամ պետություններին առաջարկվում է ուսումնասիրել՝ արդյո՞ք իրենց տարածքում գտնվող ժառանգությունն արդեն իսկ ներկայացված է ցանկում, եթե այո, ապա նվազեցնել իրենց հետագա անվանակարգերի ներկայացման հարաբերակցությունը հետևյալ կերպ.

Անդամ պետությունների զազաթնաժողովի կողմից ընդունված բանաձև (1999թ.)

a) կամավոր կերպով մեծացնել անվանակարգերի ներկայացման պարբերականության ժամանակահատվածը՝ ելնելով այն պայմաններից, որոնք իրենք կսահմանեն և/կամ,

b) ներկայացնել միայն այն հուշարձանները, որոնք դեռ բավարար կերպով ներկայացված չեն և/կամ,

c) միավորել իրենց անվանակարգերից յուրաքանչյուրը կոնվենցիայի այլ անդամ պետության անվանակարգի հետ, որի ժառանգությունը դեռ բավարար ներկայացված չէ, կամ

d) կամավոր որոշում կայացնել նոր անվանակարգերի ներկայացման դադարեցման մասին:

60. Անդամ պետություններին, որոնց համաշխարհային բացառիկ արժեք ունեցող ժառանգությունը բավարար կերպով ներկայացված չէ Համաշխարհային ժառանգության ցանկում, առաջարկվում է.

Անդամ պետությունների գազաթնաժողովի կողմից ընդունված բանաձև (1999թ.)

a) առաջնայնություն տալ իրենց նախնական ցանկերի և անվանակարգերի նախապատրաստմանը,

b) նախաձեռնել և ամրապնդել գործընկերությունը տարածաշրջանային մակարդակով՝ հիմք ընդունելով տեխնիկական փորձաքննության փոխանակումը,

c) խրախուսել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը՝ ժառանգության պաշտպանության, պահպանության և կառավարման համար պատասխանատու հաստատությունների փորձաքննության իրականացման և տեխնիկական հնարավորությունների մակարդակը բարձրացնելու նպատակով,

d) հնարավորինս ապահովել մասնակցությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեի նիստերին:

61. Կոմիտեն որոշել է կիրառել հետևյալ աշխատակարգը.

Որոշումներ
24 COM VI.2.3.3,
28 COM 13.1 և
7 EXT.COM 4B.1
29 COM 18A
31 COM 10
35 COM 8B.61
40 COM 11

2018 թ. փետրվարի 1 ներառյալ

a) Քննության առնել մինչև երկու ամբողջական անվանակարգային փաթեթ յուրաքանչյուր անդամ պետության համար, պայմանով, որ ներկայացրածներից առնվազն մեկը վերաբերում է բնության հուշարձանին կամ մշակութային տեղանքապատկերին,

b) մտցնել սահմանափակում տարեկան ուսումնասիրվող անվանակարգային փաթեթների թվաքանակի մեջ մինչև 45, ներառյալ կոմիտեի կողմից նախկին նստաշրջանների ընթացքում ուսումնասիրությունը հետաձգած և լրամշակման ուղարկված անվանակարգերը, ընդլայնումները (բացառությամբ հուշարձանների սահմանների փոքրամասշտաբ փոփոխությունները), անդրսահմանային և սերիական անվանակարգերը,

c) տարեկան 45 անվանակարգերի թվաքանակի գերազանցման դեպքում անհրաժեշտ է կիրառել ստորև ներկայացվող առաջնահերթությունների հերթականությունը.

- (i) այն անվանակարգերը, որոնց ներկայացրած անդամ պետությունը չունի ցանկում գրանցված որևէ հուշարձան,
- (ii) այն անվանակարգերը, որոնց ներկայացրած անդամ պետություններն ունեն մինչև 3 անվանակարգ գրանցված ցանկում,
- (iii) այն անվանակարգերը, որոնք դուրս են մնացել տարեկան 45 թվաքանակի սահմանափակման և սույն առաջնահերթությունների կիրառման պատճառով,
- (iv) բնության ժառանգության հուշարձանների անվանակարգերը,
- (v) խառը ժառանգության հուշարձանների անվանակարգերը,
- (vi) անդրսահմանային/անդրազգային հուշարձանների անվանակարգերը,

- (vii) Աֆրիկայի, Իսադաղ օվկիանոսի և Կարիբյան ավազանի պետությունների կողմից ներկայացված անվանակարգերը,
- (viii) վերջին տասը տարիների ընթացքում Համաշխարհային ժառանգության կոնվենցիան վավերացրած անդամ պետությունների ներկայացրած հուշարձանների անվանակարգային փաթեթները,
- (ix) վերջին տասը տարիների ընթացքում անվանակարգեր չներկայացրած անդամ պետությունների հուշարձանների անվանակարգային փաթեթները,
- (x) սույն առաջնահերթությունների համակարգի կիրառման ընթացքում Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից ամբողջական և ավարտուն անվանակարգերի ստացման օրը պետք է օգտագործվի որպես երկրորդական գործոն այն անվանակարգերի միջև առաջնահերթության սահմանելու համար, որոնք չեն ընտրվել վերոգրյալ կետերի պատճառով,

դ) անդրսահմանային կամ անդրազգային սերիական անվանակարգերի համահեղինակ անդամ պետությունները միմյանց հետ խորհրդակցելով՝ ընտրում են այն անդամ պետությանը, որը պետք է ներկայացնի անվանակարգը, և այդ անվանակարգը բացառապես կգրանցվի ներկայացնող անդամ պետության առավելագույն թվաքանակի հաշվին:

Սույն որոշման ազդեցությունը կգնահատվի կոմիտեի 39-րդ նստաշրջանի ընթացքում (2015 թ.). պարբերությունն ուժի մեջ կմտնի 2012 թ. փետրվարի 2-ին՝ անդամ պետությունների համար անցումային փուլը հեշտացնելու նպատակով:

2018 թ. փետրվարի 2-ից հետո

- a) քննության առնել մեկ ամբողջական անվանակարգային փաթեթ յուրաքանչյուր անդամ պետությունից,
- b) քննության ենթակա, նախկին նստաշրջանների ընթացքում լրամշակման կամ վերադարձված անվանակարգերի, ընդլայնման (բացառությամբ հուշարձանի սահմանների ոչ էական փոփոխություններ) անդրսահմանային կամ սերիական անվանակարգերի տարեկան չափաքանակը սահմանվում է 35 միավոր,
- c) տարեկան 35 անվանակարգի չափաքանակի գերազանցման դեպքում կկիրառվի ստորև ներկայացվող առաջնահերթությունների կարգը՝
 - (i) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձան չունեցող անդամ պետությունների առաջադրած հուշարձանների փաթեթները,
 - (ii) Համաշխարհային ժառանգության ցանկում ոչ ավել քան 3 անվանակարգ ընդգրկված ունեցող անդամ պետությունների առաջադրած հուշարձանների փաթեթները,
 - (iii) լրամշակումից հետո ներկայացված փաթեթները, որոնք չեն փոխանցվել համապատասխան խորհրդատվական մարմիններին հետագա գնահատումն իրականացնելու նպատակով՝ ի կատարումն 61.b պարբերության ,
 - (iv) նախկինում տարեկան 35 անվանակարգի սահմանափակման պատճառով դուրս մնացած հուշարձանների անվանակարգերը՝ տվյալ առաջնահերթությունների կիրառման պայմանով,
 - (v) քննության ժառանգության հուշարձանների անվանակարգերը,
 - (vi) խառը ժառանգության հուշարձանների անվանակարգերը,
 - (vii) անդրսահմանային/ անդրազգային հուշարձանների անվանակարգերը,
 - (viii) Աֆրիկայի, Իսադաղօվկիանոսյան և Կարիբյան ավազանի անդամ պետությունների ներկայացրած անվանակարգերը
 - (ix) վերջին քսան տրավա ընթացքում Համաշխարհային ժառանգության կոնվենցիան

³ Տվյալ դրույթը կիրառվում է նաև այն դեպքում, երբ լրամշակումից հետո կրկին ներկայացված անվանակարգային փաթեթը ստացվում է լրամշակման ուղարկելու որոշումի ընդունումից երեք տարի հետո:

վավերացրած անդամ պետությունների ներկայացրած հուշարձանների անվանակարգերը,

- (x) հինգ կամ ավելի տարիների ընթացքում չներկայացրած անդամ պետությունների հուշարձանների անվանակարգերը,
 - (xi) նախկինում կոմիտեի անդամ հանդիսացող պետությունների անվանակարգերը, որոնք կամավորության սկզբունքով համաձայնվել են քննության չառնել իրենց պաշտոնավարման ընթացքում քննության առնել անվանակարգային փաթեթ: Տվյալ առաջնահերթությունը կիրառելի է չորս տարի պետության՝ կոմիտեի շրջանակներում մանդատի ավարտից հետո,
 - (xii) տվյալ առաջնահերթությունների համակարգը կիրառելիս Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից ամբողջական փաթեթի ստացման ժամկետները պետք է դիտարկվեն որպես երկրորդական գործոն առաջնահերթությունների սահմանման գործում այն անվանակարգերի միջև, որոնց համար կիրառվել են վերը թվարկված կետերը:
- d) Անդրսահմանային կամ անդրազգային սերիական անվանակարգերի համա-հեղինակ անդամ պետությունները կարող են փոխադարձ համաձայնությամբ ընտրել տվյալ անվանակարգի համար պատասխանատվություն կրող անդամ պետությանը; և այդ անվանակարգը կարող է բացառապես գրանցվել պա-տասխանատվություն կրող անդամ պետության հովանու ներքո:

Այս որոշումը կիրականացվի փորձնական հենքի վրա 4 տարի ժամկետով և ուժի մեջ կմտնի 2018 թ. փետրվարի 2-ից հետո, որպեսզի բոլոր անդամ պետությունների համար երաշխավորվի դյուրին անցումային շրջանը: Տվյալ որոշման ազդեցությունը կգնահատվի կոմիտեի 46-րդ նստաշրջանի ընթացքում (2022 թ.):

II. C. Նախնական ցանկ

Ընթացակարգը և ձևաչափը

62. Նախնական ցանկը յուրաքանչյուր անդամ պետության տարածքում գտնվող հուշարձանների ցուցակն է, որոնք նպատակահարմար են համարվում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար: Այդ իսկ պատճառով անդամ պետություններն իրենց նախնական ցանկերում պետք է ընդգրկեն այն հուշարձանների մանրամասները, որոնք կարող են դիտարկվել որպես համաշխարհային բացառիկ արժեք, և որոնք նրանք մտադիր են ներկայացնելու գալիք տարիների ընթացքում:
63. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկման համար առաջադրված հուշարձանների փաթեթները քննության չեն առնվի, քանի դեռ դրանք ներառված չեն անդամ պետության նախնական ցանկում:
64. Անդամ պետություններին կոչ է արվում իրենց նախնական ցանկերը նախապատրաստել շահագրգիռ կողմերի լայն շրջանակի մասնակցությամբ՝ ներառյալ հուշարձանի կառավարիչների, տեղական և մարզային, կառավարական մարմինների, տեղի համայնքների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ու գործընկերների:
65. Անդամ պետությունները պետք է իրենց նախնական ցուցակները ներկայացնեն քարտուղարությանը առնվազն մեկ տարի որևէ անվանակարգ ներկայացնելուց առաջ: Անդամ պետություններին կոչ է արվում վերանայել և կրկին ներկայացնել իրենց նախնական ցանկերը յուրաքանչյուր տաս տարին մեկ անգամ:
66. Անդամ պետությունները իրենց նախնական ցանկերը պետք է ներկայացնեն անգլերենով կամ ֆրանսերենով՝ օգտագործելով 2Ա հավելվածում և 2Բ հավելվածում (անդրազգային և անդրսահմանային անվանակարգերի համար) ստանդարտ ձևաչափերը, որոնցում պետք է ներկայացված լինեն հուշարձանի անվանումը, դրանց աշխարհագրական դիրքը, հուշարձանների համառոտ նկարագրությունը, ինչպես նաև համաշխարհային բացառիկ արժեքի մասին դրանց հիմնավորումը:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 1-ին, 2-րդ և 11(1)-րդ հոդվածներ
39 COM 11 որոշում

24 COM որոշում VI.2.3.2-րդ պարբերություններ

39 COM 11 որոշում

67. Անդամ պետությունը պատշաճ կերպով ստորագրված և վերջնական նախնական ցանկը պետք է ներկայացնի հետևյալ հասցեով.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն

7, Դը Ֆոնտենոյ հրապարակ, place de Fontenoy

75352, Փարիզ 07 SP

Ֆրանսիա

Հեռ.՝ +33 (0) 1 4568 1136

Էլ. փոստ՝ wh-tentativelists@unesco.org

68. Անդամ պետությունից նախնական ցանկը ստանալուն պես Համաշխարհային ժառանգության կենտրոնը ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունը 2-րդ հավելվածի հետ: Եթե փաստաթղթերը չեն համապատասխանում այդ հավելվածին, ապա Համաշխարհային ժառանգության կենտրոնը այն ուղարկում է լրամշակման: Ամբողջական տեղեկություն ստանալուն պես քարտուղարությունը գրանցում է նախնական ցանկը և փոխանցում այն համապատասխան խորհրդատվական մարմնին՝ ի գիտություն: Նախնական ցանկերի ամփոփված տարբերակը ներկայացվում է կոմիտեին յուրաքանչյուր տարի: Քարտուղարությունը, խորհրդակցելով անդամ պետության հետ, թարմացնում է իր գրանցումները՝ մասնավորապես նախնական ցանկից հանելով գրանցված հուշարձանները և առաջարկվող հուշարձանները, որոնք չեն գրանցվել:

7 EXT.COM 4A-րդ որոշում

Անդամ պետությունների նախնական ցանկերը հրապարկվում են Համաշխարհային ժառանգության կենտրոնում և վերջինիս կայքէջում՝ աշխատանքային փաստաթղթերի հետ միասին թափանցիկությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես տարածաշրջանային մակարդակով նախնական ցանկերի և թեմատիկ ուղղությունների ներդաշնակեցման ապահովելու նպատակով:

41.COM 11-րդ որոշում

Նախնական ցանկի բովանդակության համար միակ պատասխանատուն անդամ պետությունն է: Նախնական ցանկի հրապարակումը չի նշանակում Համաշխարհային ժառանգության կոմիտեի կամ Համաշխարհային ժառանգության կենտրոնի կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քարտուղարության դիրքորոշումը ցանկացած պետության, տարածքի, քաղաքի կամ արեալի կամ դրանց սահմանների իրավական կարգավիճակի վերաբերյալ կարծիքի արտահայտում:

69. Անդամ պետությունների նախնական ցանկերը հասանելի են հետևյալ հղումով՝ <http://whc.unesco.org/en/tentativelists> հասցեով:

27 COM 8A-րդ որոշում

Նախնական ցանկերը՝ որպես պլանավորման և գնահատման գործիք

70. Անդամ պետությունների, Համաշխարհային ժառանգության կոմիտեի, քարտուղարության և խորհրդատվական մարմինների համար նախնական ցանկերը օգտակար և պլանավորման համար կարևոր գործիք են, քանի որ դրանք նախանշում են հետագա անվանակարգերը:
71. Նախնական ցանկը պետք է կազմել ընտրողաբար և Համաշխարհային բացառիկ արժեքը հիմնավորող փաստերի հիման վրա: Անդամ պետություններին կոչ է արվում ուսումնասիրել Համաշխարհային ժառանգության ցանկի և նախնական ցանկերի վերլուծությունները, որոնք պատրաստվել են ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի կողմից կոմիտեի պահանջով՝ Համաշխարհային ժառանգության ցանկում գոյություն ունեցող բացատների նախանշման նպատակով: Այդ վերլուծությունները հնարավորություն կտան անդամ պետություններին հա-

24 COM որոշում VI.2.3.2(ii)-րդ պարբերություններ 39 COM 11 որոշում Փաստաթղթեր WHC-04/28.COM/13.B I և II <http://whc.unesco.org/archive/2004/whc04-28com-13b1e.pdf> և <http://whc.unesco.org/archive/2004/whc04-28com-13b2e.pdf>

մեմատելու թեմատիկ ուղղությունները, տարածաշրջանները, աշխարհամշակութային խմբավորումները և բիո-աշխարհագրական շրջանները հնարավոր Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար:

72. Ավելին, անդամ պետություններին կոչ է արվում ուսումնասիրել խորհրդատվական մարմինների կողմից իրականացված թեմատիկ ուսումնասիրությունները (տես 147-րդ պարբերությունը): Նշված ուսումնասիրությունները հիմնված են անդամ պետությունների ներկայացրած նախնական ցանկերի վերանայման և դրանց ներդաշնակեցման նպատակով կազմակերպված հանդիպումներում զեկույցների, ինչպես նաև համապատասխան որակավորում ունեցող կազմակերպությունների և անհատների կողմից իրականացված տեխնիկական ուսումնասիրությունների վրա: Ավարտական տեսք ունեցող ուսումնասիրությունների ցանկը հասանելի է <http://whc.unesco.org/en/globalstrategy> հասցեով:

Թեմատիկ ուսումնասիրությունները տարբերվում են համեմատական վերլուծություններից, որոնք նախապատրաստվում են անդամ պետությունները Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով առաջադրած հուշարձանների համար: (տես 132-րդ պարբերությունը)

73. Անդամ պետություններին կոչ է արվում ներդաշնակեցնել իրենց նախնական ցանկերը տարածաշրջանային ուղղություններով և թեմատիկ մակարդակով: Նախնական ցանկերի ներդաշնակեցումը գործընթաց է, որի ընթացքում անդամ պետությունները խորհրդատվական մարմինների աջակցությամբ գնահատում են նախնական ցանկը բացատրելը և ընդհանուր թեմաները նախանշելու նպատակով: Ներդաշնակեցման հանգեցնելու է թարմացված նախնական ցանկի, անդամ պետությունների կողմից նոր անվանակարգերի ներկայացման և տարբեր խմբերում գտնվող անդամ պետությունների միջև համագործակցությունը անվանակարգերի նախապատրաստման հարցում:

Աջակցությունը և կարողությունների կառուցումը անդամ պետությունների համար նախնական ցանկերի նախապատրաստման նպատակով

74. Համընդհանուրազմավարության իրականացման համար կարողությունների կառուցմանը և դասընթացների կազմակերպմանն ուղղված համատեղ ջանքեր են անհրաժեշտ անդամ պետություններին աջակցելու նպատակով, որպեսզի տրամադրվի և/կամ մեկտեղվի իրենց նախնական ցանկերի և անվանակարգային փաթեթների նախապատրաստման, թարմացման և ներդաշնակեցման փորձը:
75. Անդամ պետությունները կարող են միջազգային աջակցություն խնդրել իրենց նախնական ցանկերի նախապատրաստման, թարմացման և ներդաշնակեցման նպատակով (տես Գլուխ VII):
76. Խորհրդատվական մարմինները և քարտուղարությունը կարող են օգտագործել գնահատման առաքելություններով ստեղծված հնարավորությունները՝ տարածաշրջանային աշխատաժողովների կազմակերպման համար ոչ բավարար մակարդակով ներկայացված պետություններին նախնական ցանկերի և անվանակարգերի նախապատրաստման մեթոդներում աջակցելու նպատակով:

24COM VI.2.3.5(ii) որոշում

II. D Համաշխարհային ժառանգության արժեքի գնահատման չափորոշիչը

77. Կոմիտեն համարում է հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքը (տես 49-53-րդ պարբերությունները) հիմնավորված, եթե այն բավարարում է ստորև ներկայացված չափորոշիչներից մեկին կամ ավելին: Այդ իսկ պատճառով ներկայացված հուշարձանները պետք է՝
- (i) լինեն մարդկային ստեղծարար հանճարի գլուխգործոց,
 - (ii) ցուցադրեն մարդկային արժեքների փոխանակումը ժամանակի ընթացքում կամ աշխարհի մշակութային արեալի շրջանակում, ներկայացնեն

Նախկինում այս չափորոշիչները ներկայացված էին առանձին խմբերով. (i) - (vi)-րդ չափորոշիչները վերաբերում էին մշակութային ժառանգությանը, իսկ (i) - (iv) չափորոշիչները՝ բնության ժառանգությանը: Համաշխարհային ժառանգության 6-րդ արտահերթ նիստի ընթացքում կոմիտեն որոշեց միավորել դրանք՝ դարձնելով տասը չափորոշիչ (6 EXT.COM 5.1 որոշում)

ճարտարապետության կամ տեխնոլոգիաների, մոնումենտալ արվեստի, քաղաքային պլանավորման կամ տեղանքապատկերների ձևավորման զարգացումները,

- (iii) հանդիսանան եզակի կամ առնվազն բացառիկ վկայություն մշակութային ավանդույթների կամ քաղաքակրթության մասին՝ ապրող կամ անհետացած,
- (iv) հանդիսանան մարդկության պատմության կարևոր փուլ(եր)ը ներկայացնող շինության որևէ տեսակի, ճարտարապետական կամ տեխնոլոգիական անսամբլի կամ տեղանքապատկերի բացառիկ օրինակներ,
- (v) հանդիսանան մարդկության ավանդական բնակավայրերի, հողօգտագործման կամ ծովի օգտագործման բացառիկ օրինակ, որոնք ներկայացնում են մեկ կամ մի քանի մշակույթ, կամ շրջակա միջավայրի հետ մարդկության փոխներգործությունը՝ հատկապես, երբ այն դառնում է խոցելի անշրջելի փոփոխության ազդեցության տակ,
- (vi) ուղղակի կամ էապես կապակցված լինեն իրադարձությունների կամ կենսունակ ավանդույթների, գաղափարների կամ հավատալիքների, գեղարվեստական և գրական աշխատանքների հետ, որոնք ունեն բացառիկ համաշխարհային նշանակություն (կոմիտեն գտնում է, որ սույն չափորոշիչը գերադասելի է օգտագործել մեկ այլ չափորոշիչի հետ միասին),
- (vii) պարունակեն անգերազանցելի բնական երևույթ կամ բացառիկ բնական գեղեցկության և գեղագիտական կարևորության շրջաններ,
- (viii) հանդիսանան երկրի պատմության հիմնական փուլերը ներկայացնող բացառիկ օրինակներ, ներառյալ կյանքի գոյության փաստերը, երկրի ռելիեֆի զարգացման ընթացքում կարևոր շարունակական երկրաբանական գործընթացները կամ կարևոր գեոմորֆիկ կամ ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները,
- (ix) հանդիսանան բնապահպանական և կենսաբանական շարունակական գործընթացները ներկայացնող բացառիկ օրինակներ ցամաքի, քաղցրահամ ջրերի, ափամերձ և ծովային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական համայնքների էվոլյուցիայի և զարգացման գործում,
- (x) տեղում պարունակում են կենսաբանական բազմազանության կարևոր և արժեքավոր բնական արեալներ, այդ թվում նաև՝ այն հատվածները, որոնք ներառում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող վտանգված օրինակներ:

78. Համաշխարհային բացառիկ արժեք հանդիսանալու համար հուշարձանը պետք է բավարարի նաև ամբողջականության և/կամ իսկության պայմանները, ինչպես նաև ունենա համապատասխան պաշտպանվածություն և կառավարման համակարգ՝ պահպանությունն ապահովելու նպատակով:

II. E Ամբողջականություն և/կամ իսկություն

Իսկություն

79. (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացրած հուշարձանները պետք է բավարարեն նաև իսկության պետ կապված պահանջները: 4-րդ հավելվածում, որտեղ ներկայացված է նաև Նառայի փաստաթուղթը իսկության վերաբերյալ, ներկայացվում են գործնական հիմքերը նմանատիպ հուշարձանների իսկության փորձաքննության համար և ամփոփվում են ստորև:
80. Ժառանգությանը վերագրվող արժեքի ընկալումը կապված է այդ արժեքի մասին տեղեկատվական աղբյուրների ընկալման մակարդակից,

39 COM 11 որոշում

արդյո՞ք դրանք արժանահավատ են, թե ոչ: Տեղեկատվական այդ աղբյուրների վերաբերյալ գիտելիքները և ընկալումը, որոնք առնչվում են մշակութային ժառանգության բնօրինակ և հտազայում ավելացած առանձնահատկություններին, ինչպես նաև ժամանակի ընթացքում ձևավորված արժևորմանը, հանդիսանում են իսկության բոլոր ասպեկտների գնահատման պարտադիր հիմքը:

81. Մշակութային ժառանգությանը վերագրվող արժեքների մասին եզրահանգումները, ինչպես նաև առնչվող տեղեկատվական աղբյուրների արժանահավատությունը կարող են տարբերվել մշակույթից մշակույթ անցման, և նույնիսկ նույն մշակույթի շրջանակներում: Բոլոր մշակույթների հանդեպ հարգանքը պահանջում է, որ մշակութային ժառանգությունը դիտարկվի և եզրահանգումները կատարվեն այն մշակույթի համատեքստում, որին պատկանում է:
82. Մշակութային ժառանգության տեսակներից և դրանց մշակութային համատեքստից կախված՝ հուշարձանները պետք է ապահովեն իսկության պայմանները, եթե դրանց մշակութային արժեքները (ինչպես ներկայացված է անվանակարգի չափորոշիչում) և արժանահավատությունն արտահայտված են տարբեր որակական հատկանիշներով, ներառյալ՝
 - ձևը և հարդարանքը,
 - նյութը և բաղադրությունը,
 - կիրառումը և գործառույթը,
 - ավանդույթները, տեխնիկան և կառավարման համակարգերը,
 - գտնվելու վայրը և շրջակա միջավայրը,
 - լեզուն և ոչ նյութական մշակութային ժառանգության այլ ձևեր,
 - ոգին և զգացումները,
 - ներքին և արտաքին այլ գործոններ:
83. Ոգու և զգացմունքների նման որակական հատկանիշները հեշտությամբ չեն կարող տարանջատվել իսկության պայմանների գործնական կիրառումից, սակայն պակաս կարևոր ցուցիչներ չեն վայրի բնույթը և էությունը ընկալելու, օրինակ՝ համայնքներում ավանդույթների և մշակութային հարաբերությունների շարունակականության պահպանման համար:
84. Այդ բոլոր ռեսուրսների օգտագործումը թույլ է տալիս հստակեցնել քննության առնվող մշակութային ժառանգության գեղարվեստական, պատմական, սոցիալական և գիտական ասպեկտները: «Տեղեկատվական ռեսուրսները» իրենցից ներկայացնում են ֆիզիկական, գրավոր, բանավոր և պատկերավոր միջոցներ, որոնք հնարավոր են դարձնում մշակութային ժառանգության էության, առանձնահատկությունների, իմաստի և պատմության ընկալումը:
85. Հուշարձանի անվանակարգային փաթեթի իսկության պայմանները քննության առնելիս անդամ պետությունը առաջին հերթին պետք է վեր հանի իսկության կիրառելի որակական կարևոր հատկանիշները: Հայտարարությունը պետք է գնահատական տա գոյություն ունեցող իսկության մակարդակին, կամ ինչպես է արտահայտված յուրաքանչյուր որակական հատկանիշ:
86. Իսկության պահպանման տեսանկյունից հնագիտական մնացորդների կամ պատմական շինությունների կամ թաղամասի վերականգնումը հիմնավորված է համարվում միայն բացառիկ հանգամանքներում: Վերականգնումը թույլատրելի է ամբողջական և մանրամասն փաստաթղթավորման հիման վրա՝ առանց որևէ ենթադրության:

Ամբողջականություն

87. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ներկայացված բոլոր հուշարձանները պետք է բավարարեն ամբողջականության պահանջը: 20 COM IX.13 որոշում
88. Ամբողջականությունը բնության և/կամ մշակութային ժառանգության ամբողջականության և անվնաս լինելու միջոցն է: Ամբողջականության պայմանների ուսումնասիրությունը պահանջում է գնահատել այն մակարդակը, որով հուշարձանը՝
- a) ներառում է իր համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտող բոլոր անհրաժեշտ տարրերը,
- b) ունի բավարար չափ (ծավալ)՝ ներկայացնելու իր առանձնահատկությունները և զարգացումները, որով արտահայտվում է հուշարձանի կարևորությունը,
- c) տուժել է զարգացումների և/ կամ բարձիթողի վիճակից:
- Այս բոլորը պետք է ներկայացվի ամբողջականության հայտարարությունում:
89. (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացրած հուշարձանների համար անհրաժեշտ է, որպեսզի դրանց ֆիզիկական կառուցվածքը և/կամ կարևոր որակական հատկանիշները լինեն լավ վիճակում, և վերահսկելի դարձվեն քայքայման գործընթացները: Արժեքի ամբողջությունը ներկայացնող տարրերի մեծ մասը, որոնք ներկայացված են հուշարձանում, պետք է ընդգրկվեն նույնպես: Մշակութային տեղանքապատկերներում, պատմական քաղաքներում և այլ «ապրող» հուշարձաններում անհրաժեշտ է պահպանել փոխկապակցվածությունը և դինամիկ գործառույթները, որոնք կարևոր են իրենց առանձնահատկությունների (բնորոշ գծերի) համար:
- (ii) - (vi)-րդ չափորոշիչներով առաջադրվող հուշարձանների ամբողջականության պայմանների կիրառման օրինակները մշակման փուլում են:
90. (vii) մինչև (x) չափորոշիչներով ներկայացրած հուշարձանների համար անհրաժեշտ է, որպեսզի կենսաֆիզիկական գործընթացները և ռելիեֆի առանձնահատկությունները անեղծ վիճակում մնացած լինեն: Այնուամենայնիվ, գիտակցվում է, որ որևէ տարածք չի կարող ամբողջությամբ մնալ անխաթար, և որ բոլոր բնական տարածքները գտնվում են դինամիկ վիճակում և որոշ աստիճանով ընդգրկված են մարդկանց հետ շփումների շրջանակում: Մարդկային գործունեությունը, ներառյալ ավանդական և տեղական համայնքները, հաճախ հանդիպում են բնական գոտիներում: Այդ գործունեությունը կարող է համատեղելի լինել համաշխարհային բացառիկ արժեքի տարածքի հետ այն հատվածում, որտեղ դրանք բնապահպանական տեսանկյունից հիմնավորված են:
91. Ի հավելումն՝ (vii) մինչև (x) չափորոշիչներով ներկայացված հուշարձանների համար սահմանվել են ամբողջականության համապատասխան պայմաններ յուրաքանչյուր չափորոշիչի համար:
92. (vii) չափորոշիչով ներկայացված հուշարձանները պետք է ունենան Համաշխարհային բացառիկ արժեք և ներառեն այն տարածքները, որոնք ունեն կարևոր նշանակություն հուշարձանի գեղեցկության պահպանման համար: Օրինակ, եթե տեղանքապատկերի գեղատեսիլությունը կապված է ջրվեժի հետ, ապա ամբողջականության պայմանները բավարարելու համար անհրաժեշտ է, որ այն ընդգրկի նաև հարակից տարածքները հոսանքի վերին և ներքին հատվածներում՝ անքակտելի կապված լինելով հուշարձանի գեղագիտական որակական հատկանիշների պահպանման հետ:
93. (viii) չափորոշիչով ներկայացված հուշարձանները պետք է պարունակեն բոլոր կամ գրեթե բոլոր փոխկապակցված կամ փոխադարձ կախվածության մեջ գտնվող հիմնական տարրերը, որոնք իրենց բնական վիճակում են: Օրինակ՝ սառցե շրջանի գոտիները բավարարում են ամբողջականության պահանջները, եթե դրանք ընդգրկում են ձնադաշտը, սառցադաշտն ինքնին,

ինչպես նաև կտրվածների օրինակներ, նստվածքաշերտերը և գաղութացման փուլերը (այսինքն՝ տեղաշարժման հետևանքով առաջացած զոլավորում, քարակարկառներ, բույսերի հաջորդականության նախնական փուլեր և այլն): Հրաբուխների պարագայում անհրաժեշտ է ներկայացնել մագմատիկ ամբողջական շարքերը, ինչպես նաև բոլոր կամ գրեթե բոլոր արտավիժական ապարների և արտավիժման տեսակները:

94. (ix) չափորոշիչով ներկայացված հուշարձանները պետք է ունենան բավարար չափեր և ընդգրկեն գործընթացների հիմնական ասպեկտները ցուցադրելու անհրաժեշտ տարրերը, որոնք կարևոր նշանակություն ունեն իրենց մեջ ներառված էկոհամակարգի պահպանության և կենսաբանական բազմազանության երկարաժամկետ կոնսերվացման համար: Օրինակ՝ արևադարձային անձրևային անտառները կբավարարեն ամբողջականության պահանջը, եթե ներառեն ծովի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա գտնվող որոշակի քանակի՝ տարբեր տեղագրություն և հողի օրինակներ պարունակող տարածքներ, տարածքների մեկուսացման համակարգեր և բնական ճանապարհով վերականգնվող (ռեգեներացվող) մեկուսացված տարածքներ: Նման կերպ կորալային ծովաժայռերը, օրինակի համար, պետք է ընդգրկեն ծովային բուսականության թփուտները, մանգրեթ (ծովում աճող ծառ) կամ այլ հարակից կենսահամակարգեր, որոնք կանոնակարգում են սնուցող և նստվածքային բաղադրիչների մատակարարումը ծովաժայռեր:

95. (x) չափորոշիչով ներկայացված հուշարձանները պետք է առավել մեծ կարևորություն ունենան կենսաբանական բազմազանության պաշտպանության տեսանկյունից: Միայն այն հուշարձանները, որոնք կենսաբանական տեսանկյունից ամենաբազմազանը և/կամ ներկայացուցականն են, կարող են բավարարել նշված չափորոշիչը: Հուշարձանները պետք է ընդգրկեն պահպանության և համապատասխան կենսաաշխարհագրական տարածաշրջանի և կենսահամակարգի համար բնորոշ ամենաբազմազան ֆաունան ու ֆլորան: Օրինակ՝ արևադարձային սավաննան կբավարարի ամբողջականության պահանջը, եթե ներառի տվյալ տարածքում ապրող բուսակեր կենդանիների և բուսականության ամբողջականությունը, կղզային կենսահամակարգերը պետք է ընդգրկեն էնդեմիկ կենսոլորի բնակեցման տարածքները, տարբեր տեսակների մեծ բազմազանություն պարունակող հուշարձանները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի դրանցում ընդգրկվեն ամենակարևոր տարածքները, առանց որոնց անհնար կլինի ապահովել այդ տեսակների ժողովրդագրության կենսունակությունը: Միգրացիայի ենթարկվող կենսանմուշներ պարունակող հուշարձաններում պետք է լավագույնս պահպանվեն սեզոնային բազմացման և բնադրման տարածքները, ինչպես նաև միգրացիոն ուղիները՝ անկախ դրանց գտնվելու վայրից:

II. F Պահպանություն և կառավարում

96. Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանության և կառավարման համակարգերը պետք է ապահովեն հուշարձանների գրանցման պահից ի վեր Համաշխարհային բացառիկ արժեքի, ներառյալ ամբողջականության և/կամ իսկության պայմանների, պահպանությունը կամ ուժեղացումը ժամանակի ընթացքում: Հուշարձանների պահպանվածության ընդհանուր վիճակի և, դրանից ելնելով, նաև Համաշխարհային բացառիկ արժեքի կանոնավոր ուսումնասիրությունները պետք է իրականացվեն Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար նախատեսված մոնիթորինգային գործընթացների շրջանակում, ինչպես սահմանված է գործառնական ձեռնարկում⁴:

⁴ Գործառնական ձեռնարկում սահմանված մոնիթորինգի գործընթացներն են արձագանքող մոնիթորինգը (տե՛ս 169-176-րդ պարբերությունները) և պարբերական զեկույցների ներկայացումը (տե՛ս 199-210-րդ պարբերությունները):

97. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բոլոր հուշարձանները պետք է ունենան համարժեք երկարաժամկետ օրենսդրական, կանոնակարգող, հաստատությունական և/կամ ավանդական պաշտպանության և կառավարման համակարգեր՝ պահպանվածության ապահովման նպատակով: Պաշտպանությունը պետք է ներառի համազոր ուրվագծված սահմաններ: Ներկայացված հուշարձանների համար անդամ պետությունները պետք է իրականացնեն համապատասխան պաշտպանություն ազգային, մարզային, քաղաքային և/կամ ավանդական մակարդակներով: Նրանք անվանակարգային փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնեն պաշտպանական միջոցների վերաբերյալ հստակ բացատրություն հուշարձանի պահպանության համար:

Օրենսդրական, կանոնակարգիչ և պայմանագրային միջոցներ պաշտպանությունն ապահովելու համար

98. Ազգային և տեղական մակարդակով ձեռնարկվող օրենսդրական և կանոնակարգող միջոցառումները պետք է երաշխավորեն հուշարձանի պաշտպանությունը սոցիալական, տնտեսական և այլ ազդեցություններից կամ փոփոխություններից, որոնք կարող են բացասաբար ազդել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի՝ ներառյալ հուշարձանի ամբողջականության և/կամ իսկության վրա: 39 COM 11 որոշում

Արդյունավետ պաշտպանության համար սահմանները

99. Սահմանազատման աշխատանքները կարևոր պահանջ են ներկայացվող հուշարձանի արդյունավետ պաշտպանության իրականացման համար: Սահմանները պետք է ուրվագծվեն այնպես, որպեսզի ներառվեն Համաշխարհային բացառիկ արժեքը ներկայացնող բոլոր որակական հատկանիշները և ապահովվի հուշարձանի ամբողջականությունը և/կամ իսկությունը: 39 COM 11 որոշում
100. (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացված հուշարձանների սահմանները պետք է գծվեն այնպես, որպեսզի ներառվեն հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի նյութական արտահայտումները հանդիսացող բոլոր տարածքները և որակական հատկանիշները, ինչպես նաև այն արեալները, որոնք հետագա հնարավոր ուսումնասիրությունների տեսանկյունից կարող են դրա մասնիկը դառնալ և ներուժ պարունակել նման ընկալման մակարդակը բարձրացնելու համար:
101. (vii) մինչև (x) չափորոշիչներով ներկայացված հուշարձանների սահմանները պետք է արտահայտեն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հիմք հանդիսացող տեսակների, գործընթացների և երևույթների տարածական պահանջները: Սահմանները պետք է ընդգրկեն Համաշխարհային բացառիկ արժեքի տարածքի անմիջական հարևանությամբ գտնվող համապատասխան տարածքներ, որպեսզի հուշարձանի արժեքները պաշտպանվեն մարդկային ներթափանցման ուղղակի ներգործությունից և ներկայացված տարածքից դուրս ռեսուրսների օգտագործման ազդեցությունից:
102. Ներկայացված հուշարձանի սահմանները կարող են համապատասխանել գոյություն ունեցող մեկ կամ ավելի պահպանվող տարածքներին, ինչպիսիք են ազգային պարկերը կամ բնական արգելոցները, կենսոլորտային արգելոցները կամ պահպանության տակ գտնվող մշակութային կամ պատմական շրջանները կամ այլ արեալները և տարածքները: Քանի դեռ պաշտպանության համար հաստատված տարածքները կարող են պարունակել մի քանի կառավարման գոտիներ, դրանցից միայն մի քանիսը կարող են բավարարել ցանկում ընդգրկելու պահանջները: 39 COM 11 որոշում

Պահպանական գոտիներ

103. Հուշարձանի հավուր պատշաճի պահպանությունն իրականացնելու համար համարժեք պահպանական գոտիներ պետք է սահմանվեն այնտեղ, որտեղ կա դրանց անհրաժեշտությունը:
104. Ներկայացվող հուշարձանի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով պահպանական գոտին ներկայացնող հուշարձանը շրջապատող մի տարածք է, որն ունի լրացուցիչ իրավաբանական և/կամ ավանդույթների վրա հիմնված սահմանափակում դրա օգտագործման և զարգացման վրա՝ դրանով իսկ հուշարձանին տալով պաշտպանության լրացուցիչ մակարդակ: Այն պետք է ընդգրկի ներկայացված հուշարձանի անմիջական հարևանությամբ գտնվող տարածքը, տեսահորիզոնը և այլ տարածքներ ու որակական հատկանիշներ, որոնք գործառնական տեսանկյունից կարևոր են հուշարձանի և դրա պաշտպանության իրականացման համար: Պահպանական գոտին ձևավորող տարածքը անհրաժեշտ է կազմել համապատասխան մեխանիզմների միջոցով յուրաքանչյուր դեպքի համար: Չափի, առանձնահատկությունների և օգտագործման թույլտվության մանրամասները, ինչպես նաև հուշարձանի ու պահպանական գոտու հստակ սահմանները ներկայացնող քարտեզը պետք է ներառված լինի անվանակարգային փաթեթում:
105. Պահպանական գոտու միջոցով հուշարձանի պաշտպանության մասին հստակ նկարագրությունը անհրաժեշտ է նույնպես ներկայացնել:
106. Այն պարագաներում, որտեղ պահպանական գոտի չի առաջարկվում, անվանակարգային փաթեթը պետք է ներառի պարզաբանում, թե ինչու պահպանական գոտի չի պահանջվում:
107. Չնայած որ պահպանական գոտիներն առաջարկվող հուշարձանի մաս չեն կազմում, պահպանական գոտին Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց հետո կատարվող յուրաքանչյուր փոփոխություն պետք է հաստատվի Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից՝ կիրառելով սահմանների փոքր փոփոխությունների համար նախատեսված ընթացակարգը (տե՛ս 164-րդ պարբերությունը և 11-րդ հավելվածը): Ցանկում ընդգրկելուց հետո պահպանական գոտիների ստեղծումը դիտարկվում է որպես սահմանների փոքր փոփոխություններ⁵:

Կառավարման համակարգեր

108. Յուրաքանչյուր ներկայացված հուշարձան պետք է ունենա համապատասխան կառավարման պլան կամ այլ փաստաթղթավորված կառավարման համակարգ, որով պետք է մանրամասնել, թե ինչպես է պահպանվում հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը՝ գերադասությունը տալով շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցին:
109. Կառավարման համակարգի նպատակը ներկա և ապագա սերունդների համար առաջարկվող հուշարձանի արդյունավետ պաշտպանության ապահովումն է:
110. Արդյունավետ կառավարման համակարգը կախված է ներկայացված հուշարձանի տեսակից, առանձնահատկությունից և դրա մշակութային ու բնության համատեքստից: Կառավարման համակարգերը կարող են տարբերվել՝ ելնելով տարբեր մշակութային տեսլականներից, մատչելի ռեսուրսներից և այլ գործոններից: Դրանք կարող են միավորել ավանդական փորձը, գոյություն

⁵ Անդրազգային/անդրսահմանային հուշարձանների յուրաքանչյուր փոփոխություն կարիք ունի բոլոր շահագրգիռ պետությունների կողմից ստորագրված համաձայնագրի:

ունեցող քաղաքային կամ շրջանային պլանավորման գործիքները, ինչպես նաև այլ պլանավորման հսկողական մեխանիզմներ՝ և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ: Առաջարկվող միջամտությունների ազդեցության գնահատումները կարևոր նշանակություն ունեն Համաշխարհային ժառանգության բոլոր հուշարձանների համար:

- 111.** 111.Վերոգրյալի տարատեսականությունը գիտակցելով՝ արդյունավետ կառավարման համակարգի ընդհանուր տարրերը կարող են պարունակել՝ 39 COM 11 որոշում
- a) հուշարձանի կարևորության համապարփակ ընկալում՝ ներառյալ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ պլանավորման և խորհրդատվությունների կազմակերպման գործընթացը,
 - b) պլանավորման, իրականացման, մոնիթորինգի, գնահատման և զեկույցների ներկայացման փուլ,
 - c) սոցիալական, տնտեսական և այլ ազդեցությունների ու փոփոխությունների նկատմամբ խոցելիության գնահատում, ինչպես նաև զարգացումներ և առաջարկվող միջամտությունների ազդեցության մոնիթորինգ,
 - d) գործընկերների և շահագրգիռ կողմերի ներգրավման մեխանիզմների մշակում և դրանց միջև իրականացվող գործողությունների համակարգում,
 - e) անհրաժեշտ ռեսուրսների հատկացում,
 - f) կարողությունների կառուցում,
 - g) հաշվետու, թափանցիկ նկարագրություն կառավարման համակարգը գործելու վերաբերյալ:
- 112.** Ներկայացված հուշարձանի պաշտպանության, կոնսերվացման և հանրա- 39 COM 11 որոշում
հոշակման նպատակով արդյունավետ կառավարման համակարգը պարու-
նակում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ:
Ժամանակի ընթացքում հուշարձանների ձևափոխությունը վերահսկելի դարձ-
նելու և դրանց Համաշխարհային բացառիկ արժեքի բոլոր ասպեկտների
պահպանվածության ապահովման համար կարևոր նշանակություն ունի
ներառական (ինտեգրված) մոտեցումը պլանավորման և կառավարման
ընթացքում: Նման մոտեցումը դուրս է գալիս հուշարձանի տարածքից և
ընդգրկում է ցանկացած պահպանական գոտի (ներ), ինչպես նաև ընդլայնված
տարածքներ: Ընդլայնված տարածքներ կարող են լինել հուշարձանի տեղա-
գրությունը, բնական և կառուցված միջավայրը, ինչպես նաև այլ տարրեր,
ինչպիսիք են՝ ենթակառուցվածքը, հողօգտագործման օրինակները, տարած-
քային կազմակերպումը և տեսահորիզոնը: Դրանք կարող են ներառել նաև
սոցիալական և մշակութային ավանդույթները, տնտեսական գործնականությունները և
ժառանգության հետ կապված ոչ նյութական այլ ասպեկտներ, ինչպես օրինակ՝
ընկալումները և զուգորդումները: Առավել մեծ միջավայրի կառավարումը կապ-
ված է Համաշխարհային բացառիկ արժեքի ամրապնդման դերակատարության
հետ:
- 113.** Ավելին, կոնվենցիայի կիրարկման համատեքստում Համաշխարհային
ժառանգության կոմիտեն կարող է հաստատել արձագանքող մոնիթորինգի (տես
4-րդ գլուխը) և պարբերական զեկույցների (տես 5-րդ գլուխը) ներկայացման
գործընթացները:
- 114.** Առանձին բաղադրիչների համակարգված կառավարում ապահովելու
նպատակով սերիական հուշարձանների պարագայում կառավարման

մեխանիզմը կարևոր նշանակություն ունեն և պետք է փաստաթղթավորված լինեն անվանակարգային փաթեթում (տես 137-139-րդ պարբերությունները):

115. [Ուժը կորցրած է ճանաչվել]: 39 COM 11 որոշում
116. Երբ ներկայացված հուշարձանի հիմնարար որակական հատկանիշները վտանգվում են մարդու գործողությունների հետևանքով, սակայն դեռևս կարող են համապատասխանել չափորոշիչին ու բավարարել 78-95-րդ պարբերություններով սահմանված իսկության կամ ամբողջականության պահանջները, անվանակարգային փաթեթի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել ուղղիչ գործողությունները ներկայացնող գործողությունների պլան: Եթե անվանակարգը ներկայացնող անդամ պետության կողմից առաջարկվող ուղղիչ գործողությունները չիրականացվեն այդ պետության կողմից առաջարկվող ժամանակահատվածում, ապա կոմիտեն քննության կառնի հուշարձանը ցուցակից հանելու հարցը՝ իր կողմից ընդունված ընթացակարգին համապատասխան (տես IV.C գլուխը):
117. Անդամ պետությունները պատասխանատվություն են կրում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի արդյունավետ կառավարման համար: Անդամ պետությունները պետք է սերտ համագործակցեն հուշարձանի կառավարիչների, կառավարման լիազորություն ունեցող գործակալությունների և այլ գործընկերների, ինչպես նաև հուշարձանի կառավարման գործում ընդգրկված այլ շահագրգիռ կողմերի հետ:
118. Կոմիտեն առաջարկում է, որ անդամ պետությունները արտակարգ իրավիճակների կառավարման նախապատրաստվածությունը, որպես առանձին տարր, ներառեն իրենց տարածքում գտնվող Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարման պլանների և դասավանդման ռազմավարության մեջ:

Կայուն օգտագործում

119. Համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկված հուշարձանները կարող են շարունակաբար և նպատակային օգտագործվել, եթե բնապահպանության և մշակութային կայունության տեսանկյունից կայուն են և կարող են ազդեցություն ունենալ շահագրգիռ համայնքների կյանքի որակի փոփոխման գործում: Անդամ պետություններն իրենց գործընկերների հետ միասին կարող են երաշխավորել, որ նման կայուն օգտագործումը կամ որևէ փոփոխությունը հակառակ ազդեցություն չի ունենա հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա: Որոշ հուշարձաններ նախատեսված չեն մարդու կողմից օգտագործման համար: Համաշխարհային ժառանգության հուշարձանների վրա ազդող օրենսդրությունները, քաղաքականությունները և ռազմավարությունները պետք է երաշխավորեն Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը, նեցուկ դառնան բնության և մշակութային ժառանգության մեծամասշտաբ կոնսերվացմանը, ինչպես նաև խթանեն ու խրախուսեն համայնքների և շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը՝ հուշարձանի կայուն պահպանության, կոնսերվացման, կառավարման և հանրահռչակման անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով:

III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

III. A Անվանակարգերի նախապատրաստումը

120. Կոմիտեի համար անվանակարգային փաստաթղթերը հանդիսանում են այն հիմքը, որը քննության է առնվում հուշարձանը Համաշխարհային մեխանիզմը

ժառանգության ցանկում ընդգրկելու համար: Անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը պետք է ընդգրկված լինի անվանակարգային փաստաթղթերում և դրանք պետք է խաչաձև կապված լինեն տեղեկատվական աղբյուրին:

121. 3-րդ հավելվածն ուղեցույց է անդամ պետություններին հուշարձանների առանձին տեսակների համար անվանակարգերի պատրաստման նպատակով:

122. Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման նպատակով անվանակարգի պատրաստումից առաջ անդամ պետությունը պետք է ծանոթանա 168-րդ պարբերությունում նկարագրված անվանակարգի ներկայացման փուլերի հետ: Ցանկայի է նախապես իրականացնել նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի հիմնավորվի, որ հուշարձանն ունի ներուժ համաշխարհային բացառիկ արժեք դառնալու համար՝ ներառյալ դրա ամբողջականությունը կամ իսկությունը նախքան ամբողջական անվանակարգային փաթեթը պատրաստելը, որը կարող է թանկարժեք և ժամանակատար լինել: Նախապատրաստական աշխատանքը կարող է ընդգրկել հուշարձանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, թեմատիկ ուսումնասիրությունները, հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի ներուժը վեր հանող հետազոտությունները՝ ներառյալ ամբողջականությունը կամ իսկությունը, կամ տարածաշրջանային կամ համաշխարհային համատեքստում նախնական համեմատական վերլուծությունը՝ ներառյալ խորհրդատվական մարմինների պատրաստած բացթողումների համատեքստում կատարած վերլուծությունը: Առաջին փուլը կօգնի բացահայտել հնարավոր անվանակարգի ներկայացման նպատակահարմարությունը և խուսափել ռեսուրսների վատնումից այնպիսի անվանակարգի համար, որն ամենայն հավանականությամբ, չի անցնի: Անդամ պետություններին առաջին փուլի համար կոչ է արվում համապատասխան խորհրդատվական⁶ մարմնից (մարմիններից) ստանալ նախնական աջակցություն, ինչպես նաև առաջին իսկ հնարավորության դեպքում կապ հաստատել Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ՝ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու նպատակով:

34 COM 12 (III) որոշում
«Անվանակարգերի
պատրաստման նախնական
գործընթացներ. Առաջադրման
գործընթացների ստեղծարար
մոտեցումներ» (Ֆուկետ. 2010 թ.)
36 COM 13.I որոշում
39 COM 11 որոշում

123. Տեղի համայնքների, տեղաբնիկների, կառավարական, հասարակական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմինների մասնակցությունը անվանակարգային փաթեթի պատրաստման գործընթացում կարևորվում է, քանի որ նրանք անդամ պետության հետ միասին կիսում են հուշարձանի պահպանության հետ կապված պատասխանատվությունը: Անդամ պետություններին կոչ է արվում անվանակարգային փաթեթների պատրաստումը իրականացնել տարբեր շահագրգիռ կողմերի՝ հնարավորինս ընդլայնված մասնակցությամբ և անհրաժեշտության դեպքում ցուցադրել, որ տեղաբնիկների համաձայնությունը ձեռք է բերվել անկաշկանդ, նախնական և տեղեկացված լինելու պարագայում, դրանով իսկ, ի թիվս այլ հանգամանքների՝ անվանակարգի պատրաստման քաղաքականությունը հանրության համար մատչելի դարձնելով տարբեր լեզուներով և հանրային խորհրդակցությունների ու լսումների միջոցով:

39 COM 11 որոշում

124. VII.E գլխում սահմանվածին համապատասխան՝ անդամ պետությունը կարող է հայտ ներկայացնել նախապատրաստական աջակցության համար:

⁶ Նախնական գործընթաց. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով ներկայացրած անվանակարգերի մասով «Նախնական գործընթացը» ներառում է խորհրդատվություն և վերլուծություն, որոնք անհրաժեշտ են նախքան անվանակարգի ներկայացումը և նպատակ ունեն նվազեցնելու գնահատման գործընթացի ժամանակ էական խնդիրներ պարունակող անվանակարգերի թվաքանակը: Նախնական գործընթացի հիմնական սկզբունքը խորհրդատվական մարմիններին և քարտուղարությանը հնարավորության տալն է անդամ պետություններին ուղղակի աջակցություն տրամադրելու հարցում առաջադրման ամբողջ գործընթացի ընթացքում՝ Համաշխարհային ժառանգության հնարավոր անվանակարգի պատրաստման նպատակով:

125. Անդամ պետություններին կոչ է արվում կապվել քարտուղարության հետ, որը կարող է աջակցություն ցուցաբերել անվանակարգի պատրաստման գործընթացի ժամանակ:

126. Քարտուղարությունը կարող է նաև՝

a) աջակցել համապատասխան քարտեզների և լուսանկարների ձեռքբերման ու համապատասխան ազգային գործակալություններից դրանք ստանալու հարցում,

b) տրամադրել հաջողությամբ պսակված անվանակարգեր, կառավարչական կամ օրենսդրական դրույթների օրինակներ,

c) ուղղորդել տարբեր տեսակի հուշարձանների, ինչպիսիք են մշակութային տեղանքապատկերները, քաղաքները, ջրանցքները և ժառանգության ուղիները, անվանակարգերի պատրաստման հարցում (տե՛ս 3-րդ հավելվածը),

d) խորհրդատվություն տրամադրել սերիական կամ անդրսահմանային հուշարձանների ներկայացման համար (տե՛ս 134-139-րդ պարբերությունները):

127. Քարտուղարությունից դիտողություններ ստանալու և քննության առնելու նպատակով անդամ պետությունները կարող են անվանակարգային փաթեթի նախագիծը ներկայացնել տարվա ընթացքում՝ ցանկացած պահի: Այնուամենայնիվ, անդամ պետություններին կոչ է արվում անվանակարգերի նախագծերը քարտուղարությանը տրամադրել մինչև նախորդող տարվա սեպտեմբերի 30-ը (տե՛ս 168-րդ պարբերությունը), եթե ցանկանում են դրանք ներկայացնել փետրվարի 1-ով սահմանված վերջնաժամկետին: Անվանակարգերի նախագծերը կարող են ներկայացվել կամ էլեկտրոնային, կամ տպված տարբերակով (միայն 1 պատճենը՝ առանց հավելվածների՝ բացառությամբ քարտեզների): Երկու տարբերակի դեպքում էլ դրանք պետք է ներկայացվեն ուղեկցվող գրությամբ:

37 COM 12.II որոշում

128. Անվանակարգերը կարող են ներկայացվել տարվա ընթացքում ցանկացած պահի, սակայն միայն այն անվանակարգերը, որոնք «ամբողջական» են (տե՛ս 132-րդ պարբերությունը և 5-րդ հավելվածը) և ստացվել են մինչև **փետրվարի 1-ը**⁷ կամ փետրվարի 1-ին՝ գալիք տարվա ընթացքում Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով: Միայն անդամ պետության նախնական ցանկում ընդգրկված հուշարձանների անվանակարգերը կարող են քննության առնվել կոմիտեի կողմից (տե՛ս 63-րդ և 65-րդ պարբերությունները):

37 COM 12.II որոշում
39 COM 11 որոշում

III.B Անվանակարգերի ձևաչափը և բովանդակությունը

129. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ներկայացված հուշարձանների անվանակարգերը պետք է կազմվեն 5-րդ հավելվածով սահմանված ձևաչափին համապատասխան:

130. Ձևաչափն ընդգրկում է հետևյալ բաժինները.

1. հուշարձանի նույնականացում,
2. հուշարձանի նկարագրություն,
3. ցանկում ընդգրկելու հիմնավորում,
4. պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները,
5. պահպանություն և կառավարում,
6. մոնիթորինգ,
7. փաստաթղթավորում,

⁷ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

8. պատասխանատու մարմինների կոնտակտային տվյալներ,
9. անդամ պետության (պետությունների) անունից ստորագրություն:

131. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով ներկայացված անվանակարգերը գնահատվում են ելնելով բովանդակությունից, այլ ոչ թե տեսքից:

132. Անվանակարգային փաթեթը «ամբողջական» համարելու համար անհրաժեշտ է բավարարել ստորև ներկայացվող պայմանները (տե՛ս 5-րդ հավելվածի ձևաչափը):

37 COM 12.II որոշում
39 COM 11 որոշում

Ամփոփ նկարագրություն

Ամփոփ նկարագրությունը պետք է պարունակի անվանակարգային փաթեթի հիմնական տեքստից քաղված տեղեկատվություն (տե՛ս 5-րդ հավելվածը)՝ ներառյալ քարտեզ(ներ)ի փոքրացված տարբերակները, որոնցում պատկերվում են ներկայացված հուշարձանի սահմանները և պահպանական գոտին (որտեղ հնարավոր է), ինչպես նաև Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության նախագիծը (նույն տեքստը, որը ներկայացված է անվանակարգի 3.3-րդ բաժնում):

1. Հուշարձանի նույնականացումը

Առաջարկվող հուշարձանի տարածքները պետք է հստակ ներկայացված լինեն՝ միանշանակ տարբերակելով ներկայացվող հուշարձանի բուն տարածքի և պահպանական գոտու (որտեղ առկա է) սահմանները (տե՛ս 103-107-րդ պարբերությունները): Քարտեզները պետք է ներկայացվեն բավականաչափ մանրամասն (տե՛ս 5-րդ հավելվածի 1.e բաժնի նկարագրությունը)՝ հստակ պատկերացնելու համար, թե հողի և/կամ ջրային տարածքի որ հատվածն է ներկայացվում: Ծանոթագրություններով համալրված անդամ պետության կողմից թարմացված և տպագրված տեղագրական քարտեզները, որոնք ցույց են տալիս ներկայացվող հուշարձանի բուն տարածքը և պահպանական գոտու (որտեղ առկա է) սահմանները, պետք է ներկայացվեն նաև տպագիր օրինակներով: Անվանակարգային փաթեթը կհամարվի «թերի», եթե այն չպարունակի հստակ պատկերված սահմանները:

2. Հուշարձանի նկարագրությունը

Հուշարձանի նկարագրությունը պետք է ընդգրկի դրա նույնականացումը, ինչպես նաև պատմության և զարգացման ակնարկը: Քարտեզի վրա արտացոլված են բոլոր բաղկացուցիչ մասերը պետք է նույնականացվեն և նկարագրվեն: Մասնավորապես, եթե ներկայացվում է սերիական անվանակարգ, ապա դրա բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը պետք է հստակորեն նկարագրվի:

Հուշարձանի պատմությունը և զարգացումը պետք է ներկայացնի, թե ինչպես է հուշարձանը հասել իր ներկայիս վիճակին, ինչպես նաև հիմնական փոփոխությունները, որը այն կրել է: Տեղեկատվությունը պետք է ներկայացնի այն կարևոր փաստերը, որոնք անհրաժեշտ են ներկայացված փաստարկի հիմնավորման և ամրապնդման համար՝ ցույց տալու, որ հուշարձանը համապատասխանում է համաշխարհային բացառիկ արժեքի չափորոշիչին և բավարարում է ամբողջականության և/կամ իսկության պահանջները:

3. Ընդգրկման հիմնավորումը

Այս բաժնում պետք է հստակ ներկայացնել, թե ինչու է հուշարձանը համարվում համաշխարհային բացառիկ արժեք:

3.1.a-ից 3.1.e կետերում ներկայացվածը պետք է պարունակի առավել մանրամասն տեղեկատվություն՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության առաջարկվող տեքստի հաստատմանը նպաստելու համար (3.3-րդ բաժին):

3.1.b կետում պետք է ներկայացվի Համաշխարհային ժառանգության չափորոշիչը (տե՛ս 77-րդ պարբերությունը), համաձայն որի առաջարկվում է ընդգրկել հուշարձանը՝ յուրաքանչյուր չափորոշիչի կիրառման համար հստակ ներկայացված փաստարկի հետ միասին: Ամբողջականության (մշակութային հուշարձանի ներկայացման դեպքում) և իսկության մասին հայտարարությունները պետք է պարունակեն 78-95-րդ պարբերություններով սահմանված պահանջները բավարարելու տեղեկատվություն և ներկայացնեն, թե ինչպես է դա արվում:

3.2-րդ բաժնում անհրաժեշտ է ներկայացնել հուշարձանի համեմատական վերլուծությունը, լինի դա Համաշխարհային ժառանգության ցանկում, թե ոչ՝ և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներով: Համեմատական վերլուծությունը պետք է բացատրի առաջարկվող հուշարձանի կարևորությունը ազգային և միջազգային համատեքստում:

3.3-րդ բաժնում անդամ պետության կողմից առաջարկվող Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը (տե՛ս 49-53-րդ և 155-րդ պարբերությունները) պետք է հստակ ներկայացնի, թե ինչու է հուշարձանն արժանի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար:

4. Պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները

Այս բաժնում պետք է ներկայացնել հուշարձանի պահպանվածության վիճակի մասին ճշգրիտ տվյալները (ներառյալ դրա ֆիզիկական վիճակի և կոնսերվացման միջոցառումների մասին տեղեկատվությունը): Հուշարձանի վրա ազդող գործոնները (սպառնալիքները ևս) պետք է ներկայացվեն այս բաժնում: Այս բաժնում ներկայացված տեղեկատվությունը հանդիսանում է ելակետային տվյալ, որն անհրաժեշտ է ապագայում առաջադրվող հուշարձանի պահպանվածության վիճակը մոնիթորինգի ենթարկելու համար:

5. Պահպանություն և կառավարում

Պահպանություն: 5-րդ բաժնում ներկայացվում են հուշարձանի պաշտպանությանը վերաբերող օրենսդրական, կանոնակարգող, պայմանագրային, պլանավորման, հաստատութենական և/կամ ավանդական միջոցառումները, ինչպես նաև մանրամասն վերլուծություն, թե ինչպես է գործում պաշտպանության համակարգը: Օրենսդրական, կանոնակարգող, պայմանագրային պլանավորման և/կամ ինստիտուցիոնալ տեքստերը կամ դրանցից քաղվածքները անհրաժեշտ է կից ներկայացնել անգլերենով կամ ֆրանսերենով:

Կառավարում: Անվանակարգում համապատասխան կառավարման պլանի կամ այլ կառավարման համակարգի ներկայացում նույնպես կարևորվում է: Ակնկալվում է, որ կներկայացվեն նաև կառավարման պլանի կամ կառավարման այլ համակարգի արդյունավետ իրագործման հետ կապված երաշխիքներ: Կայուն զարգացման սկզբունքները նույնպես պետք է ընդգրկված լինեն կառավարման համակարգում:

Կառավարման պլանի պատճենը կամ կառավարման համակարգի թղթաբանությունն անհրաժեշտ է կից ներկայացնել անվանակարգային փաթեթին: Եթե կառավարման պլանը գոյություն չունի ֆրանսերենով կամ անգլերենով, ապա դրա անգլերեն կամ ֆրանսերեն մանրամասն նկարագրությունը պետք է կից ներկայացվի:

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ներկայացված հուշարձանների համեմատական վերլուծությունները, որոնք պատրաստվել են անդամ պետությունների կողմից, չպետք է շփոթել կոմիտեի պահանջով խորհրդատվական մարմինների պատրաստած թեմատիկ ուսումնասիրությունների հետ (տե՛ս ստորև ներկայացրած 148-րդ պարբերությունը) 7 EXT.COM 4A որոշում

Կառավարման պլանի կամ փաստաթղթավորված կառավարման համակարգի մանրամասն վերլուծությունը կամ բացատրությունը պետք է ներկայացվի անվանակարգի 5.e բաժնում:

Անվանակարգային փաթեթում վերոգրյալ տեղեկատվությունը ներկայացված չլինելու դեպքում անվանակարգային փաթեթը համարվում է թերի, քանի դեռ հուշարձանի կառավարումն ուղղորդող ավարտական պլանը չի ներկայացվել:

6. Մոնիթորինգ

Անդամ պետությունները պետք է ներկայացնեն տեղում օգտագործվող և/կամ առաջարկվող հիմնական ինդիկատորները հուշարձանի պահպանվածության վիճակը, դրա վրա ազդող գործոնները չափելու և գնահատելու համար, ինչպես նաև կոնսերվացմանն ուղղված միջոցները, դրանց փորձաքննության պարբերականությունը և պատասխանատու մարմինների ինքնությունը:

7. Փաստաթղթավորում

Անվանակարգի բովանդակային ներկայացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետք է տրամադրել: Ի հավելումն վերոգրյալի՝ անվանակարգային փաթեթը պետք է ներառի՝

a) տպագրության համար նախատեսված լուսանկարներ (թվային լուսանկարներ՝ նվազագույնը՝ 300 ժբ և, անհրաժեշտության դեպքում՝ ֆիլմ, տեսա- կամ այլ տեսալսողական նյութ),

b) պատկեր/տեսալսողական նյութերի ցանկ և թույլտվության ձևաչափը (տե՛ս 5-րդ հավելվածի 7.a կետը): Անվանակարգային փաթեթը պետք է փոխանցվի տպագրի և էլեկտրոնային ձևաչափով (նախընտրելի են Word և/կամ PDF ձևաչափերը):

8. Պատասխանատու անձանց կոնտակտային տվյալներ

Պատասխանատու մարմինների հետ կապի ամբողջական տվյալները պետք է տրամադրվեն:

9. Անդամ պետության անունից ստորագրությունը

Անվանակարգային փաթեթը պետք է կրի անդամ պետության կողմից ստորագրելու համար լիազորված պաշտոնյայի բնօրինակ ստորագրությունը:

10. Պահանջվող կրկնօրինակների քանակը (ներառյալ կից ներկայացվող քարտեզները)

Մշակութային և բնության հուշարձանների անվանակարգերը (բացառությամբ մշակութային տեղանքապատկերների). 2 նույնաբովանդակ պատճեններ:

Խառը հուշարձանների և մշակութային տեղանքապատկերների անվանակարգեր. 2 նույնաբովանդակ պատճեններ:

11. Թղթային և էլեկտրոնային ձևաչափ

Անվանակարգերը պետք է ներկայացվեն A4 չափի թղթի վրա և էլեկտրոնային ձևաչափով (Word և/կամ PDF ձևաչափ):

12. Առաքում

Անդամ պետություններն անգլերենով կամ ֆրանսերենով պատշաճ մակարդակով ստորագրված անվանակարգերը պետք է ներկայացնեն հետևյալ հասցեով՝

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն

7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352

Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0) 1 4568 1136
Էլ. փոստ՝ wh-nominations@unesco.org

133. Անվանակարգի հետ միասին ներկայացված բոլոր փաստաթղթերն (քարտեզներ, պլաներ, լուսանկարչական նյութեր և այլն) ի պահ է վերցնում քարտուղարությունը:

III. C Տարբեր հուշարձանների անվանակարգերի նկատմամբ պահանջները

Անդրսահմանային հուշարձաններ

134. Առաջադրվող հուշարձանը կարող է հայտնվել՝ 7 EXT.COM 4A որոշում
- a) մեկ անդամ պետության տարածքում, կամ
- b) ընդհանուր սահման ունեցող շահագրգիռ անդամ պետությունների տարածքներում (անդրսահմանային հուշարձան):
135. Հնարավորության դեպքում անդամ պետությունները անդրսահմանային անվանակարգը պետք է համատեղ նախապատրաստեն և ներկայացնեն կոնվենցիայի 11.3-րդ կետին համապատասխան: Շահագրգիռ անդամ պետություններին խորհուրդ է տրվում ձևավորել կառավարման համատեղ կոմիտե կամ համարժեք մարմին՝ անդրսահմանային հուշարձանի ամբողջական կառավարումը հսկողության տակ պահելու նպատակով:
136. Արդեն իսկ գոյություն ունեցող և մեկ անդամ պետության տարածքում տեղակայված Համաշխարհային ժառանգության հուշարձանի ընդլայնումները կարող են առաջարկվել որպես անդրսահմանային հուշարձաններ:

Սերիական հուշարձաններ

137. Սերիական հուշարձանները կարող են ընդգրկել մեկ կամ մի քանի բաղադրիչներ, որոնք վերաբերում են հստակ տարբերակված աղբյուրների՝
- a) բաղադրիչները պետք է արտահայտեն ժամանակի ընթացքում ունեցած մշակութային, սոցիալական կամ գործառնական կապը, որով կիրառելիության դեպքում ներկայացվում է տեղանքապատկերների, բնապահպանության, էվոլյուցիոն կամ բնակեցման հետ կապվածությունը:
- b) Յուրաքանչյուր բաղադրիչ պետք է իր ներդրումն ունենա Համաշխարհային բացառիկ արժեքի հիմնավորման գործում՝ բովանդակային, գիտական, արդեն իսկ սահմանված և նկարագրված լինելու տեսանկյունից, և կարող է ընդգրկել, ըստ էության, ոչ նյութական բաղադրիչներ: Արդյունքում ունեցած Համաշխարհային բացառիկ արժեքը պետք է հետադարձաբար ընկալվի և հաղորդակից դարձվի:
- c) Հետևաբար անհրաժեշտ է ամբողջությամբ հաշվի առնել առաջարկվող հուշարձանի ընդհանուր կառավարման և կապակցվածության առանձնահատկությունները՝ բաղադրիչ հատվածների անհարկի հատվածավորումից, ներառյալ բաղադրիչ հատվածների ընտրությունից, խուսափելու նպատակով (տես 114-րդ պարբերությունը),
- և ներկայացնել սերիական հատվածները որպես մեկ ամբողջություն և ոչ որպես առանձին հատվածներ, որոնք ունեն Համաշխարհային բացառիկ արժեք:

138. Սերիական հուշարձանը կարող է տեղակայված լինել՝ 7 EXT.COM 4A որոշում
- a) մեկ անդամ պետության տարածքում (սերիական ազգային անվանակարգ) կամ
- b) տարբեր անդամ պետությունների տարածքներում, որտեղ կարիք չկա,

որ միմյանց շարունակեն, և ներկայացված են շահագրգիռ բոլոր անդամ պետությունների համաձայնությամբ (սերիական անդրսահմանային հուշարձան):

139. Մեկ կամ մի քանի անդամ պետությունների կողմից ներկայացված սերիական անվանակարգերը կարող են քննարկման ներկայացվել մի քանի փուլերի ընթացքում, պայմանով, որ առաջին առաջադրված հուշարձանն ինքնին ունի Համաշխարհային բացառիկ արժեք: Անդամ պետություններին, որոնք պլանավորում են առաջադրել սերիական հուշարձան մի քանի փուլերով, կոչ է արվում իրազեկել կոմիտեին իրենց մտադրությունների մասին՝ հետագա քայլերը լավագույնս պլանավորելու համար:

III. D Անվանակարգերի գրանցում

140. Անդամ պետություններից անվանակարգերի ստացումից անմիջապես հետո քարտուղարությունը հաստատում է, որ ստացել է այն, ստուգում է ամբողջականությունը և գրանցում է անվանակարգերը: Քարտուղարությունը փոխանցում է անվանակարգային փաթեթները համապատասխան խորհրդատվական մարմիններին գնահատման նպատակով: Կոմիտեի անդամ պետությունների համար քարտուղարությունը մատչելի է դարձնում նաև անվանակարգային փաթեթների էլեկտրոնային տարբերակները՝ դրանք տեղադրելով Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքէջում: Քարտուղարությունը կարող է անդամ պետություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն՝ խորհրդատվական մարմինների պահանջով ևս: 168-րդ պարբերությունում մանրամասն ներկայացված է անվանակարգերի գրանցման և ուսումնասիրման ժամանակացույցը:
141. Քարտուղարությունը հաստատում և կոմիտեի յուրաքանչյուր նիստին ներկայացնում է ստացված բոլոր անվանակարգերի ցանկը՝ նշելով դրանց ստացման օրը, «ամբողջական» կամ «թերի» լինելու կարգավիճակը, իսկ «ամբողջական» փաթեթների դեպքում նաև դրանց օրը՝ համաձայն 132-րդ պարբերության և 5-րդ հավելվածի:
142. Անվանակարգային փաթեթը քննության է առնվում դրա ներկայացման և Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից որոշում ընդունելու ժամանակահատվածում: Այս փուլը սովորաբար տևում է մեկուկես տարի՝ առաջին տարվա փետրվարի 1-ին ներկայացնելու և 2-րդ տարվա հունիսին կոմիտեի կողմից որոշում ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը:

39 COM 11 որոշում

26 COM 14 որոշում
28 COM 14B.57 որոշում
39 COM 11 որոշում

III. E Խորհրդատվական մարմինների կողմից անվանակարգերի գնահատումը

143. Խորհրդատվական մարմինները գնահատում են՝ արդյո՞ք անդամ պետության առաջադրած հուշարձանն ունի համաշխարհային բացառիկ արժեք, բավարարում է ամբողջականության և (կիրառելիության դեպքում) իսկության, ինչպես նաև պաշտպանության և կառավարման պահանջները: ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի գնահատման ընթացակարգերը և ձևաչափերը նկարագրված են 6-րդ հավելվածում:
144. Մշակութային ժառանգության անվանակարգերի գնահատումն իրականացնում է ԻԿՕՄՕՍ-ը:
145. Բնության ժառանգության անվանակարգերի գնահատումն իրականացնում է IUCN-ը:
146. Մշակութային հուշարձանների «մշակութային տեղանքապատկերներ» անվանակարգում առաջադրելու դեպքում գնահատումն իրականացվում է ԻԿՕՄՕՍ-ի կողմից IUCN-ի հետ խորհրդակցությամբ: Խառը հուշարձանների

39 COM 11 որոշում

դեպքում հուշարձանի գնահատումն իրականացվում է ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի կողմից համատեղ:

- 147.** Համաշխարհային ժառանգության կոմիտեի պահանջով կամ անհրաժեշտությունից ելնելով՝ ԻԿՕՄՕՍ-ը և IUCN-ը կարող են կատարել թեմատիկ ուսումնասիրություններ՝ Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցելու համար առաջարկվող հուշարձանների գնահատումն իրականացնելու նպատակով՝ դրանց տարածաշրջանային, համաշխարհային կամ թեմատիկ համատեքստում: Այս ուսումնասիրությունները պետք է հիմնվեն անդամ պետությունների կողմից ներկայացված նախնական ցանկի վերլուծության և նախնական ցանկերի ներդաշնակեցման նպատակով կազմակերպված հանդիպումների, զեկույցների, ինչպես նաև խորհրդատվական մարմինների և որակավորում ունեցող կազմակերպությունների և անհատների կողմից իրականացված այլ տեխնիկական հետազոտությունների վրա: Այդ ուսումնասիրությունների ցանկը կարելի է գտնել 3-րդ հավելվածի III բաժնում և խորհրդատվական մարմինների կայքէջերում: Այս ուսումնասիրությունները անհրաժեշտ է տարանջատել անդամ պետության կողմից պատրաստվող համեմատական վերլուծությունից, որն անհրաժեշտ է հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում առաջադրելու դեպքում (տե՛ս 132-րդ պարբերությունը):

ԻԿՕՄՕՍ: <http://www.icomos.org/studies/>
IUCN: <http://www.iucn.org/themes/wcpa/pubs/worldheritage.htm>

- 148.** ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի գնահատման և ներկայացման համար պետք է ուղղորդիչ լինեն ստորև ներկայացվող սկզբունքները: Գնահատումը և ներկայացումը պետք է՝
- a) բխի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայից և համապատասխան գործառնական ձեռնարկից և կոմիտեի որոշումներով հաստատված ցանկացած քաղաքականությունից,
 - b) լինի օբյեկտիվ, մանրամասն և գիտական՝ ընդգրկելով բոլոր այն տեղեկատվությունները, որոնք ներկայացվել են անվանակարգի վերաբերյալ խորհրդատվական մարմինների կողմից,
 - c) իրականացվի արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմ), հավասարության և թափանցիկության միասնական մակարդակի վրա գնահատման ամբողջ գործընթացի ընթացքում՝ խորհրդակցելով և քննարկելով ներկայացնող անդամ պետության հետ,
 - d) համապատասխանի և գնահատման, և՛ ներկայացման համար սահմանված ձևաչափին, որն անհրաժեշտ է համաձայնեցնել քարտուղարության հետ և ներառել բոլոր այն փորձագետների անունները, ովքեր մասնակցել են գնահատման գործընթացին՝ բացառությամբ խորհրդապահական գրառումներ ներկայացնող գրախոսների և առանձին հավելվածով գնահատմանը վերաբերող ծախսերի և արժեքների բյուջեի բացվածքը,
 - e) ե) ներգրավի թեմային ծանոթ տարածաշրջանային փորձագետների,
 - f) գ) հստակ մատնանշի՝ արդյո՞ք հուշարձանն ունի համաշխարհային բացառիկ արժեք, բավարարում է ամբողջականության և/կամ իսկության, ինչպես նաև կառավարման պլանով/համակարգով ու օրենսդրությամբ սահմանված պահանջները,
 - g) սիստեմատիկ կերպով գնահատի յուրաքանչյուր հուշարձանին համապատասխան չափորոշիչը՝ ներառյալ պահպանվածության վիճակը, համեմատաբար՝ այսինքն՝ համեմատելով անդամ պետության տարածքում և դրա սահմաններից դուրս գտնվող նմանատիպ հուշարձանների հետ,
 - h) պարունակի կոմիտեի որոշումներին և պահանջներին վերաբերող հղումներ,

28 COM 14B.57 որոշում
30 COM 13 որոշում
39 COM 11 որոշում

որոնք առնչվում են քննվող անվանակարգերին,

- i) հաշվի չառնի և չներառի անդամ պետության տրամադրած ցանկացած տեղեկատվություն, որը ներկայացվել է քննության տարվա փետրվարի 28-ից հետո: Անդամ պետությունը պետք է տեղեկացվի, եթե տեղեկատվությունը ստացվել է վերջնաժամկետից հետո և հաշվի չի առնվել գնահատման ընթացքում: Այս վերջնաժամկետը պետք է հետևողականորեն պահպանվի,
- j) անհրաժեշտության դեպքում ներկայացնի օգտագործված հղումները՝ (գրականություն) իրենց տեսակետների հիմնավորման համար:

149. Խորհրդատվական մարմիններից պահանջվում է մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ը անդամ պետություններին ներկայացնել համառոտ միջանկյալ զեկույց, որը վերաբերում է գնահատման կարգավիճակին և դրան առնչվող ցանկացած խնդրին՝ կոնվենցիայի աշխատանքային լեզուներից որևէ մեկով և պատճենը ներկայացնելով Համաշխարհային ժառանգության կենտրոն՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախագահողին տրամադրելու նպատակով:

150. 12-րդ հավելվածում սահմանված ձևաչափով անդամ պետություններից ստացված համապատասխան գրությունները, որոնցով ներկայացվում են խորհրդատվական մարմինների կողմից իրենց անվանակարգերի գնահատման ընթացքում կատարած փաստացի սխալները, պետք է ներկայացվեն Համաշխարհային ժառանգության կենտրոն ոչ ուշ, քան կոմիտեի նիստի բացումից 14 օր առաջ՝ կրկնօրինակները ներկայացնելով խորհրդատվական մարմիններին: Գրությունները պետք է լինեն մատչելի և ներկայացվեն որպես հավելվածներ օրակարգի համապատասխան փաստաթղթերի հետ միասին ոչ ուշ, քան կոմիտեի նիստի առաջին օրը: Համաշխարհային ժառանգության կենտրոնը և խորհրդատվական մարմինները գրությունների վերաբերյալ իրենց մեկնաբանությունները կարող են կատարել ձևաչափի համապատասխան բաժնում՝ մինչ դրանց մատչելի դարձնելը:

151. ICOMOS-ը և IUCN-ն իրենց առաջարկությունները կատարում են երեք կատեգորիաներով՝

- a) հուշարձաններ, որոնք առաջարկվում են ցանկում ընդգրկելու համար՝ առանց վերապահումների,
- b) հուշարձաններ, որոնք չեն առաջարկվում ցանկում ընդգրկելու համար,
- c) անվանակարգեր, որոնք առաջարկվում են լրամշակել կամ հետաձգել դրանց քննարկումը:

III. F Անվանակարգերի հետ կանչումը

152. Անդամ պետությունը կարող է ցանկացած պահի հանել ներկայացրած անվանակարգը նախքան կոմիտեի նիստի քննարկումը, որի ընթացքում պլանավորված էր դրա քննությունը: Անդամ պետությունը պետք է քարտուղարությանը գրավոր տեղեկացնի իր մտադրությունների՝ անվանակարգի քննարկման հարցը հանելու մասին: Անդամ պետությունը ցանկության դեպքում կարող է մեկ անգամ ևս ներկայացնել հուշարձանի անվանակարգային փաթեթը, ինչը կդիտվի որպես նոր առաջադրում՝ համաձայն 168-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերի և ժամանակացույցի:

III. G Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումը

153. Համաշխարհային ժառանգության կոմիտեն կարող է որոշում կայացնել հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու կամ չընդգրկելու, լրամշակման ուղարկելու կամ քննարկումը հետաձգելու վերաբերյալ:

Ընդգրկում

154. Կոմիտեն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու որոշում կայացնելիս և ուղղորդվելով խորհրդատվական մարմինների առաջարկություններով՝ հուշարձանի համար ընդունում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը:

155. Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը կոմիտեի որոշման ամփոփումն է, համաձայն որի՝ հուշարձանն ունի համաշխարհային բացառիկ արժեք՝ նախանշելով այն չափորոշիչները, որոնցով հուշարձանն ընդգրկվել է ցանկում՝ ներառյալ ամբողջականության պայմանների գնահատումը, իսկ մշակութային և խառը հուշարձանների համար՝ իսկությունը ևս: Այն պետք է պարունակի տեղում գործող, ինչպես նաև հետագա պահպանության և կառավարման համակարգերի մասով հայտարարություն: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը հանդիսանում է հուշարձանի հետագա պահպանության և կառավարման հիմքը:

39 COM 11 որոշում

Անհրաժեշտության դեպքում Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության պահպանության և կառավարման հատվածը կարող է թարմացվել Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից՝ խորհրդակցելով անդամ պետության հետ և հետագայում վերանայվելով խորհրդատվական մարմինների կողմից: Նման թարմացումները կարող են կատարվել պարբերաբար՝ ելնելով պարբերական զեկույցների արդյունքներից, կամ կոմիտեի ցանկացած նիստի ընթացքում՝ ըստ պահանջի:

Համաշխարհային ժառանգության կենտրոնը ավտոմատ կերպով թարմացնում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը՝ ելնելով հետագայում կոմիտեի ընդունած որոշումներից, որոնք վերաբերում են հուշարձանի անվանը, մակերեսի փոփոխությանը, սահմանների ոչ էական փոփոխություններին և, համապատասխան խորհրդատվական մարմինների հետ համաձայնեցնելով, փաստացի սխալների ուղղմանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գենդերային հավասարության առաջնահերթության շրջանակներից ելնելով՝ խրախուսվում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունում սեռի տեսակետից չեզոք լեզվի կիրառումը:

156. Ցանկում ընդգրկելիս կոմիտեն կարող է նաև մի շարք առաջարկություններ ներկայացնել Համաշխարհային ժառանգության հուշարձանի պահպանության և կառավարման վերաբերյալ:

157. Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը (ներառյալ չափորոշիչը, համաձայն որի՝ հուշարձանն ընդգրկվել է Համաշխարհային ժառանգության ցանկում) կներկայացվի կոմիտեի զեկույցներում և հայտարարություններում:

Չներառելու մասին որոշումը

158. Եթե կոմիտեն որոշում է կայացնում հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում չընդգրկելու վերաբերյալ, ապա անվանակարգը չի կարող վերստին ներկայացվել կոմիտեի քննարկմանը՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների: Այդ հանգամանքները կարող են ընդգրկել նոր բացահայտումները, հուշարձանի վերաբերյալ նոր գիտական տեղեկատվությունը կամ տարբերվող չափորոշիչները, որոնք չէին ներկայացվել անվանակարգի բնօրինակում: Միայն այս դեպքերում է հնարավոր ներկայացնել նոր անվանակարգ:

Անվանակարգերի լրամշակում

159. Այն անվանակարգերը, որոնք կոմիտեի որոշմամբ ուղարկվել են անդամ պետությանը լրամշակման՝ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով, կարող են վերստին ներկայացվել կոմիտեի քննարկմանը գալիք նստաշրջանի ընթացքում: Լրացուցիչ տեղեկատվությունը պետք է քարտուղարություն ներկայացվի մինչև այն տարվա **փետրվարի 1-ը**,⁸ որում կոմիտեն պետք է քննության առնի անվանակարգը: Քարտուղարությունն անմիջապես փոխանցում է այն համապատասխան խորհրդատվական մարմին՝ գնահատման համար: Լրամշակման ուղարկված անվանակարգային փաթեթը, որը կոմիտեի քննարկմանը չի ներկայացվել նրա ընդունած որոշումից հետո երեք տարվա ընթացքում, համարվում է նոր, եթե այն վերստին ներկայացվել է 168-րդ պարբերությունով սահմանված ընթացակարգերով և ժամանակացույցով: Անդամ պետությունները կարող են խորհրդատվություն ակնկալել խորհրդատվական մարմնից (մարմիններից) և/կամ Համաշխարհային ժառանգության կենտրոնից կոմիտեի առաջարկություններին պատասխանելու վերաբերյալ:

39 COM 11 որոշում

Անվանակարգերի քննարկման հետաձգում

160. Կոմիտեն կարող է հետաձգել անվանակարգի քննարկումը առավել խորը գնահատում կամ ուսումնասիրություն կատարելու կամ անդամ պետության կողմից բովանդակային վերանայումներ կատարելու նպատակով: Անդամ պետության կողմից հետագա տարիների ընթացքում լրամշակված հայտի ներկայացման մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է քարտուղարություն ներկայացնել մինչև **փետրվարի 1-ը**:⁹ Այդ անվանակարգերը մեկ անգամ ևս գնահատում կանցնեն համապատասխան խորհրդատվական մարմնի կողմից ամբողջ մեկուկես տարվա ընթացքում՝ ներառյալ գնահատման առաքելության իրականացումը՝ 168-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերին և ժամանակացույցին համապատասխան: Անդամ պետությունները կարող են խորհրդատվություն ակնկալել խորհրդատվական մարմնից (մարմիններից) և/կամ Համաշխարհային ժառանգության կենտրոնից կոմիտեի առաջարկություններին պատասխանելու վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում անդամ պետությունը կարող է հրավիրել խորհրդատվական առաքելություն:

39 COM 11 որոշում

III. H Արտակարգ պայմաններում քննարկվող անվանակարգերը

161. Անվանակարգերի համար սահմանված ժամանակացույցը և փաթեթի ամբողջականության որոշումը չի կիրառվում վտանգված հուշարձանների պարագայում, քանի որ դրանք վնասվել են կամ կանգնած են բնության կամ մարդու գործողություններով պայմանավորված լուրջ կամ առանձնահատուկ վտանգների առջև, որոնք կարող են առաջացնել արտակարգ իրավիճակ՝ անհրաժեշտություն դարձնելով կոմիտեի կողմից անհապաղ որոշման ընդունումը դրանց պահպանվածությունն ապահովելու նպատակով և, համաձայն խորհրդատվական մարմինների զեկույցների, կարող է անառարկելիորեն հիմնավորել համաշխարհային բացառիկ արժեքը: Նման անվանակարգերը կուսումնասիրվեն արտահերթ սկզբունքով, և դրանք քննությունը ներառված կլինի կոմիտեի հաջորդ նիստի օրակարգում: Այդ հուշարձանները կարող են ընդգրկվել Համաշխարհային ժառանգության ցանկում: Այդ պարագայում դրանք կարող են զուգահեռաբար ընդգրկվել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում (տես 177-191-րդ պարբերությունները):

37 COM 12.II որոշում

⁸ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

⁹ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

162. Ստորև ներկայացվում է արտահերթ սկզբունքով քննվող անվանակարգերի ընթացակարգը. 37 COM 12.II որոշում

a) Անդամ պետությունը ներկայացնում է անվանակարգը՝ արտահերթ քննելու խնդրանքով: Անդամ պետությունը արդեն իսկ պետք է ընդգրկած լինի կամ անմիջապես ընդգրկի հուշարձանն իր նախնական ցանկում:

b) Անվանակարգը պետք է՝

- i) նկարագրի հուշարձանը և նախանշի դրա սահմանները,
- ii) հիմնավորի դրա համաշխարհային բացառիկ արժեքը՝ համաձայն չափորոշիչին,
- iii) հիմնավորի դրա ամբողջականությունը և/կամ իսկությունը,
- iv) նկարագրի դրա պահպանության և կառավարման համակարգը,
- v) նկարագրի հրատապության էությունը, վնասի էությունը և աստիճանը կամ վտանգի առանձնահատկությունը՝ ցույց տալով կոմիտեի անհապաղ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը հուշարձանի պահպանվածության ապահովման նպատակով:

c) Քարտուղարությունը անվանակարգը փոխանցում է համապատասխան խորհրդատվական մարմիններին՝ պահանջելով ներկայացնել հուշարձանի որակական հատկանիշների գնահատում, որոնցով կարող է հիմնավորվել Համաշխարհային բացառիկ արժեքը, վտանգի բնույթը և կոմիտեի որոշում ընդունելու հրատապությունը: Խորհրդատվական մարմնի կողմից նպատակահարմար համարվելու և ժամանակային առումով հնարավոր լինելու դեպքում կարող է պահանջվել այցելության վայր:

d) Անվանակարգի ուսումնասիրության ընթացքում կոմիտեն դիտարկում է՝

- vi) միջազգային աջակցության տրամադրումը անվանակարգն ավարտելու համար,
- vii) ցանկում ընդգրկելուց հետո կոմիտեի առաջարկությունների կատարման նպատակով քարտուղարության և համապատասխան խորհրդատվական մարմինների կողմից նպատակահարմար համարվելու դեպքում առաքելությունների կազմակերպումը:

III. I Սահմանների փոփոխություն՝ համաձայն այն չափորոշիչի, որով հիմնավորվել է ընդգրկումը, կամ Համաշխարհային ժառանգության հուշարձանի անվանմանը համապատասխան

Սահմանների ոչ էական փոփոխություններ

163. Ոչ էական փոփոխությունը որևէ կարևոր ազդեցություն չի ունենում ո՛չ հուշարձանի մակարդակի, ո՛չ էլ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա:

164. Եթե անդամ պետությունը ցանկանում է ընդլայնել Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն իսկ ընդգրկված հուշարձանի սահմանները, ապա հայտը պետք է պատրաստվի 11-րդ հավելվածի ձևաչափին համապատասխան և քարտուղարության միջոցով կոմիտեին ներկայացվի մինչև **փետրվարի 1-ը**¹⁰: Քարտուղարությունը գնահատման է ուղարկում համապատասխան խորհրդատվական մարմնին՝ արդյո՞ք դա ոչ էական փոփոխություն է, թե ոչ:

¹⁰ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

Այնուհետ քարտուղարությունը խորհրդատվական մարմինների գնահատումը ներկայացնում է Համաշխարհային ժառանգության կոմիտեին: Կոմիտեն կարող է հաստատել նման փոփոխությունը, կամ կարող է գտնել, որ սահմանների փոփոխությունը մեծաձավալ է և անհրաժեշտ է ներկայացնել սահմանների էական փոփոխության դասակարգումով, որի դեպքում արդեն կկիրառվի նոր անվանակարգի ներկայացման ընթացակարգը:

Սահմանների էական փոփոխություններ

165. Եթե անդամ պետությունը ցանկանում է էապես փոփոխել Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն իսկ ընդգրկված հուշարձանի սահմանները, ապա անդամ պետությունը առաջարկությունը ներկայացնում է այնպես, ինչպես նոր անվանակարգ ներկայացնելիս (ներառյալ նախապես նախնական ցանկում ընդգրկելու պահանջները, տե՛ս 63-րդ և 65-րդ պարբերությունները): Այս վերաառաջադրումը պետք է ներկայացվի մինչև **փետրվարի 1-ը**¹¹ և կգնահատվի ամբողջ մեկուկես տարվա ընթացքում՝ համաձայն 168-րդ պարբերությամբ ներկայացված ընթացակարգերի և ժամանակացույցի: Այս դրույթները կիրառվում են ընդլայնման և նվազեցման դեպքերում նույնպես:

39 COM 11 որոշում

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար կիրառված չափորոշիչի փոփոխություններ

166. Եթե անդամ պետությունը ցանկանում է Համաշխարհային ժառանգության ցանկում լրացուցիչ ներառել արդեն իսկ ընդգրկված հուշարձան, մի քանի կամ այլ չափորոշիչներով, ապա անդամ պետությունը առաջարկությունը ներկայացնում է այնպես, ինչպես նոր անվանակարգ ներկայացնելիս (ներառյալ նախապես նախնական ցանկում ընդգրկելու պահանջները, տե՛ս 63-րդ և 65-րդ պարբերությունները): Այս վերաառաջադրումը պետք է ներկայացվի մինչև **փետրվարի 1-ը**¹² և կգնահատվի ամբողջ մեկուկես տարվա ընթացքում՝ համաձայն 168-րդ պարբերությամբ ներկայացված ընթացակարգերի և ժամանակացույցի: Առաջարկվող հուշարձանները կարող են գնահատվել միայն նոր չափորոշիչին համապատասխան և կմնան Համաշխարհային ժառանգության ցանկում, նույնիսկ եթե լրացուցիչ չափորոշիչը չի ընդունվել:

39 COM 11 որոշում

Համաշխարհային ժառանգության հուշարձանի անվան փոփոխություն

167. Անդամ պետությունը¹³ կարող է պահանջել, որպեսզի կոմիտեն թույլատրի Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն ընդգրկված հուշարձանի անվանափոխությունը: Փոփոխության հայտը քարտուղարություն պետք է **ներկայացվի կոմիտեի նիստից առնվազն երեք ամիս առաջ**:

III. J Ժամանակացույց – վերանայում

168. 39 COM 11 որոշում

Ժամանակացույցը

30 սեպտեմբերի (մինչև 1-ին տարին)

15 նոյեմբերի (մինչև 1-ին տարին)

Ընթացակարգը

Քարտուղարության կողմից անդամ պետության անվանակարգի ներկայացման կամավոր ժամկետ:

Քարտուղարությունը պետք է ներկայացնի իր պատասխանը անդամ պետության ներկայացրած

¹¹ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

¹² Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

¹³ Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

1 փետրվարի, 1-ին տարի

անվանակարգի նախագծի ամբողջականության առնչությամբ և թերի լինելու դեպքում նշի, թե որ տեղեկատվությունն է պակասում անվանակարգը ամբողջական դարձնելու համար:

Այն վերջնաժամկետն է, երբ քարտուղարությունը պետք է ստանա ամբողջական անվանակարգը՝ խորհրդատվական մարմիններին գնահատման համար փոխանցելու նպատակով:

Անվանակարգը պետք է ստացվի մինչև 17:00 GMT կամ, եթե ժամկետը համընկնում է հանգստյան օրերի հետ, ապա նախորդող ուրբաթ օրը մինչև 17:00 GMT.

Այս վերջնաժամկետից հետո ստացված անվանակարգերը կքննվեն հաջորդ շրջափուլի ընթացքում:

1 փետրվարի – 1 մարտի, 1-ին տարի

Գրանցում, ամբողջականության ստուգում և փոխանցում համապատասխան խորհրդատվական մարմիններին:

Քարտուղարությունը գրանցում է յուրաքանչյուր անվանակարգը, ծանուցում անդամ պետության ներկայացրած անվանակարգի ստացման մասին և ցուցակագրում դրա բովանդակությունը: Քարտուղարությունն իրազեկում է առաջադրող անդամ պետությանն անվանակարգի ամբողջական կամ թերի լինելու մասին:

Թերի անվանակարգային փաթեթները չեն փոխանցվում համապատասխան խորհրդատվական մարմիններին գնահատման նպատակով: Անվանակարգի թերի լինելու դեպքում շահագրգիռ անդամ պետությանը տրամադրվում է խորհրդատվություն պահանջվող տեղեկատվության մասին՝ անվանակարգը մինչև հաջորդող տարվա փետրվարի 1-ը ամբողջական դարձնելու համար՝ գալիք շրջափուլում քննության առնելու նպատակով:

Ամբողջական անվանակարգերը փոխանցվում են խորհրդատվական մարմինների գնահատմանը:

Քարտուղարությունը անվանակարգերի էլեկտրոնային տարբերակները մատչելի է դարձնում կոմիտեի անդամ պետություններին Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքի միջոցով:

1 մարտի, 1-ին տարի

Քարտուղարության կողմից անդամ պետությանը անվանակարգի ստացման, դրա ամբողջական լինելու և փետրվարի 1-ին ստանալու մասին ծանուցում ուղարկելու վերջնաժամկետն է:

Մարտ, 1-ին տարի – մայիս, 2-րդ տարի

31 հունվարի, 2-րդ տարի

Խորհրդատվական մարմինների գնահատում

Մինչև յուրաքանչյուր տարվա **հունվարի 31-ը** խորհրդատվական մարմինները պետք է անդամ պետություններին ներկայացնեն համառոտ միջանկյալ զեկույց, որով վեր է հանվում գնահատմանը վերաբերող ցանկացած հարցի կարգավիճակը, ինչպես նաև մանրամասնվում է պահանջվող տեղեկատվությունը կոնվենցիայի երկու աշխատանքային լեզուներից որևէ մեկով՝ միաժամանակ պատճենը տրամադրելով համաշխարհային ժառանգության կենտրոնին՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախագահին փոխանցելու նպատակով:

Խորհրդատվական համապատասխան մարմինների կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկատվություն ստանալու մասին պահանջի վերջնաժամկետը անդամ պետությանը փոխանցվում է քարտուղարության միջոցով:

Լրացուցիչ տեղեկատվությունը պետք է ներկայացվի քարտուղարությանը նույն թվաքանակով և էլեկտրոնային ձևաչափով, ինչպես նկարագրված է 132-րդ պարբերությունում: Նոր և հին տեքստերում շփոթմունքից խուսափելու նպատակով անդամ պետությունը պետք է այդ փոփոխությունները ներկայացնի բնօրինակ տեքստում փոփոխություններ կատարելով, եթե ներկայացվող լրացուցիչ տեղեկատվությունը նախատեսում է անվանակարգի հիմնական տեքստի փոփոխություն: Այդ փոփոխությունները պետք է հստակ նշված լինեն: Նոր տեքստի էլեկտրոնային տարբերակը (խտասկավառակ կամ էլ. կրիչ) պետք է ներկայացվի փաստաթղթային տարբերակի հետ միասին:

Համապատասխան խորհրդատվական մարմիններն իրենց գնահատումները և առաջարկությունները ներկայացնում են քարտուղարություն՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեին և անդամ պետություններին փոխանցելու նպատակով:

Անդամ պետության փաստացի կատարած սխալների ուղղում:

Կոմիտեի նստաշրջանի բացումից 14 աշխատանքային օր առաջ շահագրգիռ անդամ պետությունը կարող է գրությամբ դիմել նախագահողին, պատճենները տրամադրելով խոր-

28 փետրվարի, 2-րդ տարի

Վեց շաբաթ առաջ նախքան Համաշխարհային ժառանգության կոմիտեի նստաշրջանը, 2-րդ տարի

Համաշխարհային ժառանգության կոմիտեի նստաշրջանի պաշտոնական բացումից առնվազն 14 աշխատանքային օր առաջ, 2-րդ տարի

Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նստաշրջան (հունիս/հուլիս), 2-րդ տարի

Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նստաշրջանից անմիջապես հետո

Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նստաշրջանից անմիջապես հետո

Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նստաշրջանի փակմանը հաջորդող ամսում

հրդատվական մարմիններին՝ մանրամասնելով փաստացի սխալների բովանդակությունը, որոնք նրանք հավանաբար գտել են իրենց անվանակարգի՝ խորհրդատվական մարմինների կողմից գնահատման ընթացքում:

The Committee examines the nominations and makes its decisions.

Ծանուցում անդամ պետություններին:

Քարտուղարությունը ընդունած որոշման մասին ծանուցում է բոլոր անդամ պետություններին, որոնց անվանակարգերն ուսումնասիրվել են կոմիտեի կողմից:

Համաշխարհային ժառանգության կոմիտեի՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու մասին որոշումից հետո քարտուղարությունը գրում է անդամ պետություններին և հուշարձանի կառավարիչներին՝ ներկայացնելով ընդգրկված հուշարձանի տարածքի քարտեզը և Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը (ներառում է նաև չափորոշիչին համապատասխանելու տեղեկանքը):

Յուրաքանչյուր տարի կոմիտեի տարեկան նստաշրջանից հետո քարտուղարությունը հրապարակում է Համաշխարհային ժառանգության ցանկի թարմացված տարբերակը:

Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկումն առաջադրած անդամ պետության անվանումը ներկայացվում է հրապարակված տարբերակի ցանկում ստորև բերվող վերնագրի տակ. «Պայմանագրի կողմ հանդիսացող անդամ պետություն, որն անվանակարգը ներկայացրել է կոնվենցիային համապատասխան»:

Քարտուղարությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընդունած բոլոր որոշումների վերաբերյալ զեկույցը փոխանցում է անդամ պետություններին:

IV. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

IV. A Արձագանքող մոնիթորինգ

Արձագանքող մոնիթորինգի սահմանումը

169. Արձագանքող մոնիթորինգը քարտուղարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ սեկտորների և խորհրդատվական մարմինների զեկույցն է կոմիտեին Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված և վտանգված հուշարձանների պահպանվածության վիճակի վերաբերյալ: Այս առումով անդամ պետությունը պետք է ներկայացնի մանրամասն զեկույց և ազդեցությունների ուսումնասիրություններ ի հայտ եկած առանձնահատուկ պայմանների կամ աշխատանքի վերաբերյալ, որոնք կարող են ազդեցություն ունենալ հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի կամ դրա պահպանվածության վրա: Արձագանքող մոնիթորինգի իրականացումը նախատեսվում է նաև այն հուշարձանների համար, որոնք ընդգրկված են կամ նախատեսվում են ընդգրկել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում, ինչպես սահմանված է 177-191-րդ պարբերություններում: Արձագանքող մոնիթորինգը նախատեսված է նաև Համաշխարհային ժառանգության ցանկից հուշարձանի վերջնական դուրս բերման ընթացակարգում՝ 192-198-րդ պարբերություններին համապատասխան:

39 COM 11 որոշում

Այս զեկույցներն անհրաժեշտ է ներկայացնել Համաշխարհային ժառանգության կոմիտեին քարտուղարության միջոցով՝ օգտագործելով 13-րդ հավելվածի ստանդարտ ձևաչափը՝ ֆրանսերենով կամ անգլերենով.

a) մինչև կոմիտեի կողմից հուշարձանի ուսումնասիրությանը նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների համար,

b) մինչև կոմիտեի կողմից հուշարձանի ուսումնասիրության տարվա փետրվարի 1-ը՝ Համաշխարհային վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձանների համար, ինչպես նաև բարձր մակարդակի արտակարգ իրավիճակների պարագայում:

Արձագանքող մոնիթորինգի նպատակը

170. Արձագանքող մոնիթորինգի գործընթացը հաստատելիս կոմիտեն մասնավորապես շահագրգռված էր բոլոր հնարավոր միջոցառումների իրականացման հարցում, որպեսզի կանխվի ցանկացած հուշարձանի հանում ցուցակից և այդ կապակցությամբ պատրաստակամ էր առաջարկել առավելագույնը անդամ պետություններին տեխնիկական համագործակցության հարցում:
171. Կոմիտեն անդամ պետություններին առաջարկում է համագործակցել այն խորհրդատվական մարմինների հետ, որոնց ինքն է խնդրել իրականացնել մոնիթորինգ և զեկույցել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

Կոնվենցիայի 4-րդ հոդված Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն ընդունում է, որ 1-ին և 2-րդ հոդվածներում հիշատակված և իր տարածքում գտնվող մշակութային ու բնության ժառանգության հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնումն ապահովելու պարտավորությունը դրվում է նախ և առաջ իր վրա ...

Անդամ պետություններից և/կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը

172. Համաշխարհային ժառանգության կոմիտեն կոչ է անում կոնվենցիային միացած անդամ պետություններին քարտուղարության միջոցով իրազեկել կոմիտեին կոնվենցիայի պաշտպանության տակ գտնվող տարածքում մեծածավալ վերականգնումների կամ նոր շինությունների մասին, որոնք կարող են ազդել

համաշխարհային ժառանգության արժեքի վրա: Ծանուցումը պետք է տրվի հնարավորինս շուտ (օրինակ՝ առանձին ծրագրերի հիմնական փաստաթղթերի նախագծումից առաջ) և նախքան որևէ դժվար, չեղարկելի որոշման ընդունումը, որպեսզի կոմիտեն հնարավորություն ունենա գտնելու համապատասխան լուծումներ՝ հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի ամբողջական պահպանության նպատակով:

- 173.** Համաշխարհային ժառանգության կոմիտեն պահանջում է, որպեսզի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների վերանայման նպատակով պատրաստված առաքելության զեկույցները պարունակեն՝ 27 COM 7B.106 որոշում

ա) Համաշխարհային ժառանգության կոմիտեի վերջին զեկույցից ի վեր հուշարձանի պահպանությանն ուղղված սպառնալիքների կամ կարևոր բարելավումների մասին տեղեկատվություն,

բ) հուշարձանի պահպանվածության վիճակի մասին Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախկինում ընդունած որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,

գ) տեղեկատվություն ցանկացած սպառնալիքի կամ վնասի, կամ Համաշխարհային բացառիկ արժեքի կորստի, ամբողջականության և/կամ իսկության մասին, որի հիման վրա հուշարձանն ընդգրկվել է Համաշխարհային ժառանգության ցանկում:

- 174.** Երբ քարտուղարությունը ոչ շահագրգիռ անդամ պետությունից ստանում է տեղեկատվություն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի լուրջ վնասման կամ առաջարկված ժամանակահատվածում անհրաժեշտ ուղղիչ գործողությունների չկատարման մասին, անդամ պետության հետ խորհրդակցելով, ստուգում է տեղեկատվության բովանդակությունը և պահանջում է դրա մեկնաբանությունները:

Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումը

- 175.** Քարտուղարությունը կարող է պահանջել խորհրդատվական մարմիններից ներկայացնել իրենց մեկնաբանությունները ստացված տեղեկատվության վերաբերյալ:

- 176.** Ստացված տեղեկատվությունը անդամ պետության և խորհրդատվական մարմինների մեկնաբանությունների հետ միասին ներկայացվելու են կոմիտեի քննարկմանը յուրաքանչյուր հուշարձանի պահպանվածության վիճակի վերաբերյալ զեկույցի ձևաչափով, ինչը ենթադրում է ստորև ներկայացվող մեկ կամ մի քանի քայլերի իրականացում. 39 COM 11 որոշում

ա) կարող է որոշում կայացվել, որ հուշարձանն էապես չի տուժել և հետագա գործողությունների իրականացման մեջ անհրաժեշտություն չկա,

բ) երբ կոմիտեն եզրակացնում է, որ հուշարձանին մեծ ծավալով վնաս է հասցված, սակայն ոչ այնքան, որ դրա վերականգնումը դառնում է անհնար, կարող է որոշում կայացնել հուշարձանը ցանկում թողնելու մասին, պայմանով, որ անդամ պետությունը խելամիտ ժամկետներում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի հուշարձանի վերականգնման համար: Կոմիտեն կարող է նաև որոշել Համաշխարհային ժառանգության հիմնադրամի շրջանակներում տեխնիկական համագործակցության ապահովման մասին՝ անդամ պետությանն առաջարկելով հայտ ներկայացնել նման աջակցության համար, եթե այդպիսին արդեն իսկ չի տրամադրվել: Որոշ հանգամանքներից ելնելով՝ անդամ պետությունը կարող է հրավիրել համապատասխան խորհրդատվական մարմնի (մարմինների) առաքելություն կամ այլ կազմակերպություններից խորհրդատվություն ստանալ:

անհրաժեշտ միջոցառումների իրականացման մասով՝ մասսովից խուսափելու և սպառնալիքները չեզոքացնելու համար:

ց) 177-182-րդ պարբերություններում սահմանված պահանջների բավարարումից հետո կոմիտեն կարող է որոշում ընդունել հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու վերաբերյալ՝ 183-189-րդ պարբերություններով սահմանված ընթացակարգերին համապատասխան,

դ) երբ ակնհայտ է, որ հուշարձանը մասսվել է այնպես, որ անվերադարձ կորսվել են ցանկում ընդգրկելու համար հիմք հանդիսացած առանձնահատկությունները, կոմիտեն կարող է որոշել ցանկից հուշարձանը հանելու վերաբերյալ: Նախքան նմանատիպ գործողությունները քարտուղարությունը տեղեկացնում է շահագրգիռ անդամ պետությանը: Ցանկացած մեկնաբանություններ, որոնք կկատարվեն անդամ պետության կողմից, կներկայացվեն կոմիտեի ուշադրությանը,

ե) եթե ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ կոմիտեի՝ ա), b), c) կամ d) կետերով որոշում ընդունելու համար, ապա կոմիտեն կարող է լիազորել քարտուղարությանը անհրաժեշտ գործողություններ իրականացնելու համար հստակեցում մտցնել հուշարձանի վիճակի, դրան ուղղված վտանգների և համապատասխան վերականգնումների նպատակահարմարության հարցերում: Նման միջոցառումները կարող են ներառել արձանգանքող մոնիթորինգի առաքելության կազմակերպումը կամ մասնագետների հետ խորհրդատվությունը կամ խորհրդատվական առաքելությունը: Քարտուղարությունը գործողությունների արդյունքների մասին պետք է հաշվետվություն ներկայացնի կոմիտեին: Անհապաղ գործողությունների իրականացման անհրաժեշտության դեպքում կոմիտեն կարող է լիազորել ֆինանսավորումը Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցով՝ անհապաղ աջակցության հայտի հիման վրա:

IV. B Վտանգված Համաշխարհային ժառանգության ցանկը

Վտանգված Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման ուղեցույցը

177. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 4-րդ պարբերությանը համապատասխան՝ կոմիտեն կարող է հուշարձանն ընդգրկել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում, եթե բավարարվում են ստորև ներկայացվող պահանջները.

a) քննարկվող հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում է,

b) հուշարձանը վտանգված է լուրջ և առանձնահատուկ սպառնալիքներով,

c) հուշարձանի պահպանության համար անհրաժեշտ է իրականացնել ծանրակշիռ միջոցառումներ,

d) հուշարձանի առնչությամբ կոնվենցիայի շրջանակներում աջակցություն ստանալու վերաբերյալ հայտ է ներկայացվել: Կոմիտեն այն կարծիքին է, որ առանձին դեպքերում առավել արդյունավետ համագործակցության դրսևորումներից է մտահոգության արտահայտումը, ներառյալ հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելը, և որ նմանատիպ աջակցությունը կարող է պահանջվել կոմիտեի ցանկացած անդամի կամ քարտուղարության կողմից:

Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու չափորոշիչը

178. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանը, ինչպես

սահմանված է կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներով, կարող է կոմիտեի կողմից ընդգրկվել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում, եթե պարզվում է, որ այն բավարարում է առնվազն մեկ չափորոշիչին ստորև նկարագրվող երկու դեպքերից ցանկացածի պարագայում:

179. Մշակութային հուշարձանների դեպքերում՝

a) ՀՍՄԿԵՑՎԱԾ ՎՏԱՆԳ – հուշարձանին ուղղված է առանձնահատուկ և հաստատված վրա հասնող վտանգ, ինչպիսիք են՝

- i) նյութերի մաշվածության բարձր աստիճան,
- ii) կառուցվածքի և/կամ զարդապատկերների մաշվածության բարձր աստիճան,
- iii) ճարտարապետական կամ քաղաքաշինական կապակցվածության լուրջ խախտում,
- iv) քաղաքային կամ գյուղական տարածքի կամ բնական միջավայրի լուրջ խախտում,
- v) պատմական իսկության ծանրակշիռ կորուստ,
- vi) մշակութային կարևորության ծանրակշիռ կորուստ:

b) ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ՎՏԱՆԳ – Հուշարձանը դիմակայում է այնպիսի սպառնալիքների, որոնք կարող են կորստաբեր ազդեցություն ունենալ դրա կենսական առանձնահատկությունների վրա: Նման սպառնալիքներն են, օրինակ՝

- i) հուշարձանի իրավական կարգավիճակի փոփոխությունը, որով նվազում է դրա պաշտպանվածության մակարդակը,
- ii) պահպանության քաղաքականության ցածր մակարդակը,
- iii) շրջանային պլանավորման նախագծերի սպառնացող ազդեցությունը,
- iv) քաղաքաշինության սպառնացող ազդեցությունները,
- v) զինված ընդհարման սկիզբ կամ դրա վտանգը,
- vi) կլիմայական, երկրաբանական կամ շրջակա միջավայրին առնչվող այլ գործոնների ազդեցությունը:

180. Բնության հուշարձանների դեպքում՝

39 COM 11 որոշում

c) ՀՍՄԿԵՑՎԱԾ ՎՏԱՆԳ – հուշարձանին ուղղված է առանձնահատուկ և հաստատված վրա հասնող վտանգ, ինչպիսիք են՝

- i) բնական (ինչպիսիք են հիվանդությունները) կամ մարդկային (ինչպիսիք են որսագողությունը) գործոններով պայմանավորված՝ համաշխարհային բացառիկ արժեք ունեցող վտանգված օրգանիզմատեսակների կամ այլ օրգանիզմատեսակների քանակի նվազեցում, որի պաշտպանության համար էլ սահմանված է տվյալ հուշարձանի իրավական կարգավիճակը,
- ii) հուշարձանի բնական գեղեցկության կամ գիտական արժեքի էական փոփոխություն՝ դրա տարածքում մարդկային բնակավայրերի, դրա կարևոր հատվածները ողողող ջրամբարների կառուցման, արդյունաբերական կամ գյուղատնտեսական, ներառյալ թունաքիմիկատների և պարարտանյութերի կիրառմամբ զարգացման, մասշտաբային հասարակական աշխատանքների, հանքարդյունաբերության, շրջակա միջավայրի աղտոտվածության, անտառի և վառելանյութի և նմանատիպ գործոնների հետևանքով,
- iii) մարդու կողմից սահմանների կամ հարակից տարածքների պահպանության պայմանակարգերի խախտումներ, որոնք կարող են վտանգել հուշարձանի ամբողջականությունը:

d) ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ՎՏԱՆԳ – Հուշարձանը դիմակայում է այնպիսի սպառնալիքների, որոնք կարող են կորստաբեր ազդեցություն ունենալ դրա կենսական առանձնահատկությունների վրա: Նման սպառնալիքներն են, օրինակ՝

i) տարածքի պաշտպանության իրավական կարգավիճակի փոփոխությունը,

ii) պլանավորված վերաբնակեցման կամ կառուցապատման նախագծերի իրականացումը հուշարձանի տարածքում, որոնք կարող են վտանգի տակ դնել հուշարձանը,

iii) զինված ընդհարման սկիզբը կամ դրա վտանգը,

iv) կառավարման պլանի կամ համակարգի բացակայությունը կամ անհամապատասխանելիությունը կամ ամբողջությամբ չիրականացումը,

v) կլիմայական, երկրաբանական կամ շրջակա միջավայրին առնչվող այլ գործոնների ազդեցությունը:

181. Ավելին, սպառնալիքները և/կամ դրանց վստահար ազդեցությունը հուշարձանի 39 COM 11 որոշում

ամբողջականության վրա պետք է կառավարելի դարձվեն մարդկային գործողություններով: Մշակութային հուշարձանների պարագայում և՛ բնածին, և՛ մարդածին գործոնները կարող են սպառնալիք հանդիսանալ, մինչդեռ բնության հուշարձանների պարագայում հիմնական սպառնալիքները պայմանավորված են մարդկային և հազվադեպ պարագաներում՝ բնածին գործոնով (ինչպես օրինակ՝ արագ տարածվող համաճարակը), որոնք կարող են սպառնալ հուշարձանի ամբողջականությանը: Որոշ դեպքերում սպառնալիքները և/կամ դրանց վստահար ազդեցությունները հուշարձանի ամբողջականության վրա կարող են ուղղվել վարչական կամ օրենսդրական նախաձեռնություններով, ինչպիսիք են հիմնական հասարակական աշխատանքների չեղարկումը և իրավական կարգավիճակի բարելավումը:

182. Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում հուշարձանի ընդգրկումից առաջ կոմիտեն կարող է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա.

a) կառավարությունների կողմից բոլոր գործոնների հավասարակշռման նպատակով ընդունված որոշումները, որոնք կարող են ազդել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի վրա,

b) հստակեցված վտանգի պարագայում հուշարձանի կրած ֆիզիկական կամ մշակութային վնասը պետք է գնահատվի՝ ելնելով դրա հետևանքների ուժգնության տեսանկյունից, և վերլուծվի փուլ առ փուլ,

c) վերոգրյալից զատ, եթե հուշարձանին սպառնում է ներուժ ունեցող վտանգ, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

i) սպառնալիքը պետք է գնահատվի սոցիալական և տնտեսական բնականոն զարգացման շրջանակներից ելնելով, որում նա գտնվում է,

ii) շատ դեպքերում հնարավոր չի լինում գնահատել որոշակի սպառնալիքները, ինչպիսիք են՝ զինված ընդհարումները և դրանց հետևանքները բնության կամ մշակութային ժառանգության համար,

iii) որոշ սպառնալիքներ վերահաս չեն իրենց էությամբ, սակայն կանխատեսելի են, ինչպիսին ժողովրդագրական աճն է,

d) ի վերջո գնահատման ընթացքում կոմիտեն պետք է հաշվի առնի ցանկացած անհայտ կամ անկանխատեսելի պատճառ, որը վտանգում է բնության կամ մշակույթի հուշարձանը:

**Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում
ընդգրկելու ընթացակարգը**

183. Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու գործընթացի ժամանակ կոմիտեն, խորհրդակցելով շահագրգիռ անդամ պետության հետ, պետք է մշակի և հաստատի ուղղիչ գործողությունների ծրագիր՝ ցանկալի պահպանվածության վիճակն ապահովելու և Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկից հանելու նպատակով:
184. Նախորդ պարբերությունում ուղղիչ գործողությունների ծրագրի մշակման նպատակով կոմիտեն քարտուղարությունից պետք է պահանջի՝ համա- գործակցելով շահագրգիռ անդամ պետության հետ, հնարավորինս հստակեցնել հուշարձանի վիճակը, դրան ուղղված վտանգները և ուղղիչ գործողությունների իրականացման նպատակահարմարությունը: Դրանից հետո կոմիտեն կարող է որոշում ընդունել խորհրդատվական մարմիններից կամ այլ կազմակերպություններից ձևավորված արձագանքող մոնիթորինգի առաքելության գործուղելու վերաբերյալ՝ սպառնալիքների բնույթը և աստիճանը գնահատելու, ինչպես նաև լուծումներ առաջարկելու նպատակով: Որոշ դեպքերում անդամ պետությունը կարող է ցանկություն հայտնել հրավիրելու խորհրդատվական առաքելություն՝ խորհրդատվություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:
185. Քարտուղարության միջոցով կոմիտեի քննարկմանը կներկայացվի ստաց- ված տեղեկատվությունը՝ անդամ պետության կամ համապատասխան խորհրդատվական մարմինների կամ այլ կազմակերպությունների ներկայացրած մեկնաբանությունների հետ միասին:
186. Կոմիտեն կուսումնասիրի ստացված տեղեկատվությունը և որոշում կընդունի հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու վերաբերյալ: Նման որոշումներն ընդունվում են կոմիտեի անդամ պետությունների ձայների երկու երրորդի համամասնությամբ և քվեարկության միջոցով: Այնուհետ ծրագիրը ներկայացվում է անդամ պետությանը՝ ի կատարումն:
187. Անդամ պետությանը տեղեկացվում է ընդունված որոշման մասին, և հանրային ծանուցման վերաբերյալ որոշումն անմիջապես ներկայացվում է կոմիտեի կողմից՝ կոնվենցիայի 11.4-րդ հոդվածին համապատասխան:
188. Քարտուղարությունը հրապարակում է Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկը տպագիր օրինակով, ինչը հասանելի է նաև <http://whc.unesco.org/en/danger> վեբ հասցեով:
189. Կոմիտեն Համաշխարհային ժառանգության հիմնադրամից կառանձնացնի մեծ քանակությամբ նպատակային միջոցներ՝ Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձաններին տրամադրվելիք հնարավոր օգնությունը ֆինանսավորելու նպատակով:

**Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում
ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակի կանոնավոր
վերանայումը**

190. Կոմիտեն տարեկան կվերանայի Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկը: Այս վերանայումը կարող է ընդգրկել այնպիսի ընթացակարգեր և փորձագետների առաքելություններ, որոնք կարող են անհրաժեշտ համարվել կոմիտեի կողմից:
191. Այսպիսի կանոնավոր վերանայումների հիման վրա կոմիտեն, շահագրգիռ

39 COM 11 որոշում

անդամ պետության հետ խորհրդակցելուց հետո, կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

a) լրացուցիչ միջոցառումներ են անհրաժեշտ հուշարձանի պահպանվածության ապահովման համար,

b) հանել հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձաններից ցանկից, եթե դրան այլևս վտանգ չի սպառնում,

c) քննարկել հուշարձանը և Համաշխարհային ժառանգության, և Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկերից հանելու հարցը, եթե վստասվել է այնպես, որ կորցրել է այն առանձնահատկությունները, որոնց հիման վրա որոշում է կայացվել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու վերաբերյալ՝ 192-198-րդ պարբերություններով սահմանված ընթացակարգին համապատասխան:

IV. C Համաշխարհային ժառանգության ցանկից հուշարձանները վերջնական դուրս հանելու ընթացակարգը

192. Կոմիտեն հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկից դուրս հանելու ընթացակարգը կիրառում է հետևյալ դեպքերում. 39 COM 11 որոշում

a) երբ հուշարձանը վնասվել է այն աստիճանի, որ կորցրել է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար որոշիչ հանդիսացած առանձնահատկությունները,

b) երբ Համաշխարհային ժառանգության հուշարձանի որոշիչ դերակատարություն ունեցող որակական հատկանիշները մարդկային գործողություններով պայմանավորված՝ արդեն իսկ սպառնալիքի տակ էին, և այդ ժամանակահատվածի համար անդամ պետության կողմից իրականացվելիք ուղղիչ գործողությունները չեն իրականացվել առաջարկվող ժամանակահատվածում (տես 116-րդ պարբերությունը):

193. Երբ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանն էապես վնասվել է, կամ երբ անհրաժեշտ ուղղիչ գործողությունները չեն իրականացվել առաջարկվող ժամանակահատվածում, անդամ պետությունը, որի տարածքում գտնվում է հուշարձանը, պետք է իրազեկի քարտուղարությանը:

194. Երբ քարտուղարությունը նման տեղեկատվություն ստանում է ոչ շահագրգիռ անդամ պետությունից, այլ մեկ այլ աղբյուրից, հնարավորինս պետք է վերահաստատի տեղեկատվության աղբյուրը և բովանդակությունը՝ խորհրդակցելով անդամ պետության հետ և պահանջի վերջինիս մեկնաբանությունները:

195. Քարտուղարությունը խորհրդատվական մարմիններից կարող է պահանջել մեկնաբանություններ ստացված տեղեկատվության վերաբերյալ:

196. Կոմիտեն քննության կառնի իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունը և կընդունի որոշում: Կոնվենցիայի 13 (8)-րդ հոդվածին համապատասխան՝ ցանկացած որոշում պետք է ընդունվի կոմիտեի ներկա անդամ պետությունների ձայների երկու երրորդով և քվեարկության միջոցով: Կոմիտեն չի կարող Համաշխարհային ժառանգության ցանկից հանելու մասին որոշում կայացնել, քանի դեռ հարցի վերաբերյալ չի խորհրդակցել անդամ պետության հետ:

197. Անդամ պետությունն իրազեկվում է կոմիտեի որոշման վերաբերյալ, և հանրային ծանուցումը որոշման վերաբերյալ անմիջապես փոխանցվում է կոմիտեին:

198. Եթե կոմիտեի որոշումն առաջացնում է Համաշխարհային ժառանգության ցանկում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն, ապա այդ փոփոխությունը կարող է արտահայտվել հաջորդիվ հրապարակվող ցանկում:

V. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

V. A Առարկան

- 199.** Անդամ պետություններից պահանջվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի միջոցով ՅՈՒՆԵՍԿՕ-ի գազաթնաժողովին ներկայացնել զեկույցներ իրենց կողմից հաստատված օրենսդրական և վարչական միջոցների և այլ գործողությունների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են կոնվենցիայի կիրարկման նպատակով՝ ներառյալ իրենց տարածքում գտնվող Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության ապահովմանն ուղղված միջոցառումները:
- 200.** Անդամ պետությունները կարող են փորձագիտական խորհրդատվություն պահանջել խորհրդատվական մարմիններից և քարտուղարությունը (ստանալով շահագրգիռ անդամ պետության համաձայնությունը) կարող է տրամադրել լրացուցիչ փորձագիտական խորհրդատվություն:
- 201.** Պարբերական զեկույցները ծառայում են չորս հիմնական նպատակի՝
- a) ներկայացնում են անդամ պետության կողմից Համաշխարհային ժառանգության մասին կոնվենցիայի կիրարկման գնահատականը,
 - b) ներկայացնում են գնահատում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների համաշխարհային բացառիկ արժեքների ժամանակի ընթացքում պահպանության վերաբերյալ,
 - c) ներկայացնում են թարմացված տեղեկատվություն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների մասին՝ վերջիններիս պահպանվածության վիճակում և հանգամանքներում փոփոխությունները գրանցելու նպատակով,
 - d) ապահովում են կոնվենցիայի կիրարկման և Համաշխարհային ժառանգության պահպանության վերաբերյալ տարածաշրջանային համագործակցությունը և տեղեկատվությունը, ինչպես նաև փորձի փոխանակումը անդամ պետությունների միջև:
- 202.** Զեկույցների ներկայացումը կարևոր է նաև ցանկում ընդգրկված հուշարձանների երկարաժամկետ պահպանվածության ապահովման, ինչպես նաև կոնվենցիայի կիրարկման արժանահավատության ամրապնդման տեսանկյունից:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 2-րդ հոդված, անդամ պետությունների 11-րդ գազաթնաժողովի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 29-րդ գազաթնաժողովի բանաձևեր:

41 COM 11 որոշում

41 COM 11 որոշում

V. B Ընթացակարգը և ձևաչափը

- 203.** Համաշխարհային ժառանգության կոմիտեն՝
- a) հաստատում է ձևաչափը և բացատրական տեքստը ներկայացված 7-րդ հավելվածում,
 - b) կոչ է անում անդամ պետություններին ներկայացնել պարբերական զեկույցները վեց տարին մեկ անգամ,
 - c) որոշում է կայացրել ուսումնասիրել անդամ պետությունների ներկայացրած զեկույցները՝ ըստ տարածաշրջանների՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

22 COM VI.7 որոշում
41 COM 11 որոշում

Տարածաշրջան	Ցանկում ընդգրկված հուշարձանների ուսումնասիրություն մինչև տարին և ներառյալ տարին	Կոմիտեի ուսումնասիրության տարին
Արաբական պետություններ	1992	դեկտեմբեր, 2000
Աֆրիկա	1993	դեկտեմբեր, 2001 - հուլիս, 2002
Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	1994	հունիս – հուլիս, 2003
Լատինական Ամերիկա և Կարիբներ	1995	հունիս – հուլիս, 2004
Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա	1996/1997	հունիս – հուլիս, 2005/2006

d) առաջարկել է քարտուղարությանը խորհրդատվական մարմինների հետ համատեղ և անդամ պետությունների, տարածաշրջանում առկա իրավասու հաստատությունների և մասնագետների մասնակցությամբ մշակել տարածաշրջանային ռազմավարությունները պարբերական զեկույցների ներկայացման նպատակով՝ վերոգրյալ c) կետով հաստատված ժամանակացույցին համապատասխան:

- 204.** Վերը նշված ռազմավարությունները պետք է հասցեական պատասխանեն տարածաշրջանի առանձնահատկություններին և խթանեն համակարգման ու ներդաշնակեցման աշխատանքները անդամ պետությունների միջև՝ հատկապես անդրսահմանային հուշարձանների մասով: Քարտուղարությունը կարող է խորհրդատվություն տրամադրել անդամ պետություններին նշված տարածաշրջանային ռազմավարությունների մշակման և իրականացման հարցում:

41 COM 11 որոշում

- 205.** Զեկույցների ներկայացման վեցամյա շրջափուլից հետո յուրաքանչյուր տարածաշրջան կգնահատվի նույն հերթականությամբ, ինչպես նշված է վերը ներկայացված աղյուսակում: Առաջին վեցամյա շրջափուլից հետո նախքան նոր շրջափուլի նախաձեռնումը կարող է դադար հայտարարվել ներկայացված պարբերական զեկույցների գնահատման և վերանայման նպատակով:

41 COM 11 որոշում

- 206.** Անդամ պետությունների կողմից ներկայացվելիք պարբերական զեկույցների ձևաչափը բաղկացած է երկու բաժնից.

Ձևաչափը վերանայվել է պարբերական զեկույցների ներկայացման երկրորդ շրջափուլի ընթացքում և հաստատվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի 11-րդ նստաշրջանի ընթացքում (Կրակով, 2017 թ.):

a) **1-ին բաժինը** վերաբերում է անդամ պետության ընդունած օրենսդրական և վարչական դրույթներին, կոնվենցիայի կիրարկմանն ուղղված այլ գործողություններին, ինչպես նաև այդ ոլորտում ձեռք բերված փորձի մանրամասներին: Սա մասնավորապես վերաբերում է ընդհանուր պարտավորություններին, որոնք սահմանված են կոնվենցիայի առանձին հոդվածներով:

b) **2-րդ բաժինը** վերաբերում է անդամ պետության տարածքում գտնվող Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված որոշակի հուշարձանների պահպանվածության վիճակին: Այս բաժինը կարող է լրացվել Համաշխարհային

41 COM 11 որոշում

ժառանգության ցանկում ընդգրկված առանձին հուշարձանի համար:

Բացատրական ծանոթությունները ներկայացված են 7-րդ հավելվածի ձևաչափում:

207. Տեղեկատվության կառավարումը խթանելու նպատակով անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել իրենց զեկույցները ֆրանսերենով կամ անգլերենով՝ և էլեկտրոնային, և տպագիր տարբերակներով հետևյալ հասցեով.
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն**
7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352, Փարիզ 07 SP
Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 45 68 12 76
Էլ. փոստ՝ wh-info@unesco.org
- 41 COM 11 որոշում

V. C Գնահատումը և հետագա ընթացքը

208. Քարտուղարությունը համախմբում է պետությունների Համաշխարհային ժառանգության զեկույցներն ըստ տարածաշրջանների, որոնք հասանելի են դառնում <http://whc.unesco.org/en/publications> հասցեով և թղթային տարբերակներով (Համաշխարհային ժառանգության փաստաթղթերի շարք):
209. Համաշխարհային ժառանգության կոմիտեն մանրամասն ուսումնասիրում է պարբերական զեկույցներում վեր հանված հարցերը և խորհրդատվություն տրամադրում տարածաշրջանի անդամ պետություններին մտահոգիչ հարցերի վերաբերյալ:
210. Կոմիտեն, խորհրդակցելով անդամ պետությունների հետ, քարտուղարությունից և խորհրդատվական մարմիններից պահանջում է իր ռազմավարական նպատակներին համապատասխան մշակել տարածաշրջանային երկարաժամկետ ծրագրեր, որոնք պետք է ներկայացվեն կոմիտեի քննարկմանը: Այդ ծրագրերն ընդունվում են՝ հիմք ընդունելով պարբերական զեկույցների արդյունքները, և կանոնավոր կերպով վերանայվում են կոմիտեի կողմից անդամ պետությունների պարբերական զեկույցներում նախանշված կարիքների հիման վրա: Դրանք պետք է ճշգրտորեն արտահայտեն տարածաշրջանում Համաշխարհային ժառանգության կարիքները և խթանեն միջազգային աջակցության տրամադրումը: Կոմիտեն նույնպես իր աջակցությունն է հայտնում ռազմավարական նպատակների և միջազգային աջակցության միջև ուղիղ կապի հաստատմանը:
- 36 COM 13.I որոշում
41 COM 11 որոշում

VI ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՆ ԱԶԱԳՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

VI. A Նպատակները

211. Նպատակներն են՝

- a) խթանել կարողությունների զարգացումը և հետազոտությունը,
- b) բարձրացնել հանրության իրազեկվածության աստիճանը, ընկալումը և գնահատումը մշակութային և բնության ժառանգության պահպանության հարցում,
- c) խթանել Համաշխարհային ժառանգության դերակատարությունը համայնքի կյանքում,
- d) բարձրացնել տեղական և ազգային բնակչության մասնակցության աստիճանը ժառանգության պահպանության և ներկայացման գործում:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 27-րդ հոդված

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 5(a)-րդ հոդված

VI. B Կարողությունների կառուցումը և հետազոտությունը

212. Կոմիտեն ձգտում է զարգացնել անդամ պետությունների կարողությունները՝ իր ռազմավարական նպատակներին համապատասխան:

Համաշխարհային ժառանգության մասին Բուդապեշտի հռչակագիր (2002 թ.)

Վերապատրաստման համաշխարհային ռազմավարությունը

213. Կոմիտեն հաստատել է Համաշխարհային բնության և մշակույթի ժառանգության պահպանության գլոբալ ուսուցման ռազմավարությունը՝ գիտակցելով Համաշխարհային ժառանգության պաշտպանության, պահպանության ապահովման և հանրահռչակման գործում բարձր որակավորում ունեցող հմտությունների և տարբեր գիտակարգերի կիրառման անհրաժեշտությունը: Գլոբալ ուսուցման ռազմավարության նպատակը անհրաժեշտ հմտությունների զարգացումն է՝ դերակատարների մեծ շրջանակի ընդգրկմամբ կոնվենցիայի կիրարկումը լավագույնս ապահովելու համար: Կոմիտեն կապահովի նաև կապը այլ նախաձեռնությունների հետ, ինչպիսիք են Համաշխարհային ժառանգության ներկայացուցչական, հավասարաչափ ներկայացված և արժանահավատ ցանկը և պարբերական զեկույցների ներկայացումը՝ կրկնումները բացառելու և ռազմավարությունն արդյունավետ իրականացնելու նպատակով: Կոմիտեն տարեկան կտրվածքով կվերանայի համապատասխան ուսուցման հարցերը, կգնահատի ուսուցման ոլորտի կարիքները, կուսումնասիրի ուսուցման նախաձեռնությունների տարեկան հաշվետվությունները և կներկայացնի առաջարկություններ հետագա ուսուցման նախաձեռնությունների վերաբերյալ:

Մշակութային և բնության ժառանգության բնագավառի մասնագետների վերապատրաստման համաշխարհային ռազմավարությունը հաստատվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի 25-րդ նստաշրջանի ընթացքում (Հելսինկի, Ֆինլանդիա, 2001 թ.) (տես WHC-01/CONF.208/24 փաստաթղթի 10-րդ հավելվածը):

Վերապատրաստման ազգային ռազմավարությունները և տարածաշրջանային համագործակցությունը

212. Անդամ պետություններին կոչ է արվում ապահովել իրենց մասնագետների և փորձագետների համապատասխան ուսուցումը բոլոր մակարդակներում: Այս կապակցությամբ անդամ պետությունները խրախուսվում են մշակելու ազգային դասավանդման ռազմավարություններ և դրանցում ներառել դասավանդման ոլորտում տարածաշրջանային համագործակցությունը՝ որպես բաղադրիչ:

Հետազոտություն

215. Կոնվենցիայի արդյունավետ կիրարկման նպատակով կոմիտեն մշակում և համակարգում է միջազգային համագործակցությունը հետազոտությունների ոլորտում: Անդամ պետություններին կոչ է արվում ռեսուրսներ տրամադրել հետազոտությունների իրականացման նպատակով, քանի որ գիտելիքները և ընկալումը հիմնարար դերակատարություն ունեն Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտման, կառավարման և մոնիթորինգի ենթակետերում գործում:

Միջազգային աջակցություն

216. Անդամ պետությունները դասընթացների և հետազոտությունների կազմակերպման գործում աջակցություն կարող են հայցել Համաշխարհային ժառանգության հիմնադրամից (տես 7-րդ գլուխը):

V. C. Հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում և կրթություն

Հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում

217. Անդամ պետություններին կոչ է արվում բարձրացնել հանրային իրազեկվածության աստիճանը Համաշխարհային ժառանգության պահպանության անհրաժեշտության գործում: Մասնավորապես՝ պետությունները պետք է ապահովեն Համաշխարհային ժառանգության կարգավիճակի նշագրումը պատշաճ մակարդակով և հանրահռչակումը տեղում:

218. Քարտուղարությունը անդամ պետություններին աջակցություն է տրամադրում

կոնվենցիայի և Համաշխարհային ժառանգությանն ուղղված վտանգների վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Քարտուղարությունն անդամ պետություններին խորհրդատվություն է տրամադրում տեղում հանրահոշակման և կրթական ծրագրերի նախապատրաստման ու իրականացման մասով, որոնք կարող են ֆինանսավորվել միջազգային աջակցության ծրագրի միջոցով: Խորհրդատվական մարմինները և համապատասխան պետական գործակալությունները կարող են խորհրդատվություն տրամադրել նմանատիպ ծրագրերի մասով:

Կրթություն

219. Համաշխարհային ժառանգության կոմիտեն խրախուսում և աջակցում է կրթական նյութերի, միջոցառումների և ծրագրերի մշակմանը:

Միջազգային աջակցություն

220. Անդամ պետություններին կոչ է արվում Համաշխարհային ժառանգությանը վերաբերող կրթական միջոցառումների իրականացման ընթացքում հնարավորինս ապահովել դպրոցների, համալսարանների, թանգարանների, ինչպես նաև տեղական և ազգային կրթական այլ իրավասու գերատեսչությունների մասնակցությունը:
221. Քարտուղարությունը, համագործակցելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության սեկտորի և այլ գործընկերների հետ, նախապատրաստում և հրապարակում է Համաշխարհային ժառանգության կրթական ռեսուրսի գործիքակազմ՝ «Համաշխարհային ժառանգությունը երիտասարդների ձեռքերում»՝ աշխարհի միջնակարգ դպրոցներում կիրառելու նպատակով: Գործիքակազմը կարող է հարմարեցվել նաև այլ կրթական մակարդակների համար:
222. Անդամ պետությունները կարող են Համաշխարհային ժառանգության հիմնադրամից աջակցություն ստանալ հանրային իրազեկման քարոզարշավի և կրթական միջոցառումների կամ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով (տես 7-րդ գլուխը):

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 27.2 -րդ հոդված

«Համաշխարհային ժառանգությունը երիտասարդության ձեռքերում»-ը հասանելի է <http://whc.unesco.org/education/index.htm> հղումով

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 15-րդ հոդված

VII ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

VII. A Համաշխարհային ժառանգության հիմնադրամը

223. Համաշխարհային ժառանգության հիմնադրամը կոնվենցիայով և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսական կանոնակարգումներին համապատասխան ստեղծված նպատակային հիմնադրամ է: Հիմնադրամի միջոցները գոյանում են կոնվենցիային միացած անդամ պետությունների պարտադիր և կամավոր վճարումներից, ինչպես նաև հիմնադրամի կանոնակարգով չարգելված այլ միջոցներից:
224. Հիմնադրամի ֆինանսական կանոնակարգումները սահմանված են WHC/7 փաստաթղթով և հասանելի են <http://whc.unesco.org/en/financialregulations> հասցեով:

VII. B. Տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների համախմբումն ու գործընկերությունը՝ ի աջակցություն Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի

225. Համաշխարհային ժառանգության հիմնադրամը հնարավորինս պետք է օգտագործվի այլ աղբյուրներից լրացուցիչ ռեսուրսների համախմբման համար՝ միջազգային աջակցություն տրամադրելու նպատակով:

226. Կոմիտեն որոշում է կայացրել, որ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված ցանկացած հուշարձանի համար հիմնադրամի միջազգային աջակցության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ ծրագրերի իրականացման նպատակով կատարած վճարները պետք է ընդունվեն և օգտագործվեն կոնվենցիայի 5-րդ բաժին և քարոզարշավի կամ ծրագրի իրականացման համար հաստատված կանոնակարգերին համապատասխան՝ որպես միջազգային աջակցություն:

227. Անդամ պետություններին կոչ է արվում աջակցել կոնվենցիային՝ ի հավելումն Համաշխարհային ժառանգության հիմնադրամին տրամադրվող պարտադիր վճարումներին: Նման կամավոր աջակցությունը կարող է իրականացվել Համաշխարհային ժառանգության հիմնադրամին լրացուցիչ վճարումների կատարման կամ հուշարձաններում ֆինանսական կամ տեխնիկական ներդրումների կատարման միջոցով:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 15(3)-րդ հոդված

228. Անդամ պետություններին կոչ է արվում մասնակցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնած և Համաշխարհային ժառանգության պաշտպանությանն ուղղված միջազգային դրամահավաք - արշավներին:

229. Այդ արշավներում կամ Համաշխարհային ժառանգության հուշարձաններին առնչվող ծրագրերում ներդրում կատարելու ցանկություն ունեցող անդամ պետությունները կամ այլ դերակատարները հրավիրվում են իրենց ներդրումները կատարել Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցով:

230. Անդամ պետություններին կոչ է արվում խթանել ազգային, պետական և մասնավոր մակարդակներով հիմնադրամների կամ ասոցիացիաների հիմնադրումը, որոնց գործունեության նպատակը կլինի Համաշխարհային ժառանգության պահպանության նախաձեռնությունների աջակցության համար միջոցների ներգրավումը:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 17-րդ հոդված

231. Համաշխարհային ժառանգության պահպանվածության ապահովման նպատակով քարտուղարությունը աջակցում է ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների հավաքագրմանը: Այս առնչությամբ քարտուղարությունը զարգացնում է գործընկերությունը պետական և մասնավոր հաստատությունների հետ՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից ընդունված որոշումներին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնակարգերին համապատասխան:

232. Համաշխարհային ժառանգության հիմնադրամի համար արտաքին ռեսուրսների ներգրավման նպատակով քարտուղարությունը ղեկավարվում է «ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործընկերության համապարփակ ռազմավարությամբ»: Նշված փաստաթուղթը հասանելի է <http://en.unesco.org/partnerships> հղումով:

Գործընկերության համապարփակ ռազմավարություն՝ ներառյալ «Գործընկերների առանձին կատեգորիաների ներգրավման համար առանձին ռազմավարություններ»

VII. C. Միջազգային աջակցությունը

30 COM 13.13 որոշում

233. Կոնվենցիան անդամ պետությունների միջազգային աջակցություն է տրամադրում իրենց տարածքում գտնվող և գրանցված, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար ներուժ ունեցող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության համար: Միջազգային աջակցությունը պետք է դիտարկվի ազգային ջանքերին ի հավելումն տրամադրած աջակցություն՝ Համաշխարհային ժառանգության և նախնական ցանկերում ընդգրկված հուշարձանների պահպանության և կառավարման համար, երբ ազգային մակարդակով համապատասխան ռեսուրսներ չեն կարող տրամադրվել:

«Գործընկերության համապարփակ ռազմավարություն»՝ ներառյալ «Գործընկերների առանձին կատեգորիաների ներգրավման համար առանձին ռազմավարություններ»
30 COM 13.13 որոշում

234. Միջազգային աջակցությունն առաջնահերթ տրամադրվում է Համաշխարհային կոնվենցիայով հաստատված Համաշխարհային ժառանգության հիմնադրամից: Կոմիտեն որոշում է կայացնում միջազգային աջակցության բյուջեի վերաբերյալ երկամյա կտրվածքով:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 4-րդ բաժին

235. Համաշխարհային ժառանգության կոմիտեն համակարգում և հատկացնում է միջազգային աջակցությունը՝ անդամ պետությունների ներկայացրած հայտերին ի պատասխան: Միջազգային աջակցության տեսակները նկարագրված են ստորև ներկայացված ամփոփիչ աղյուսակում՝ ըստ առաջնահերթության.
- a) անհապաղ աջակցություն,
- b) պահպանության և կառավարման աջակցություն (Conservation and) (ինտեգրված աջակցություն ուսուցման և հետազոտությունների, տեխնիկական համագործակցության և հանրահոգսական ու կրթության կազմակերպման համար),
- c) նախապատրաստական աջակցություն:
- VII. D Միջազգային աջակցության սկզբունքները և առաջնահերթությունները**
236. Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ներառված հուշարձաններին տրամադրվող միջազգային աջակցությունը առաջնահերթություն ունի: Կոմիտեն ստեղծել է հատուկ բյուջեի տող՝ երաշխավորելու, որ Համաշխարհային ժառանգության հիմնադրամից տրամադրվող աջակցության զգալի չափաբաժինը հատկացվում է Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձաններին:
237. Համաշխարհային ժառանգության հիմնադրամ իրենց պարտադիր կամ կամավոր վճարումները չկատարած անդամ պետություններն իրավասու չեն ստանալու միջազգային աջակցություն: Միաժամանակ, սույն դրույթը կիրառելի չէ անհապաղ աջակցություն տրամադրելու դեպքերում:
238. Իր ռազմավարական նպատակներին աջակցելու նպատակով կոմիտեն նույնպես միջազգային աջակցություն է տրամադրում իր որոշումներով և տարածաշրջանային ծրագրերով, որոնք ընդունվել են պարբերական զեկույցների արդյունքների հիման վրա (տե՛ս 210-րդ պարբերությունը):
239. 236-238-րդ պարբերություններում սահմանված առաջնահերթություններին ի հավելումն՝ միջազգային աջակցություն տրամադրելու ընթացքում կոմիտեն առաջնորդվում է ստորև ներկայացվող դիտարկումներով.
- a) հավանականությունը, որ աջակցությունը կունենա կատալիզատորային և բազմակի ազդեցություն (դրամական միջոցների կուտակում) և կխթանի այլ աղբյուրներից ֆինանսական ու տեխնիկական ներդրումները,
- b) ֆինանսական միջոցների սահմանափակման դեպքում, երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել, նախապատվությունը տրվում է՝
- ցածր զարգացած երկրներին կամ ցածր եկամտաբերությամբ տնտեսությանը, որոնք սահմանվել են ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի զարգացման քաղաքականության կոմիտեի կողմից, կամ
 - միջինից ցածր եկամտաբերությամբ երկրին, որը սահմանվել է Համաշխարհային բանկի կողմից, կամ
 - փոքր կղզի զարգացող պետություններին, կամ
 - հետ կոնֆլիկտային վիճակում գտնվող անդամ պետությանը,
- c) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններում պաշտպանիչ գործողությունների իրականացման հրատապությունը,
- d) արդյո՞ք ստացող անդամ պետության օրենսդրական, վարչական և,

30 COM 14A որոշում
36 COM 13.1 որոշում

Համաշխարհային
ժառանգության կոնվենցիայի
13(1)-րդ հոդված

13 COM XII.34 որոշում

36 COM 13.1 որոշում

Որոշումներ 26 COM 17.2,
26 COM 20 և
26 COM 25.3

31 COM 18B որոշում

հնարավորության դեպքում, ֆինանսական պարտավորությունները բավարար են միջոցառման իրականացման համար,

e) միջոցառման ազդեցությունը կոմիտեի ռազմավարական նպատակների հետագա ամրապնդման համար,

Paragraph 26 of Operational Guidelines

f) համապատասխանության աստիճանը արձագանքող մոնիթորինգով և տարածաշրջանային ազգային զեկույցների վերլուծություններով բացահայտված կարիքներին,

20 COM XII որոշում

g) գործողության մոդելային արժեքը գիտական հետազոտությունների իրականացման և պահպանվածության ապահովման խնայող մեթոդների մշակման տեսանկյունից,

h) գործողության արժեքը և ակնկալվող արդյունքները,

i) կրթական արժեքը և փորձագետների պատրաստման, և հանրության համար:

240. Միջոցների բաշխման ընթացքում պահպանվում է հավասարակշռությունը մշակութային և բնության ժառանգության, ինչպես նաև կոնսերվացման և կառավարման ու նախապատրաստական աջակցության միջև: Այս հավասարակշռումը կանոնավոր կերպով վերանայվում և դրա վերաբերյալ որոշումը նախագահողի կամ կոմիտեի կողմից ընդունվում է երկամյակի երկրորդ տարում:

Միջազգային աջակցության ընդհանուր բյուջեի 65%-ը հատկացվում է մշակութային, իսկ 35%-ը՝ բնության հուշարձաններին:

31 COM 18B որոշում
36 COM 13.I որոշում
37 COM 12.II որոշում

VII. E Ամփոփիչ աղյուսակը

241.

36 COM 13.I որոշում
30 COM 13.13 որոշում

Միջազգային աջակցություն	Նպատակը	Բյուջեի առավելագույն չափաքանակը յուրաքանչյուր հայտի համար	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը	Հաստատող մարմինը
Անհապաղ աջակցություն	Այս աջակցությունը կարող է հայցվել որոշակի կամ հնարավոր սպառնալիքների դիմակայող Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների կամ Համաշխարհային ժառանգության ցանկերում ընդգրկված հուշարձանների համար, որոնք սարսափելի վնասվել կամ ներուճակ վտանգի տակ են հանկարծակի, անկանխատեսելի երևույթի պատճառով: Նման երևույթներ կարող են լինել հողի սողանքները, լայնամասշտաբ հրդեհները, պայթյունները, հեղեղները կամ մարդածին աղետները՝ ներառյալ պատերազմը: Այս աջակցությունը չի վերաբերում քայքայման, աղտոտվածության կամ էռոզիայի հետևանքով աստիճանաբար հասցված վնասին կամ մաշվածությանը: Այն նախատեսված է արտակարգ իրավիճակների համար, որոնք բացառապես վերաբերում են Համաշխարհային ժառանգության հուշարձանի պահանջության պահովմանը (տե՛ս 28 COM 10B 2.c որոշումը): Անհրաժեշտության դեպքում այն կարող է հասանելի դառնալ մեկ անդամ պետության մեկից ավելի Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար (տե՛ս 6 EXT. COM 15.2 որոշումը): Ֆինանսավորման առավելագույն չափաքանակը կախված է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մեկ հուշարձանից:	Մինչև 5.000 ԱՄՆ դոլար	Ցանկացած պահի	Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրեն
	Աջակցությունը կարելի է հայցել (i) հուշարձանի պահպանության համար հրատապ միջոցների նախաձեռնման նպատակով, (ii) հուշարձանի համար արտակարգ իրավիճակների պլանի մշակման համար:	5.001-ից 75.000 ԱՄՆ դոլար	Ցանկացած պահի	Կոմիտեի նախագահող
		75.000 ԱՄՆ դոլարից ավելի	Ցանկացած պահի նախքան կոմիտեն	Կոմիտե

Միջազգային աջակցություն	Նպատակը	Բյուջեի առավելագույն չափաքանակը յուրաքանչյուր հայտի համար	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը	Հաստատող մարմինը
Նախապատ- րաստական աջակցություն	Այս աջակցությունը կարող է հայցվել (ըստ առաջ- նահերթության): (i) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդ- գրկելու համար համապատասխան հուշարձան- ների նախնական ազգային ցանկերի նախապատ- րաստման կամ թարմացման. անդամ պետությունից պահանջվում է պարտավորություն առաջադրել նա- խապատրաստել այդ ցանկում թվարկված հուշար- ձաններն ըստ առաջնահերթության և թեմատիկ խորհրդատվության, ինչպիսիք են՝ խորհրդատվա- կան մարմինների կողմից նախապատրաստված թեմատիկ հետազոտությունները, որոնք լրացնում են ցանկում առկա բացթողումները, (ii) նույն մշակութային-աշխարհագրական տարածա- շրջանի նախնական ազգային ցանկերի ներդաշ- նակեցման նպատակով հանդիպումների կազմակեր- պում, (iii) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդ- գրկելու համար հուշարձանների անվանակարգերի նախապատրաստում (ներառյալ նախապատրաս- տական աշխատանքները, ինչպիսիք են՝ հիմնական տեղեկատվության հավաքագրումը, համաշխարհային բացառիկ արժեքը ներկայացնող հետազոտություննե- րը՝ ներառյալ ամբողջականությունը և իսկությունը, հուշարձանի՝ այլ նմանատիպ հուշարձանների հետ համեմատական ուսումնասիրությունը (տե՛ս 5-րդ հավելվածի 3.2-րդ կետը)՝ ընդգրկելով նաև խոր- հրդատվական մարմինների համատեքստում պատ- րաստած բացթողումների ուսումնասիրությունը: Առաջնայնությունը կտրվի այն հուշարձանների հայ- տերին, որոնք հաստատվել են թեմատիկ խորհրդա- տվությամբ, որպես ցանկի բացթողումներ և/կամ այն հուշարձաններին, որոնցում նախնական ուսում- նասիրությունները ցույց են տվել, որ հետագա հետազոտությունները հիմնավորված են, հատկապես այն անդամ պետությունների դեպքերում, որոնց ժա- ռանգությունը ներկայացված չէ կամ թույլ է ներ- կայացված Համաշխարհային ժառանգության ցան- կում, (iv) պատրաստել պահպանության և կառավարման աջակցության հայտեր՝ Համաշխարհային ժառանգու- թյան կոմիտեի քննարկման համար:	Մինչև 5.000 ԱՄՆ դոլար 5.001 - 30.000 ԱՄՆ դոլար	Ցանկացած պահի Հոկտեմբերի 31	Համաշխար- հային ժառանգու- թյան կենտրոնի տնօրեն կոմիտեի նախագահող

Միջազգային աջակցություն	Նպատակը	Բյուջեի առավելագույն չափաքանակը յուրաքանչյուր հայտի համար	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը	Հաստատող մարմինը
Պահպանու-թյան և կառավարման աջակցություն (ներառելով դասընթացների կազմակերպման և հետազոտու- թյունների ջակցությունը, տեխնիկական համագործա- կցության աջակցությունը և հանրահոշակ- ման ու կրթության աջակցությունը) դասընթացների կազմակերպ-ման և հետազոտու- թյունների աջակցությունը, տեխնիկական համագործա- կցության աջակցությունը և հանրահոշակ- ման ու կրթության աջակցությունը) դասընթացների կազմակերպ-ման և հետազոտու- թյունների աջակցությունը, տեխնիկական համագործա- կցության աջակցությունը և հանրահոշակ- ման ու կրթության աջակցությունը)	Այս աջակցությունը կարող է հայցվել՝ (i) նախանշման, մոնիթորինգի, պահպանության, կառա- վարման և Համաշխարհային ժառանգության ներկայացման (հանրահոշակման) ոլորտների բոլոր մակարդակներով անձնակազմի և փորձագետների պատրաստում՝ շեշտա- դրում կատարելով խմբակային դասավանդմանը, (ii) գիտական հետազոտության կազմակերպում՝ խթանելով համաշխարհային ժառանգության հուշարձանները, (iii) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության, կառավարման և և հանրահոշակման ուղղված գիտական և տեխնիկական խնդիրների ուսումնասիրություն: Ծանոթություն: ՅՈՒՆԵՍԿՕ-ից անհատական դասընթաց- ների աջակցման հայտերը պետք է ներկայացնել ստան- դարտ «Կրթաթոշակի հայտ»-ով, որը հասանելի է քարտու- ղարությունում: (iv) Համաշխարհային ժառանգության ցանկում և Համաշ- խարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության, կառավարման և հանրահոշակման նպատակով փորձա- գետների, տեխնիկների և արհեստավարժ աշխատուժի տրամադրում, (v) սարքավորումների մատակարարում, որոնք անհրաժեշտ են անդամ պետությանը Համաշխարհային ժառանգության ցանկում և Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության, կառավարման և հանրահոշակման համար, (vi) Համաշխարհային ժառանգության ցանկում և Համաշ- խարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանության, կառավարման և հանրահոշակման համար ցածր տոկոսադրույքով կամ առանց տոկոսի երկարաժամկետ փոխառությունների տրամադրում, (vii) տարածաշրջանային և միջազգային մակարդակներով ծրագրերի, գործողությունների և հանդիպումների իրակա- նացում, որոնք կարող են՝ - խթանել հետաքրքրվածությունը կոնվենցիայի հանդեպ նույն տարածաշրջանի երկրների շրջանում, - կոնվենցիայի կիրարկմանը վերաբերող դրույթների վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում՝ խթանելով առավել ակտիվ ներգրավումը դրա կիրարկման գործում, - հանդիսանալ փորձի փոխանակման միջոց, - խթանել համատեղ կրթական, տեղեկատվական և հանրահոշակման ուղղված ծրագրեր և գործողություններ՝ հատկապես երիտասարդների մասնակցության դեպքերում՝ ի շահ համաշխարհային ժառանգության պահպանության: (viii) Ազգային մակարդակով՝ - հանդիպումներ, որոնք բացառապես կազմակերպվել ոնվենցիան առավել ընկալելի դարձնելու համար, հատկա- պես երիտասարդների շրջանում կամ Համաշխարհային ժառանգության ազգային ասոցիացիաների ձևավորման նպատակով՝ կոնվենցիայի 17-րդ հոդվածին համապա- տասխան, - կրթական և տեղեկատվական նյութերի նախապատ- րաստում և քննարկում (ինչպիսիք են՝ բրոշյուրներ, հրապարակումներ, ցուցահանդեսներ, ֆիլմեր, մուլտիմե- դիա գործիքներ)՝ կոնվենցիայի և Համաշխարհային ժառանգության ցանկի ընդհանուր, այլ ոչ թե կոնկրետ հուշարձանի հանրահոշակման համար՝ հատկապես երի- տասարդների շրջանում:	Միայն (i) մինչև (vi) կետերին համապատաս- խանող հայտերի համար՝ մինչև 5.000 ԱՄՆ դոլար, 5.001-ից 30.000 ԱՄՆ դոլար, 30.000-ից ավելի ԱՄՆ դոլար (vii) և (viii) կետերին համապատաս- խանող հայտերի համար՝ մինչև 5,000 ԱՄՆ դոլար, 5.001-ից 10,000 ԱՄՆ դոլար	Միայն (i) մինչև (vi) կետերին համապատաս- խանող հայտերի համար՝ ցանկացած պահի 31 հոկտեմբեր 31 հոկտեմբեր (vii) և (viii) կետերին համապատաս- խանող հայտերի համար՝ ցանկացած պահի 31 հոկտեմբեր	Միայն (i) մինչև (vi) կետերին համապատաս- խանող հայտե- րի համար՝ Համաշխար- հային ժառան- գության կենտրոնի տնօրեն կոմիտեի նախագահող կոմիտե (vii) և (viii) կետերին համապա- տասխանող հայտերի համար՝ Համաշխար- հային ժառանգու- թյան կենտրոնի տնօրեն կոմիտեի նախագահող

VII. F Ընթացակարգը և ձևաչափը

242. Բոլոր անդամ պետություններին կոչ է արվում խորհրդակցել քարտուղարության և խորհրդատվական մարմինների հետ յուրաքանչյուր հայտի հայեցակարգի ձևակերպման, պլանավորման և հետագա մշակման հարցերով: Անդամ պետության աշխատանքներին աջակցելու համար միջազգային աջակցության հայտերի հաջող օրինակները կարող են տրամադրվել ըստ պահանջի:
243. Միջազգային աջակցության հայտածները ներկայացված են 8-րդ հավելվածում և աջակցության տեսակները, գումարի չափաքանակները, ներկայացման վերջնաժամկետները, հաստատման համար պատասխանատուները՝ VII.E գլխի ամփոփիչ աղյուսակում:
244. Հայտերը պետք է ներկայացվեն անգլերենով կամ ֆրանսերենով, պատշաճ ստորագրությամբ և փոխանցվեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի, ՅՈՒՆԵՍԿՕ-ում անդամ պետության մշտական ներկայացուցչության և/կամ համապատասխան կառավարական վարչության կամ նախարարության միջոցով հետևյալ հասցեով.
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն
7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352
Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0) 1 4568 12 76
Էլ. փոստ՝ wh-intassistance@unesco.org
245. Անդամ պետության կողմից միջազգային աջակցության հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով, սակայն պետք է ուղեկցվեն պաշտոնապես ստորագրված թղթային տարբերակով կամ լրացվեն առցանց տարբերակով Համաշխարհային ժառանգության կենտրոնի վեբ կայքում՝ <http://whc.unesco.org> հասցեով:
246. Կարևոր է, որ հայտածնում պահանջվող տեղեկատվությունը ամբողջովին ներկայացված լինի: Կիրառելիության կամ անհրաժեշտության դեպքում հայտերը կարող են ուղեկցվել լրացուցիչ տեղեկատվությամբ, զեկույցներով և այլն:

VII. G Միջազգային աջակցության հայտերի գնահատումը և հաստատումը

247. Համոզվելով, որ անդամ պետության աջակցություն ստանալու հայտն ամբողջական է՝ քարտուղարությունը խորհրդատվական մարմինների աջակցությամբ 5000 ԱՄՆ դոլարից բարձր հայտերը քննության է առնում ստորև ներկայացվող ժամանակացույցին համապատասխան:
248. Մշակութային ժառանգությանն առնչվող միջազգային աջակցության բոլոր հայտերը գնահատվում են ԻԿՕՄՕՍ-ի և ԻԿԿՌՕՍ-ի կողմից՝ բացառությամբ մինչև/ներառյալ 5000 ԱՄՆ դոլար հայտերը: 13 COM XII.34 որոշում
31 COM 18B որոշում
249. Խառը ժառանգությանն առնչվող միջազգային աջակցության բոլոր հայտերը գնահատվում են ԻԿՕՄՕՍ-ի, ԻԿԿՌՕՍ-ի և IUCN-ի կողմից՝ բացառությամբ մինչև/ներառյալ 5000 ԱՄՆ դոլար հայտերը: 31 COM 18B որոշում
250. Բնության ժառանգությանն առնչվող միջազգային աջակցության բոլոր հայտերը գնահատվում են IUCN-ի կողմից՝ բացառությամբ մինչև/ներառյալ 5000 ԱՄՆ դոլար հայտերը: 31 COM 18B որոշում
251. Խորհրդատվական մարմինների կիրառած գնահատման չափորոշիչները ներկայացված են 9-րդ հավելվածում: 31 COM 18B որոշում
252. 5,000 ԱՄՆ դոլարը գերազանցող միջազգային աջակցության բոլոր՝ բացառությամբ հրատապ աջակցության, հայտերը գնահատում է Համաշխարհային 31 COM 18B որոշում
36 COM 13.1 որոշում
30 COM 13.13 որոշում

Ժառանգության կենտրոնի տարածաշրջանային բաժինների և խորհրդատվական մարմինների ներկայացուցիչների կողմից ձևավորված հանձնաժողովը և հնարավորության դեպքում՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախագահողը, կամ դիտորդի կարգավիճակով՝ նախագահողի կողմից նշանակված անձը՝ գումարվելով տարին մեկ կամ երկու անգամ՝ նախքան նախագահողի և/կամ կոմիտեի գործողությունները: Հրատապ աջակցության հայտերը կարող են ներկայացվել քարտուղարություն ցանկացած պահի, որոնք կփոխանցվեն նախագահողին կամ կոմիտեին հաջորդ նիստի ընթացքում՝ խորհրդատվական մարմինների մեկնաբանություններով և առանց հանձնաժողովի ուսումնասիրության որոշում կայացնելու նպատակով:

253. Նախագահողը լիազորված չէ հաստատելու իր երկրից ներկայացված հայտերը: Դրանք կուսումնասիրվի կոմիտեի կողմից:

254. 5,000 ԱՄՆ դոլարը գերազանցող նախապատրաստական աջակցության կամ պահպանության և կառավարման աջակցության բոլոր հայտերը պետք է ներկայացվեն մինչև/ներառյալ հոկտեմբերի 31-ը: Թերի հայտերը, որոնք լրամշակված չեն ներկայացվի մինչև նոյեմբերի 30-ը, վերադարձվում են անդամ պետությանը՝ հաջորդ շրջափուլին ներկայացնելու նպատակով: Ամբողջական հայտերը քննարկվում են քարտուղարության և խորհրդատվական մարմինների միջև հունվարին գումարած առաջին նիստի ընթացքում: Հանձնաժողովի դրական կամ բացասական եզրակացություն ստացած հայտերը ներկայացվում են նախագահողին/կոմիտեին՝ որոշում ընդունելու նպատակով: Հանձնաժողովի երկրորդ նիստը կարող է գումարվել կոմիտեի նիստից առնվազն ութ շաբաթ առաջ այն հայտերի համար, որոնք վերանայվել են առաջին նիստից հետո: Էական փոփոխություններ կատարելու առաջարկով վերադարձված հայտերը կուսումնասիրվեն հանձնաժողովի կողմից՝ կախված դրանց ներկայացման ժամկետներից: Փոքրածավալ փոփոխություններ և հետազայում ուսումնասիրություն չպահանջող հայտերը վերադարձվում են տարվա ընթացքում՝ առաջին ուսումնասիրությունից հետո, այլապես դրանք վերադարձվում են՝ հաջորդ նիստին քննարկելու համար: Ներկայացման գործընթացի մանրամասն աղյուսակը կցված է 8-րդ հավելվածին:

36 COM 13.I որոշում

VII. H Պայմանագրային կարգավորումներ

255. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և շահագրգիռ անդամ պետության կամ դրա ներկայացուցչի (ներկայացուցիչների) միջև կնքվում է պայմանագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնակարգերին համապատասխան հաստատված միջազգային աջակցության հայտի իրականացման նպատակով՝ համաձայն հաստատված հայտի աշխատանքային պլանի և բյուջեի բացվածքի:

VII. I Միջազգային աջակցության գնահատումը և հետագա ընթացքը

256. Միջազգային աջակցության հայտի իրականացման մոնիթորինգը և գնահատումը տեղի է ունենում գործողությունների ավարտից առաջ՝ երեք ամսվա ընթացքում: Քարտուղարությունը, համագործակցելով խորհրդատվական մարմինների հետ, ստուգում և հավաքագրում է գնահատման արդյունքները, որոնք կանոնավոր կերպով քննության են առնվում կոմիտեի կողմից:

257. Կոմիտեն ուսումնասիրում է միջազգային աջակցության իրականացումը, գնահատում է արդյունքների հիման վրա կազմված զեկույցները՝ միջազգային աջակցության արդյունավետության գնահատման և իր առաջնահերթությունները վերաշարադրելու նպատակով:

VIII. A. Նախաբան

258. Իրերկրորդնստաշրջանի ընթացքում (Վաշինգտոն, 1978 թ.) կոմիտեն հաստատեց Համաշխարհային ժառանգության տարբերանշանը, որը նախագծվել էր Միշել Օլիֆի կողմից: Այս տարբերանշանը խորհրդանշում է բնության և մշակութային հուշարձանների փոխկախվածությունը: Կենտրոնական քառակուսին մարդու կողմից ստեղծված ձևն է, իսկ շրջանը ներկայացնում է բնությունը՝ երկու սերտ կապված էություն: Տարբերանշանը կլոր է, ինչպես աշխարհը և միաժամանակ հանդիսանում է պաշտպանության խորհրդանիշը: Այն խորհրդանշում է կոնվենցիան, ցույց է տալիս անդամ պետությունների նվիրվածությունը կոնվենցիային, ինչպես նաև ծառայում է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների ճանաչման համար: Այն ասոցացված է նաև կոնվենցիայի մասին հանրության իրազեկվածության հետ և հանդիսանում է կոնվենցիայի արժանահավատության և վարկանիշի տարբերանշանը: Ի հավելումն վերոգրյալի՝ այն ներկայացնում է համաշխարհային արժեքներ, որի համար էլ կոնվենցիան ընդունվել է:
259. Կոմիտեն որոշել է, որ արվեստագետի առաջարկող տարբերանշանը կարող է օգտագործվել ցանկացած գույնով և չափով՝ կախված օգտագործման եղանակից, տեխնիկական հնարավորություններից և գեղարվեստական դիտարկումներից: Տարբերանշանը պետք է կրի "WORLD HERITAGE. PATRIMOINE MONDIAL" տեքստը: "PATRIMONIO MUNDIAL" տեքստի հատվածը կարող է օգտագործվել դրա՝ ազգային լեզվով թարգմանության համար այն երկրում, որտեղ տարբերանշանը կիրառվելու է:



260. Կոմիտեն քսանմեկերորդ նստաշրջանի ընթացքում (Կյոտո, 1998 թ.) հաստատել է «Համաշխարհային ժառանգության տարբերանշանի օգտագործման ուղեցույցը և սկզբունքները», ինչը և ներկայացվել է հաջորդ պարբերություններում՝ տարբերանշանի կիրառումը տեսանելիության ասպեկտից առավել օգտավետ դարձնելու և ոչ պատշաճ մակարդակով օգտագործումները կանխելու համար: Ավելին, «Օգտագործման աղյուսակում» (14-րդ հավելված) ներկայացված է փոխլրացնող ուղղորդում:
261. Չնայած կոնվենցիայում չկա հիշատակում տարբերանշանի մասին, դրա օգտագործումը խրախուսվում է կոմիտեի կողմից կոնվենցիայի պաշտպանության տակ գտնվող և Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների տարբերակման նպատակով՝ 1978 թ. ընդունումից ի վեր:
262. Համաշխարհային ժառանգության կոմիտեն պատասխանատու է Համաշխարհային ժառանգության տարբերանշանի օգտագործման, ինչպես նաև դրա կիրառման տարբերակներին առնչվող քաղաքականության մշակման համար: 2007 թ. հոկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի¹⁴ գազաթնաժողովի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի անվան, սեղմանվան, պատկերանիշի և ինտերնետային տիրույթի հրահանգների հաստատումից ի վեր՝ նպատակահարմարության դեպքում խրախուսվում է Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատկերանիշի հետ միասին՝ որպես մեկ ամբողջություն: Այնուամենայնիվ, թույլատրվում է Համաշխարհային ժառանգության տարբերանշանի օգտագործումն առանձին տարբերակով՝ սույն ուղեցույցին և կիրառման աղյուսակին համապատասխան (14-րդ հավելված):
263. 26-րդ նստաշրջանի ընթացքում կոմիտեի պահանջով (Բուդապեշտ, 2002 թ.) Համաշխարհային ժառանգության տարբերանշանն իրեն շրջապատող տեքստով և առանց դրա ճանաչվել է Փարիզի միության անդամների կողմից 2003 թ. մայիսի 21-ին՝ «Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին» կոնվենցիայի (ընդունվել է 1883 թ. և վերանայվել 1967 թ., Ստոկհոլմում) 6-րդ հոդվածին համապատասխան: Դրանով իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ն անդրադառնում է Փարիզյան կոնվենցիայի անդամ պետությունների ազգային համակարգերին՝ կանխելու Համաշխարհային ժառանգության տարբերանշանի օգտագործումը այնպիսի դեպքերում, երբ շինծու կերպով ներկայացվում է կապը ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հետ կամ արգելելու այլ անարգական կիրառումները:
264. Տարբերանշանն ունի ֆինանսական միջոցներ ներգրավելու ներուժ, որը կարող է օգտագործվել դրա հետ առնչվող արտադրանքների շուկայական արժեքների խթանման նպատակով: Կարիք է զգացվում պահպանելու հավասարակշռությունը տարբերանշանի օգտագործումով կոնվենցիայի նպատակների հետագա տարածման և աշխարհի մասշտաբով կոնվենցիայի վերաբերյալ գիտելիքների օպտիմալացման և սխալ, անհարկի և առանց լիազորության կոմերցիոն կամ այլ նպատակներով օգտագործումը կանխելու անհրաժեշտության միջև:
265. Տարբերանշանի կիրառման ուղեցույցը և սկզբունքները, ինչպես նաև որակի հսկողության գործիքակազմը չպետք է խոչընդոտ հանդիսանան հանրահռչակման գործողությունների համար: Տարբերանշանի կիրառման ուսումնասիրությունների և որոշումների ընդունման համար պատասխանատու

39 COM 11 որոշում

39 COM 11 որոշում

26 COM 15 որոշում
39 COM 11 որոշում

39 COM 11 որոշում

14. Եթե փետրվարի 1-ն ընկնում է հանգստյան օրերին, ապա անվանակարգը պետք է ներկայացնել նախորդող օրվա ընթացքում 17:00 GMT ժամանակով:

լիազոր մարմինները կարող են իրենց որոշումների համար հիմք ընդունել ստորև ներկայացվող պարամետրերը և «Օգտագործման աղյուսակում» ներկայացվածները (14-րդ հավելված):

VIII. B. Կիրառելիություն

266. Սույն փաստաթղթում ներկայացված ուղեցույցներն ու սկզբունքներն ընդգրկում են տարբերանշանի կիրառման բոլոր հնարավոր տարբերակները հետևյալ հաստատությունների կողմից.

39 COM 11 որոշում

- a) Համաշխարհային ժառանգության կենտրոն,
- b) ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային տեղեկատվության ստորաբաժանում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ գրասենյակներ,
- c) յուրաքանչյուր անդամ պետությունում կոնվենցիայի կիրարկման համար պատասխանատու գործակալություններ կամ ազգային հանձնաժողովներ,
- d) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններ,
- e) պայմանագրային՝ հատկապես կոմերցիոն նպատակներով գործող այլ կողմեր:

VIII. C Անդամ պետությունների պատասխանատվությունը

267. Կոնվենցիայի անդամ պետությունները պետք է կիրառեն բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու տարբերանշանի կիրառումը իրենց երկրներում ցանկացած խմբի կամ կոմիտեի կողմից չհաստատված ցանկացած նպատակով: Անդամ պետություններին կոչ է արվում կիրառել ազգային օրենսդրությամբ տրված բոլոր միջոցները, ներառյալ ապրանքանիշերին առնչվող օրենքները:

VIII. D Համաշխարհային ժառանգության տարբերանշանի պատշաճ կիրառման աստիճանի բարձրացումը

268. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանները պետք է կրեն տարբերանշանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատկերանշանի հետ միասին, որոնք պետք է տեղադրված լինեն այնպես, որ տեսողական ասպեկտից չխաթարեն հուշարձանի տեսքը:

Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանների ընդգրկման փաստը հավերժացնող տախտակների արտադրությունը

269. Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկումից հետո անդամ պետությունը պետք է տեղադրի ցուցատախտակ՝ ընդգրկումը նշանավորելու նպատակով: Այդ ցուցատախտակները երկրի բնակչությանը և օտարերկրյա այցելուներին տեղեկացնելու են, որ նրանց այցելած հուշարձանն ունի որոշակի՝ միջազգային հանրության կողմից ճանաչված արժեք: Այլ խոսքով, տվյալ հուշարձանը կարևորություն ունի ոչ միայն տվյալ պետության, այլև ամբողջ աշխարհի համար: Ավելին, ցուցատախտակներն ունեն նաև լրացուցիչ գործառույթ. դրանց միջոցով հանրության լայն շրջանակները իրազեկվում են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կամ առնվազն Համաշխարհային ժառանգության հայեցակարգի և Համաշխարհային ժառանգության ցանկի մասին:

270. Գուցատախտակների ստեղծման համար կոմիտեն հաստատել է հետևյալ ղեկավար ցուցումները.

- a) ցուցատախտակը պետք է տեղադրված լինի այնպես, որ հեշտությամբ տեսանելի լինի այցելուների համար՝ առանց աղճատելու հուշարձանը,
- b) ցուցատախտակի վրա պետք է ներկայացված լինի Համաշխարհային ժառանգության տարբերանշանը,

ց) տեքստում պետք է հիշատակվի հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի մասին. այս կապակցությամբ օգտակար կլինի համառոտ նկարագրել հուշարձանի բացառիկ առանձնահատկությունները: Ցանկության դեպքում անդամ պետությունները կարող են օգտագործել Համաշխարհային ժառանգության տարբեր հրապարակումներում կամ Համաշխարհային ժառանգության ցուցահանդեսներում օգտագործված նկարագրությունները, որոնք կարող են ստացվել քարտուղարությունից,

d) տեքստում անհրաժեշտ է հղում կատարել Համաշխարհային ժառանգության կոնվենցիային և, մասնավորապես, Համաշխարհային ժառանգության ցանկին, ինչպես նաև միջազգային ճանաչմանը, որը ձեռք է բերվել ցանկում ներառելուց հետո (այնուամենայնիվ, անհրաժեշտ է հիշատակել, թե կոմիտեի որ նստաշրջանում է հուշարձանը ներառվել ցանկում): Նպատակահարմար է, որ տեքստը կազմված լինի մի քանի լեզուներով այն հուշարձանների համար, որոնք ընդունում են միջազգային այցելուներ:

271. Որպես օրինակ՝ կոմիտեն առաջարկում է ստորև ներկայացվող տեքստը.

«(հուշարձանի անվանումը) ընդգրկվել է «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի Համաշխարհային ժառանգության ցանկում: Ցանկում ընդգրկումը հաստատում է մշակութային կամ բնության հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքը, որը ենթակա է պաշտպանության՝ ի շահ մարդկության:»:

272. Հիշյալ տեքստին կարող է հաջորդել հուշարձանի համառոտ նկարագրությունը:

273. Ավելին, ազգային լիազոր մարմինները պետք է խրախուսեն տարբերանշանի կիրառումը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններում՝ կազմակերպության ձևաթղթերում, բրոշյուրներում և անձնակազմի համագգեստի վրա:

274. Երրորդ կողմերը, որոնք ստացել են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի և Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններին առնչվող տեղեկատվական նյութերի պատրաստման իրավունք, պետք է տարբերանշանի համար ապահովեն պատշաճ տեսանելիություն: Նրանք պետք է խուսափեն զանազան տարբերանշան կամ պատկերանիշ ստեղծելուց այդ արտադրանքի համար:

VIII. E Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառման սկզբունքները

275. Տարբերանշանի կիրառման վերաբերյալ որոշումներ կայացնելու ընթացքում պատասխանատու ազգային մարմինները հետայսու պետք է ղեկավարվեն ստորև ներկայացվող սկզբունքներով. 39 COM 11 որոշում

a) Տարբերանշանը պետք է կիրառվի կոնվենցիայի աշխատանքներին անմիջապես առնչվող բոլոր ծրագրերում՝ տեխնիկապես և իրավական տեսանկյունից առավելագույն մակարդակով, որոնք արդեն իսկ հաստատվել և ընդունվել են կոնվենցիայի հանրահռչակման համար:

b) Տարբերանշանի կիրառումը հաստատելու մասին որոշումը պետք է կապված լինի ասոցացված արտադրանքի որակի և բովանդակության հետ, այլ ոչ թե շուկա արտահանվող արտադրանքի ծավալի կամ ակնկալվող ֆինանսի վերադարձի հետ: Կրթական, գիտական, մշակութային կամ գեղարվեստական արժեքը հիմնական չափորոշիչներն են Համաշխարհային ժառանգության սկզբունքներին և արժեքներին առնչվող արտադրանքի կիրառումը հաստատելու համար: Տարբերանշանի կիրառման թույլտվությունը չպետք է տրամադրվի

այնպիսի արտադրանքների համար, որոնք չունեն կամ ունեն բավականին ցածր կրթական արժեք՝ բաժակների, շապիկների, գնդասեղների և այլ զբոսաշրջային արտադրանքի վրա: Սույն քաղաքականությունից բացառություններ կարող են լինել հատուկ միջոցառումները, ինչպիսիք են՝ կոմիտեի հանդիպումները և ցուցատախտակների բացման արարողությունները:

Կ) Տարբերանշանի կիրառման թույլտվության ցանկացած որոշում պետք է հստակ ձևակերպված լինի և համապատասխանի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով հստակ սահմանված և դրանից բխող նպատակներին ու արժեքներին:

Դ) Շահույթ հետապնդող կազմակերպությունները իրավասու չեն (բացառությամբ նշված սկզբունքներին համապատասխան ստացված արտոնման դեպքերի), օգտագործել տարբերանշանը իրենց նյութերում Համաշխարհային ժառանգությանն իրենց աջակցությունը ցույց տալու համար: Կոմիտեն ընդունում է, որ ցանկացած անհատ, կազմակերպություն կամ ընկերություն ազատ է հրատարակելու կամ արտադրելու այն ամենը, ինչ իրենք համարում են համապատասխան Համաշխարհային ժառանգությանը, սակայն Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառումը հանդիսանում է կոմիտեի բացառիկ իրավունքը, որն անհրաժեշտ է կիրառել սույն ղեկավար ցուցումներով և սկզբունքներով, ինչպես նաև կիրառման աղյուսակին համապատասխան:

Ե) Պայմանագրով մյուս կողմերի կողմից տարբերանշանի կիրառումը կարող է լիազորվել միայն այն դեպքում, երբ առաջարկվող ուղղակի կապ ունի Համաշխարհային ժառանգության հուշարձանների հետ: Նման կիրառումների թույլտվությունը կարող է տրամադրվել շահագրգիռ անդամ պետության ազգային մարմինների հաստատումից հետո:

Այնպիսի դեպքերում, երբ Համաշխարհային ժառանգության հուշարձանները ներգրավված չեն կամ օգտագործման համար առաջարկվող միջոցառմանն առնչվում են անուղղակի, ինչպիսիք են՝ ընդհանուր սեմինարները և/կամ գիտական կամ կոնսերվացման տեխնիկայի հարցերով աշխատաժողովները, օգտագործման արտոնությունը կարող է տրամադրվել միայն ղեկավար ցուցումներին և սկզբունքներին, ինչպես նաև օգտագործման աղյուսակին համապատասխան: Օգտագործման համար նման պահանջները պետք է փաստաթղթային առումով հիմնավորված լինեն, թե ինչպես է առաջարկվող կիրառումը խթանում կոնվենցիայի աշխատանքը:

Զ) Տարբերանշանի կիրառման արտոնությունը չպետք է տրամադրվի ճամփորդական գործակալություններին, ավիաընկերություններին կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող որևէ ընկերության, որոնք գործում են հիմնականում շահույթ ստանալու նպատակով՝ բացառությամբ հազվագյուտ դեպքերի, ինչպես նաև, երբ Համաշխարհային ժառանգությունը ընդհանրապես կամ Համաշխարհային ժառանգության որոշակի հուշարձանները կարող են ակնհայտ օգուտ ստանալ: Նման տեսակի օգտագործման հայտերը պահանջում են հաստատում՝ ղեկավար ցուցումներին և սկզբունքներին, ինչպես նաև օգտագործման աղյուսակին համապատասխան: Նման հայտերը պետք է հաստատվեն շահագրգիռ ազգային մարմինների կողմից և սահմանվեն ՅՈՒՆԵՍԿՕ/Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ առանձնահատուկ գործընկերության պայմանագրերի շրջանակում:

Ճամփորդական գործակալություններից կամ նմանատիպ այլ կազմակերպություններից քարտուղարությունը չի կարող ընդունել որևէ գովազդային,

«Գործընկերության համապարփակ ռազմավարություն»՝ ներառյալ «Գործընկերների առանձին կատեգորիաների ներգրավման համար առանձին ռազմավարություններ» 192 EX/5. INF և PACT ռազմավարություն (WHC-13/37.COM/5D փաստաթուղթ) 37 COM 5D որոշում

ճամփորդական կամ հանրահոշակման այլ առաջարկություններ՝ տարբերանշանի կիրառման համար վարձավճարի փոխարեն կամ որպես փոխհատուցում:

հ) Առևտրային օգուտներ ակնկալվելու դեպքում քարտուղարությունը պետք է համոզվի, որ Համաշխարհային ժառանգության հիմնադրամը ստանալու է եկամտի իր արդար բաժինը և պետք է կնքի համաձայնագիր կամ պայմանագիր, որտեղ փաստաթղթավորվում են այն ընկալումները, որոնցով առաջնորդվել են հիմնադրամի համար եկամուտ ապահովող ծրագրի և դրույթների ձևակերպման ընթացքում: Առևտրային նպատակներով օգտագործման բոլոր դեպքերում, ցանկացած աշխատաժամանակի և աշխատակազմին առնչվող ցանկացած ծախսեր, որոնք նշանակվում են քարտուղարության կամ անհրաժեշտության դեպքում այլ պաշտոնյաների կողմից, ցանկացած նախաձեռնություն, որը դուրս է գալիս նվազագույնի սահմաններից, պետք է ամբողջությամբ ծածկվի տարբերանշանի կիրառման արտոնությունը հայցող մարմնի կողմից:

Ազգային մարմիններին նույնպես կոչ է արվում երաշխավորելու, որ իրենց հուշարձանները կամ Համաշխարհային ժառանգության հիմնադրամը ստանալու է եկամտի իր արդար բաժինը, և պետք է փաստաթղթավորի ծրագրի կառավարման ընկալումները և ցանկացած եկամտի բաշխումը:

ի) Եթե հովանավորները փնտրում են քարտուղարության կողմից անհրաժեշտ համարվող ապրանքների արտադրության կազմակերպում, ապա գործընկերոջ կամ գործընկերների ընտրությունը պետք է առնվազն համապատասխանի «Գործընկերության համապարփակ ռազմավարությամբ» սահմանված չափորոշիչին՝ ընդգրկելով «Մասնավոր սեկտորի կամ գործընկերների ներգրավման առանձին ռազմավարությունները»՝ 192 EX/5-INF և PACT ռազմավարությունը (փաստաթուղթ WHC-13/37.COM/5D), ինչպես նաև դրամահավաքի իրակա-նացման համար այլ ղեկավար ցուցումները, որոնք կարող են նշանակվել կոմիտեի կողմից: Նման արտադրանքների անհրաժեշտությունը պետք է հստակեցվի և հիմնավորվի գրավոր, ինչն իր հերթին կարող է պահանջել կոմիտեի կողմից սահմանված ընթացակարգով հաստատում:

յ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Համաշխարհային ժառանգության տարբերանշանի անվամբ, սեղմանվամբ, պատկերանիշով և/կամ ինտերնետային տիրույթով ապրանքների կամ ծառայությունների վաճառքը շահույթ ստանալու նպատակով պետք է դիտարկվի «Առևտրային օգտագործում» գործառնական ձեռնարկին համապատասխան: Նման օգտագործումը կարող է արտոնվել միայն գլխավոր տնօրենի կողմից՝ առանձին պայմանագրային հիմունքներով (սահմանումը վերանայվել է 2007 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատկերանիշի հրահանգներով: Հոդված III.2.1.3):

Համաշխարհային ժառանգության տարբերանշանի կիրառումը լիազորելու ընթացակազմը

VIII. F

Ազգային իշխանությունների պարզեցված պայմանագիրը

276.

Ազգային մարմինները կարող են արտոնել ազգային կազմակերպությունների կողմից տարբերանշանի կիրառումը, եթե ծրագիրը, լինի դա ազգային կամ միջազգային, ընդգրկում է միայն նույն ազգային տարածքում գտնվող Համաշխարհային ժառանգության հուշարձանները: Ազգային մարմինների որոշումը պետք է հիմնված լինի ղեկավար ուղեցույցների և սկզբունքների, ինչպես նաև օգտագործման ուղեցույցի դրույթների վրա:

39 COM 11 որոշում

277.

Անդամ պետություններին կոչ է արվում քարտուղարությանը տրամադրել տարբերանշանի կիրառման համար պատասխանատու մարմինների անունները և հասցեները:

Circular letter dated 14 April 1999.

<http://whc.unesco.org/circs/circ99-4e.pdf>

Բովանդակության որակի նկատմամբ հսկողության պահանջի պայմանագիր

278. Տարբերանշանի կիրառման ցանկացած այլ հայտի համար սահմանվում է 39 COM 11 որոշում հետևյալ ընթացակարգը.

a) հայտը պետք է հասցեագրված լինի Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրենին, որում պետք է նշված լինի տարբերանշանի կիրառման նպատակը, ժամանակը և տարածքային իրավասությունը,

b) Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրենն իրավասու է արտոնել տարբերանշանի կիրառումը՝ ղեկավար ցուցումներին և սկզբունքներին համապատասխան: Այն դեպքերում, որոնք չեն ծածկվում կամ էապես առնչվում ղեկավար ցուցումներին և սկզբունքներին, ինչպես նաև օգտագործման աղյուսակին, տնօրենը հայտը վերահասցեագրում է նախագահողին, ով առավել դժվար դեպքերում կարող է հարցը տեղափոխել կոմիտեի քննարկմանը՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով: Տարբերանշանի կիրառման արտոնությունների մասին տարեկան զեկույցը ներկայացվում է Համաշխարհային ժառանգության կոմիտե:

c) Տարբերանշանի կիրառման արտոնությունը մասսայական արտադրության ապրանքների վրա անորոշ ժամանակահատվածով տրվում է պայմանով, որ արտադրողը պարտավորություն է ստանձնում խորհրդակցել շահագրգիռ անդամ պետության հետ և համաձայնեցնել այդ պետության տարածքում գտնվող հուշարձանների մասին տեքստերն ու պատկերները՝ առանց քարտուղարության համար ծախսերի առաջացման և ներկայացնելով նշվածների իրականացման ապացույցները: Հաստատում պահանջող տեքստերը պետք է ներկայացված լինեն կոմիտեի պաշտոնական լեզուներից որևէ մեկով կամ շահագրգիռ պետության պաշտոնական լեզվով: Անդամ պետության կողմից երրորդ կողմին տարբերանշանի կիրառման արտոնության ձևաչափի նախագիծը ներկայացվում է հաջորդիվ:

Հաստատման ձևաչափի բովանդակությունը

[լիազոր ազգային մարմնի անվանումը], պաշտոնապես ճանաչված, որպես [երկրի անվանումը] տարածքում գտնվող համաշխարհային ժառանգության հուշարձաններին առնչվող տեքստերի բովանդակության և լուսանկարների հաստատման համար պատասխանատու մարմին, սույնով հաստատում է **[արտադրողի անունը]**, որ տեքստը և լուսանկարները, որոնք ներկայացվել են Համաշխարհային ժառանգության **[հուշարձանի անվանումը]** հուշարձան(ներ) ի վերաբերյալ, **[հաստատվել]** **[հաստատվել են, սակայն ենթակա են փոփոխությունների]**, **[չեն հաստատվել]** **(անհրաժեշտ է ջնջել այն տարբերակները, որոնք կիրառելի չեն և ներկայացնել, անհրաժեշտության դեպքում, ուղղված տեքստը կամ ուղղումների ստորագրված ցուցակը):**

Ծանոթություն: Խորհուրդ է տրվում, որ պատասխանատու ազգային մարմնի սկզբնատառերը պատկերված լինեն տեքստի յուրաքանչյուր էջի վրա:

Ստացման օրվանից ազգային մարմիններին տրվում է մեկ ամիս՝ հաստատելու բովանդակությունը, այլապես արտադրողները կարող են համարել, որ բովանդակությունը հաստատվել է, եթե պատասխանատու ազգային մարմինները գրավոր չեն պահանջել ժամկետի երկարաձգում:

Ազգային մարմիններին տեքստը ներկայացվում է կոմիտեի պաշտոնական երկու լեզուներից որևէ մեկով կամ այն երկրի պաշտոնական լեզվով (կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով), որում գտնվում են հուշարձանները՝ ելնելով երկու կողմերի հարմարությունից:

d) Հայտի ուսումնասիրությունից և ընդունելի համարվելուց հետո քարտուղարությունը կարող է պայմանագիր կնքել գործընկերոջ հետ:

e) Եթե Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրենը գտնում է, որ տարբերանշանի առաջարկվող օգտագործումն ընդունելի չէ, ապա քարտուղարությունը որոշման մասին գրավոր հայտնում է հայտ ներկայացրած կողմին:

VIII. G Անդամ պետությունների իրավունքը որակական հսկողություն իրականացնելու հարցում

279. Տարբերանշանի կիրառման արտոնությունն անբաժանելիորեն կապված է ազգային մարմինների կողմից առնչվող արտադրանքների որակի նկատմամբ հսկողության իրավունքի հետ:

a) Կոնվենցիային միացած անդամ պետությունները հանդիսանում են միակ լիազորություն ունեցող կողմերը, որոնք հաստատում են իրենց տարածքում տեղակայված հուշարձաններին առնչվող և Համաշխարհային ժառանգության տարբերանշանով տարածվող ապրանքների բովանդակությունը (պատկեր և տեքստ):

b) Տարբերանշանը իրավական պաշտպանության տակ վերցրած անդամ պետությունները պետք է հսկեն դրա օգտագործման դեպքերը:

c) Մյուս անդամ պետությունները կարող են օգտագործման դեպքերի նկատմամբ հսկողությունը իրականացնել ինքնուրույն կամ առաջարկությունները վերահասցեագրել քարտուղարությանը: Անդամ պետությունները պատասխանատվություն են կրում ազգային համապատասխան մարմնի նշանակման համար և քարտուղարությանը տեղեկացնում են օգտագործման առաջարկների քննություն իրականացնելու կամ ոչ համապատասխան կիրառումները բացահայտելու իրենց ցանկության մասին: Քարտուղարությունը վարում է ազգային պատասխանատու մարմինների ցուցակը:

IX. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

IX. A Քարտուղարության կողմից արխիվացված տեղեկույթը

280. Քարտուղարությունը վարում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի և Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի անդամ հանդիսացող պետությունների գազաթնաժողովի փաստաթղթերի շտեմարանը: Շտեմարանը հասանելի է <http://whc.unesco.org/en/statutorydoc> հասցեով:

281. Քարտուղարությունը երաշխավորում է, որ նախնական ցանկերը, Համաշխարհային ժառանգության անվանակարգերը՝ ներառյալ անդամ պետության ներկայացրած քարտեզների կրկնօրինակները և համապատասխան տեղեկատվությունը, արխիվացված են փաստաթղթային կամ հնարավորության դեպքում էլեկտրոնային տարբերակներով: Քարտուղարությունը կազմակերպում է նաև ցանկում ընդգրկված հուշարձաններին առնչվող տեղեկատվության արխիվացումը՝ ներառյալ խորհրդատվական մարմինների կազմած գնահատումները կամ այլ փաստաթղթերը, անդամ պետությունից ստացված ցանկացած թղթակցություն կամ զեկույցներ (ներառյալ արձանգանքող մոնիթորինգ և պարբերական զեկույցներ), ինչպես նաև քարտուղարության և համաշխարհային ժառանգության կոմիտեի նամակագրությունը և նյութերը:

282. Արխիվացված նյութերը պահպանվում են այնպես, որ ապահովվի դրանց երկարաժամկետ պահպանվածությունը: Փաստաթղթային և էլեկտրոնային պատճենների պահպանության համար կմշակվեն համապատասխան դրույթներ:

Անդամ պետության կողմից ներկայացված հարցման հիման վրա դրույթներ կսահմանվեն նաև տրամադրվող օրինակների համար:

283. Կոմիտեի կողմից Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների անվանակարգերը կդառնան մատչելի: Անդամ պետություններին խորհուրդ է տրվում իրենց անվանակարգի պատճենները տեղադրել սեփական վեբ կայքերում և քարտուղարությանը տեղեկացնել իրականացված գործողության մասին: Անվանակարգեր նախապատրաստող անդամ պետությունները հնարավոր է ցանկություն հայտնեն օգտագործելու նման տեղեկատվությունը որպես ուղեցույց իրենց տարածքում գտնվող հուշարձանների անվանակարգերի գնահատման համար:
284. Խորհրդատվական մարմնի գնահատումները յուրաքանչյուր անվանակարգի համար և յուրաքանչյուր անվանակարգին առնչվող կոմիտեի որոշումը հասանելի են <http://whc.unesco.org/en/advisorybodies> հասցեով:

IX. B Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամների և այլ անդամ պետությունների համար յուրահատուկ տեղեկույթ

285. Քարտուղարությունը վարում է թղթակցության երկու ցուցակ՝ առաջինը կոմիտեի անդամների համար (wh-committee@unesco.org), երկրորդը՝ բոլոր անդամ պետությունների համար (wh-states@unesco.org): Անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել համապատասխան էլեկտրոնային հասցեները՝ նշված ցուցակների համալրման նպատակով: Էլեկտրոնային թղթակցության ցուցակները, որոնք լրացվում են, սակայն չեն փոխարինում անդամ պետություններին ծանուցելու ավանդական միջոցները, թույլ են տալիս քարտուղարությանը ժամանակին իրազեկել փաստաթղթերի հասանելիության, հանդիպման ժամանակացույցներում փոփոխությունների, կոմիտեի անդամների և այլ անդամ պետությունների հետ կապված խնդիրների մասին:
286. Անդամ պետություններին հասցեագրված շրջաբերական գրությունները հասանելի են <http://whc.unesco.org/en/circularletters> հասցեով:

Մեկ այլ վեբ հասցե, որը սահմանափակ օգտագործման իրավունքի միջոցով կապված է հանրային ինտերնետային տիրույթին, օգտագործվում է քարտուղարության կողմից և պարունակում է առանձնահատուկ տեղեկատվություն՝ հասցեագրված կոմիտեի անդամներին, այլ անդամ պետություններին և խորհրդատվական մարմիններին:

287. Քարտուղարությունը վարում է նաև կոմիտեի որոշումների և անդամ պետությունների գազաթնաժողովների բանաձևերի շտեմարանը: Դրանք հասանելի են <http://whc.unesco.org/en/decisions> հասցեով:

IX. C Հանրության համար հասանելի տեղեկույթ և հրապարակումներ

288. Հնարավորության դեպքում քարտուղարությունը օգտվելու հնարավորություն է տրամադրում հանրային որակավորում ունեցող և հեղինակային իրավունքով չպաշտպանված Համաշխարհային ժառանգության հուշարձաններին և դրանց առնչվող հարակից տեղեկատվությունից:
289. Համաշխարհային ժառանգությանն առնչվող դրույթների մասին տեղեկատվությունը հասանելի է քարտուղարության, խորհրդատվական մարմինների վեբ կայքերում և գրադարաններում: Ինտերնետային տիրույթում հասանելի շտեմարանների ցանկը և դրան վերաբերող ինտերնետային կայքերի հղումները հասանելի են մատենաշարում:

28 COM 9 որոշում

290. Քարտուղարությունը հրապարակում է Համաշխարհային ժառանգության հրատարակությունների լայն ընտրանի՝ ներառյալ Համաշխարհային ժառանգության ցանկը, Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկը, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների մասին համառոտ նկարագրությունները, Համաշխարհային ժառանգության փաստաթղթերի շարքերը, թերթեր, բրոշյուրներ և տեղեկատվական այլ նյութեր: Ավելին, փորձագետների կամ հանրության լայն շրջանակների համար նախատեսված տեղեկատվական նյութերը նույնպես մշակվում են: Համաշխարհային ժառանգությանը վերաբերող հրապարակումները հասանելի են <http://whc.unesco.org/en/publications> կայքէջում:

Այս տեղեկատվական նյութերը բաժանվում են հանրության շրջանում կամ անդամ պետությունների, կամ Համաշխարհային ժառանգության գործընկերների հաստատած միջազգային ցանցերի միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՎԱՎԵՐԱՑՄԱՆ/ՄԻԱՑՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ

ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ, որ «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան ընդունվել է 1972 թ. նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 17-րդ գագաթնաժողովի ընթացքում,

ԱՅԴ ԻՍԿ ՊԱՏՃԱՌՈՎ _____ կառավարությունը, ուսումնասիրելով վերոգրյալ կոնվենցիան, սույնով

[վավերացնում է այն և պարտավորվում բարեխիղճ կատարելու

[ընդունում է

դրանում սահմանված դրույթները:

ԵՎ ՈՐՊԵՍ ԴՐԱ ԱՊԱՑՈՒՅՑ, ստորագրում և կնքում են սույն փաստաթուղթը:

Կատարված է _____ սույն _____ օրվա _____ 20_____.

(կնիք)

Պետության ղեկավարի,

վարչապետի կամ

արտաքին գործերի

նախարարի ստորագրությունը

• Վավերացման / ընդունման տիպային գործիքը հասանելի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնում՝ <http://whc.unesco.org/en/modelratification> վեբ հասցեով:

• Լրացված և ստորագրված բնօրինակը, ցանկալի է անգլերեն կամ ֆրանսերեն պաշտոնական թարգմանությամբ, անհրաժեշտ է առաքել գլխավոր տնօրենին՝ ՅՈՒՆԵՍԿՕ, 7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352, Փարիզ 07 SP, Ֆրանսիա հասցեով:



ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԻՊԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ

ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ, որ «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան ընդունվել է 1972 թ. նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 17-րդ գագաթնաժողովի ընթացքում,

ԱՅԴ ԻՍԿ ՊԱՏՃԱՌՈՎ _____ կառավարությունը, ուսումնասիրելով վերոգրյալ կոնվենցիան, սույնով ընդունում է այն և պարտավորվում բարեխիղճ կատարել դրանում սահմանված դրույթները:

ԵՎ ՈՐՊԵՍ ԴՐԱ ԱՊԱՑՈՒՅՑ, ստորագրում և կնքում են սույն փաստաթուղթը:

Կատարված է _____ սույն _____ օրվա _____ 20_____.

(կնիք)

Պետության ղեկավարի,

վարչապետի կամ

արտաքին գործերի

նախարարի ստորագրությունը

• Դրույթներն ընդունելու մասին տիպային գործիքը հասանելի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնում՝ <http://whc.unesco.org/en/modelratification> վեբ հասցեով:

• Լրացված և ստորագրված բնօրինակը, ցանկալի է անգլերեն կամ ֆրանսերեն պաշտոնական թարգմանությամբ, անհրաժեշտ է առաքել գլխավոր տնօրենին՝ ՅՈՒՆԵՍԿՕ, 7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352, Փարիզ 07 SP, Ֆրանսիա հասցեով:



ՆԱԽՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ

Անդամ պետություն

Ներկայացման ամսաթիվ

Նախապատրաստվել է

Անվանումը

Էլ. փոստ

Հասցե

Ֆաքս

Հաստատություն

Հեռախոս

Հուշարձանի անվանումը

Պետությունը, մարզը կամ շրջանը

Լայնություն և երկայնություն կամ UTM կոորդինատներ

Նկարագրություն

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հիմնավորում

(Հուշարձանի արժեքների նախնական նկարագրում, որոնք հիմք կհանդիսանան Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար)

Համապատասխանության չափորոշիչ [տե՛ս գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը]:

(i)

(ii)

(iii)

(iv)

(v)

(vi)

(vii)

(viii)

(ix)

(x)

(Խնդրում ենք նշել առաջարկվող չափորոշիչին համապատասխանող վանդակը և հիմնավորել դրանցից յուրաքանչյուրը)

Իսկության և/կամ ամբողջականության հայտարարությունները [տե՛ս գործառնական ձեռնարկի 78-95-րդ պարբերությունները]:

Այլ նմանատիպ հուշարձանների հետ համեմատությունը

(Համեմատականը պետք է վեր հանի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված կամ այլ հուշարձանների հետ ընդհանրությունները, ինչպես նաև դրա առանձնանալու պատճառները)

• Նախնական ցանկի ներկայացման ձևաչափը հասանելի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնում՝ <http://whc.unesco.org/en/tentativelists> հասցեով:

- Նախնական ցանկի պատրաստման համար լրացուցիչ տեղեկատվությունը կարելի է ստանալ գործառնական ձեռնարկի 62-67-րդ պարբերություններում:
- Նախնական ցանկի լրացված օրինակ կարելի է գտնել <http://whc.unesco.org/en/tentativelists> հասցեում:
- Անդամ պետությունների ներկայացրած բոլոր նախնական ցանկերը հասանելի են <http://whc.unesco.org/en/tentativelists> հասցեով:
- Նախնական ցանկի ներկայացման լրացված և ստորագրված բնօրինակը պետք է ուղարկել անգլերենով կամ ֆրանսերենով, գլխավոր տնօրենին՝ ՅՈՒՆԵՍԿՕ, 7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352, Փարիզ 07 SP, Ֆրանսիա հասցեով:
- Անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել տեղեկատվությունը էլեկտրոնային (կրիչ կամ խտասկավառակ) ձևաչափով կամ էլ. փոստով՝ wh-tentativelists@unesco.org հասցեով:



ՆԱԽՆԱԿԱՆ ՑԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՁԵՎԱԶԱՓԸ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐԱՎՈՐՈՒՄԱՅԻՆ
ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Անդամ պետություն

Ներկայացման ամսաթիվ

Նախապատրաստվել է¹⁵

Անվանումը

Էլ. փոստ

Հասցե

Ֆաքս

Հաստատություն

Հեռախոս

1.a. Անդրազգային /անդրասահմանային ապագա անվանակարգի անվանումը¹⁶

1.b. Մասնակից այլ պետությունները

1.c. Անվանում(ներ)ը ազգային բաղադրիչ(ներ)ի

1.d. Պետությունը, մարզը կամ շրջանը

1.e. Լայնություն և երկայնություն կամ UTM կոորդինատներ

2.a. Անդրազգային/անդրասահմանային ապագա անվանակարգի համառոտ նկարագրությունը¹⁷

2.b. Բաղադրիչ(ներ)ի նկարագրությունը

**3. ԱՊԱԳԱ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ, ՈՐՊԵՍ ՄԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ¹⁸, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՑԱՌԻԿ
ԱՐԺԵՔԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

(Ապագա անվանակարգի, որպես մեկ ամբողջության, արժեքների նախնական նկարագրում, որը հիմք
կհանդիսանա Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար):

3.a. Համապատասխանության չափորոշիչ¹⁹ [տե՛ս գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը]:
(Խնդրում ենք նշել առաջարկվող չափորոշիչին համապատասխանող վանդակը և հիմնավորել դրանցից
յուրաքանչյուրը):

(i)

(ii)

(iii)

(iv)

(v)

(vi)

(vii)

(viii)

(ix)

(x)

¹⁵ Անվանակարգերի ներկայացումն իրավական ուժ չունի, քանի դեռ 1.b բաժնում ներկայացված անդամ պետությունները չեն ներկայացրել
իրենց անվանակարգերը:

¹⁶ Սույն բաժնում ներկայացված տեքստը պետք է համաբնույթ լինի ներգրավված անդամ պետությունների կողմից հետագայում ներկայացված
անդրազգային/անդրասահմանային անվանակարգերում:

¹⁷ Անդրազգային/անդրասահմանային հուշարձանների դեպքում անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ անդամ պետությունների համաձայնությունը
որևէ փոփոխություն կատարելու համար:

¹⁸ Անդրազգային/անդրասահմանային հուշարձանների դեպքում անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ անդամ պետությունների համաձայնությունը
որևէ փոփոխություն կատարելու համար:

¹⁹ Անդրազգային/անդրասահմանային հուշարձանների դեպքում անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ անդամ պետությունների համաձայնությունը
որևէ փոփոխություն կատարելու համար:

3.b. Իսկության և/կամ ամբողջականության հայտարարությունները [տե՛ս գործառնական ձեռնարկի 78-95-րդ պարբերությունները]:

3.c.1. Ապագա անվանակարգի, որպես մեկ ամբողջության, բաղադրիչ(ներ)ի ընտրության հիմնավորում:

3.c.2. Այլ նմանատիպ հուշարձանների հետ համեմատությունը ²⁰

(Համեմատականը պետք է վեր հանի Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկված կամ այլ հուշարձանների հետ ընդհանրությունները, ինչպես նաև ապագա անվանակարգի առանձնանալու բացառիկության պատճառները):

²⁰ Անդրազգային/անդրսահմանային հուշարձանների դեպքում անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ անդամ պետությունների համաձայնությունը որևէ փոփոխություն կատարելու համար:



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՏԻՊԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ²¹

ԻԿՕՄՕՍ-ի թեմատիկ ուսումնասիրությունների ցանկը հասանելի է
<http://www.icomos.org/studies> հասցեով:

IUCN-ի թեմատիկ ուսումնասիրությունների ցանկը հասանելի է հետևյալ հասցեով.
http://www.iucn.org/about/work/programmes/wcpa_worldheritage/wheritage_pub/

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Որպես ուղեցույց՝ սույն հավելվածը տրամադրում է տեղեկատվություն որոշակի հուշարձանների մասին Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով՝ անդամ պետությունների անվանակարգերի նախապատրաստման համար: Ներկայացվող տեղեկատվությունն ինքնին ուղեցույց է, որը պետք է օգտագործվի գործառնական ձեռնարկի (պարունակում է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար չափորոշիչը) 2-րդ գլխի հետ միասին:
2. Կոմիտեն հավանություն է տվել փորձագիտական հանդիպումների արդյունքներին, որոնք վերաբերում են մշակութային տեղանքապատկերներին, քաղաքներին, ջրանցքներին և ուղիներին (Մաս I, ստորև):
3. Ներկայացված, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկի ձևավորման համար համաշխարհային ռազմավարության շրջանակներում Համաշխարհային ժառանգության կոմիտեի այլ փորձագիտական հանդիպումների մասին հաշվետվությունները ներկայացված են II մասում:
4. III մասում ներկայացված է խորհրդատվական մարմինների կողմից իրականացված տարբեր համեմատական և թեմատիկ ուսումնասիրությունների ցանկը:

I. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՂԱՆՔԱՊԱՏԿԵՐՆԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ, ՋՐԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԻՆԵՐ

5. Համաշխարհային ժառանգության կոմիտեն նախանշել է մշակութային և բնության հուշարձանների մի քանի տեսակներ, որոնց համար հաստատել է առանձին ղեկավար ցուցումներ նման հուշարձանների գնահատման գործընթացի խթանման համար, երբ դրանք առաջադրվում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար: Մինչ օրս այն ընդգրկում է ստորև ներկայացվող տիպերը, չնայած հավանական է, որ ժամանակի ընթացքում կարող են ավելացվել նորերը՝
 - a) մշակութային տեղանքապատկերներ,
 - b) պատմական քաղաքներ և քաղաքի միջուկներ (կենտրոնական հատվածներ),
 - c) պատմական ջրանցքներ,
 - d) պատմական ուղիներ:

²¹ The Committee may develop additional guidelines for other types of properties in future years.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՂԱՆՔԱՊԱՏԿԵՐՆԵՐ²²**Սահմանում**

6. Մշակութային տեղանքապատկերները մշակութային հուշարձաններ են, որոնք ներկայացնում են «մարդու և բնության համատեղ աշխատանքը»՝ սահմանված կոնվենցիայի 1-ին հոդվածով: Դրանք ժամանակի ընթացքում մարդկության և բնակավայրերի էվոլյուցիայի՝ իրենց շրջակա միջավայրի և հաջորդական սոցիալական, տնտեսական և մշակութային ուժերի ֆիզիկական սահմանափակումների և/կամ ընձեռած հնարավորությունների և՛ արտաքին, և՛ ներքին ներգործությամբ, բացատրությունն է:
7. Դրանք պետք է ընտրվեն համաշխարհային բացառիկ արժեքի և հստակ սահմանված աշխարհագրական-մշակութային տարածաշրջանի, ինչպես նաև նման տարածքների հիմնական և տարբեր մշակութային տարրերի ներկայացուցչականության հիման վրա:
8. «Մշակութային տեղանքապատկեր» տերմինը ներառում է մարդկության և վերջինիս բնական միջավայրի փոխներգործության արտահայտման բազմազանությունը:
9. Մշակութային տեղանքապատկերները հաճախ արտահայտում են հողի կայուն օգտագործման յուրահատուկ տեխնիկան՝ հաշվի առնելով մարդկանց գտնվելու բնական միջավայրի առանձնահատկությունները և սահմանափակումները, ինչպես նաև բնության հետ ունեցած առանձնա-հատուկ հոգևոր կապը: Մշակութային տեղանքապատկերների պաշտպանությունը կարող է խթան հանդիսանալ կայուն հողօգտագործման ժամանակակից տեխնիկայի զարգացման համար և կարող է ապահովել կամ զարգացնել տեղանքապատկերի բնական արժեքները: Հողօգտագործման ավանդական միջոցների շարունակական գոյությունը խթանում է աշխարհի տարբեր հատվածներում կենսաբանական բազմազանության պահպանմանը: Հետևաբար, ավանդական մշակութային տեղանքապատկերների պահպանությունը օգտակար է կենսաբանական բազմազանության ապահովման տեսանկյունից:

Սահմանումներ և տիպեր

10. Մշակութային տեղանքապատկերները բաժանվում են երեք հիմնական տիպի, մասնավորապես՝
 - (i) Հեշտությամբ նույնականացվող առաջին տիպը մարդու կողմից նախագծված և ստեղծված տեղանքապատկերն է: Այս տիպը ներառում է պարտեզները և զբոսայգիները, որոնք ստեղծվել են գեղագիտական նպատակներով և հաճախ (սակայն ոչ միշտ) ասոցացվում են կրոնական կամ մոնումենտալ շինությունների կամ համալիրների հետ:
 - (ii) Երկրորդ տիպն օրգանապես էվոլյուցիայի ենթարկված տեղանքապատկերն է: Այն առաջացել է սոցիալական, տնտեսական, վարչական և/կամ կրոնական հրամայականից և ներկայիս վիճակին հասել է կապված և ի պատասխան իր բնական միջավայրին: Նման տեղանքապատկերները արտահայտում են իրենց էվոլյուցիոն գործընթացի ձևը և բաղադրիչ հատկությունները: Դրանք բաժանվում են երկու ենթատիպերի:
 - մնացորդային (կամ հանածոների) տեղանքապատկեր, որի էվոլյուցիոն գործընթացն ավարտվել է կամ կտրուկ, կամ որոշակի ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, դրա առանձնահատկությունները դեռ տեսանելի են նյութական տարբերակով,
 - շարունակական տեղանքապատկերը ունի ակտիվ սոցիալական դերակատարություն ժամանակակից հասարակությունում՝ կապված ավանդական կենցաղավարման հետ, և որում էվոլյուցիոն գործընթացը դեռ շարունակվում է: Միաժամանակ այն ցուցադրում է ժամանակի ընթացքում տեղի ունեցած էվոլյուցիոն գործընթացների հետ կապված նյութերը:
 - (iii) Վերջնական տիպը զուգորդական մշակութային տեղանքապատկերն է: Նման տեղանքապատկերի ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկում հիմնավորված է բնական

²² Սույն տեքստը պատրաստվել է մշակութային տեղանքապատկերների հարցերով ձևավորված աշխատանքային խմբի կողմից (Լա Փեթիթ Պիեր, Ֆրանսիա, 24 - 26 հոկտեմբերի, 1992) (տե՛ս WHC-92/CONF.202/10/Add փաստաթուղթ): Տեքստը հաստատվել է գործառնական ձեռնարկում ընդգրկելու համար Համաշխարհային ժառանգության կոմիտեի 16-րդ նստաշրջանի ընթացքում (Սանտա Ֆե, 1992 թ.) (տե՛ս WHC-92/CONF.002/12 փաստաթուղթ):

տարրերի հզոր կրոնական, արտիստիկ կամ մշակութային արժանիքներով, քան նյութական մշակութային ապացույցներով, որոնք կարող են աննշան լինել կամ իսպառ բացակայել:

Մշակութային տեղանքապատկերների ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկերում

11. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ներկայացված մշակութային տեղանքապատկերի եզրաչափը առնչվում է դրա գործնական նշանակությանը և ընկալելիությանը: Այնուամենայնիվ, ընտրված օրինակը պետք է բովանդակային առումով բավարարի ընդհանուր մշակութային տեղանքապատկերին պատշաճ մակարդակով ներկայացնելու համար: Երկայնակի տարածքների գծանշման հնարավորությունը մշակույթի տեսանկյունից դուրս չի թողնում կարևոր համարվող տրանսպորտային և հաղորդակցման ցանցերը:
12. Պահպանության և կառավարման ընդհանուր չափորոշիչները հավասարապես կիրառելի են մշակութային տեղանքապատկերների համար: Կարևոր է, որ պատշաճ մակարդակով ուշադրություն դարձվի և մշակութային, և բնության տեղանքապատկերում ներկայացված արժեքների ամբողջ համակարգին: Անվանակարգերը պետք է նախապատրաստվեն տեղի համայնքների հետ համագործակցությամբ և հաստատմամբ:
13. «Մշակութային տեղանքապատկեր» կատեգորիայի առկայությունը, որը ներառվել է Համաշխարհային ժառանգության ցանկում գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությամբ սահմանված չափորոշիչի հիման վրա, չի բացառում առանձնահատուկ կարևորության հուշարձանների և մշակութային, և բնության չափորոշիչներով ընդգրկելու հնարավորությունը (տես խառը հուշարձանների սահմանումը՝ ներկայացված 46-րդ պարբերությունում): Նման դեպքերում դրանց համաշխարհային բացառիկ արժեքը պետք է հիմնավորվի չափորոշիչների երկու հատվածներով:

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՄԻՋՈՒԿՆԵՐ (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ)²³

Սահմանումներ և տիպեր

14. Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու իրավասություն ունեցող քաղաքային շինությունների խմբերը բաժանվում են երեք հիմնական տիպերի, մասնավորապես՝
 - (i) քաղաքներ, որոնք այլևս բնակեցված չեն, սակայն ներկայացնում են անցյալի անփոփոխ հնագիտական փաստեր. դրանք հիմնականում բավարարում են իսկության չափորոշիչը, և դրանց պահպանվածությունը կարող է հարաբերական հեշտությամբ հսկողության տակ վերցվել,
 - (ii) պատմական քաղաքներ, որոնք դեռևս բնակեցված են, և որոնք իրենց էությամբ շարունակում են զարգանալ սոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխությունների ազդեցության ներքո. իրավիճակ, որը դժվարեցնում է դրանց իսկության մակարդակի գնահատումը և ցանկացած կոնսերվացման քաղաքականություն դարձնում առավել խնդրահարույց,
 - (iii) 20-րդ դարի նոր քաղաքներ, որոնք պարադոքսալ կերպով ընդհանրություններ ունեն վերը թվարկած կատեգորիաների հետ. մինչդեռ դրանց սկզբնական քաղաքային պլանավորումը հստակ ճանաչվում է և իսկությունը՝ անմեթոք, իսկ ապագան՝ ոչ հստակ, քանի որ դրանց զարգացումը մեծ հաշվով հսկողության չի ենթարկվում:

Պատմական քաղաքների և քաղաքի միջուկների (կենտրոնական հատվածներ) ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկում

15. Պատմական քաղաքների և քաղաքի միջուկների (կենտրոնական հատվածներ) կարևորությունը կարող է քննության ենթարկվել՝ ելնելով հետևյալ գործոններից.

(i) Քաղաքներն այլևս բնակեցված չեն

Այլևս չբնակեցված քաղաքների գնահատումը չի հանգեցնում որևէ յուրահատուկ էական դժվարությունների, բացառությամբ նրանց, որոնք վերաբերում են հնագիտական

²³ Սույն տեքստը ներառվել է գործառնական ձեռնարկի 1987 թ. հունվարի տարբերակում կոմիտեի 8-րդ նիստի (Բուենոս Այրես) ընթացքում տեղի ունեցած քննարկումների հիման վրա՝ ելնելով ԻԿՕՄՍ-ի կողմից 1984 թ. սեպտեմբերի 5-7-ը Փարիզում կազմակերպված Պատմական քաղաքների հարցով ձևավորված փորձագետների խորհրդակցության արդյունքներից:

հուշարձաններին. եզակի և նախատիպային ոճի անբիծությունը, առկա հուշարձանների կենտրոնացվածությունը, ինչպես նաև պատմական կարևոր դեպքերի հետ դրանց առնչությունը չափորոշիչներ են, որոնք կարող են գրավիչ դարձնել շինությունների խմբի ընտրությունը: Կարևոր է, որ քաղաքային հնագիտական հուշարձանները ցուցակագրվեն որպես մեկ ամբողջություն: Հուշարձանախումբը կամ շինությունների փոքր խումբը համարվեք չեն այլևս գոյություն չունեցող քաղաքի բազմաթիվ և համալիր գործառույթների վերագրման համար. նմանատիպ քաղաքի մնացորդները հնարավորինս պետք է պահպանվեն իրենց բնական միջավայրի հետ միասին ամբողջությամբ:

(ii) Բնակեցված պատմական քաղաքներ

Բնակեցված պատմական քաղաքների պարագայում դժվարությունները բազմաթիվ են, հիմնականում դրանց քաղաքային հյուսվածքների փխրությունը (որը բազմաթիվ դեպքերում լրջորեն խախտվել է արդյունաբերական շրջափուլի գալստյամբ) պատճառով և դրանց միջավայրերի ուրբանիզացման սրընթաց արագության հետևանքով: Ցանկում ընդգրկելու որակավորման համար քաղաքները պետք է ճանաչված լինեն իրենց ճարտարապետական հետաքրքրվածության համար, և անցյալում ունեցած հնարավոր դերակատարությունը կամ դրանց արժեքը՝ որպես պատմական խորհրդանիշ, չպետք է դիտարկվի միայն մտացածին հենքի վրա՝ (vi) չափորոշիչի տակ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար (տես գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը): Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ծավալային պլանավորումը, կառուցվածքը, նյութերը, ձևը և հնարավորության դեպքում շինությունների խմբի գործառնական նշանակությունը պետք է արտահայտեն քաղաքակրթությունը կամ քաղաքակրթությունների ժառանգությունը, ինչը և խթան է հանդիսացել հուշարձանի առաջադրման համար:

Կարելի է առանձնացնել չորս տիպ՝

a) Որոշակի ժամանակահատվածի կամ մշակույթի համար բնորոշ քաղաքներ, որոնք գրեթե ամբողջությամբ պահպանված են և համապատասխան զարգացումներից հիմնականում անփաս են մնացել: Այս պարագայում քաղաքն ամբողջությամբ իրեն շրջապատող միջավայրի հետ միասին անհրաժեշտ է ցուցակագրել պաշտպանությունն ապահովելու նպատակով:

b) Քաղաքներ, որոնք զարգացել են իրենց բնորոշ առանձնահատկություններով և ունեն պահպանված, որոշ դեպքերում կենտրոնական հատվածում բնական բացառիկ միջավայր, ծավալատարածական կարգավորումներ և համակարգեր, որոնք բնորոշ են իրենց պատմության ժառանգորդության փուլերին: Այս դեպքում հստակ տարանջատված պատմական հատվածը գերակայություն է ունենում ժամանակակից միջավայրի նկատմամբ:

c) «Պատմական կենտրոնները» գտնվում են նույն այն տարածքի վրա, ինչ պատմական քաղաքները և ներառված են ժամանակակից քաղաքների սահմանների մեջ: Այստեղ անհրաժեշտություն կա ճշգրտորեն սահմանազծել հուշարձանի տարածքը՝ ընդգրկելով պատմական եզրաչափի հնարավորինս լայն հատվածները, ինչպես նաև համապատասխան պայմանակարգեր սահմանել դրա անմիջական շրջապատող տարածքի համար:

d) Հատվածներ, արեալներ կամ մեկուսացված միավորներ, որոնք նույնիսկ մնացորդային վիճակում, որոնցում պահպանվել են, փաստում են անհետացած պատմական քաղաքների առանձնահատկությունները: Նման դեպքերում պահպանված արեալները և շինությունները պետք է կրեն անցյալի մասին բավականաչափ վկայություններ:

Պատմական կենտրոնները և պատմական արեալները պետք է ցուցակագրվեն, եթե պարունակում են մոնումենտալ կարևորության հնագույն շինությունների մեծ թվաքանակ, որոնք տրամադրում են ուղղակի տեղեկատվություն բացառիկ հետաքրքրություն ներկայացնող քաղաքի առանձնահատկությունների վերաբերյալ: Մի քանի մեկուսացված և գործին չառնչվող շինությունների առաջադրումը, որոնք ենթադրաբար ներկայացնում են քաղաքային նյութակազմը (պատեր, հատակ և այլն), չպետք է խախտուվեն:

Այնուամենայնիվ, կարող են առաջադրվել այն հուշարձանները, որոնք զբաղեցնում են սահմանափակ տարածք և ունեցել են մեծ ազդեցություն քաղաքային պլանավորման պատմության վրա: Նման դեպքերում անվանակարգերը պետք է հստակեցնեն, որ հուշարձանախումբն է, որ պետք է

ընդգրկվի ցանկում և որ քաղաքը հիշատակվել է ի դեպ, որպես մի վայր, որտեղ գտնվում է հուշարձանը: Համանմանորեն, եթե հստակ համաշխարհային բացառիկ արժեք ունեցող շինությունը գտնվում է խիստ կազմալուծված կամ ոչ բավարար մակարդակով ներկայացված քաղաքային միջավայրում, ապա այն, առանց երկմտանքի, պետք է ընդգրկվի ցուցակում՝ առանց հղում կատարելու քաղաքի վրա:

(iii) 20-րդ դարի նոր քաղաքները

20-րդ դարի նոր քաղաքների որակական հատկանիշները դժվար է գնահատել: Միայն պատմությունը կարող է ասել, թե դրանցից որ մեկը կարող է դառնալ ժամանակակից քաղաքաշինության լավագույն օրինակ: Այդ քաղաքների փաթեթների ուսումնասիրությունը պետք է հետաձգել և պահել բացառիկ հանգամանքների համար:

Ներկա պայմաններից ելնելով՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նախապատվությունը պետք է տրվի փոքր կամ միջին չափերի քաղաքային տարածքներին, որոնք ի վիճակի են կառավարելու հնարավոր զարգացումը, և ոչ թե մեծ քաղաքամայրերին, որոնց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը և փաստաթղթային փաթեթները հնարավոր չէ ներկայացնել՝ ամբողջությամբ ցանկում ներառելու համար՝ որպես բավարար հիմք ծառայելու նպատակով:

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց հետո ապագայում ունեցած հնարավոր ազդեցություններից ելնելով՝ նման ընդգրկումները կարող են լինել բացառիկ: Ցանկում ընդգրկումը ենթադրում է, որ արդեն իսկ ձեռնարկվել են օրենսդրական և վարչական միջոցառումներ՝ հուշարձանախմբերի և դրանց միջավայրի պահպանվածությունը երաշխավորելու համար:

Կարևոր նշանակություն ունի շահագրգիռ բնակչության, առանց որի ակտիվ մասնակցության, ցանկա-
ցած կոնսերվացման մոդել կլինի անարդյունավետ, իրազեկվածության աստիճանի բարձրացումը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐԱՆՑՔՆԵՐ

16. «Ջրանցքների» հայեցակարգը մանրամասն քննարկվել է Պատմական ջրանցքների հարցերով փորձագիտական հանդիպման զեկույցում (Կանադա, սեպտեմբեր, 1994 թ.)²⁴:

Սահմանումներ

17. Ջրանցքը մարդու նախագծած ջրի ճանապարհն է: Այն կարող է համաշխարհային բացառիկ արժեք ունենալ պատմության և տեխնոլոգիայի տեսանկյունից՝ հանդիսանալով իրականում կամ որպես մշակութային հուշարձանի բացառիկ օրինակ: Ջրանցքը կարող է լինել մոնումենտալ գործ՝ սահմանազատելով գծային մշակութային տեղանքապատկերը, կամ հանդիսանալով մշակութային համալիր տեղանքապատկերի անքակտելի բաղադրիչ:

Պատմական ջրանցքների գրանցումը Համաշխարհային ժառանգության ցանկում

18. Իսկությունն ամբողջությամբ կախված է արժեքներից և այդ արժեքների միջև գոյություն ունեցող հարաբերություններից: Որպես ժառանգության տարրի՝ ջրանցքին առանձնացնող հատկություններից մեկը էվոլյուցիան է ժամանակի ընթացքում: Դա կապված է տարբեր ժամանակներում կիրառման տարբերակների և տեխնոլոգիական փոփոխությունների հետ, որի միջով անցել է ջրանցքը: Այս փոփոխությունների աստիճանը կարող է հաստատել ժառանգության տարրը:
19. Ջրանցքի իսկության և պատմական մեկնաբանությունները կարող են ներառել հուշարձանը (կոնվենցիայի առարկան), հնարավոր շարժական միավորները (նավակներ, ժամանակավոր նավագնացության տարրեր) և դրանց առնչվող կառույցները (կամուրջներ և այլն), ինչպես նաև տեղանքապատկերը:
20. Ջրանցքի կարևորությունը կարող է քննության առնվել ստորև ներկայացվող տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և տեղանքապատկերային գործոններով:

²⁴ «Պատմական ջրանցքների» հարցերով փորձագիտական հանդիպումը (Կանադա, 15-19 սեպտեմբերի, 1994 թ.) (տե՛ս WHC-94/CONF.003/INF.10 փաստաթուղթը) քննարկվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի 19-րդ նստաշրջանի ընթացքում (discussed by the World Heritage Committee at its 19th session) (Բեռլին, Գերմանիա, 1995 թ.) (տե՛ս WHC-95/CONF.203/16 փաստաթղթի¹⁰⁰):

(i) Տեխնոլոգիա

Ջրանցքները կարող են ծառայել մի քանի՝ ոռոգման, նավագնացության, պաշտպանության, հիդրոէներգետիկ, ջրհեղեղի հեռացման և ջրամատակարարման նպատակներով: Ստորև ներկայացվող տեխնոլոգիաների ոլորտները կարևոր նշանակություն կարող են ունենալ՝

- a) ջրանցքի երեսպատում և ջրամեկուսացում,
- b) ճարտարապետության և տեխնոլոգիայի այլ ոլորտների համեմատական կառուցվածքային առանձնահատկություններին վերաբերող ինժեներական կառույցների շարք,
- c) կառուցման առավել նուրբ մեթոդների կիրառում,
- d) տեխնոլոգիաների փոխանցում:

(ii) Տնտեսություն

Ջրանցքներն ազդեցություն են ունենում տնտեսության վրա մի քանի եղանակով, օրինակ՝ տնտեսական զարգացման ու մարդկանց և ապրանքների տեղափոխման համատեքստում: Ջրանցքները մարդու կողմից ստեղծված առաջին երթուղիներն էին մեծածավալ ուղեբեռների արդյունավետ տեղափոխման համար: Ջրանցքները խաղացել և շարունակում են բեկումնային դերակատարություն ունենալ տնտեսական զարգացման գործում՝ ոռոգման համակարգում դրանց կիրառման միջոցով: Կարևորվում են հետևյալ գործոնները.

- a) ազգի ձևավորում,
- b) գյուղատնտեսության զարգացում,
- c) արդյունաբերության զարգացում,
- d) կարողությունների (հարստության) ստեղծում,
- e) այլ ոլորտներում և արդյունաբերական ճյուղերում ինժեներական հմտությունների զարգացում,
- f) զբոսաշրջություն:

(iii) Սոցիալական գործոններ

Ջրանցքների կառուցումն ունեցել է և դրանց շահագործումը շարունակում է ունենալ սոցիալական հետևանքներ՝

- e) կարողությունների վերաբաշխում սոցիալական և մշակութային արդյունքների հետ միասին,
- f) մարդկանց տեղաշարժ և մշակութային խմբերի փոխներգործություն:

(iv) Տեղանքապատկեր

Նմանատիպ լայնամասշտաբ ինժեներական աշխատանքները ունեցել և շարունակում են ազդեցություն ունենալ բնության տեղանքապատկերների վրա: Առնչվող արդյունաբերական գործունեության և բնակավայրերի փոփոխվող ձևանմուշները տեսանելի փոփոխում են տեղանքապատկերների ձևերը և տիպերը:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐ

21. «Ուղիների» հայեցակարգը կամ մշակութային երթուղիները քննարկվել են «Ուղիները որպես մշակութային ժառանգության մաս» հարցերով փորձագիտական հանդիպման ընթացքում (Մադրիդ, Իսպանիա, նոյեմբեր, 1994 թ.)²⁵:

²⁵ «Ուղիները որպես մշակութային ժառանգության մաս» հարցերով փորձագիտական հանդիպումը (Մադրիդ, 24-25-ը նոյեմբերի, 1994 թ.) (տես WHC-94/CONF.003/INF.13 փաստաթուղթը) քննարկվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի 19-րդ նստաշրջանի ընթացքում (Բեռլին, 1995 թ.) (տես WHC-95/CONF.203/16 փաստաթուղթը):

Սահմանում

22. Ժառանգության ուղիների հայեցակարգը ցույց տվեց դրա հարստությունը և արգասաբերությունը՝ առաջարկելով արտոնյալ ձևաչափ, որում փոխըմբռնումը, պատմության և խաղաղության մշակույթի հանդեպ բազմակի մոտեցումը կարող են միասին գոյակցել:
23. Ժառանգության ուղին բաղկացած է նյութական տարրերից, որոնց կարևորությունը մշակույթի տեսանկյունից բխում է երկրների կամ տարածաշրջանների միջև տեղի ունեցած փոխանակումներից և բազմակողմանի երկխոսությունից՝ ցուցադրելով շարժման փոխներգործությունը ուղու երկայնքով՝ ժամանակի և տարածքի միջով:

Ժառանգության ուղիների ընդգրկումը Համաշխարհային ժառանգության ցանկում

24. Անհրաժեշտ է քննության առնել ստորև ներկայացվող կետերը ժառանգության ուղիում՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակահարմարությունը որոշելու ընթացքում.
 - (i) Համաշխարհային բացառիկ արժեքի հիմնավորման պահանջները պետք է հաշվի առնվեն:
 - (ii) Ժառանգության ուղիների հայեցակարգը՝
 - հիմնված է շարժման դինամիկայի և փոխանակումների գաղափարի հիման վրա՝ ժամանակի և տարածության միջով շարունակականության հետ միասին,
 - առնչվում է աբողջականությանը, որտեղ ուղին արժանի և վեր է մի շարք տարրերից, որոնք հզորացնում են դրա կարևորությունը մշակույթի տեսանկյունից,
 - ընդգծում է երկրների և տարածաշրջանների միջև փոխանակումը և երկխոսությունը,
 - բազմակողմանի է տարբեր ասպեկտների զարգացմամբ և հավելումով իր նախնական նպատակին, որը կարող է լինել կրոնական, առևտրային, վարչական կամ այլ:
 - (iii) Ժառանգության ուղին կարող է դիտարկվել որպես մշակութային տեղանքապատկերի յուրահատուկ, դինամիկ տեսակ, ինչպես վերջին քննարկումները հանգեցրեցին դրանց ներառումը գործառնական ձեռնարկում:
 - (iv) Մշակութային ուղու նախանշումը հիմնված է ուժեղ և նյութական տարրերի հավաքագրման և ուղու կարևորության վկայության վրա:
 - (v) Իսկության հետ կապված պայմանները կիրառվելու են ըստ դրա կարևորության հիմքերի և մյուս տարրերի վրա, որոնցով ձևավորվում է ժառանգության ուղին: Հաշվի է առնվում ուղու երկարությունը և ներկայում դրա օգտագործման հաճախականությունը, ինչպես նաև ազդեցության գոտում գտնվող մարդկանց կառուցապատման ցանկությունների իրավագործությունը:
- Ներկայացված կետերը հաշվի կառնվեն ուղու բնական համատեքստում, ինչպես նաև՝ դրանց ոչ նյութական և խորհրդանշական ասպեկտները:

II. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Համաշխարհային ժառանգության ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ ցանկ ունենալու համար համընդհանուր ռազմավարության համատեքստում կոմիտեն պահանջել է կազմակերպել տարբեր հուշարձաններին առնչվող մի շարք տարածաշրջանային և թեմատիկ հարցերով փորձագիտական հանդիպումներ: Հանդիպումների արդյունքները կարող են ուղենիշ հանդիսանալ անդամ պետությունների համար անվանակարգերի նախապատրաստման հարցում: Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացված փորձագիտական հանդիպումների զեկույցները հասանելի են <http://whc.unesco.org/en/globalstrategy> հասցեով:

III. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Մշակութային և բնության հուշարձանների անվանակարգերի գնահատման հարցում ստանձնած պարտականությունների կատարման նպատակով խորհրդատվական մարմինները, հաճախ գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ, նախաձեռնել են համեմատական և թեմատիկ ուսումնասիրությունների իրականացում տարբեր ոլորտներում, որպեսզի ներկայացվեն իրենց գնահատումների շրջանակը:

Այդ զեկույցները, որոնցից շատերը հասանելի են իրենց վեբ կայքերում, ներառում են՝

Երկրագնդի երկրաբանական պատմությունը - Համաշխարհային ժառանգության բրածո հուշարձանների գնահատման ենթատեքստից բխող շրջանակ (սեպտեմբեր, 1996 թ.)

Ջրանցք-հուշարձանների միջազգային ցանկ (1996 թ.)
<http://www.icomos.org/studies/canals-toc.htm>

Համաշխարհային ժառանգության կամուրջներ (1996 թ.)
<http://www.icomos.org/studies/bridges.htm>

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված պահպանվող անտառային տարածքների ընդհանրական վերլուծություն (սեպտեմբեր, 1997 թ.)
<http://www.unep-wcmc.org/wh/reviews/forests/>

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված խոնավ (ճահճուտային) և պահպանվող ծովային տարածքների ընդհանրական վերլուծություն (սեպտեմբեր, 1997 թ.)
<http://www.unep-wcmc.org/wh/reviews/wetlands/>

Համաշխարհային ժառանգության բնության հուշարձանների օգտագործումը մարդու կողմից (սեպտեմբեր, 1997 թ.)
<http://www.unep-wcmc.org/wh/reviews/human/>

Բրածո հոմինիդային հուշարձաններ (1997 թ.)
<http://www.icomos.org/studies/hominid.htm>

Լատինական Ամերիկայի քաղաքային ճարտարապետական ժառանգությունը (1998 թ.)
<http://www.icomos.org/studies/latin-towns.htm>

Հնագույն թատրոնները և ամֆիթատրոնները (1999 թ.)
<http://www.icomos.org/studies/theatres.htm>

Երկաթուղիները՝ որպես Համաշխարհային ժառանգության հուշարձաններ (1999 թ.)
<http://www.icomos.org/studies/railways.htm>

Կենսաբազմազանության համար որակի կարևորություն ունեցող և Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված պահպանվող տարածքների համեմատական վերլուծություն (նոյեմբեր, 2000 թ.)
<http://www.unep-wcmc.org/wh/reviews/>

Les villages ouvriers comme éléments du patrimoine de l'industrie (2001)
<http://www.icomos.org/studies/villages-ouvriers.htm>

Երկրաբանական Համաշխարհային ժառանգության համար գլոբալ ռազմավարություն (փետրվար, 2002 թ.)

Հյուսիսային Աֆրիկայի ժայռապատկերների հուշարձաններ (2002 թ.)
<http://www.icomos.org/studies/sarockart.htm>



ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄԱՍՈՎ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հավելվածը վերարտադրում է Նարայի փաստաթուղթը, որը մշակվել է Նարա (Ճապոնիա) քաղաքում Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի վերաբերմամբ իսկության հարցերով գումարված խորհրդաժողովի (1994 թ. նոյեմբերի 1-6-ը) մասնակիցների կողմից: Նարայի խորհրդաժողովը կազմակերպվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿԿՈՒՕՄ-ի և ԻԿՕՄՕՍ-ի կողմից:

Համաշխարհային ժառանգության կոմիտեն քննարկեց իսկության հարցերով Նարայում կայացած հանդիպման հաշվետվությունը 18-րդ նստաշրջանի ընթացքում (Ֆուկետ, Թաիլանդ, 1994 թ.) (տե՛ս WHC-94/CONF.003/16 փ0561 փաստաթուղթը):

Փորձագիտական հանդիպումները հարստացրեցին իսկության հայեցակարգը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տեսանկյունից (տե՛ս գործառնական ձեռնարկի մատենագիտությունը):

I. ՆԱՐԱՅԻ ՓԱՏՏԱԹՈՒՂԹՆ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախաբան

1. Մենք, Նարայում (Ճապոնիա) հավաքված մասնագետներս, ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Ճապոնիայի իշխանություններին ցուցադրած առաջնությունների և մտավոր խորապետության համար՝ հնարավորություն տալով կազմակերպելու հանդիպում, որի ընթացքում կփորձենք վերաիմաստավորել ավանդական հասկացությունները պահպանության ոլորտում, ինչպես նաև քննարկել մշակութային ժառանգության մեր պատկերացումների ընդլայման ուղիները և միջոցները, որոնց միջոցով ապահովվում է հարգալից վերաբերմունքը պահպանության պրակտիկայի նկատմամբ:
2. Մենք ցանկանում ենք նաև երախտագիտ խոսքեր հնչեցնել Համաշխարհային ժառանգության կոմիտեին, որը սահմանեց իսկությանը վերաբերող քննարկման շրջանակներն այնպես, որպեսզի ապահովվի բոլոր համայնքների սոցիալական և մշակութային արժեքների հանդեպ հարգանքը՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով առաջարկվող մշակութային հուշարձանների համաշխարհային բացառիկ արժեքի ուսումնասիրության և դրանց համաշխարհային արժեքի որոշման ընթացքում:
3. «Իսկության մասին» Նարայի փաստաթուղթը համահունչ է 1964 թ. ընդունված Վենետիկյան խարտիայի ոգուն, հիմնված է վերջինիս վրա, ինչպես նաև լրացնում է այնպես, որ հաշվի առնվեն ժամանակակից աշխարհում մշակութային ժառանգության պահպանության ոլորտում խնդիրների աճող շրջանակը և շահերը:
4. Աշխարհում, որն աստիճանաբար ենթարկվում է գլոբալիզացիայի և միապարտության ճնշմանը, և որտեղ մշակութային պատկանելության փնտրություններն ուղեկցվում են ագրեսիվ ազգայնամոլությամբ և մշակութային փոքրամասնությունների նկատմամբ ճնշումներով, իսկության հասկացության ուսումնասիրության գործում ամենակարևոր ներդրումը կոնսերվացման պրակտիկայում մարդկության հավաքական հիշողության հստակեցումն ու լուսավորումն է:

Մշակութային բազմազանությունը և մշակութային ժառանգությունը

5. Մեր աշխարհում մշակույթների և ժառանգության բազմազանությունը մարդկության հոգևոր և մտավոր հարստության անփոխարինելի աղբյուրն է: Մշակութային և ժառանգության բազմազանության պաշտպանության բարելավումը պետք է առավել ակտիվ կերպով խթանվի որպես մարդկային զարգացման բեկումնային ուղղություն:

6. Մշակութային ժառանգության բազմազանությունը գոյություն ունի ժամանակի և տարածության մեջ և պահանջում է հարգալից վերաբերմունք այլ մշակույթների և հավատքների տարբեր համակարգերի բոլոր դրսևորումների նկատմամբ: Այն դեպքերում, երբ մշակութային արժեքները հայտնվում են հակամարտություններում, դրանց բազմազանության հանդեպ հարգանքը պահանջում է բոլոր ներգրավված կողմերի մշակութային արժեքների հանդեպ լեզվափոխության ճանաչում:
7. Բոլոր մշակույթների և համայնքների արմատներում ընկած են նյութական և ոչ նյութական ինքնարտահայտման ձևերը իրենց տեսակներով և արտահայտման միջոցներով, որոնցից ձևավորվում է մշակույթը, ինչը և պետք է հարգանքի արժանանա:
8. Կարևոր է ընդգծել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության հիմնարար սկզբունքները, համաձայն որոնց՝ յուրաքանչյուրի մշակութային ժառանգությունը նաև բոլորի մշակութային ժառանգությունն է: Առաջին հերթին պահպանության և կառավարման պատասխանատվությունը վերապահված է այն համայնքին, որը ստեղծել է մշակութային ժառանգությունը, և հետո բոլոր նրանց, ովքեր հոգ են տանում դրա մասին: Այնուամենայնիվ, ի հավելումն այդ պատասխանատվությանը, միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով ստանձնած հանձնառությունները, որոնք մշակվել են մշակութային ժառանգության պահպանության նպատակով, ստիպում են նաև հաշվի նստել դրանցից բխող սկզբունքների և պարտավորությունների հետ: Սեփական և մշակութային մյուս համայնքների (ցանկալի է յուրաքանչյուր համայնքի հետ առանձին) պահանջմունքների միջև հավասարակշռության հաստատումը չպետք է ստորադասի դրանց մշակութային հիմնարար արժեքները:

Արժեքները և իսկությունը

9. Մշակութային ժառանգության պահպանությունն իր պատմական բոլոր դրսևորումներով և ժամանակագրությամբ արմատավորված է ժառանգությանը վերաբերող արժեքներում: Այդ մշակութային արժեքներն ընկալելու մեր ունակությունը կախված է դրանց վերաբերյալ տեղեկատվական աղբյուրների արժանահավատության կամ վստահելի լինելու աստիճանից: Տեղեկատվական աղբյուրների մասին գիտելիքներն ու ընկալումները, մշակութային ժառանգության և դրա նշանակության նախնական ու դրանից բխող առանձնահատկությունների տեսանկյունից, ստեղծում են անհրաժեշտ հիմք իսկության բոլոր կողմերի սահմանման համար:
10. Նման եղանակով քննության առնված և Վենետիկյան խարտիայում հաստատված իսկությունը հանդես է գալիս որպես մշակութային արժեքների որակավորման հիմնական որակավորում տրվող գործոն: Իսկության ընկալումը հիմնարար դերակատարություն ունի մշակութային ժառանգության, կոնսերվացման և վերականգնման պլանավորմանն առնչվող բոլոր գիտական ուսումնասիրություններում, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության և մշակութային ժառանգության այլ ցանկում ընդգրկելու գործընթացներում:
11. Մշակութային ժառանգությանը վերաբերող արժեքների բոլոր դատումները, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների արժանահավատությունը կարող են տարբերվել մշակույթից մշակույթ և նույնիսկ միևնույն մշակույթի շրջանակներում: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ արժեքների և իսկության վերաբերյալ դատումները հիմնել հաստատուն ամրագրված չափորոշիչի վրա: Ավելին, բոլոր մշակույթների հանդեպ հարգանքը պահանջում է, որ ժառանգության հուշարձանները պետք է քննության առնվեն և գնահատվեն դրանց պատկանելության մշակութային համատեքստի հիման վրա:
12. Այդ իսկ պատճառով մեծ կարևորություն և հրապապություն է ձեռք բերում ժառանգության արժեքների առանձնահատկությունների ճանաչումը յուրաքանչյուր առանձին մշակույթի համատեքստում, ինչպես նաև դրանց վերաբերող տեղեկատվական աղբյուրների արժանահավատությունը և ճշմարտացիությունը:
13. Մշակութային ժառանգության բնույթից, դրա մշակութային համատեքստից և ժամանակի ընթացքում կրած փոփոխությունից կախված՝ իսկության ընկալումը կարող է կապված լինել տեղեկատվության աղբյուրների մեծ բազմազանության հետ: Աղբյուրների ասպեկտները կարող են ընդգրկել ձևը և նախագծումը, նյութերը և նյութակազմը, օգտագործումը և գործառույթը, ավանդույթները և խենիկան, գտնվելու վայրը և տեխնիկան, ոգին և զգացմունքները, ինչպես նաև արտաքին և ներքին գործոնները: Այս աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս գնահատել առանձնահատուկ գեղարվեստական, պատմական, սոցիալական և գիտական ուղղվածությունները հատկապես մշակութային ժառանգության ուսումնասիրության ընթացքում:

Հավելված 1. Առաջարկություններ հետագա աշխատանքների վերաբերյալ (հեղինակ՝ Հերբ Սթոկել)

1. Մշակույթի և մշակութային ժառանգության բազմազանության հանդեպ հարգանքը պահանջում է գիտակից ջանքերի գործադրում՝ խուսափելով պարտադրող մեխանիկացված բանաձևերի կամ ստանդարտացված ընթացակարգերի կիրառումից որոշակի հուշարձանների և վայրերի իսկությունը որոշելու կամ սահմանելու դեպքերում:
2. Մշակույթի և մշակութային ժառանգության բազմազանության հանդեպ հարգալից կերպով իսկությունը որոշելու ջանքերը պահանջում են այնպիսի մոտեցումներ, որոնք խրախուսում են տվյալ մշակույթի բնույթին և կարիքներին բնորոշ վերլուծական գործընթացների և գործիքակազմի մշակումը: Նման մոտեցումը կարող է ունենալ մի քանի ընդհանուր ուղղություններ՝
 - ջանքեր՝ ուղղված իսկության գնահատմանը, որոնք ենթադրում են գիտության տարբեր ճյուղերի համագործակցություն, ինչպես նաև մատչելի համապատասխան փորձագիտական հմտությունների և գիտելիքների կիրառում,
 - ջանքեր, որոնք երաշխավորում են առանձին հուշարձաններում և տեսարժան վայրերում մշակույթի առանձնահատկությունների և դրա շահերի բազմազանության ներկայացվածությունը,
 - ջանքեր՝ ուղղված հուշարձանների և վայրերի իսկության որոշակի բնույթի հստակ փաստաթղթաբանության կազմմանը, որը հետագա ուսումնասիրությունների և մոնիթորինգի համար գործնական ձեռնարկ է դառնալու,
 - ջանքեր՝ ուղղված իսկության գնահատումների թարմացմանը՝ ելնելով փոփոխական արժեքներից և հանգամանքներից:
3. Մասնավորապես՝ կարևոր են այն ջանքերը, որոնք ուղղված են երաշխավորելու հարգանքին առնչվող արժեքներին, և որ դրանց բնութագրումն ընդգրկում է այդ արժեքների վերաբերյալ համայնքների և գիտության տարբեր ճյուղերի համաձայնությունը:
4. Կիրառվող մոտեցումները պետք է կառուցեն և խթանեն միջազգային համագործակցությունը բոլոր նրանց միջև, ովքեր շահագրգռված են մշակութային ժառանգության պահպանությամբ՝ յուրաքանչյուր մշակույթի ինքնարտահայտման ձևերի և արժեքների հանդեպ համաշխարհային հարգանքն ու ընկալումը բարելավելու նպատակով:
5. Սույն երկխոսության շարունակականության ապահովումը և շրջանակի ընդլայնումն աշխարհի տարբեր շրջաններում և մշակույթներում նախապայման է մարդկության ընդհանուր ժառանգության գործում իսկության ուսումնասիրության գործնական նշանակության համար:
6. Այս հիմնարար ուղղվածության վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացումը բացարձակ անհրաժեշտություն է անցյալի հետքերի պահպանությանն ուղղված որոշակի միջոցների ձեռնարկման համար, ինչը նշանակում է մշակութային հուշարձանների արժեքների առավել խորը ընկալում, ինչպես նաև հուշարձանների և վայրերի ժամանակակից հասարակությունում ունեցած դերակատարության հանդեպ հարգանքի ձևավորում:

Հավելված 2. Սահմանումներ

Կոնսերվացում. այս հասկացությունը ներառում է մշակութային ժառանգության ընկալման, դրա պատմության և նշանակության գիտակցման, նյութերի պահպանվածության ապահովման և, ինչպես պահանջվում է, դրա հանրահոշակմանը, վերականգնմանը և ամրակայմանն ուղղված բոլոր ջանքերը (մշակութային ժառանգությունը ներառում է հուշարձաններ, հուշարձանախմբեր և մշակութային արժեքների վայրեր, ինչպես սահմանված է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 1-ին հոդվածով):

Տեղեկատվական աղբյուրները ներառում են բոլոր գրավոր, բանավոր կամ պատկերավոր նյութերը, որոնք հնարավոր են դարձնում առավել ևս հասկանալու մշակութային ժառանգության տեսակը, առանձնահատկությունները, նշանակությունը և պատմությունը:

II. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նարայի հանդիպմանը նախորդած հրապարակումները, որոնք օգնեցին հող նախապատրաստել իսկության հարցերով Նարայում կայացած հանդիպման կազմակերպման համար

Լարսեն, Կնուտ Էյնար, Նշումներ պատմական փայտե շինությունների (հատուկ հղում կատարելով Ճապոնիայի օրինակին) իսկության մասին, Հազվադեպ փաստաթղթեր Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի համար, ԻԿՕՄՕՍ, 1992 թ. դեկտեմբեր:

Լարսեն, Կնուտ Էյնար, Իսկություն և վերականգնում. Ճարտարապետական պահպանվածությունը Ճապոնիայում, Տեխնոլոգիայի նորվեգական ինստիտուտ, 1-2-րդ հ., 1993 թ.:

Նարայի հանդիպման կազմակերպման հարցերով նախապատրաստական հանդիպում, Բերգեն, Նորվեգիա, 31-ը հունվարի - 1-ը փետրվարի, 1994 թ.

Լարսեն, Կնուտ Էյնար և Մարսթեյան Նիլս (խմբ.), Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի նախապատրաստական աշխատաժողով՝ նվիրված իսկության հարցերով խորհրդաժողովին, 31-ը հունվարի - 2-ը փետրվարի, 1994 թ., Տափիր Ֆորլագ, Տրոնդհեյմ, 1994 թ.:

Նարայի հանդիպում, 1-6-ը նոյեմբերի, 1994 թ., Նարա, Ճապոնիա

Լարսեն, Կնուտ Էյնար՝ խմբագրական խորհրդի հետ միասին (Ջոկիլետո, Լեմեյրի, Մասուդա, Մարսթեյն, Սթոլվեյ), Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի վերաբերմամբ իսկության հարցերով Նարայի խորհրդաժողով, Նարա, Ճապոնիա, 1-6-ը նոյեմբերի, 1994 թ., արդյունքները հրապարակվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի, Ճապոնիայի մշակութային հարաբերությունների գործակալության, ԻԿԿՈՒՄ-ի և ԻԿՕՄՕՍ-ի կողմից 1994 թվականին:

Նարայի հանդիպումը մեկտեղել էր 26 երկրից ժամանած 45 փորձագետի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների աշխարհի տարբեր անկյուններից: Նրանց փաստաթղթերն ընդգրկված են վերը նշված հատորներում: Նախապատրաստվեց Նարայի փաստաթուղթը՝ մասնակիցներից ձևավորված աշխատանքային խմբի 12 հանդիպումների ընթացքում և խմբագրվեց Ռայմոն Լեմեյրի և Հերբ Սթոլվեյի կողմից: Փաստաթղթերի այս հատորը ԻԿՕՄՕՍ-ի անդամներին և այլոց կոչ է անում ընդլայնել Նարայի փաստաթղթի շրջանակը՝ ներառելով աշխարհի տարբեր շրջաններ:

Նարայի հանդիպումից հետո կարևոր տարածաշրջանային հանդիպումներ (2005 թ. հունվարի դրությամբ)

Իսկություն և մոնիթորինգ, 1995 թ. հոկտեմբերի 17-22-ը, Չեչսկի Կրումլով, Չեխիայի Հանրապետություն, ԻԿՕՄՕՍ-ի եվրոպական խորհրդաժողով, 1995 թ.:

1995 թ. հոկտեմբերի 17-22-ը Չեչսկի Կրումլովում (Չեխիայի Հանրապետություն) կայացած եվրոպական ԻԿՕՄՕՍ-ի խորհրդաժողովը մեկտեղել էր ԻԿՕՄՕՍ-ի 18 եվրոպական անդամի՝ ներկայացնելու 14 երկրների իսկության տեսլականների կիրառման ազգային մոտեցումները: Ներկայացված փաստաթղթերի սինթեզը հաստատեց վերլուծական գործընթացներում իսկության կարևորությունը, և կոնսերվացման խնդիրները դիտարկվեցին որպես արժանահավատ, անկեղծ և ազնիվ մոտեցում, ինչպես նաև կարևորվեց դինամիկ կոնսերվացման հայեցակարգի ամրապնդմանը՝ իսկության վերլուծությունը մշակութային տեղանքապատկերների և քաղաքային պլանավորման դեպքերում պատշաճ մակարդակով կիրառելու համար:

Միջամերիկյան սիմպոզիում՝ նվիրված մշակութային ժառանգության կոնսերվացման և կառավարման գործընթացներում իսկության հարցերին, ՄԱԿ/ԻԿՕՄՕՍ, Գեթթի կոնսերվացման ինստիտուտ, Սան Անտոնիո, Տեխաս, 1996 թ.

Իսկության հարցերով հանդիպում կայացել է Սան Անտոնիոյում (Տեխաս, ԱՄՆ) 1996 թվականի մարտին, որի ընթացքում ԻԿՕՄՕՍ-ի Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկաների ազգային կոմիտեների ներկայացուցիչները քննարկել են Նարայի հայեցակարգի կիրառումը: Հանդիպման ավարտին ընդունվեց Սան Անտոնիոյի հայտարարությունը, որը քննարկման առարկա դարձրեց հարաբերակցությունը իսկության և ինքնության, պատմության, նյութերի, սոցիալական արժեքի, դինամիկ և ստատիկ վայրերի, տնտեսվարության և տնտեսության միջև, ինչպես նաև ընդգրկեց առաջարկությունները իսկության «ապացույցների» շրջանակի ընդլայնման համար՝ ներառելով դրա իսկական արժեքի, ամբողջականության, համատեքստի, ինքնության

և գործառնական նշանակության արտահայտությունը: Հուշարձանների տարբեր տիպաբանության հարցերով առաջարկությունները նույնպես ընդունվեցին:

Սառումա-Ֆոռեռո, Գալիա (խմբագրված), Իսկությունը և ամբողջականությունն աֆրիկյան համատեքստում. Փորձագիտական հանդիպում, Մեծ Զիմբաբվե, Զիմբաբվե, 26-29-ը մայիսի 2000 թ., ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն, Փարիզ, 2001 թ.:

Մեծ Զիմբաբվեում Համաշխարհային ժառանգության կենտրոնի կազմակերպած հանդիպումը (2000 թ. մայիսի 26-29-ը) կենտրոնացվել էր աֆրիկյան համատեքստում իսկության և ամբողջականության հարցերի վրա: 18 ելույթ ունեցողներ քննարկեցին մշակութային և բնության ժառանգության հուշարձանների կառավարումից բխող հիմնախնդիրները: Արդյունքում՝ լույս տեսավ հանդիպման ընթացքում ձևավորված առաջարկությունները պարունակող վերը նշված հրատարակությունը: Առաջարկությունները ներառում են կառավարման համակարգերը, լեզուն և ոչ նյութական մշակութային ժառանգության այլ ձևեր, որոնք արտահայտում են իսկությունը, և շեշտադրումը կատարված է ժառանգության կայուն կառավարման գործընթացներում տեղի համայնքների դերակատարության վրա:

Վերակառուցման հարցերով քննարկումներ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի համատեքստում (as of January 2005 թ. հունվարի դրությամբ)

Տարածաշրջանային խորհրդաժողովի ընդունած մշակութային ժառանգության վերաբերմամբ իսկության և հուշարձանների վերականգնման Ռիգայի խարտիան, Ռիգա, 2000 թ. հոկտեմբերի 24, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Լատվիայի ազգային հանձնաժողով, Համաշխարհային ժառանգության կենտրոն, ԻԿԿՌՕՄ:

Ինսերտի Մեդիչի, Ելենա և Սթովել Հերբ, Իսկությունը և պատմական վերականգնումները մշակութային ժառանգության վերաբերմամբ, տարածաշրջանային խորհրդաժողով, Ռիգա, Լատվիա, 23-24-ը հոկտեմբերի, 2000 թ., ամփոփ զեկույց, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն, Փարիզ, ԻԿԿՌՕՄ, Հոմ, 2001 թ.:

Սթովել Հերբ, Մշակութային ժառանգության վերաբերմամբ իսկության և հուշարձանների վերականգնման Ռիգայի խարտիան, Ռիգա, Լատվիա, հոկտեմբեր, 2000 թ., Հնագիտական հուշարձանները կոնսերվացման և կառավարման մեջ, հ. 4, 2001 թ.:

Համաշխարհային ժառանգության քաղաքներում պատմական վերականգնումների այլընտրանքներ, Տալլին, 16-18-ը մայիսի, 2002 թ., Տալլինի մշակութային ժառանգության վարչություն, Էստոնիայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողով, Էստոնիայի ազգային ժառանգության խորհուրդ:



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ
ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓԸ

**Սույն ձևաչափը պետք է օգտագործվի 2005 թ. փետրվարի 2-ից հետո
ներկայացված բոլոր անվանակարգերի համար:**

- Անվանակարգի ձևաչափը հասանելի է <http://whc.unesco.org/en/nominationform> հասցեով:
- Անվանակարգի նախապատրաստման համար հետագա ցուցումները կարելի է գտնել գործառնական ձեռնարկի 3-րդ բաժնում:
- Անվանակարգի ձևաչափի ամբողջական ստորագրված բնօրինակը պետք է ուղարկվի անգլերենով կամ ֆրանսերենով.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն

7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352

Փարիզ 07 SP, Ֆրանսիա

Հեռ.՝ +33 (0)1 4568 1876

Ֆաքս՝ +33 (0)1 4568 5570

Էլ. փոստ՝ wh-nominations@unesco.org

Բացատրական ամփոփագիր

Անդամ պետության կողմից ներկայացված տեղեկատվությունը կարող է լրամշակվել քարտուղարության կողմից Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշման հիման վրա: Այնուհետ տեղեկույթը կվերադարձվի անդամ պետությանը՝ հաստատելով այն հիմքերը, համաձայն որոնց՝ հուշարձանն ընդգրկվել է Համաշխարհային ժառանգության ցանկում

Անդամ պետությունը	
Նահանգը, մարզը կամ շրջանը	
Հուշարձանի անվանումը	
Աշխարհագրական կոորդինատները	
Անվանակարգում ներկայացվող հուշարձանի սահման(ներ)ի տեքստային նկարագրությունը	
Անվանակարգում ներկայացվող հուշարձանի A 4 չափի քարտեզը, որտեղ ներկայացվում են սահմանները և պահպանական գոտին (եթե այդպիսին գոյություն ունի)	Խնդրում ենք կցել A4 կամ A3 չափի քարտեզ(ներ), որը (որոնք) կարող է (են) փոքրացվել իր(ենց) տեղագրական կամ կադաստրային քարտեզների բնօրինակ չափերից՝ կից ցուցադրելով առաջադրվող հուշարձանի սահմանները և պահպանական գոտին (եթե այդպիսին գոյություն ունի) հնարավորինս մեծ մասշտաբով:
Չափորոշիչ(ներ)ը, համաձայն որի (որոնց)՝ ներկայացվում է հուշարձանը (կետերով թվարկել չափորոշիչները) (տե՛ս գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը)	
Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքի մասին հայտարարության նախագիծ (տեքստում պետք է հստակ ներկայացվի, թե անվանակարգում ընդգրկվածներից ինչն է համարվում համաշխարհային բացառիկ արժեք՝ մոտավորապես 1-2 էջի ձևաչափով)	155-րդ պարբերությանը համապատասխան՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից. a) համառոտ նկարագրություն, b) չափորոշիչի հիմնավորում, c) ամբողջականության հիմնավորում (բոլոր հուշարձանների համար), d) (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացվող անվանակարգերի համար իսկության մասին հայտարարություն, e) պահպանության և կառավարման պահանջները: Ձևաչափը տե՛ս 10-րդ հավելվածում:
Տեղի լիազոր հաստատության/ գործակալության անվանումը և կոնտակտային տեղեկատվությունը	Կազմակերպության անվանումը Հասցե Հեռախոս Ֆաքս Էլ. փոստ Վեբ կայք

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար ներկայացված հուշարձաններ

Ծանոթություն: Անվանակարգի նախապատրաստման ընթացքում անդամ պետությունները պետք է օգտագործեն տվյալ ձևաչափը՝ ջնջելով բացատրական տեքստերը:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱԲ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
1. Հուշարձանի նույնականացումը	Երկրորդ բաժնի հետ միասին անվանակարգում ամենակարևոր բաժիններից է: Կոմիտեի համար ճշգրիտ հստակեցված պետք է լինեն հուշարձանի գտնվելու վայրը և դրա աշխարհագրական սահմանները: Սերիական անվանակարգերի դեպքերում անհրաժեշտ է ներմուծել աղյուսակ, որը կցուցադրի բաղադրիչի հատվածի անվանումը, շրջանը (եթե տարբեր է մյուս բաղադրիչների համար), կոորդինատները, տարածքը և պահպանական գոտին: Այլ դաշտեր նույնպես կարող են ավելացվել (հղում էջին կամ քարտեզի համարին և այլն), որոնք տարբերակում են մի քանի բաղադրիչներ:
1.a. Երկիրը (և անդամ պետության անվանումը, եթե տարբեր են)	
1.b. Նահանգը, մարզը կամ շրջանը	
1.c. Հուշարձանի անվանումը	This is the official name of the property that will appear in published material about World Heritage. It should be concise. Do not exceed 200 characters, including spaces and punctuation. In the case of serial nominations (see Paragraphs 137 -139 of the Operational Guidelines), give a name for the ensemble (e.g., Baroque Churches of the Philippines). Do not include the name of the components of a serial nomination, which should be included in a table as part of 1.d and 1.f. Սա հուշարձանի պաշտոնական անվանումն է, որը հայտնվելու է Համաշխարհային ժառանգության վերաբերյալ տպագրի նյութերում: Այն չպետք է գերազանցի 200 նիշը՝ ներառյալ միջակայքերը և կետադրությունը: Սերիական անվանակարգերի դեպքում (տե՛ս գործառնական ձեռնարկի 137-139-րդ պարբերությունները) խնդրում ենք ներկայացնել համալիրների անվանումները (օր.՝ Ֆիլիպինների բարոկկո եկեղեցիները): Աղյուսակի 1.d և 1.f հատվածներում ներառվելիք սերիական անվանակարգի բաղադրիչի անվանումը պետք չէ ընդգրկել:
1.d. Աշխարհագրական կոորդինատները	Այս հատվածում խնդրում ենք ներկայացնել լայնության և երկայնության կոորդինատները (վայրկյանի ճշգրտությամբ) կամ UTM կոորդինատները (10 մ ճշգրտությամբ) առաջադրվող հուշարձանի մոտավոր կենտրոնից: Այլ կոորդինատային համակարգերի կիրառումն արգելվում է: Կասկածանքների դեպքում խնդրում ենք խորհրդակցել քարտուղարության հետ: Սերիական անվանակարգերի դեպքերում խնդրում ենք ներկայացնել աղյուսակ յուրաքանչյուր բաղադրիչի անվամբ, դրա գտնվելու տարածքով (կամ նպատակահարմարության դեպքում ամենամոտ գտնվող քաղաքով), ինչպես նաև կենտրոնական կետի կոորդինատները: Ստորև ներկայացվում է կոորդինատի օրինակ՝ N 45° 06' 05" W 15° 37' 56" or UTM Zone 18 Easting: 545670 Northing: 4586750

Հ/հ	Բաղադրիչի անվանումը	Շրջան(ներ)ը/մարզ(եր)ը	Կենտրոնական կետի կոորդինատները	Անվանակարգում ներկայացված հուշարձանի բաղադրիչի տարածքը (հա)	Պահպանական գոտու տարածքը (հա)	Քարտեզի N°
001						
002						
003						
004						
Այլ						
Ընդհանուր տարածքը (հեկտարներով)				հա	հա	

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱԳ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
1.e. Առաջադրվող հուշարձանի և պահպանական գոտու սահմանները ներկայացնող քարտեզներ և պլաններ	Խնդրում ենք կցել տվյալ անվանակարգին և ստորև ցուցակագրել մասշտաբները և ամսաթվերը (i) Առաջադրվող հուշարձանի տեղագրական քարտեզների բնօրինակները պետք է ներկայացվեն հնարավորինս լայն մասշտաբով: Առաջադրվող հուշարձանի և պահպանական գոտու սահմանները պետք է հստակ սահմանված լինեն: Հատուկ պաշտպանության կարգավիճակ ունեցող գոտիների, որոնցից կարող է օգտվել հուշարձանը, սահմանները պետք է ներկայացված լինեն քարտեզի վրա և դրա մասին հիշատակում լինի պահպանության և կառավարման բաժնում: Սերիական անվանակարգերի պարագայում կարող է առաջանալ տարբեր քարտեզների պատրաստման անհրաժեշտություն (տե՛ս 1.d կետի աղյուսակը): Ներկայացվող քարտեզները պետք է ունենան հնարավորինս մեծ և կիրառման տեսանկյունից գործնական մասշտաբ՝ հարևանությամբ գտնվող այնպիսի տարրեր, ինչպիսիք են շինությունները և երթուղիները՝ նախանշելու նպատակով, ինչպես նաև հնարավորություն տալով սահմաններում և դրանց կից ցանկացած կառուցապատման ազդեցության հստակ գնահատում իրականացնելու համար: Համապատասխան մասշտաբի ընտրությունը կարևոր նշանակություն ունի առաջարկվող հուշարձանների սահմանները ցուցադրելու համար և կապված է առաջադրվող հուշարձանների տիպի հետ. մշակութային հուշարձանները պահանջում են կադաստրային քարտեզներ, մինչդեռ բնության հուարձանները կամ մշակութային տեղանքապատկերները՝ տեղագրական քարտեզներ (սովորաբար 1:25 000 մինչև 1:50 000 մասշտաբով) : Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել քարտեզների վրա սահմանը ցուցադրող գծերի լայնությանը, քանի որ լայն գծերը աղավաղում են հուշարձանի փաստացի սահմանները: Քարտեզները կարելի է ձեռք բերել http://whc.unesco.org/en/mapagencies հասցեից: Բոլոր հուշարձանները պետք է ունենան աշխարհագրական հղման հնարավորություն՝ առնվազն երեք կետի համար քարտեզի հակառակ կողմում կոորդինատների ամբողջական կազմով: Քարտեզները պետք է ունենան մասշտաբ, ուղղվածություն, առաջաձգություն, տվյալներ, հուշարձանների անվանումը և ամսաթիվը: Հնարավորության դեպքում քարտեզները անհրաժեշտ է ուղարկել գլանաձև վիճակում և ոչ թղթապանակի մեջ: Հնարավորության դեպքում աշխարհագրական թվային տվյալների ներկայացումը խրախուսվում է, եթե այն հարմար կլինի ներմուծել GIS (Աշխարհագրական տեղեկատվական համակարգ) համակարգի մեջ, ինչը անհարմար է տպագիր քարտեզների ներկայացման պարագայում: Սահմանազատումը (առաջադրվող հուշարձան և պահպանական գոտի) անհրաժեշտ է ներկայացնել վեկտորային ձևաչափով՝ կիրառելով ամենամեծ հնարավոր մասշտաբը: Անդամ պետությանը խորհուրդ է տրվում կապվել քարտուղարության հետ՝ այս տարբերակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար: (ii) Անդամ պետության տարածքում հուշարձանի գտնվելու վայրը ցուցադրող քարտեզ: (iii) Պլանները և հատուկ պատրաստված քարտեզները նույնպես կարող են օգտակար լինել և կարող են կցվել՝ հուշարձանի առանձնահատկությունները ներկայացնելու համար: Խորհրդատվական մարմիններին և Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամների համար կրկնօրինակելու և տրամադրելու գործընթացը հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է անվանակարգում նաև ներառել հիմնական քարտեզների պատկերային A4 չափով փոքրացնելու հնարավորությամբ ֆայլերը: Պահպանական գոտու բացակայության դեպքում անվանակարգային փաթեթը պետք է ընդգրկի հիմնավորում, թե ինչու չի պահանջվում պահպանական գոտի առաջադրվող հուշարձանի պատշաճ մակարդակով պաշտպանության համար:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
1.f. Ներկայացվող հուշարձանի տարածքը (հա) և առաջարկվող պահպանական գոտին (հա) Ներկայացված հուշարձանի տարածք __ հա Պահպանական գոտին _____ հա Ընդամենը _____ հա	Սերիական անվանակարգերի դեպքում (տե՛ս գործառնական ձեռնարկի 137-140-րդ պարբերությունները) խնդրում ենք ներմուծել բաղադրիչների անվանումները, գտնվելու վայրը (եթե տարբեր են, տարբեր բաղադրիչների դեպքում), կոորդինատները, արեալը և պահպանական գոտին: Սերիական անվանակարգերը պետք է օգտագործվեն՝ ցուցադրելու առաջարկվող առանձին տարածքների մասշտաբները և դրանց պահպանական գոտին(ները):
2. Նկարագրություն	
2.a. Հուշարձանի նկարագրությունը	Սույն բաժինը պետք է սկսվի առաջարկվող հուշարձանի նկարագրությամբ՝ առաջադրման օրվա դրությամբ: Անհրաժեշտ է հղում կատարել հուշարձանի բոլոր կարևոր առանձնահատկություններին: Մշակութային հուշարձանների պարագայում անհրաժեշտ է ներկայացնել, թե որ տարրերն են հուշարձանը կարևոր դարձնում մշակույթի տեսանկյունից: Դա կարող է ներառել որևէ հուշարձանի կամ հուշարձանների նկարագրությունը, դրանց ճարտարապետական ոճը, կառուցման տարեթիվը, նյութերը և այլն: Բաժնում անհրաժեշտ է նկարագրել նաև այնպիսի կարևոր ասպեկտներ, ինչպիսիք են՝ այգիները, զբոսայգիները և այլն: Ժայռապատկերներ ունեցող հուշարձանների դեպքում անհրաժեշտ է ներկայացնել ժայռապատկերների արվեստը շրջապատող տեղանքապատկերների հետ միասին: Պատմական քաղաքների կամ շրջանների դեպքերում կարևոր չէ նկարագրել յուրաքանչյուր շինությունը առանձին-առանձին, սակայն էական է, որ կարևոր նշանակության հասարակական շինությունները նկարագրվեն առանձին, հաշվի առնվի տարածքի պլանավորումը կամ դասավորվածությունը, դրա փողոցային ձևվածքը և այդպես շարունակ: Բնության հուշարձանների պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել դրանց ֆիզիկական ատրիբուտները, երկրաբանությունը, բնակիչները, օրգանիզմատեսակները և բնակչության քանակը, ինչպես նաև այլ կարևոր բնապահպանական առանձնահատկություններ և գործընթացներ: Հնարավորություն դեպքում անհրաժեշտ է ներկայացնել օրգանիզմատեսակների ցուցակը, իսկ վտանգված կամ էնդեմիկ տաքսոնների գոյությունը պետք է ընդգծել: Բնական ռեսուրսների շահագործման մեթոդները և ուղղվածություններն անհրաժեշտ է նկարագրել: Մշակութային տեղանքապատկերների դեպքում անհրաժեշտ է նկարագրությունը շարադրել վերոգրյալ դրույթներին համապատասխան: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել մարդու և բնության փոխներգործությանը: 1-ին բաժնում (հուշարձանի նույնականացում) նախանշված առաջարկվող հուշարձանն ամբողջությամբ անհրաժեշտ է նկարագրել: Սերիական անվանակարգերի պարագայում (տե՛ս գործառնական ձեռնարկի 137-140-րդ պարբերությունները) անհրաժեշտ է առանձին-առանձին նկարագրել յուրաքանչյուր բաղադրիչը:
2.b. Պատմությունը և զարգացումը	Խնդրում ենք նկարագրել, թե ինչպես է հուշարձանը հասել ներկայիս տեսքին, պայմանները, ինչպես նաև այն էական փոփոխությունները, որը կրել է՝ ներառյալ վերջերս կատարված կոնսերվացման աշխատանքների պատմությունը: Այս բաժնում անհրաժեշտ է ընդգրկել շինարարական աշխատանքների փուլերը՝ հուշարձանների, վայրերի, շինությունների կամ շինությունների խմբերի դեպքերում: Հիմնական փոփոխությունները, ավերումները կամ վերականգնումները հուշարձանի կառուցման ավարտից հետո նույնպես պետք է նկարագրվեն: Բնության հուշարձանների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել մարդկության պատմության կամ նախապատմության կարևոր դեպքերի հետ կապակցվածության հանգամանքը, ինչը ազդել է հուշարձանի զարգացման (էվոլյուցիայի) վրա, ինչպես նաև դրա փոխներգործությունը մարդկության հետ: Այն ներառում է հուշարձանի և որսորդության, ձկնորսության կամ գյուղատնտեսության համար բնական պաշարների օգտագործման մեջ փոփոխությունները, կամ այն փոփոխությունները, որոնք առաջացել են կլիմայի փոփոխության, հեղեղների, երկրաշարժերի կամ այլ բնական աղետների հետևանքով: Նման տեղեկատվությունը պահանջվում է նաև մշակութային տեղանքապատկերների դեպքերում, որտեղ մարդկային գործունեության պատմության բոլոր ասպեկտները պետք է ներկայացված լինեն:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
3. Ընդգրկման հիմնավորում²⁶	Հիմնավորումն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ բաժիններում: Այս բաժնում պետք է հստակ ներկայացվի, թե ինչու է հուշարձանը համարվում «Համաշխարհային բացառիկ արժեք»: Անվանակարգի այս բաժինը պետք է լրացվի հատուկ ուշադրություն դարձնելով գործառնական ձեռնարկի պահանջներին: Այն չպետք է ընդգրկի հուշարձանի կամ դրա կառավարման մասին մանրամասն նկարագրություն, որը վերաբերում է մյուս բաժիններին, սակայն պետք է ծածկի հիմնական ասպեկտները, որը վերաբերում է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի սահմանմանը:
3.1.a. Համառոտ նկարագրություն	Համառոտ նկարագրությունը պետք է բաղկացած լինի (i) փաստացի տեղեկատվության և (ii) որակական հատկանիշների ամփոփումներից: Փաստացի տեղեկատվության ամփոփագիրը ներառում է աշխարհագրական և պատմական համատեքստը, ինչպես նաև հիմնական առանձնահատկությունները: Որակական հատկանիշների ամփոփագիրը որոշում կայացնելու լիազորություն ունեցող մարմիններին և հանրությանը պետք է ներկայացնի պահպանության կարիք ունեցող Համաշխարհային բացառիկ արժեքի ներուժը, ինչպես նաև ընդգրկի Համաշխարհային բացառիկ արժեքին լրացնող ատրիբուտների ամփոփագիրը, որը անհրաժեշտ է պահպանել, կառավարել և դիտանցել: Ամփոփումը պետք է բխի ներկայացված բոլոր չափորոշիչներից՝ ըստ անվանակարգի հիմնավորման հերթականության: Համառոտ նկարագրությունը պետք է ներառի ամբողջական անվանակարգի և ընդգրկման հիմնավորումը:
3.1.b. Չափորոշիչները, համաձայն որոնց՝ առաջարկվում է ընդգրկել ցանկում (և ընդգրկման այս չափորոշիչների հիմնավորումները)	Տե՛ս գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը: Յուրաքանչյուր մեջբերված չափորոշիչի համար ներկայացրեք առանձին հիմնավորում: Համառոտ ներկայացրեք, թե ինչպես է հուշարձանը համապատասխանում այդ չափորոշիչներին, համաձայն որոնց՝ ներկայացվել է հուշարձանը (անհրաժեշտության դեպքում՝ հղում կատարեք անվանակարգի «նկարագրություն» և «համեմատական վերլուծություն» բաժիններին, սակայն չկրկնօրինակեք այդ բաժինների տեքստերը) և յուրաքանչյուր չափորոշիչի համար նկարագրեք առնչվող ատրիբուտները:
3.1.c. Ամբողջականության հայտարարություն	Ամբողջականության հայտարարությունը պետք է ապացուցի, որ հուշարձանը համապատասխանում է գործառնական ձեռնարկի II.D բաժնում ամբողջականության համար սահմանված պահանջներին, որոնք նկարագրված են բավականին մանրամասն: Գործառնական ձեռնարկով սահմանված է գնահատում անցկացնելու անհրաժեշտությունը, համաձայն որի՝ հուշարձանը՝ - ներառում է իր Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտելու բոլոր տարրերը, - ունի համապատասխան չափ՝ երաշխավորելու հուշարձանի կարևորությունն արտահայտող առանձնահատկությունների և գործընթացների ամբողջական ներկայացումը, - միջամտության արդյունքում չի կրել վնասակար ազդեցություն և/կամ չի արժանացել արհամարհական վերաբերմունքի (88-րդ պարբերություն): The Operational Guidelines provide specific guidance in relation to the various World Heritage criteria, which is important to understand (Paragraphs 89–95). Գործառնական ձեռնարկը ներկայացնում է որոշակի հրահանգավորում՝ Համաշխարհային ժառանգության տարբեր չափորոշիչների ընկալման համար (89-95-րդ պարբերություններ):

²⁶ See also paragraphs 132 and 133.

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
3.1.d. Իսկության մասին հայտա-րարություն (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացվող անվանակարգերի համար)	Իսկության մասին հայտարարությունը պետք է ցույց տա, որ հուշարձանը բավարարում է գործառնական ձեռնարկի II.D բաժնում իսկության համար սահմանված և բավականին մանրամասնությամբ նկարագրված պայմանները: Այս բաժնում պետք է ամփոփվի այնպիսի տեղեկատվություն, որը կարող է լրացուցիչ մանրամասնություններով ընդգրկվել անվանա-կարգի 4-րդ բաժնում (նաև այլ բաժիններում), ինչպես նաև չպետք է վերարտադրի այդ բաժիններում ընդգրկված մանրամասները: Իսկությունը կիրառվում է միայն մշակութային հուշարձանների պարագայում և «խառը» հուշարձանների մշակութային հատվածի նկատմամբ: Գործառնական ձեռնարկով սահմանված է, որ «հուշարձանները բավարարել են իսկության հետ կապված պահանջները (ինչպես ճանաչվել են առաջարկվող անվանակարգային չափորոշիչներով), եթե դրանք մշակութային արժեքները ճշմարտացի և արժանահավատորեն ներկայացված են առանձնահատկությունների բազմազանության միջոցով» (82-րդ պարբերություն): Գործառնական ձեռնարկով առաջարկվում է, որ ստորև ներկայացվող ատրիբուտները կարող են դիտարկվել որպես Համաշխարհային բացառիկ արժեքը փոխանցող կամ արտահայտող՝ - ձևը և դիզայնը, - հումքը և նյութերը, - օգտագործումը և նշանակությունը, - ավանդույթները, մեթոդները և կառավարման համակարգը, - գտնվելու վայրը և շրջապատը, - լեզուն և ոչ նյութական մշակույթի այլ ձևեր, - հոգևոր և ֆիզիկական ընկալում, - այլ ներքին/արտաքին գործոններ:
3.1.e. Պահպանության և կառավարման պահանջները	Այս բաժնում անհրաժեշտ է ներկայացնել, թե ինչպես են կատարվում պահպանության և կառավարման հետ կապված պահանջները՝ հուշարձանի Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքը ժամանակի ընթացքում պահպանելու նպատակով: Այն պետք է ներկայացնի մանրամասներ և պահպանության ու կառավարման ընդհանուր նկարագրությունը և հուշարձանի պահպանության հետ կապված երկարաժամկետ ակնկալիքները: Բաժինը պետք է ամփոփի անվանակարգի 5-րդ բաժնում առավել մանրամասն ներկայացված տեղեկատվությունը (հնարավոր է նաև 4-րդ և 6-րդ բաժիններինը նույնպես), սակայն չպետք է վերարտադրի դրանցում ներկայացված մանրամասները: Բաժնի տեքստն առաջին հերթին պետք է հստակ ներկայացնի պահպանության և կառավարման շրջանակները: Այն պետք է ընդգրկի պահպանության անհրաժեշտ մեխանիզմները, կառավարման համակարգերը և/կամ կառավարման պլանները (արդյոք դրանք հաստատված են կամ գտնվում են հաստատման փուլում), որոնք ուղղված են Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտների պաշտպանությանը, ինչպես նաև հուշարձանին ուղղված սպառնալիքներ կանխմանը և խոցելի կողմերի չեզոքացմանը: Դրանք կարող են ներառել արդյունավետ և ուժեղ իրավական պաշտպանությունը, հստակ փաստաթղթավորված կառավարման համա-կարգը՝ ներառյալ հարաբերությունների սահմանումը հիմնական շահագրգիռ կողմերի կամ օգտագործող խմբերի միջև, համարժեք մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայությունը, հանրառեզակման համար հիմնական պահանջները (որտեղ կիրառելի է), ինչպես նաև մոնիթորինգի արդյունավետ և արագ իրականացումը: Երկրորդ հերթին այս բաժնում պետք է ներկայացվեն հուշարձանի պահպանության և կառավարման հետ կապված մարտահրավերները և անհրաժեշտ է նշել, թե ինչպես են դրանք չեզոքացվելու երկարաժամկետ ռազմավարության միջոցով: Նպատակարարհարմար է անդրադառնալ մեծ կարևորություն ունեցող սպառնալիքներին, իսկության և/կամ ամբողջության մեջ արձանագրված խոցելի կողմերին և բացասական փոփոխություններին, ինչպես նաև սահմանել, թե ինչպես են պատրաստվում պաշտպանության և կառավարման միջոցով չեզոքացնել այդ խոցելի կողմերը և սպառնալիքները ու մեղմացնել բացասական փոփոխությունների ազդեցությունը: Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից որպես պաշտոնապես ճանաչված Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքի մասին հայտարարության այս բաժինը պետք է ներկայացնի հուշարձանի երկարաժամկետ պահպանության և կառավարման կապակցությամբ անդամ պետության ստանձնած պարտավորություններից ամենակարևորները:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ԶԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
	Գույք
3.2. Համեմատական վերլուծություն	Հուշարձանը պետք է համեմատվի նմանատիպ հուշարձանների հետ՝ լինեն դրանք ընդգրկված Համաշխարհային ժառանգության ցանկում, թե՛ ոչ: Այս համեմատությունը պետք է ուրվագծի ներկայացվող հուշարձանի հատկանիշները, որոնք նման են մյուս հուշարձաններին, և պատճառները, թե ինչու է առաջարկվող հուշարձանն առանձնանում: Համեմատական վերլուծության նպատակն է ներկայացնել առաջարկվող հուշարձանի կարևորությունը և՛ ազգային, և՛ միջազգային համատեքստում (տե՛ս 132-րդ պարբերությունը): Համեմատական վերլուծության նպատակն է, գոյություն ունեցող թեմատիկ ուսումնասիրությունների միջոցով ցույց տալ, որ ցանկում կա համապատասխան տեղ, իսկ սերիական անվանակարգերի հուշարձանների դեպքում՝ դրանց բաղկացուցիչների ընտրության հիմնավորում:
3.3. Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքի մասին առաջարկվող հայտարարությունը	Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պաշտոնական հատարարություն է, որն ընդունվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու ժամանակ: Երբ Համաշխարհային ժառանգության կոմիտեն համաձայնություն է տալիս հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու վերաբերյալ, դրանով իսկ հաստատում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը, որտեղ ներկայացվում է, թե ինչու է հուշարձանը համարվում Համաշխարհային բացառիկ արժեք, ինչպես է համապատասխանում չափորոշիչին, ամբողջականության պայմանները և իսկությունը (մշակութային հուշարձանների պարագայում) և ինչպես է բավարարում պահպանության և կառավարման պահանջները, որոնք ուղղված են Համաշխարհային բացառիկ արժեքը երկարաժամկետ հեռանկարում պահպանելուն: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է լինի համառոտ և ներկայացված ստանդարտ ձևաչափով: Այն պետք է աջակցի հուշարձանի արժեքի հանրահռչակմանը, լինի ուղեցույց պահպանվածության վիճակի գնահատման համար և տեղեկույթ տրամադրի պահպանության և կառավարման մասին: Կոմիտեի կողմից մեկ անգամ հաստատվելուց հետո Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է ցուցադրվի հուշարձանի տարածքում և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի վեբ կայքում: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության հիմնական բաժիններն են՝ a) համառոտ նկարագրություն, b) չափորոշիչի հիմնավորում, c) ամբողջականության հիմնավորում (թուր հուշարձանների համար), d) (i) մինչև (vi) չափորոշիչներով ներկայացվող անվանակարգերի համար իսկության մասին հայտարարություն, e) պահպանության և կառավարման պահանջները:
4. Պահպանվածության վիճակը և հուշարձանի վրա ազդող գործոնները	
4.a. Պահպանվածության ներկայիս վիճակը	Բաժնում ներկայացված տեղեկատվությունը տրամադրում է ելակետային տվյալներ առաջարկվող հուշարձանի պահպանվածության վիճակը հետազայում մոնիթորինգի ենթարկելու համար: Այս բաժնում ներկայացվելիք տեղեկատվությունը պետք է լինի հուշարձանի ֆիզիկական վիճակի, Համաշխարհային բացառիկ արժեքին ուղղված որևէ սպառնալիքի և պահպանվածությանն ուղղված միջոցառումների մասին (տե՛ս 132-րդ պարբերությունը): Օրինակ՝ պատմական քաղաքներում կամ տարածքներում, կառույցներում, հուշարձաններում կամ այլ շինություններում հիմնական կամ աննշան վերանորոգման աշխատանքների անհրաժեշտությունը, ինչպես նաև վերջերս իրականացված կամ ակնկալվող հիմնանորոգման նախագծերի մասշտաբը և ժամանակահատվածը պետք է նախանշվեն: Բնության հուշարձանների պարագայում պետք է ներկայացվեն օրգանիզմատեսակների զարգացման միտումների կամ էկո համակարգի ամբողջականության մասին տվյալներ: Դա կարևոր է, քանի որ անվանակարգային փաթեթը հետազայում օգտագործվելու է հուշարձանի վիճակում հետագա փոփոխություններին հետևելու համար: Հուշարձանի պահպանվածության վիճակը մոնիթորինգի ենթարկելու համար օգտագործվող ինդիկատորների և վիճակագրական ելակետային տվյալների համար տե՛ս 6-րդ բաժինը:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱԺ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
4.b. Հուշարձանի վրա ազդող գործոնները	Այս բաժնում պետք է ներկայացվի տեղեկատվություն հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա հնարավոր ազդեցություն ունեցող կամ սպառնացող բոլոր հնարավոր գործոնների վերաբերյալ: Այն պետք է նկարագրի նաև այն խոչընդոտները, որոնք կարող են ի հայտ գալ նման խնդիրը լուծելիս: Այս բաժնում թվարկված ոչ բոլոր գործոնները կարող են բնորոշ լինել բոլոր հուշարձաններին: Դրանք կողմնորոշիչ են և նպատակ ունեն աջակցելու անդամ պետությանը բացահայտելու յուրաքանչյուր առանձին հուշարձանին համապատասխանող գործոնները:
(i) Կառուցապատման հետ կապված ճնշումներ (օրինակ՝ միջամտություն, հարմարեցում, գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն)	Խնդրում ենք թվարկել հուշարձանի վրա ազդող կառուցապատման ճնշումները, օրինակ՝ քանդման, վերակառուցման կամ նորի կառուցման հետ կապված ազդեցությունները, գոյություն ունեցող շենքերի հարմարեցումը (ադապտացումը), որոնք կարող են վնասել դրանց իսկությունը և ամբողջականությունը, բնակավայրերի փոփոխությունը կամ քանդումը գյուղատնտեսության, անտառտնտեսության կամ արոտավայրերի միջավայրերում, կամ վատ կառավարվող զբոսաշրջության կամ այլ միջոցներով օգտագործումը, բնական ռեսուրսների ոչ պատշաճ մակարդակով կամ անհարկի շահագործումը, հանքափորության հետևանքով հասցված վնասները, էկզոտիկ տեսակների ներմուծումը, որի պատճառով կխաթարվեն բնական էկոլոգիական գործընթացները, հուշարձանների կամ հարակից տարածքներում բնակության նոր կենտրոնների կառուցումը, որը կարող է վնաս հասցնել դրանց կամ շրջապատող միջավայրին:
(ii) Շրջակա միջավայրի հետ կապված ճնշումներ (օրինակ՝ օդի աղտոտվածություն, կլիմայի փոփոխություն, անապատացում)	Խնդրում ենք թվարկել շրջակա միջավայրի վիճակի վատթարացման հետ կապված հիմնական աղբյուրները, որոնք ազդում են շինությունների, ֆլորայի և ֆաունայի վրա:
(iii) Բնական աղետներ և վտանգների կառավարում (երկրաշարժեր, ջրհեղեղներ, հրդեհներ և այլն)	Խնդրում ենք թվարկել այն աղետները, որոնք կանխատեսելի սպառնալիք են հուշարձանի համար և նշեք, թե ինչ քայլեր են ձեռնարկվում չկանխատեսված իրավիճակների հետ կապված պլանների մշակման ուղղությամբ, լինի դա հուշարձանի ֆիզիկական վիճակի պահպանության կամ անձնակազմի վերապատրաստման հետ կապված միջոցառումներ:
(iv) Պատասխանատու այցելություններ Համաշխարհային ժառանգության հուշարձաններ	Խնդրում ենք ներկայացնել հուշարձան կատարած այցելությունների վիճակը (հիմնականում մատչելի վիճակագրական տվյալներ, օգտագործման օրինակներ՝ ներառյալ գործողությունների կենտրոնացումը հուշարձանի հատվածներում, և այն գործողությունները, որոնք պլանավորված են ապագայի համար): Խնդրում ենք նկարագրել այցելությունների մակարդակները՝ հուշարձանը ցանկում ներառելու կամ այլ գործոնների հետ կապված: Խնդրում ենք մատնանշել հուշարձանի կարողությունները և թե ինչպես կարող է բարելավվել կառավարումը ներկայիս կամ ակնկալվող այցելուների թվաքանակը ընդունելու և կառուցապատման ճնշմանն առանց բացասական ազդեցության դիմագրավելու համար: Խնդրում ենք քննարկել նաև այցելությունների և վատ վերաբերմունքի հետևանքով հուշարձանի վիճակի վատթարացման հետ կապված հնարավոր տարբերակները՝ ներառյալ ազդեցությունը ոչ նյութական ատրիբուտների վրա:
(v) Հուշարձանի և պահպանական գոտու բնակիչների թվաքանակը Բնակչության ընդհանուր թիվը անվանակարգում ներկայացված հուշարձանի տարածքում՝ _____ պահպանական գոտում՝ _____ Ընդամենը՝ _____ Տարին _____	Խնդրում ենք տրամադրել անվանակարգում ներկայացված հուշարձանի և դրա պահպանական գոտու տարածքում ապրող բնակիչների թվաքանակի հետ կապված լավագույն վիճակագրական տվյալները և հաշվարկները: Խնդրում ենք նաև մատնանշել հաշվառման կամ կատարած հաշվարկի տարին:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
5. Հուշարձանի պահպանությունը և կառավարումը	Անվանակարգի այս բաժնում անհրաժեշտ է հստակ ներկայացնել օրենսդրական, կանոնակարգող, կառուցապատման, պլանավորման հետ կապված, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական միջոցառումները (տե՛ս գործառնական ձեռնարկի 132-րդ պարբերությունը) և գործող կառավարման պլանը կամ կառավարման այլընտրանքային համակարգը (գործառնական ձեռնարկի 108-118-րդ պարբերությունները), որն ուղղված է հուշարձանի պաշտպանմանը և կառավարմանը, ինչպես պահանջվում է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով: Այն պետք է դիտարկի քաղաքականության հետ կապված ասպեկտները, իրավական կարգավիճակը և պաշտպանիչ միջոցառումները, ինչպես նաև առօրյա վարչարարության և կառավարման գործնական կողմերը:
5.a. Սեփականություն	Խնդրում ենք մատնանշել հողի սեփականության հիմնական կատեգորիաները (ներառյալ պետական, մարզային, մասնավոր, համայնքային, ավանդական, սովորույթի վրա հիմնված և ոչ կառավարական սեփականություն և այլն):
5.b. Protective designation Պահպանական նշանակության անվանումները	Խնդրում ենք թվարկել հուշարձանի համապատասխան օրենսդրական, կանոնակարգման, կառուցապատման, պլանավորման, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական կարգավիճակը. օրինակ՝ ազգային կամ մարզային զբոսայգի, պատմական հուշարձան, ազգային օրենքի կամ սովորույթի պաշտպանության տակ գտնվող տարածք կամ այլ նշանակումներ: Խնդրում ենք մատնանշել նշանակումների և իրավական ակտ(եր)ի տարբերվելը, համաձայն որոնց՝ ապահովվել է կարգավիճակը: Եթե փաստաթուղթը հնարավոր չէ ներկայացնել անգլերենով կամ ֆրանսերենով, ապա նշված լեզուներով անհրաժեշտ է ներկայացնել գործառնական ամփոփումը՝ մատնանշելով հիմնական սահմանումները:
5.c. Պաշտպանական միջոցառումների իրականացման միջոցները	Խնդրում ենք նկարագրել, թե ինչպես է փաստացի գործում 5.b կետի օրենսդրական, կանոնակարգման, կառուցապատման, պլանավորման, ինստիտուցիոնալ և/կամ ավանդական կարգավիճակով սահմանված պաշտպանությունը:
5.d. Քաղաքապետարանի կամ մարզպետարանի, որի տարածքում գտնվում է առաջարկվող հուշարձանը, կողմից հաստատված պլան (օրինակ՝ մարզային կամ տեղական պլան, կոնսերվացման պլան, զբոսաշրջության զարգացման պլան)	Խնդրում ենք թվարկել համաձայնեցված պլանները, որոնք ընդունվել են սահմանված ժամկետներում պատասխանատու գործակալության կողմից: Համապատասխան սահմանումները պետք է ամփոփվեն այս բաժնում: Պլանի կրկնօրինակը, որպես փաստաթղթի հավելված, պետք է ներկայացվի, ինչպես սահմանված է 7.b կետում: Եթե պլանները հնարավոր չէ ներկայացնել անգլերենով կամ ֆրանսերենով, ապա նշված լեզուներով անհրաժեշտ է ներկայացնել գործառնական ամփոփումը՝ մատնանշելով հիմնական սահմանումները:
5.e. Հուշարձանի կառավարման պլան կամ կառավարման այլընտրանքային համակարգ	Ինչպես նշված է գործառնական ձեռնարկի 132-րդ պարբերությունում, համարժեք կառավարման պլանի կամ կառավարման համակարգի առկայությունն էական նշանակություն ունի և պետք է ներկայացվի անվանակարգում: Ակնկալվում է նաև, որ կառավարման պլանի կամ կառավարման համակարգի արդյունավետ կատարման երաշխիքները նույնպես կներկայացվեն: Կայուն զարգացման սկզբունքները պետք է ինտեգրվեն կառավարման համակարգի մեջ: Կառավարման պլանի կամ կառավարման համակարգի փաստաթղթերի կրկնօրինակները, որպես փաստաթղթի հավելված, ֆրանսերենով կամ անգլերենով պետք է ներկայացվեն, ինչպես սահմանված է 7.b կետում: Եթե պլանները հաստատված չեն անգլերենով կամ ֆրանսերենով, ապա նշված լեզուներով անհրաժեշտ է ներկայացնել սահմանումների մանրամասն նկարագրությունը: Խնդրում ենք ներկայացնել անվանակարգին կից ներկայացվող կառավարման պլանների անվանումները, ամսաթիվը և հեղինակը: Կառավարման պլանի կամ փաստաթղթավորված կառավարման մանրամասն վերլուծությունը նույնպես պետք է ներկայացվի: Առաջարկվում է նաև ներկայացնել կառավարման պլանի իրականացման ժամանակացույցը:
5.f. Աղբյուրները և ֆինանսավորման մակարդակները	Խնդրում ենք մատնանշել աղբյուրները և ֆինանսավորման մակարդակը, որը հատկացվում է հուշարձանին տարեկան կտրվածքով: Կարող է նաև պահանջվել, որպեսզի ներկայացվի համապատասխանության կամ այլ մատչելի ռեսուրսների հաշվարկը՝ մատնանշելով թերությունները կամ դեֆիցիտը կամ այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ է ցուցաբերել աջակցություն:

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱԺ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
5.g. Կոնսերվացման և կառավարման տեխնիկայի փորձաքննության և դասընթացների կազմակերպման աղբյուրները	Խնդրում ենք մատնանշել, թե ազգային մարմինների կողմից հուշարձանի համար ինչպիսի փորձաքննության կամ այլ կազմակերպական ծառայություններ կարող են մատուցվել:
5.h. Այցելուների համար նախատեսված ծառայությունների մատուցման միջոցները և ենթակառուցվածքը	Այս բաժնում անհրաժեշտ է նկարագրել ծառայությունների մատուցման և հուշարձանի տարածքում գտնվող մատչելի ենթակառուցվածքները, որոնք համապատասխանում են հուշարձանի պահպանության և կառավարման պահանջներին: Այստեղ պետք է սահմանվեն, թե ինչպես հարմարությունները և ծառայությունները կապահովեն հուշարձանի արդյունավետ և ամբողջական ներկայացումը՝ այցելուների համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով՝ ներառյալ հուշարձանից օգտվելու ապահով և մատչելի հնարավորությունը: Պետք է քննության առնվել այցելուների համար նախատեսված հարմարությունները, որոնք կարող են ներառել թարգմանությունը/բացատրությունը (նշանները, ուղիներ, ծանուցումներ կամ հրատարակություններ, ուղեկցողներ), հուշարձանին նվիրված թանգարան/ցուցադրություն, այցելուների կամ բացատրությունների կենտրոն և/կամ թվային տեխնոլոգիաների և ծառայությունների հնարավոր օգտագործում (գիշերակաց, ռեստորան, ավտոկայանատեղի, զուգարաններ, փնտրման և փրկման կենտրոն և այլն):
5.i. Հուշարձանի ներկայացմանը և հանրահռչակմանն ուղղված քաղաքականությունները և ծրագրեր	Այս բաժինն առնչվում է կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներին, որոնք վերաբերում են մշակութային և բնության հուշարձանների հանրահռչակմանը և փոխանցմանը գալիք սերունդներին: Անդամ պետություններին առաջարկվում է ներկայացնել տեղեկատվություն անվանակարգում առաջարկվող հուշարձանի ներկայացմանը և հանրահռչակմանն ուղղված քաղաքականությունների և ծրագրերի մասին:
5.j. Անձնակազմի մակարդակները և փորձաքննություն (մասնագիտական, տեխնիկական սպասարկում)	Խնդրում ենք նշել պահանջվող մասնագիտությունները և որակավորումները հուշարձանի կառավարումը լավագույնս կազմակերպելու համար՝ ներառյալ այցելությունները և դասընթացների կազմակերպումը:
6. Մոնիթորինգ	Անվանակարգի այս բաժինը նախատեսված է ներկայացնելու հուշարձանի պահպանվածության վիճակը, որը կարող է կրկին ուսումնասիրվել կանոնավոր կերպով՝ ժամանակի ընթացքում միտումները բացահայտելու համար:
6.a. Կոնսերվացման վիճակի չափման հիմնական ինդիկատորները	Խնդրում ենք աղյուսակով ներկայացնել այն հիմնական ինդիկատորները, որոնք ընտրվել են ամբողջ հուշարձանի պահպանվածության վիճակը չափելու համար (տես 4.a բաժինը): Անհրաժեշտ է նաև նշել ինդիկատորների վերանայման պարբերականությունը և այդ գրառումների պահպանման վայրը: Դրանք կարող են ներկայացնել հուշարձանի կարևոր ասպեկտներից մեկը և հնարավորինս առնչվել Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությանը (տես 2.b բաժինը): Հնարավորության դեպքում դրանք կարող են արտահայտվել թվային տարբերակով, իսկ որտեղ հնարավոր չէ՝ կարող են կրկնվել, այսպես օրինակ՝ լուսանկարելով նույն կետից: Լավ ինդիկատորների օրինակներն են՝ (i) օրգանիզմատեսակների թվաքանակը կամ հիմնական տեսակների կազմը բնության հուշարձանի տարածքում, (ii) պատմական քաղաքում կամ շրջանում հիմնանորոգում պահանջող շենքերի տոկոսը, (iii) կոնսերվացման հիմնական ծրագրի ավարտին հասնելու համար հաշվարկված հավանական տարիների քանակը, (iv) առանձին շենքի կամ շենքի տարրի կայունությունը կամ շարժման աստիճանը, (v) հուշարձանի վրա կատարած միջամտությունների չափաբաժինը՝ ավելացում կամ նվազեցում:

Ինդիկատորը	Պարբերականությունը	Գրանցումների գտնվելու վայրը

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍ	
6.b. Վարչարարական անհրաժեշտ միջոցներ հուշարձանի մոնիթորինգի համար	Խնդրում ենք տրամադրել մոնիթորինգի համար պատասխանատու գործակալության(ների) անվանում(ները) և կոնտակտային տեղեկատվությունը՝ համաձայն 6.a կետի:	
6.c. Նախկինում իրականացված դիտանցումների արդյունքները	Խնդրում ենք համառոտ թվագրել հուշարձանի պահպանվածության վիճակի վերաբերյալ նախկինում պատրաստած զեկույցները, ներկայացնել մեջբերումներ և հղումներ կատարել հրատարակված նյութերին (օրինակ՝ միջազգային պայմանագրերի և ծրագրերի շրջանակում ներկայացված հաշվետվությունները՝ Ռամսար, ՄԱԲ):	
7. Փաստաթղթավորում	Անվանակարգի այս բաժինը ստուգման ցուցակ է, որն անհրաժեշտ է ներկայացնել անվանակարգն ամբողջական դարձնելու համար:	
7.a. Լուսանկարներ և աուդիովիզուալ նյութերի ցանկ և լիազորման ձևաչափ	Անդամ պետությունը պետք է ներկայացնի համապատասխան քանակի և վերջին ժամանակահատվածում կատարած լուսանկարներ (տպագիր նյութեր, սլայդեր, և, հնարավորության դեպքում, էլեկտրոնային տարբերակներ, տեսանյութեր և օդային լուսանկարներ), որպեսզի հնարավոր լինի ներկայացնել հուշարձանի ընդհանուր տեսքը: Սլայդերը պետք է լինի 35 մմ ձևաչափի, իսկ լուսանկարները՝ յոթ ձևաչափով և առնվազն 300 dpi խտությամբ: Ֆիլմային նյութ ներկայացնելու դեպքում առաջարկվում է տրամադրել Beta SP ձևաչափով՝ որակն ապահովելու նպատակով: Նյութը պետք է ուղեկցվի պատկերների ցանկով, լուսանկարներով և ստորև սահմանված աուդիովիզուալ լիազորման ձևաչափով: Առնվազն մեկ լուսանկար է անհրաժեշտ տրամադրել՝ վեր կայքում հուշարձանը ներկայացնելու համար: Անդամ պետություններին առաջարկվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ին գրավոր և անվճար, ոչ բացառիկ հիմունքներով իրավունք տալ տարածելու, հասարակության հետ հաղորդակցվելու, հրատարակելու, վերարտադրելու, օգտագործելու ցանկացած ձևով և աջակցությամբ՝ ներառյալ թվային, բոլոր պատկերները և լիազորել այդ իրավունքները երրորդ կողմին: Ոչ բացառիկ հիմունքներով իրավունքի տրամադրումը հակասության մեջ չի մտնում մտավոր սեփականության իրավունքի հետ (լուսանկարչի իրավունքը/տեսանյութի ռեժիսորը կամ հեղինակային իրավունքի սեփականատերը, եթե տարբեր են) և երբ պատկերները տարածվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, ապա լուսանկարչի/տեսանյութի ռեժիսորի վճարները կատարվում են, եթե դրանք հստակ ներկայացված են ձևաչափում: Իրավունքների փոխանցումից ստացված բոլոր հնարավոր շահույթները փոխանցվում են Համաշխարհային ժառանգության հիմնադրամին:	

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԻԴԻՈՎԻԶՈՒԱԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԼԻԱԶՈՐՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

Հ/հ	Ձևաչափը (սլայդ/ տպագիր/ վիդեո)	Անվանումը	Լուսա- նկարի կատարման ամսաթիվը (ամիս/ տարի)	Լուսա- նկարիչ/ տեսանյութի ռեժիսոր	Հեղինակա- յին իրավունքի սեփականատերը (եթե տարբերվում է լուսանկարչից/ տեսանյութի ռեժիսորից)	Հեղինակային իրավունքի սեփականա- տիրոջ ոնտակտային տվյալները (անուն, հասցե, հեռ./ֆաքս և էլ. փոստ)	Ոչ բացառիկ հիմունքներով իրավունքի փոխանցումը

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԶԱՓ	ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՔՍՏ
7.b. Պահպանական նշանակության տեքստեր, հուշարձանի կառավարման պլանի կամ փաստաթղթավորված կառավարման համակարգի կրկնօրինակներ կամ հուշարձանին առնչվող այլ պլանների մեջբերումներ	Խնդրում ենք կցել բոլոր տեքստերը, որոնք մատնանշվել են 5.b, 5.d և 5.e բաժիններում:
7.c. Հուշարձանին վերաբերող ցանկի կամ դրա վերաբերյալ կատարած վերջին գրառման ձևը և ամսաթիվը	Խնդրում ենք ներկայացնել տեղեկատվություն՝ տրամադրելով հուշարձանին վերաբերող ցանկի կամ դրա վերաբերյալ կատարած վերջին գրառումների ձևի և ամսաթվի մասին: Միայն օգտվելու տեսանկյունից հասանելի գրառումները պետք է նկարագրվեն:
7.d. Ցուցակների, գրառումների և արխիվների պահպանման հասցեները	Խնդրում ենք տրամադրել գրառումները, պահպանող գործակալությունների անունները և հասցեները (շենքեր, հուշարձաններ, ֆլորայի կամ ֆաունայի տեսակներ):
7.e. Գրականություն	Խնդրում ենք ներկայացնել հրատարակումների հղումները՝ օգտագործելով ստանդարտ մատենագրության ձևաչափը:
8. Լիազոր մարմնի կոնտակտային տվյալներ	Այս բաժնում ներկայացված տեղեկատվությունը թույլ կտա քարտուղարությանը տրամադրել Համաշխարհային ժառանգությանը վերաբերող նյութեր կամ այլ հրատարակումներ:
8.a. Պատրաստող Անուն Պաշտոն Հասցե Քաղաք, մարզ, երկիր Հեռախոս Ֆաքս Էլ. փոստ	Խնդրում ենք ներկայացնել անվանակարգը պատրաստող անհատի անունը, հասցեն և այլ կոնտակտային տեղեկատվություն: Եթե հնարավոր չէ տրամադրել էլ. փոստի հասցեն, ապա ներկայացվող տեղեկատվությունը պետք է պարունակի ֆաքսի համարը:
8.b. Տեղի լիազոր հաստատությունը/ գործակալությունը	Անհրաժեշտ է տրամադրել գործակալության, թանգարանի, հաստատության, համայնքի կամ կառավարչի անունը, որը պատասխանատու է հուշարձանի կառավարման համար: Եթե հաշվետվություն ներկայացնող հաստատությունը ազգային գործակալություն է, ապա խնդրում ենք ներկայացնել կոնտակտային տվյալները:
8.c. Տեղական այլ հաստատություններ	Խնդրում ենք ներկայացնել թանգարանների, այգեյունների կենտրոնների և զբոսաշրջային գրասենյակների անունների, հասցեների, հեռախոսների, ֆաքսերի և էլ. փոստերի ամբողջական տվյալները, որոնք պետք է ստանան Համաշխարհային ժառանգության պարբերականի անվճար օրինակները Համաշխարհային ժառանգությանն առնչվող միջոցառումների և հարցերի մասին:
8.d. Պաշտոնական վեբ կայք http:// Կոնտակտային անուն Էլ. փոստ	Խնդրում ենք ներկայացնել անվանակարգում առաջարկվող հուշարձանի գոյություն ունեցող որևէ պաշտոնական վեբ կայքի հասցեն: Խնդրում ենք նաև մատնանշել՝ արդյո՞ք ապագայում պլանավորվում է նման վեբ կայքերի ստեղծումը, ինչպես նաև տրամադրել կոնտակտային անձի տվյալները և էլ. փոստը:
9. Անդամ պետության անունից ստորագրություն	Անվանակարգը պետք է ստորագրի անդամ պետության անունից ստորագրելու իրավունքով պաշտոնապես լիազորված անձը:



ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Տվյալ հավելվածն ընդգրկում է՝

- A. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻԿՕՄՕՍ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
- B. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ IUCN-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
- C. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՂԱՆՔԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք ուսումնասիրել գործառնական ձեռնարկի 143-157-րդ պարբերությունները:

A. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻԿՕՄՕՍ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Մշակույթի հուշարձանների անվանակարգերի գնահատման նպատակով ԻԿՕՄՕՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ) ղեկավարվում է գործառնական ձեռնարկով (տե՛ս 148-րդ պարբերությունը):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից ներկայացված նոր անվանակարգերի ամբողջականության ստուգումից հետո այն անվանակարգային փաթեթները, որոնք դիտարկվել են ամբողջական, փոխանցվում են ԻԿՕՄՕՍ-ին, որտեղ նրանք ուսումնասիրվում են ԻԿՕՄՕՍ-ի Համաշխարհային ժառանգության ստորաբաժանման կողմից: Այս կետից անվանակարգը ներկայացրած անդամ պետության հետ սկսվում են երկխոսությունը և խորհրդակցությունը, որոնք կարող են շարունակվել ամբողջ գնահատման գործընթացի ժամանակ: ԻԿՕՄՕՍ-ը ի նպաստ կոնի լավագույն ջանքերն իր տրամադրության տակ եղած միջոցները հավասարաչափ, խնայողաբար և արդյունավետ բաշխելու համար՝ անվանակարգեր ներկայացրած բոլոր անդամ պետությունների հետ երկխոսության հնարավորությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

ԻԿՕՄՕՍ-ի գնահատման գործընթացը ներառում է 1-ին պատկերում ներկայացված բոլոր փուլերը:

1. **Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու պահանջ**

Երբ առաջանում է լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանման անհրաժեշտություն, ԻԿՕՄՕՍ-ը սկսում է իր երկխոսությունն անդամ պետությունների հետ առաջ քաշված պահանջների բավարարման նպատակով: Գործընթացը ներառում է նամակագրություն, երկկողմ հանդիպումներ, հեռախոսազրույցներ կամ հաղորդակցման այլ ձևեր, որոնց շուրջ համաձայնություն ձեռք կբերվի ԻԿՕՄՕՍ-ի և շահագրգիռ անդամ պետության միջև:

2. **Աշխատանքային ուսումնասիրություններ**

Յուրաքանչյուր անվանակարգ գնահատվում է թվով մինչև տասը փորձագետների կողմից, ովքեր գիտելիքներ ունեն հուշարձանի աշխարհա-մշակութային համատեքստի վերաբերյալ, և ովքեր կարող են խորհրդատվություն տրամադրել առաջադրվող հուշարձանի «Համաշխարհային բացառիկ արժեքի մասին»: Սա ԻԿՕՄՕՍ-ի անդամակցության, դրա ազգային և միջազգային կոմիտեների շրջանակներում կամ տարբեր մասնագիտական ցանցերի ու հաստատությունների հետ կապ ունեցող փորձագետների կողմից «գրադարանային» քննության նախաձեռնություն է:

3. **Այցելություններ հուշարձաններ**

Դրանք իրականացնում են կառավարման, կոնսերվացման և իսկության ոլորտներում յուրաքանչյուր հուշարձանի մասով գործնական փորձառություն ունեցող փորձագետները: Այդ մասնագետների ընտրության գործընթացի կազմակերպումը հնարավոր է դառնում ԻԿՕՄՕՍ-ի ցանցն ամբողջությամբ օգտագործելու միջոցով: Խորհրդատվությունը հայցվում է այնպիսի միջազգային գիտական կոմիտեներից և առանձին անդամներից, որոնց հետ ԻԿՕՄՕՍ-ն ունի գործընկերության մասին պայմանագիր, ինչպիսիք են՝ Արդյունաբերական ժառանգության պահպանության միջազգային կոմիտեն, Լանդշաֆտային ճարտարապետների միջազգային ֆեդերացիան, Ժամանակակից շարժման հուշարձանների և վայրերի կոնսերվացման և փաստաթղթավորման միջազգային կոմիտեն:

Տեղում այցելություններ իրականացնելու համար փորձագետների ընտրության հարցում ԻԿՕՄՕՍ-ի քաղաքականությունը կայանում է տարածաշրջանից մասնագետ ընտրելուն, որտեղ գտնվում է առաջադրվող հուշարձանը. նրանք պարտադիր չէ, որ լինեն բարձրակարգ ակադեմիական փորձագետներ: Ակնկալվում է, որ նրանք ի վիճակի կլինեն խոսելու հուշարձանի կառավարիչների հետ հավասար մասնագիտական հենքի վրա և կկազմեն տեղեկացված գնահատումներ կառավարման պլանների, կոնսերվացման պրակտիկայի, այցելությունների կառավարման վերաբերյալ: Նրանք ապահովվում են մանրամասն հրահանգավորմամբ, որոնք ներառում են համապատասխան տեղեկատվություն անվանակարգային փաթեթներից: Նրանց այցելությունների ժամկետները և ծրագրերը համաձայնեցվում են անդամ պետության հետ, որոնցից պահանջվում է ապահովել, որ ԻԿՕՄՕՍ-ի գնահատման առաքելություններին հնարավորինս ցածր հատկազիր տրվի զանգվածային լրատվամիջոցների շահագրգռվածության պատճառով: ԻԿՕՄՕՍ-ի փորձագետներն իրենց զեկույցները հուշարձանների գործնական ասպեկտների վերաբերյալ ներկայացնում են խորհրդապահական մակարդակով և կարող են իրենց մեկնաբանությունները ներկայացնել անվանակարգի այլ ասպեկտների վերաբերյալ:

3.bis. Տեղեկատվության այլ աղբյուրներ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոններից, համալսարաններից և գիտահետազոտական ինստիտուտների նման այլ համապատասխան հաստատություններից նույնպես կարելի է խորհրդատվություն հայցել գնահատման գործընթացի ժամանակ, որոնք ցուցակագրած կներկայացվեն գնահատման զեկույցում:

4. ԻԿՕՄՕՍ-ի հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն

ԻԿՕՄՕՍ-ի Համաշխարհային ժառանգության հանձնաժողովը ձևավորված է ԻԿՕՄՕՍ-ի առանձին՝ աշխարհի բոլոր տարածաշրջանները ներկայացնող անդամներից, ովքեր ունեն համապատասխան արհեստավարժություն և փորձ մշակութային ժառանգության ոլորտում: Հանձնաժողովի անդամներից ոմանք աշխատում են ամրագրված ժամանակահատվածով, մինչդեռ մյուսները նշանակվում են մեկ տարով՝ ելնելով քննության առնվելիք առաջադրվող հուշարձանների առանձնահատկություններից: ԻԿՕՄՕՍ-ը կարող է որպես հանձնաժողովի անդամ ներառել որոշ փորձագետների, ովքեր անցյալում ներգրավված են եղել անդամ պետությունների պատմության ոլորտներում, սակայն չեն հանդիսանում Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ: Այս փորձագետները աշխատում են իրենց անձնական և մասնագիտական կարողություններից ելնելով:


Հանձնաժողովը գումարվում է երկու անգամ. առաջին հանդիպումը գումարվում է դեկտեմբերին, իսկ երկրորդը՝ մարտին: Առաջին հանդիպման ընթացքում հանձնաժողովը գնահատում է յուրաքանչյուր անվանակարգը՝ հիմք ընդունելով բաժնի փորձագետների և հուշարձան կատարած գործողությունների արդյունքների մասին զեկույցները:

Հանձնաժողովի աշխատանքի նպատակը անվանակարգերի վերաբերյալ ընդհանուր համաձայնեցած առաջարկությունների մշակումն է:

Հանձնաժողովի առաջին նիստի ընթացքում կարող են ընդունվել ընդհանրական առաջարկություններ որոշ անվանակարգերի վերաբերյալ, մինչդեռ մյուսների համար անդամ պետության հետ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով երկխոսության կամ անվանակարգի հանդեպ որդեգրված մոտեցման ճշգրտումների անհրաժեշտություն կարող է առաջանալ: Եթե հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ անվանակարգում բացակայում է համաշխարհային բացառիկ արժեքի ներուժը, ապա ԻԿՕՄՕՍ-ը կապվում է անդամ պետության հետ այս փուլում: Կարգավիճակը և գնահատման գործընթացին առնչվող հարցադրումներն ուրվագծող և լրացուցիչ տեղեկատվություն պահանջող յուրաքանչյուր անվանակարգի համար կոնվենցիայի աշխատանքային լեզուներից որևէ մեկով պատրաստված համառոտ միջանկյալ զեկույցը ներկայացվում է առաջադրող անդամ պետություններին հունվարին, իսկ պատճենը՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնին՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախագահողին փոխանցելու համար:

Հանձնաժողովի երկրորդ նիստի ընթացքում իրականացվում է այն անվանակարգերի գնահատումը, որոնց շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել՝ ելնելով լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունից կամ անդամ պետության հետ ունեցած քննարկումների արդյունքներից: Հանձնաժողովի երկրորդ նիստից հետո վերջնականացվում են բոլոր գնահատումների տեքստերը և ուղարկվում Համաշխարհային ժառանգության կենտրոն՝ անդամ պետություններին փոխանցելու նպատակով: Հանձնաժողովի անդամների անունները և որակավորումները ներկայացվում են Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից, որոնք հրապարակվում են ԻԿՕՄՕՍ-ի կայքէջում:

ԻԿՕՄՕՍ-ի գնահատումները ներկայացնում են Համաշխարհային բացառիկ արժեքի մասին գնահատումը՝ ներառյալ չափորոշիչի կիրառման, ամբողջականության և իսկության պահանջների, պաշտպանության, կառավարման և պահպանվածության օրենսդրական համապատասխանության վիճակի վերաբերյալ, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության կոմիտեի՝ ընդգրկելու վերաբերյալ վերջնական առաջարկությունների նախագիծը:



B. ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ IUCN-Ի ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. IUCN-ը (Բնության և բնական պաշարների կոնսերվացման միջազգային միություն) ղեկավարվում է գործառնական ձեռնարկով (տե՛ս 148-րդ պարբերությունը) բնության հուշարձանների անվանակարգերը գնահատելիս: Գնահատման գործընթացը (տե՛ս 2-րդ պատկերը) ներառում է հինգ բաղադրիչ:

- (i) Տվյալների հավաքագրում: Համաշխարհային ժառանգության կենտրոնից անվանակարգային փաթեթը ստանալուն պես հուշարձանի վերաբերյալ կազմվում է ստանդարտացված վերլուծություն՝ օգտագործելով Պաշտպանվող տարածքների վերաբերյալ համաշխարհային շտեմարանը և IUCN-ի այլ գլոբալ շտեմարաններն ու թեմատիկ ուսումնասիրությունները: Այն կարող է ներառել կենսաբազմազանության արժեքների մասին ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրի՝ Աշխարհի կոնսերվացման մոնիթորինգային կենտրոնի հետ գործընկերությամբ իրականացված համեմատական վերլուծությունները: Տվյալների վերլուծության հիմնական հայտնաբերումները քննարկվում են անդամ պետության հետ գնահատման առաքելության և գործընթացի հաջորդ փուլերի ընթացքում:
- (ii) Արտաքին ուսումնասիրություն: Անվանակարգային փաթեթն ուղարկվում է անվանակարգի առարկան հանդիսացող հուշարձանից և/կամ դրա արժեքներից գիտակ անկախ փորձագետների ուսումնասիրությանը, ովքեր IUCN-ի մասնագիտական հանձնաժողովների օգնությամբ IUCN-ի գործընկերակազմակերպությունների փորձագետ անդամներն են: IUCN-ի գրասենյակային ուսումնասիրությունների ընթացքում օգտագործվող փաստաթղթերը հասանելի են IUCN-ի կայքէջում՝ www.iucn.org/worldheritage հասցեով:
- (iii) Հուշարձանի գնահատման առաքելություն: IUCN-ի մեկ կամ երկու համապատասխան որակավորում ունեցող փորձագետներ գործուղվում են առաջադրված հուշարձաններից յուրաքանչյուրը՝ հստակեցնելու տարածքի մանրամասները, գնահատելու կառավարումը և քննարկելու անվանակարգը համապատասխան լիազոր մարմինների և շահագրգիռ կողմերի հետ: IUCN-ի փորձագետները, ովքեր ընտրվել են կոնսերվացման և բնության պատմության, ինչպես նաև կոնվենցիայի վերաբերյալ համաշխարհային ընկալման գիտելիքների պատճառով, սովորաբար հանդիսանում են IUCN-ի պաշտպանված տարածքների հարցերով համաշխարհային հանձնաժողովի փորձառու անդամները: (դաշտային տեսչությունները իրականացվում են ԻԿՕՄՍՈՒ-ի հետ որոշակի դեպքերում՝ տե՛ս ստորև ներկայացվող C հատվածը): IUCN-ի դաշտային գնահատման առաքելությունների արդյունքների մասին հաշվետվությունների ձևաչափը հասանելի է IUCN-ի կայքէջում՝ www.iucn.org/worldheritage հասցեով:
- (iv) Տեղեկատվության այլ աղբյուրներ: IUCN-ը օգտագործում է լրացուցիչ գրականություն և կարող է տեղի հասարակական կազմակերպություններից, համայնքներից, տեղաբնիկներից և այլ անվանակարգում ներկայացված շահագրգիռ կողմերից ստանալ մեկնաբանություններ: Գործին վերաբերող դեպքերում IUCN-ը կարող է նաև համակարգել Ռամսարի կոնվենցիայի, Մարդու և կենսաբազմազանության ծրագրի և Գեոպարկերի համաշխարհային ցանցի նման այլ միջազգային կոնսերվացման գործիքակազմերի կիրառումը, ինչպես նաև խորհրդակցել համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ՝ անհրաժեշտությունից ելնելով:
- v) IUCN-ի Համաշխարհային ժառանգության ուսումնասիրության հանձնաժողով: IUCN-ի Համաշխարհային ժառանգության ուսումնասիրության հանձնաժողովի կազմը հաստատվել է IUCN-ի գլխավոր տնօրենի կողմից՝ ապահովելու IUCN-ին՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեի խորհրդատվական մարմին, բարձրակարգ և անկախ տեխնիկական և գիտական խորհրդատվությամբ, ինչպես նաև ռազմավարական խորհրդատվությամբ՝ Համաշխարհային ժառանգության հարցերի IUCN-ի գործունեության ընթացքում IUCN-ի ծրագրի միջոցով: Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի առաջադրանքներն իրականացվում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու նպատակով առաջադրված բնության և խառը հուշարձանների բոլոր անվանակարգերի պահանջկոտ գնահատման միջոցով՝ հանգեցնելով յուրաքանչյուր նոր անվանակարգերի վերաբերյալ IUCN-ի դիրքորոշման մասին հանձնաժողովի առաջարկությունների ընդունմանը՝ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի գործառնական ձեռնարկով հաստատված պահանջներին համապատասխան: Հանձնաժողովը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու համար ներկայացված մշակութային տեղանքապատկերների վերաբերմամբ իր մեկնաբանությունները ներկայացնում է ԻԿՕՄՍՈՒ-ին: Գնահատման գործընթացում հանձնաժողովը գումարվում է առնվազն երկու անգամ. առաջին հանդիպումը՝ դեկտեմբերին (1-ին տարի), իսկ երկրորդը՝ մարտ/ապրիլին (2-րդ տարի):

Հանձնաժողովը կազմված է IUCN-ի բարձրաստիճան անձանցից, IUCN-ի հանձնախմբի անդամներից և հրավիրված փորձագետներից, ովքեր ընտրվել են Համաշխարհային ժառանգության ոլորտում IUCN-ի իրականացրած աշխատանքների վերաբերյալ իրենց բարձրակարգ փորձառության, ճանաչված առաջադեմ փորձագիտության և գիտելիքների շնորհիվ:

Այն կարող է որպես հանձնաժողովի անդամ ներառել որոշ փորձագետների, ովքեր անցյալում ներգրավված են եղել անդամ պետությունների պատվիրակություններում, սակայն չեն հանդիսանում Համաշխարհային

Ժառանգության կոմիտեի անդամ: Այս փորձագետներն աշխատում են իրենց անձնական և մասնագիտական կարողություններից ելնելով: IUCN-ի համաշխարհային ժառանգության հանձնաժողովը ուսումնասիրում է դաշտային գնահատումների բոլոր զեկույցները (և, սովորաբար, լսում է գործողված խմբի հաշվետվություններն ուղիղ), ուսումնասիրողների մեկնաբանությունները, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրի Աշխարհի կոնսերվացման մոնիթորինգային կենտրոնի ներկայացրած և այլ վերլուծություններ, ինչպես նաև հետնապատկերային նյութերը, նախքան յուրաքանչյուր առաջադրվող հուշարձանի համար IUCN-ի գնահատման տեքստի վերջնականացումը: IUCN-ի համաշխարհային ժառանգության հանձնաժողովի անդամակցության պայմանները, տեխնիկական առաջադրանքը և աշխատանքային մեթոդները մատչելի են IUCN-ի կայքէջում և ներկայացվում են Համաշխարհային ժառանգության կոմիտեին:

Յուրաքանչյուր գնահատման զեկույց ներկայացնում է համառոտ ամփոփագիր առաջադրվող հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերյալ, այլ նմանատիպ հուշարձանների հետ (Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների և այլ պահպանվող տարածքներ) համաշխարհային համեմատական վերլուծությունը և ամբողջականության ու կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Այն ավարտվում է չափորոշիչի կիրառման գնահատմամբ և Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացված հստակ առաջարկությամբ: Գնահատման գործընթացում ընդգրկված փորձագետների անուններն ընդգրկվում են գնահատման վերջնական զեկույցում, բացառությամբ այն փորձագետների, ովքեր ներկայացրել են խորհրդարվական ուսումնասիրություններ:

IUCN-ը քննարկումներ է ունենում անդամ պետության/պետությունների հետ առաջադրման գործընթացի բոլոր փուլերում: IUCN-ը ի նպաստ կղնի լավագույն ջանքերն իր տրամադրության տակ եղած միջոցները հավասարաչափ, խնայողաբար և արդյունավետ բաշխելու համար՝ անվանակարգեր ներկայացրած բոլոր անդամ պետությունների հետ երկխոսության հնարավորությունը առավելագույնի հասցնելու համար: Երկխոսությունը մեկնարկում է գնահատման գործընթացի սկզբից, առավելագույնի է հասնում IUCN-ի Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի դեկտեմբերին գումարած հանդիպումից հետո և ներառում է հետևյալ դրույթները.

- i) նախքան գնահատման առաքելությունը IUCN-ը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկատվություն անվանակարգում հստակեցում պահանջող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կապվել անդամ պետության հետ գնահատման առաքելության նախապատրաստման համար:
- ii) Նախքան գնահատման գործուղում մեկնելը IUCN-ի խումբը հնարավորություն է ունենում տեղում անդամ պետության ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի հետ մանրամասն քննարկումներ կազմակերպելու համար:
- iii) Գնահատման առաքելությունից հետո IUCN-ը կարող է քննարկել գործողված խմբի կողմից բացահայտված հիմնախնդիրները և պահանջել անդամ պետությունից ներկայացնելու լրացուցիչ տեղեկատվություն:
- iv) Համաշխարհային ժառանգության հանձնաժողովի առաջին հանդիպումից հետո (սովորաբար գումարվում է դեկտեմբերին) IUCN-ը քննարկում է հանձնաժողովի բարձրացրած հիմնախնդիրները և պահանջում է անդամ պետությունից ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն: Կարգավիճակը և գնահատման գործընթացին առնչվող հարցադրումներն ուրվագծող և լրացուցիչ տեղեկատվություն պահանջող յուրաքանչյուր անվանակարգի համար կոնվենցիայի աշխատանքային լեզուներից որևէ մեկով պատրաստված համառոտ միջանկյալ զեկույցը ներկայացվում է առաջադրող անդամ պետությանը/ներին, իսկ պատճենը՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնին Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախագահողին փոխանցելու համար: Քննարկումները կամ խորհրդակցությունները կազմակերպվում են կամ հեռուստախորհրդակցության և/կամ հանդիպումների կազմակերպման միջոցով՝ ըստ կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության:

Իր գնահատման ընթացքում IUCN-ը հաշվի է առնում անդամ պետության Համաշխարհային ժառանգության կենտրոն պաշտոնապես գրավոր և սահմանված վերջնաժամկետներում ներկայացրած տեղեկատվությունն ամբողջությամբ (տե՛ս գործառնական ձեռնարկի 148-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, անվանակարգի հարցով շահագրգիռ ցանկացած կողմ ցանկացած փուլում ազատ է կապվել IUCN-ի հետ՝ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

IUCN-ը մշտապես հաշվի է առնում անվանակարգի վերաբերյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի նախկինում ընդունած որոշումները, որոնք վերաբերում են կոմիտեի կողմից դրանք մերժելուն կամ լրամշակման ուղարկելուն, կամ թե կոմիտեի՝ քաղաքականության դրույթների մասով դիրքորոշման ընդունմանը:

Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված հուշարձանների անվանակարգերի կրկին ներկայացման, ընդլայման և սահմանների փոփոխությունների դեպքերում IUCN-ը դիտարկում է նաև

նախկինում Համաշխարհային ժառանգության կոմիտեին զեկուցված հուշարձանի պահպանվածության վիճակի բոլոր հիմքերը: IUCN-ը Համաշխարհային ժառանգության կոմիտեի ուշադրությունը կարող է հրավիրել հուշարձանի պահպանվածության վիճակին առնչվող ցանկացած կարևոր խնդրի վրա, որը բացահայտվել է գնահատման գործընթացի ժամանակ՝ պահպանվածության վիճակի մասին զեկույցի պատրաստման գործընթացի միջոցով:

Կենսաաշխարհագրական դասակարգման համակարգը՝ որպես համեմատության հենք

2. Գնահատումներում IUCN-ը կիրառում է Ուդվարդի «Աշխարհի կենսաաշխարհագրական շրջանները» (1975 թ.) համակարգի նման դասակարգման համակարգեր և աշխարհի ցամաքային, ջրային և ծովային էկոշրջանների վերջին դասակարգումները՝ որպես համաշխարհային համեմատական վերլուծության մոտեցման կենտրոնական բաղադրիչ: Այս համակարգերը ներկայացնում են անկողմնակալ միջոցներ՝ առաջադրվող հուշարձանների և նմանատիպ կլիմայական ու բնապահպանական պայմաններում գտնվող հուշարձանների միջև համեմատական անցկացնելու համար:
3. Այնուամենայնիվ, շեշտադրվում է, որ այս կենսաբազմազանության դասակարգման համակարգերը կիրառվեն որպես համեմատության միջոց և չի ենթադրում, որ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հուշարձանները պետք է ընտրվեն միայն այս հենքի վրա կամ որ դասակարգման նման համակարգերը ընտրության գործընթացի հիմքն են: Ղեկավար սկզբունքն այն է, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է ունենան համաշխարհային բացառիկ արժեք:

Կոնսերվացման տեսանկյունից առաջնահերթ համարվող տարածքների բացահայտման համակարգերը

4. IUCN-ը կիրառում է նաև Բնության համաշխարհային հիմնադրամի գլոբալ 200 էկոշրջանների, Բնության համաշխարհային հիմնադրամի/IUCN-ի բույսերի բազմազանության կենտրոնի, Բնության պահպանության միջազգային միության թեժ կետերի և բարձր կենսաբազմազանությամբ վայրի տարածքների, Թռչունների պահպանության միջազգային կազմակերպության էնդեմիկ թռչունների շրջանների և կարևոր թռչունների միջազգային պահպանության, ինչպես նաև հիմնական կենսաբազմազանության տարածքների, ինչպիսիք են՝ Զրոյական բնաջնջման վայրերը, համակարգերը պահպանության կարիք ունեցող առաջնահերթ տարածքների բացահայտման նպատակով: Այս համակարգերը լրացուցիչ տեղեկատվություն են տրամադրում առաջադրվող հուշարձանների կենսաբազմազանության կոնսերվացման մասին: Այնուամենայնիվ, չի ենթադրվում, որ նմանատիպ վայրերը պետք է ընդգրկվեն Համաշխարհային ժառանգության ցանկում: Ղեկավար սկզբունքն այն է, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է ունենան համաշխարհային բացառիկ արժեք:

Երկրի մասին գիտությունների համար արժեք ունեցող վայրերի գնահատման համակարգ

5. Իրենց երկրաբանական արժեքի համար առաջադրված հուշարձանների գնահատման ընթացքում IUCN-ը խորհրդատվություններ է անցկացնում մի շարք մասնագիտացված կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի երկրի մասին գիտությունների ստորաբաժանումը, Երկրամակերևույթի գիտության միջազգային ասոցիացիան, Քարանձավագիտության միջազգային միությունը և Երկրաբանության միջազգային միությունը:

Գնահատման գործընթացում օգտագործված լրացուցիչ հրապարակումների մեջբերումը

6. Գնահատման գործընթացը ներառում է նաև IUCN-ի և պահպանության ոլորտում գործող մի շարք կազմակերպությունների կողմից հրապարակված հիմնական հրատարակած նյութերի ուսումնասիրությունը: Այս փաստաթղթերը միասին ներկայացնում են համակարգային վերլուծություններ, որոնք թույլատրում են աշխարհով մեկ տարածված պահպանվող տարածքների պահպանության կարևորության վերաբերյալ համեմատական անցկացնել: IUCN-ը նույնպես նախաձեռնել է մի շարք թեմատիկ ուսումնասիրությունների անցկացում՝ բնության Համաշխարհային ժառանգության ծածկույթի և Համաշխարհային ժառանգության ներուժ ունեցող հուշարձանների միջև բացակների հայտնաբերման նպատակով: Դրանք մատչելի են IUCN-ի կայքէջում՝ www.iucn.org/worldheritage հղմամբ:

IUCN-ը հիմնվում է նաև առաջադրված հուշարձաններին վերաբերող հղումների վրա՝ հուշարձանի արժեքների և կոնսերվացման հիմնախնդիրների վերաբերյալ ըմբռնողություն ստանալու նպատակով:

Մշակութային տեղանքապատկերների գնահատում (տես նաև 3-րդ հավելվածը)


7. IUCN-ը հետաքրքրվածություն ունի բազմաթիվ մշակութային հուշարձանների, հատկապես՝ մշակութային տեղանքապատկերների ավանակարգով ներկայացվածների հանդեպ: Այդ նպատակով կազմակերպությունն ընձեռած առիթից ելնելով՝ կմասնակցի առաջադրվող մշակութային տեղանքապատկերներում ԻԿՕՄՕՍ-ի հետ համատեղ դաշտային տեսչությունների իրականացմանը (տես ստորև ներկայացվող C հատվածը):

8. 3-րդ հավելվածի 11-րդ պարբերությամբ նախանշված առանձին մշակութային տեղանքապատկերների բնական որակական հատկանիշներից ելնելով՝ IUCN-ի գնահատումը վերաբերում է հետևյալ գործոններին.
- (i) բնական և կիսաբնապահպանական համակարգերի, ինչպես նաև ֆլորայի ու ֆաունայի վայրի օրգանիզմատեսակների պահպանություն,
 - (ii) կենսաբազմազանության պահպանություն կայուն օգտագործման համակարգերի շրջանում (ֆերմերություն, ավանդական ձկնաբուծարաններ, անտառտնտեսություն),
 - (iii) կայուն հողօգտագործում և ջրօգտագործում,
 - (iv) տեսարանային գեղեցկության խթանում,
 - (v) տարածքից դուրս հավաքածուներ, ինչպիսիք են՝ բուսաբանական այգիները կամ դենդրարիումը,
 - (vi) մարդկության և բնության փոխներգործության բացառիկ օրինակներ,
 - (vii) պատմական կարևոր հայտնագործություններ:

Ստորև ներկայացվող աղյուսակը սահմանում է վերոհիշյալի յուրաքանչյուրի դիրքը 3-րդ հավելվածում նշված մշակութային տեղանքապատկերների կատեգորիաների համատեքստում, դրանով իսկ նախանշելով, թե որտեղ և ինչ դիտարկում, ամենայն հավանականությամբ, կարող է ի հայտ գալ (դիտարկման բացակայությունը չի նշանակում, որ դա երբևիցե ի հայտ չի գալ)

Մշակութային տեղանքապատկերի տեսակը (տես նաև 3-րդ հավելվածը)	Բնական դիտարկումներ, որոնք ամենայն հավանականությամբ կարող են առնչվել գործին (տես վերը նշված 16-րդ պարբերությունը)						
Նախագծված տեղանքապատկեր					(v)		
Օրգանապես էվոլյուցիայի ենթարկված տեղանքապատկեր-շարունակական	(i)	(ii)	(iii)	(iv)			
Օրգանապես էվոլյուցիայի ենթարկված տեղանքապատկեր - բրածո	(i)					(vi)	
Ասոցացված տեղանքապատկեր							(vii)

Պատկեր 2: IUCN-ի գնչաստան ընթացակարգի ամփոփագիր



C. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Խառը հուշարձանների առաջադրումը

1. Բնության և մշակույթի չափորոշիչներով առաջադրված հուշարձանները պահանջում են IUCN-ի և ԻԿՕՄՕՍ-ի համատեղ այցելություն ներկայացված հուշարձան: Առաքելությունից հետո IUCN-ը և ԻԿՕՄՕՍ-ը պատրաստում են առանձին գնահատման զեկույցներ համապատասխան չափորոշիչով ներկայացված հուշարձանի համար, ինչպես նաև հնարավորինս ներդաշնակեցնում և համակարգում իրենց գնահատումները:

Մշակութային տեղանքապատկերներ

2. Որպես մշակութային տեղանքապատկերներ ներկայացված հուշարձանները ԻԿՕՄՕՍ-ի կողմից գնահատվում են (i) մինչև (vi) չափորոշիչներով (տես գործառնական ձեռնարկի 77-րդ պարբերությունը): IUCN-ը կարող է առաջադրված հուշարձանի մասով խորհրդատվություն տրամադրել բնության արժեքների, պահպանության և կառավարման վերաբերյալ, ինչպես նաև լուծում տալ ԻԿՕՄՕՍ-ի կողմից բարձրացված ցանկացած հարցին: Որոշ դեպքերում համատեղ առաքելությունը պահանջված է:

Բնության և մշակույթի միջև գոյություն ունեցող կապերը

3. Քանի որ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով առաջադրված հուշարձանները ներառում են բնության և մշակույթի փոխներգործության կառավարման ասպեկտներ, IUCN-ը և ԻԿՕՄՕՍ-ը քննարկում են նման փոխներգործությունները իրենց գնահատման գործընթացների ժամանակ:



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑԻ ՁԵՎԱԶԱՓԸ

- Պարբերական զեկույցի ձևաչափը հասանելի է <http://whc.unesco.org/en/periodicreporting> հասցեով:
 - Գործառնական ձեռնարկի 5-րդ բաժնում կարող եք ուղղորդում գտնել պարբերական զեկույցի կազմման վերաբերյալ:
 - Տեղեկատվության կառավարումը խթանելու նպատակով անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել իրենց զեկույցները ֆրանսերենով կամ անգլերենով և էլեկտրոնային, և տպագիր տարբերակներով հետևյալ հասցեով.
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն**
7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352
Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 4568 1876
Ֆաքս՝ +33 (0)1 4568 5570
Էլ. փոստ՝ wh-nominations@unesco.org

ՁԵՎԱԶԱՓ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Ընդհանուր պահանջները

- Անհրաժեշտ է ներկայացնել հնարավորինս ճշգրիտ և հասցեական տեղեկատվություն: Վերջինս պետք է չափելի լինի և ամբողջությամբ հիմնավորված հղումներով:
- Տեղեկատվությունը պետք է լինի համառոտ: Անհրաժեշտ է բացառել հուշարձանի վերաբերյալ և այնտեղ տեղի ունեցած դեպքերի պատմական ընդարձակ ակնարկների ներկայացումը, հատկապես, երբ դրանք հասանելի են ընթերցողի համար մատչելի հրատարակված աղբյուրներում:
- Տեսակետների արտահայտումը անհրաժեշտ է ներկայացնել՝ հղում կատարելով արտահայտած լիազոր մարմնին, ինչպես նաև ներկայացնել տեսակետը հիմնավորող ստուգելի փաստերը:
- Պարբերական զեկույցները պետք է ներկայացվեն A4 թղթով (210 մմ x 297 մմ)՝ A3 թղթի (297 մմ x 420 մմ) վրա կազմված քարտեզների և պլանների հետ միասին: Անդամ պետություններին կոչ է արվում պարբերական զեկույցների ամբողջական տեքստերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով ևս:

ԲԱԺԻՆ I

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

Անդամ պետություններից պահանջվում է ներկայացնել տեղեկատվություն կոնվենցիայի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված օրենսդրական և վարչարարական դրույթների վերաբերյալ՝ տվյալ բնագավառում պահանջվող փորձի մանրամասների հետ միասին (Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 29.1-ին հոդված):

I.1. Ներածություն

- Անդամ պետություն
- Կոնվենցիան վավերացնելու կամ ընդունելու տարեթիվը
- Զեկույցի պատրաստման համար պատասխանատու կազմակերպություն(ներ)ը կամ ստորաբաժան(ներ)ը
- Զեկույցի ամսաթիվը
- Անդամ պետության անունից ստորագրությունը:

I.2. Բնության և մշակութային հուշարձանների նույնականացումը

Այս բաժինը վերաբերում է կոնվենցիայի 3-րդ, 4-րդ և 11-րդ հոդվածներին, որոնք առնչվում են մշակութային և բնության հուշարձանների նույնականացմանը և Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար առաջադրմանը:

- Ազգային ցուցակներ

Ազգային նշանակության բնության և մշակութային ժառանգության ցուցակները ձևավորում են հնարավոր Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտման հիմքը:

Խնդրում ենք մատնանշել, թե որ հաստատություններն են պատասխանատու ազգային ցուցակների նախապատրաստման և թարմացման համար, և արդյոք և ինչ աստիճանի ցանկերը, ցուցակները և/կամ գրանցամատյանները գոյություն ունեն և վերջնականացված են տեղական, պետական և/կամ ազգային մակարդակներով:

- Նախնական ցանկեր

Կոնվենցիայի 11-րդ հոդվածը վերաբերում է անդամ պետության կողմից Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հարմար հուշարձանների ցանկերի ներկայացմանը: Բնության և մշակութային հուշարձանների նախնական ցանկերը պետք է պատրաստվեն գործառնական ձեռնարկի 62-69-րդ պարբերություններին և 2-րդ հավելվածին համապատասխան: Անդամ պետությունները պետք է զեկույցեն ձեռնարկած գործողությունների մասին՝ կոմիտեի 24-րդ նստաշրջանի (Կերնս, 2000 թ. դեկտեմբեր) և անդամ պետությունների 12-րդ զագաթնաժողովի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայան, 1999 թ.) որոշումները կատարելու

նպատակով, համաձայն որոնց՝ նախնական ցանկերը պետք է օգտագործվեն որպես պլանավորման գործիք Համաշխարհային ժառանգության ցանկի անհավասարության նվազեցման համար:

Խնդրում ենք ներկայացնել նախնական ցանկի ներկայացման կամ վերանայման ամսաթիվը՝ գրավոր առաջադրումից ի վեր: Անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել նախնական ցանկի կազմման և վերանայման գործընթացի նկարագրությունը, օրինակ՝ արդյո՞ք որևէ կոնկրետ հաստատության(ների) է վերապահվել Համաշխարհային ժառանգության հուշարձանների բացահայտման և սահմանազատման պատասխանատվությունը, արդյո՞ք տեղի մարմինները և բնակչությունը ներգրավված են եղել դրա նախապատրաստմանը: Եթե այո, ապա խնդրում ենք ներկայացնել որոշակի մանրամասներ:

(iii) Անվանակարգեր

Պարբերական զեկույցում պետք է թվարկել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար առաջադրված հուշարձանները: Անդամ պետություններին կոչ է արվում ներկայացնել գործընթացի վերլուծությունը, համաձայն որոնց՝ նախապատրաստվել են անվանակարգերը, տեղական մարմինների և բնակչության հետ համագործակցությունն ու աշխատակցությունը, պատճառաբանությունը, առաջացած խոչընդոտները և դժվարությունները գործընթացում, ինչպես նաև ստացված օգուտները և դասերը:

1.3. Բնության և մշակույթի հուշարձանների պահպանություն, կոնսերվացում և հանրահռչակում

Տվյալ կետը վերաբերում է կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներին, որոնցով անդամ պետությունն ընդունում է իր պարտականությունը Համաշխարհային ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և ապագա սերունդներին փոխանցելու հարցում, և որ արդյունավետ և գործունե միջոցներ են ձեռնարկվել այդ կապակցությամբ: Գործառնական ձեռնարկի 10-16-րդ պարբերությունները կարող են լրացուցիչ ուղղորդում տրամադրել անդամ պետության ստանձնած պարտականությունների մասով:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է հետևյալ քայլերի իրականացումը.

(i) Ընդհանուր քաղաքականության մշակում

Խնդրում ենք ներկայացնել տեղեկատվություն համայնքի կյանքում մշակութային և բնության ժառանգության հուշարձաններին որոշակի դերակատարություն տալու համար ընդունված քաղաքականությունների մասին: Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն անդամ պետության կամ համապատասխան լիազոր մարմինների կողմից Համաշխարհային ժառանգության հուշարձանների պաշտպանությունը պլանավորման համապարփակ ծրագրերում ներառելու եղանակների վերաբերյալ: Բարեկարգում պահանջող տարածքները և այդ ուղղությամբ անդամ պետության աշխատանքները անհրաժեշտ է նախանշել:

(ii) Պահպանության, կոնսերվացման և հանրահռչակման ծառայությունների կարգավիճակը

Խնդրում ենք ներկայացնել տեղեկատվություն անդամ պետության տարածքում գոյություն ունեցող ցանկացած ծառայության վերաբերյալ, որը ստեղծել կամ էապես բարեփոխվել է նախկինում ներկայացված զեկույցից հետո: Մասնավորապես ուշադրություն դարձնել այն ծառայություններին, որոնց նպատակն է բնության և մշակութային ժառանգության պահպանությունը, կոնսերվացումը և հանրահռչակումը՝ նշելով իրենց գործունեության համար համապատասխան աշխատակազմի և տրամադրության տակ գտնվող միջոցների առկայությունը: Բարեկարգում պահանջող տարածքները և այդ ուղղությամբ անդամ պետության աշխատանքներն անհրաժեշտ է նախանշել:

(iii) Գիտական և տեխնիկական ուսումնասիրությունները և հետազոտությունները

Գործառնական ձեռնարկի 215-րդ պարբերությունը կարող է լրացուցիչ ուղղորդում տրամադրել հետազոտությունների վերաբերյալ:

Խնդրում ենք թվարկել վերջին պարբերական զեկույցի ներկայացումից ի վեր նախաձեռնած կամ վերջնականացված գիտական և տեխնիկական ուսումնասիրությունները կամ ընդհանրական բնույթի հետազոտությունները, որոնցից կարող են օգտվել Համաշխարհային ժառանգության հուշարձանները:

Հուշարձանի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները կամ հետազոտական ծրագրերն անհրաժեշտ է ներկայացնել տվյալ ձևաչափի II.4-րդ բաժնին համապատասխան:

(iv) Բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և վերականգնման միջոցառումներ

Խնդրում ենք մատնանշել անդամ պետության կամ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված օրենսդրական կամ վարչական միջոցառումները, որոնք ուղղված են բնության և մշակութային ժառանգության բացահայտմանը, պահպանությանը, կոնսերվացմանը, հանրահռչակմանը և վերականգնմանը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի այնպիսի գործողություններին, որոնք առնչվում են շրջանում այցելուների կառավարմանը և զարգացմանը: Անդամ պետությանը կոչ է արվում նաև անհրաժեշտության դեպքում ներկայացնել ձեռք բերված փորձի հիման վրա քաղաքականության և/կամ իրավական բարեփոխումները: Կարևոր է նաև նշել,

թե մշակութային կամ բնության պահպանության ինչպիսի այլ կոնվենցիաներ է վավերացրել անդամ պետությունը, և նման դեպքերում ինչպես են դրանք համակարգվում ու ներառվում ազգային քաղաքականություններում և պլանավորման գործընթացում:

Խնդրում ենք նշել անդամ պետության կամ համապատասխան լիազոր մարմինների կողմից մշակութային և բնության ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և վերականգնման ուղղությամբ ձեռնարկված իրավական և վարչարարական գործողությունները: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել շրջանում այցելուների կառավարման և զարգացման ուղղված միջոցառումներին: Անդամ պետությանը կոչ է արվում նաև նախանշել անհրաժեշտ համարվող քաղաքականության և/կամ իրավական բարեփոխումների անցկացումը՝ հիմք ընդունելով ձեռք բերված փորձը: Առկայության դեպքում անհրաժեշտ է նաև հիշատակել անդամ պետության կողմից մշակութային և բնության ժառանգության պահպանության ուղղված միջազգային այլ կոնվենցիաների ստորագրման կամ վավերացման մասին, ինչպես է համակարգվում դրանց կիրարկումը և ինտեգրվում ազգային քաղաքականություններում ու պլանավորման գործընթացում:

Խնդրում ենք մատնանշել համապատասխան գիտական և տեխնիկական միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են անդամ պետության կողմից իր տարածքում մշակութային և բնության ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և վերականգնման համար:

Խնդրում ենք ներկայացնել անդամ պետության կամ համապատասխան մարմինների ֆինանսական ռեսուրսները մշակութային և բնության ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և վերականգնման համար:

Հրատարակումները, ինտերնետ կայքէջերը, ֆիլմերը, դրոշմանիշները, բացիկները, գրքերը և այլ միջոցներ կարող են վերագրվել ժառանգության հանրահռչակման տեղեկատվությանը:

Խնդրում ենք ներկայացնել բարեփոխման կարիք ունեցող ոլորտները, որոնց ուղղությամբ անդամ պետությունն աշխատում է:

(v) Ուսուցում

Գործառնական ձեռնարկի 213-214-րդ պարբերություններում կարելի է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ուսուցման վերաբերյալ:

Խնդրում ենք տեղեկատվություն տրամադրել ուսուցման և կրթական ռազմավարությունների վերաբերյալ, որոնք իրականացվել են անդամ պետության կողմից մասնագիտական կարողությունների զարգացման, ինչպես նաև մշակութային և բնության ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման, հանրահռչակման և վերականգնման ոլորտներում դասընթացների և կրթության կազմակերպման նպատակով ազգային կամ տարածաշրջանային կենտրոնների ստեղծման կամ զարգացման համար և նշել, թե ինչ մակարդակով են նման դասընթացները ինտեգրված գոյություն ունեցող համալսարանական և կրթական համակարգերում:

Խնդրում ենք ներկայացնել անդամ պետության կողմից ձեռնարկված քայլերը գիտական հետազոտությունների խրախուսման ուղղությամբ՝ որպես աջակցություն ուսուցման և կրթական միջոցառումների:

Խնդրում ենք ներկայացնել բարեփոխման կարիք ունեցող ոլորտները, որոնց ուղղությամբ անդամ պետությունն աշխատում է:

1.4. Միջազգային համագործակցություն և դրամահավաքություն

Տվյալ կետը վերաբերում է կոնվենցիայի 4-րդ, 6-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներին: Գործառնական ձեռնարկի 227-231-րդ պարբերությունները կարող են լրացուցիչ ուղղորդում հանդիսանալ սույն հարցի վերաբերյալ:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն այլ անդամ պետությունների հետ միասին իրենց տարածքներում գտնվող Համաշխարհային ժառանգության բացահայտման, պահպանության, կոնսերվացման և պահպանվածության ապահովման ուղղությամբ իրականացված համագործակցության մասին:

Նաև մատնանշեք, թե ինչպիսի գործողություններ են իրականացվել անդամ պետությունների տարածքում Համաշխարհային ժառանգությանն ուղղակի կամ անուղղակի վնաս հասցնելուց խուսափելու համար:

Արդյո՞ք ազգային, պետական կամ մասնավոր հիմնադրամներ կամ ասոցիացիաներ են ստեղծվել, և անդամ պետությունը աջակցել է դրանց դրամահավաքությանը կամ նվիրատվություններին՝ Համաշխարհային ժառանգության պաշտպանության նպատակով:

1.5. Կրթություն, տեղեկատվություն և հանրային իրազեկում

Տվյալ կետը վերաբերում է կրթական ծրագրերին առնչվող կոնվենցիայի 27-րդ և 28-րդ հոդվածներին: Գործառնական ձեռնարկի 9-րդ գլխում կարելի է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ խնդրո առարկայի վերաբերյալ:

Խնդրում ենք ներկայացնել անդամ պետության ձեռնարկած քայլերը մշակութային և բնության ժառանգության պահպանության և կոնսերվացման մասին որոշում կայացնելու լիազորություն ունեցող անձանց, հուշարձանի սեփականատերերի և հանրության շրջանում իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն բնակչության կողմից գնահատման և հարգանքի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկած կամ պլանավորված կրթության (նախնական, միջնակարգ և բարձրագույն) և տեղեկատվական ծրագրերի մասին, որոնք նպատակ ունեն հանրության լայն շրջանակներին իրազեկված պահել ժառանգությանը սպառնացող վտանգների և կոնվենցիային համապատասխան իրականացված գործողությունների մասին: Արդյո՞ք անդամ պետությունը մասնակցում է «Երիտասարդների մասնակցությունը Համաշխարհային ժառանգության պահպանության և հանրահռչակման» ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ ծրագրին:

Հուշարձանին բնորոշ գործողությունների և ծրագրերի մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել կառավարմանը վերաբերող II.4-րդ կետում՝ ստորև:

1.6. Եզրակացություններ և առաջարկվող գործողություններ

1-ին բաժնի յուրաքանչյուր կետի հիմնական եզրակացությունները անհրաժեշտ է ամփոփել և սյունակավորել իրականացման համար առաջարկվող գործողությունների, դրանց իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների և ժամանակահատվածի հետ միասին՝

- i) Հիմնական եզրակացություններ
- ii) Հետագայի համար առաջարկվող գործողություն(ներ)
- iii) Պատասխանատու ստորաբաժանում (ներ)
- iv) Իրականացման ժամանակահատվածը
- v) Միջազգային աջակցության կարիքները

Անդամ պետությունները նույնպես խրախուսվում են՝ իրենց առաջին ազգային զեկույցում վերլուծությունը ներկայացնելու համար, որը վերաբերում է կոնվենցիայի վավերացման գործընթացին, պատճառաբանությունը, առաջացած խոչընդոտներին և դժվարություններին, ինչպես նաև ստացված օգուտներին և դասերին:

ԲԱԺԻՆ II

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Պահպանվածության վիճակի մասին պարբերական զեկույցների նախապատրաստման գործընթացում անհրաժեշտ է ընդգրկել հուշարձանի առօրյա կառավարման համար պատասխանատու անձանց: Անդրսահմանային հուշարձանների պարագայում առաջարկվում է զեկույցները նախապատրաստել համատեղ կամ շահագրգիռ գործակալությունների միջև սերտ համագործակցությամբ:

Առաջին պարբերական զեկույցը պետք է թարմացնի բնօրինակ անվանակարգային փաստաթղթում ներկայացված տեղեկատվությունը: Համապատասխան զեկույցները պետք է կենտրոնանան ցանկացած փոփոխությունների վրա, որոնք կարող են տեղ գտնել նախկինում ներկայացված զեկույցից հետո:

Այդ իսկ պատճառով տվյալ բաժինը հաջորդում է անվանակարգային փաթեթին:

Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված հուշարձանների վիճակը քննարկվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից կանոնավոր պարբերականությամբ: Սույն ուսումնասիրությունները կենտրոնանում են առանձնահատուկ գործոնների և դիտարկումների վրա, որոնք հանգեցրել են հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում գրանցելուն: Դեռ անհրաժեշտ կլինի նախապատրաստել այդ հուշարձանների պահպանվածության վիճակի մասին ամբողջական զեկույց:

Տվյալ բաժինն անհրաժեշտ է լրացնել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված յուրաքանչյուր հուշարձանի մասով:

II.1. Ներածություն

- i) Անդամ պետությունը
- ii) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի անվանումը
- iii) Աշխարհագրական կոորդինատները վայրկյանի ճշգրտությամբ
- iv) Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու տարեթիվը
- v) Զեկույցի նախապատրաստման համար պատասխանատու կազմակերպություն(ներ)ը կամ ստորաբաժանում(ներ)ը
- vi) Զեկույցի տարեթիվը
- vii) Անդամ պետության անունից ստորագրությունը

II.2. Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն

Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանն ընդգրկելիս Համաշխարհային ժառանգության կոմիտեն մատնանշում է դրա Համաշխարհային բացառիկ արժեքը՝ որոշելով ընդգրկման չափորոշիչը: Իսնդրում ենք մատնանշել անդամ պետության ընդգրկման համար ներկայացված հիմնավորումը և չափորոշիչը, համաձայն որի՝ կոմիտեն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկեց հուշարձանը:

Անդամ պետության տեսանկյունից՝ արդյո՞ք Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունն արժանաբար արտահայտում է Համաշխարհային բացառիկ արժեքը, թե անհրաժեշտ է կրկին առաջադրում: Օրինակ՝ դա կարող է դիտարկվել բնության բացառիկ արժեքների համար ընդգրկված Համաշխարհային ժառանգության հուշարձանի մշակութային արժեքների ճանաչման համար և հակառակը: Դրա անհրաժեշտությունը կարող է առաջանալ Համաշխարհային ժառանգության կոմիտե տրված չափորոշիչի էական վերանայման կամ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի լավագույն բացահայտման կամ առանձնահատուկ գիտելիքների ի հայտ գալու արդյունքում:

Տվյալ բաժնում ուսումնասիրման մյուս հիմնահարցը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի և դրա պահպանական գոտու պատշաճ մակարդակով սահմանազատումն է՝ երաշխավորելու դրանում ներկայված Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությունը և կոնսերվացումը: Սահմանների վերանայումը կամ ընդլայնումը կարող է դիտարկվել ի պատասխան նման ուսումնասիրությունների:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության բացակայության կամ ոչ ամբողջական լինելու դեպքերում անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի անդամ պետությունն իր առաջին պարբերական զեկույցում առաջարկի նման հայտարարություն: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է արտացոլի այն չափորոշիչ(ներ)ը, որի (որոնց) հիման վրա կոմիտեն հուշարձանն ընդգրկել է Համաշխարհային ժառանգության ցանկում: Այն պետք է պատասխանի այնպիսի հարցերի, ինչպիսիք են. Ի՞նչ է ներկայացնում հուշարձանը, որը դարձնում է դրան բացառիկ, ինչպիսին է հուշարձանի փոխկապակցվածությունն իր միջավայրի հետ և այլն: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին նման հայտարարությունը քննության կառնվի խորհրդատվական մարմնի (մարմինների) կողմից և կփոխանցվի Համաշխարհային ժառանգության կոմիտեի հաստատմանը:

II.3. Իսկության և/կամ ամբողջականության մասին հայտարարություն

Տվյալ կետում անհրաժեշտ է ուսումնասիրել՝ արդյո՞ք պահպանվել են այն արժեքները, որոնց հիման վրա հուշարձանն ընդգրկվել է Համաշխարհային ժառանգության ցանկում, և որոնք արտահայտված են Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության մեջ՝ վերը նշված II.2-րդ կետի համաձայն:

Հուշարձանին վերաբերող իսկության և/կամ ամբողջականության հարցերը պետք է ընդգրկվեն այս կետում: Ինչպիսին է գրանցման ժամանակ հուշարձանի իսկության և/կամ ամբողջականության գնահատումը: Ինչպիսին է հուշարձանի իսկությունը և/կամ ամբողջականությունը ներկա պահին:

Իսնդրում ենք ուշադրություն դարձնել, որ հուշարձանի վիճակի առավել մանրամասն վերլուծությունը պահանջվում է II.6-րդ կետով՝ ելնելով դրա պահպանվածության վիճակի չափման հիմնական ինդիկատորներից:

II.4. Կառավարում

Տվյալ կետով անհրաժեշտ է զեկույցել ազգային, մարզային կամ քաղաքային մակարդակներով և/կամ պայմանագրային կամ ավանդական հիմունքներով պաշտպանիչ օրենսդրության կիրարկման և արդյունավետության, ինչպես նաև հուշարձանի կառավարման և/կամ պլանավորման իսկողության, հուշարձանի համար նախատեսված ապագա գործողությունների մասին՝ II.2-րդ կետով նկարագրված Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության նպատակով: Գործառնական ձեռնարկի III.D բաժնում ներկայացված է լրացուցիչ ուղղորդում:

Անդամ պետությունը պետք է զեկույցի սեփականության, իրավական կարգավիճակի և/կամ պայմանագրային կամ ավանդական պահպանությանն ուղղված միջոցառումների, կառավարման և կառավարման պլանների էական փոփոխությունների դեպքերի մասին՝ ելնելով ընդգրկման կամ վերջին պարբերական զեկույցի ներկայացման պահի դրության համեմատությունից: Նման դեպքերում անդամ պետությունից պահանջվում է պարբերական զեկույցներին կցել համապատասխան փաստաթղթեր՝ մասնավորապես իրավական տեքստերը, կառավարման պլանները և/կամ հուշարձանի կառավարման և շահագործման տարեկան աշխատանքային պլանները: Հուշարձանի համար ուղղակի պատասխանատվություն կրող գործակալության կամ անձի ամբողջական անունը և հասցեն պետք է ներկայացնել:

Անդամ պետությունը կարող է նաև ներկայացնել հուշարձանի կառավարման համար իր տրամադրության տակ գտնվող և պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև անձնակազմի վերապատրաստման համար անհրաժեշտ կարիքների գնահատումը:

Անդամ պետությանը կոչ է արվում նաև ներկայացնել գիտական ուսումնասիրությունների, հետազոտական

նախագծերի, կրթության, հանրային իրազեկման մասին տեղեկատվություն՝ ուղղակի հասցեագրված հուշարձանին, ինչպես նաև մեկնաբանել, թե ինչ աստիճանի են հուշարձանի արժեքները արդյունավետ հաղորդվում բնակիչներին, այցելուներին և հանրությանը: Ի թիվս այլ հարցերի՝ այստեղ կարող են քննարկվել հետևյալ թեմաները. արդյո՞ք հուշարձանում տեղադրված է ցուցատախտակ, որը մատնանշում է հուշարձանը Համաշխարհային ժառանգություն լինելու մասին, արդյո՞ք գոյություն ունեն կրթական ծրագրեր դպրոցների համար, արդյո՞ք գոյություն ունեն հատուկ միջոցառումներ և ցուցադրություններ, ինչպիսիք են թանկարժեքներից, այցելուների կենտրոններից, հուշարձանին նվիրված թանգարանից, արահետներից, ուղեցույցներից, տեղեկատվական նյութերից և այլ միջոցներից կարող են օգտվել այցելուները, ինչպիսիք դերակատարություն ունի Համաշխարհային ժառանգության նշումը այդ բոլոր ծրագրերում և գործողություններում:

Ավելին, անդամ պետությունը հրավիրվում է ներկայացնելու վիճակագրական տեղեկատվություն եկամուտների, այցելությունների թվաքանակի, անձնակազմի և անհրաժեշտ այլ հարցերի վերաբերյալ՝ հնարավորության դեպքում տարեկան կտրվածքով:

Անդամ պետությունը կարող է դիտարկել հուշարձանի կոնսերվացման օրենսդրական և վարչարարական դրույթների հիմնարար վերանայման հնարավորության հարցը՝ ելնելով հուշարձանի կառավարման վերանայման անհրաժեշտությունից:

II.5. Հուշարձանի վրա ազդող գործոններ

Խնդրում ենք նկարագրել, թե որքանով է հուշարձանը վտանգված որոշակի խնդիրներով և սպառնալիքներով: Տվյալ կետի համատեքստում քննարկվող գործոնները կարող են լինել անվանակարգի ձևաչափում ցուցակագրվածները, օրինակ՝ կառուցապատման ճնշումը, բնապահպանական ազդեցությունը, բնական աղետները և պատրաստվածությունը, այցելուների/զբոսաշրջության ազդեցությունը, բնակիչների թվաքանակը:

Հաշվի առնելով նախապես պլանավորման և արտակարգ իրավիճակների դեպքերում պատրաստվածության կարևորությունը՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն շահագործման մեթոդների մասին, որը անդամ պետությանը հնարավորություն է տալիս հակազդելու վտանգներին, որոնք սպառնում կամ կարող են սպառնալ մշակութային և բնության ժառանգությանը: Երկրաշարժերը, հեղեղները, սողանքները, տատանումները, արդյունաբերական աղտոտվածությունը, վանդալիզմը, գողությունը, թալանը, հուշարձանների ֆիզիկական համատեքստի փոփոխությունը, հանքարդյունաբերությունը, անտառահատումը, որսագողությունը, ինչպես նաև հողօգտագործումը, գյուղատնտեսությունը, ճանապարհաշինությունը, շինարարական գործողությունները, զբոսաշրջությունը կարող են դիտարկվել որպես խնդիրներ և վտանգներ: Բարեփոխման կարիք ունեցող ոլորտները, որոնց ուղղությամբ անդամ պետությունն աշխատում է, անհրաժեշտ է մատնանշել:

Տվյալ կետը պետք է թարմացված տեղեկատվություն ներկայացնի բոլոր գործոնների վերաբերյալ, որոնք ամենայն հավանականությամբ կարող են սպառնալ հուշարձանին: Այն պետք է վերաբերի այն սպառնալիքներին, որոնց ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվել:

Հուշարձանի վրա ազդող այդ գործոնների ազդեցության աստիճանի բարձրացման կամ նվազեցման դեպքերում անհրաժեշտ է ներկայացնել գնահատում, ինչպես նաև ներկայացնել, թե ինչպիսի արդյունավետ գործողություններ են ձեռնարկվել կամ պլանավորվում ապագայում դրանք կանխելու համար:

II.6. Մոնիթորինգ

Նկատի ունենալով, որ պարբերական զեկույցի II.3-րդ կետը ներկայացնում է ընդհանուր գնահատում հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության մասով, սույն կետը վերլուծում է հուշարձանի պահպանվածության վիճակն առավել մանրամասնությամբ՝ հիմք ընդունելով պահպանվածության վիճակը չափելի դարձնող հիմնական ինդիկատորները:

Եթե Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանն ընդգրկելիս չեն նախանշվել ինդիկատորներ, ապա դրանք պետք է ներկայացվեն առաջին պարբերական զեկույցում: Պարբերական զեկույցի նախապատրաստումը կարող է հնարավորություն ընձեռել գնահատելու նախկինում ներկայացված ինդիկատորները և անհրաժեշտության դեպքում վերանայել դրանք:

Թարմացված տեղեկատվությունը պետք է ներկայացվի յուրաքանչյուր հիմնական ինդիկատորին համապատասխան: Անհրաժեշտ գործողություններ պետք է իրականացվեն տեղեկատվության հնարավորինս ճշգրիտ և վստահելի է լինելը երաշխավորելու համար, օրինակ՝ կազմակերպելով դիտարկումներ և օգտագործելով նույնատիպ սարքավորումներ և մեթոդներ տարվա նույն օրը և ժամին:

Խնդրում ենք մատնանշել, թե ինչ գործընկերներ են ներգրավված մոնիթորինգի գործընթացում և նկարագրել, թե ինչպիսի բարեփոխումներ է նախատեսում կամ ցանկանում անդամ պետությունը մոնիթորինգի համակարգի բարելավման համար:

Յուրահատուկ դեպքերում Համաշխարհային ժառանգության կոմիտեն և/կամ բյուրոն արդեն իսկ կարող է

քննության առած լինելին հուշարձանի պահպանվածության վիճակը և անդամ պետությանն առաջարկություններ ներկայացրած լինելին կամ ընդգրկման ժամանակ կամ դրանից հետո: Նման դեպքերում անդամ պետությունից պահանջվում է զեկույցել բյուրոյի կամ կոմիտեի ներկայացրած դիտարկումներին և առաջարկություններին ի պատասխան իրականացված գործողությունների մասին:

II.7. Եզրակացությունների ամփոփում և առաջարկվող գործողություններ

Պահպանվածության վիճակի մասին զեկույցի յուրաքանչյուր կետի հիմնական եզրակացությունները հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման վերաբերյալ, պետք է ամփոփվեն և սյունակագրվեն միասին՝

- i) Հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի վիճակի մասին հիմնական եզրակացությունները (տե՛ս վերը նշված II.2-րդ և II.3-րդ կետերը)
- ii) Հուշարձանի կառավարմանը և դրա վրա ազդող գործոնների մասին հիմնական եզրակացությունները (տե՛ս վերը նշված II.4-րդ և II.5-րդ կետերը)
- iii) Հետագայի համար առաջարկվող գործողություն(ներ)
- iv) Պատասխանատու ստորաբաժանում (ներ)
- v) Իրականացման ժամանակահատվածը
- vi) Միջազգային աջակցության կարիքները

Անդամ պետությունից նաև պահանջվում է մատնանշել, թե ինչպիսի փորձառություն է ձեռք բերվել, որը կարող է օգտակար լինել նմանատիպ խնդիրներ կամ հիմնահարցեր ունեցողների համար: Խնդրում ենք տրամադրել այն կազմակերպությունների կամ մասնագետների կոնտակտային տվյալները, որոնց հետ կարելի է կապվել այս նպատակով:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԻ ՁԵՎԱԶԱՓԸ

- Միջազգային աջակցության հայտը հասանելի է <http://whc.unesco.org/en/intassistance> հասցեով և կարող է լրացվել նույն հասցեում:
 - Գործառնական ձեռնարկի 7-րդ բաժինը կտրամադրի լրացուցիչ տեղեկատվություն միջազգային աջակցության վերաբերյալ:
 - Տվյալ հայտի լրացման համար տե՛ս կից ներկայացվող բացատրությունները:
 - Անգլերենով կամ ֆրանսերենով միջազգային աջակցության հայտի ստորագրված բնօրինակները պետք է ներկայացվեն հետևյալ հասցեով.
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության կենտրոն**
7, Դը Ֆոնտենոյ հրապարակ 75352
Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0)1 4568 1876
Ֆաքս՝ +33 (0)1 4568 5570
Էլ. փոստ՝ wh-nominations@unesco.org

1. ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

2. ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

3. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ

	Հրապարակ աջակցություն	Նախապատրաստական աջակցություն	Պահպանություն և կառավարում
Մշակույթ			
Բնություն			
Խառը			

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

a) Արդյո՞ք ծրագիրը կիրականացվի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի տարածքում:

☐ - այո ☐ - ոչ

Եթե այո, ապա խնդրում ենք նշել հուշարձանի անվանումը:

b) Արդյո՞ք ծրագիրը պարունակում է դաշտային բաղադրիչ:

☐ - այո ☐ - ոչ

Եթե այո, ապա որտեղ և ինչպես:

c) Եթե ծրագիրն իրականացվի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի տարածքում, ապա խնդրում ենք մատնանշել՝ արդյո՞ք Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մյուս հուշարձաններն օգուտ կբաղեն, եթե այո, ապա որոնք և ինչպես:

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(խնդրում ենք մատնանշել՝ արդյո՞ք այն ենթադրական է, թե ֆիքսված)

Ժամկետները՝ _____

Տևողությունը՝ _____

6. ԾՐԱԳԻՐԸ՝

☐ - տեղական նշանակության է

☐ - ազգային է

☐ - ենթատարածաշրջանային է՝ տարածաշրջանի մի քանի պետությունների ներգրավմամբ

☐ - տարածաշրջանային է՝ տարածաշրջանի պետությունների մեծամասնության ներգրավմամբ

☐ - միջազգային է՝ տարբեր տարածաշրջանների պետությունների ներգրավմամբ

Եթե ծրագիրն ազգային, ենթատարածաշրջանային, տարածաշրջանային կամ միջազգային բնույթի է, ապա խնդրում ենք նշել մասնակից երկրները/հուշարձանները, որոնք օգուտ կբաղեն ծրագրից:

7. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

a) Խնդրում ենք բացատրել, թե ինչու է անհրաժեշտ այս ծրագիրը (հրատապ աջակցության դեպքում խնդրում են լրացնել 8-րդ կետը տվյալ կետի փոխարեն)

b) Կիրառելիության դեպքում խնդրում են թվարկել ներկայացված աջակցության բոլոր փաստաթղթերը՝

8. ՄԻԱՅՆ ՀՐԱՏԱՊ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՐ

a) Խնդրում ենք նկարագրել հուշարձանին ուղղված փաստացի և հնարավոր սպառնալիքը/վտանգը

b) Խնդրում ենք մատնանշել, թե ինչպես այն կարող է ազդել հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի վրա

c) Խնդրում ենք բացատրել, թե ինչպես է առաջարկվող ծրագիրը կանխելու սպառնալիքը/վտանգը

9. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Խնդրում ենք հստակ սահմանել ծրագրին բնորոշ նպատակները:

10. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

a) Խնդրում ենք հստակ սահմանել ծրագրի արդյունքները:

b) Խնդրում ենք սահմանել ինդիկատորները և դրանց ստուգման միջոցները, որոնք կարող են օգտագործվել այդ արդյունքների նվաճումը գնահատելու համար

Ակնկալվող արդյունքներ	Ինդիկատորներ	Ստուգման միջոցներ

11. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
(ներառյալ առանձին գործողությունները և ժամանակացույցը)

Գործողություն	Ժամանակացույց (ամիսներով)						
Գործողություն							
Գործողություն							
Գործողություն							
Գործողություն							

12. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
(անհրաժեշտ է ներկայացնել Համաշխարհային ժառանգության կենտրոն երեք ամիսների ընթացքում ծրագրի ավարտից հետո)

13. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ, ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՂՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ԵԹԵ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՆՄԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
(մասնագետների, հրահանգավորողների, տեխնիկների և/կամ որակավորում ունեցող բանվորների ինքնությունն արդեն իսկ պարզ լինելու պարագայում խնդրում ենք հնարավորության դեպքում նշել նրանց անունները և ներառել նրանց համառոտ ինքնակենսագրականները)

14. ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ/ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԵԹԵ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՆՄԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

15. ԲՅՈՒՋԵԻ ԲԱՑՎԱԾՔ

- a) Խնդրում ենք հետևյալ աղյուսակում (ԱՄՆ դոլարով) ներկայացնել ծրագրի յուրաքանչյուր առանձին տարրի արժեքի մանրամասն բացվածքը՝ ներառյալ միավորի արժեքը և դրանց բաժանել տարբեր ֆինանսավորման ռեսուրսների միջև

Միավորներ (խնդրում ենք ընտրել ծրագրի համար կիրառելի անվանումները)	Մանրամասներ՝ ԱՄՆ դոլարով (կիրառելի միավորների համար)	Անդամ պետու- թյան ֆինանսավոր- ումը՝ ԱՄՆ դոլարով	Համաշխար- հային ժառանգության հիմնադրամից հայցվող գումարը՝ ԱՄՆ դոլարով	Այլ աղբյուր- ներ՝ ԱՄՆ դոլարով	Ընդամենը՝ ԱՄՆ դոլարով
Կազմակերպական աշխատանքներ • Կայքը • Գրասենյակային ծախսեր • Քարտուղարական աջակցություն • Թարգմանություն համաժամանակյա • համընթաց • աուդիովիզուալ սարքավորումներ • այլ	ԱՄՆ \$ __ / օր __ օրերի համար = __ ԱՄՆ \$ ԱՄՆ \$ __ / օր __ օրերի համար = __ ԱՄՆ \$ ԱՄՆ \$ __ / էջ __ էջերի համար = ԱՄՆ \$ ԱՄՆ \$ __ / ժամ __ ժամի համար = ԱՄՆ \$ ԱՄՆ \$ __ / օր __ օրերի համար = __ ԱՄՆ \$ ԱՄՆ \$ __				
Անձնակազմ / խորհրդատվական ծառայություններ (արժեքներ) • Միջազգային փորձագետ • ազգային փորձագետ • համակարգող • այլ	ԱՄՆ \$ __ / շաբաթ __ շաբաթվա համար = ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ / շաբաթ __ շաբաթվա համար = ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ / շաբաթ __ շաբաթվա համար = ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ / շաբաթ __ շաբաթվա համար = ԱՄՆ \$ __				
Ճանապարհածախս • միջազգային • ճանապարհածախս ներքին ճանապարհածախս • այլ	ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __				
Օրվա կեցության ծախսեր • գիշերակաց • սնունդ	ԱՄՆ \$ __ / օր __ անձանց համար = ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ / օր __ անձանց համար = ԱՄՆ \$ __				
Սարքավորում • •	ԱՄՆ \$ __ / միավոր __ միավորների համար = ԱՄՆ \$ __ / միավոր __ միավորների համար =				
Գնահատում, հաշվետվությունների ներկայացում և տպագրություն • գնահատում • հաշվետվությունների ներկայացում • խմբագրում, • հարմարակազմում • տպագրություն • տարածում • այլ	ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __				
Այլ ծախսեր • Մուտքի արտոնագիր (վիզա) • այլ	ԱՄՆ \$ __ մասնակիցների համար = ԱՄՆ \$ __ ԱՄՆ \$ __				
ԸՆԴԱՄԵՆԸ					

- b) Խնդրում ենք մանրամասնել՝ արդյո՞ք անդամ պետության կամ այլ աղբյուրներից միջոցներն արդեն իսկ մատչելի են կամ երբ դրանք ամենայն հավանականությամբ մատչելի կդառնան:

16. ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

- a) Ազգային մարմին(ներ)

- b) Այլ երկկողմ / բազմակողմ կազմակերպություններ, նվիրատուներ և այլն

17. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ(ՆԵՐ)Ը

18. ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջական անունը _____

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____

19. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

_____ (տվյալ հայտին կցված հավելվածների քանակը)

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱԶԱՓ				ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ																																			
1.	ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ				Միջազգային աջակցության հայտը ներկայացնող անդամ պետության անվանումը																																			
2.	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ																																							
3.	ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ				Մանրամասների համար տե՛ս գործառնական ձեռնարկի 241-րդ պարբերությունը Խնդրում ենք նշել հայցվող աջակցության տեսակը, ինչպես նաև ծրագրով ծածկվող հուշարձանի տիպը: Խնդրում ենք նշել աղյուսակի բնիկներից մեկը: Օրինակ՝ - Ժայռապատկերների մասին դասավանդման ծրագիր՝ <table border="1"> <thead> <tr> <th></th> <th>Հրապարակաշակություն</th> <th>Նախապարտասրականաշակություն</th> <th>Պահպանություն և կառավարում*</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Մշակույթ</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Բնություն</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Խառը</td> <td></td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table> * Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ «Պահպանություն և կառավարումը» այժմ ներառում է նախկին կատեգորիաները՝ - Դասավանդման, հետազոտման համար տրամադրվող աջակցություն - Տեխնիկական համագործակցություն - Կրթության, տեղեկատվության և հանրային իրազեկման համար տրամադրվող աջակցություն					Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*	Մշակույթ				Բնություն				Խառը																			
	Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*																																					
Մշակույթ																																								
Բնություն																																								
Խառը																																								
					Խառը հուշարձանի անվանակարգի պատրաստում՝ <table border="1"> <thead> <tr> <th></th> <th>Հրապարակաշակություն</th> <th>Նախապարտասրականաշակություն</th> <th>Պահպանություն և կառավարում*</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Մշակույթ</td> <td></td> <td></td> <td>X</td> </tr> <tr> <td>Բնություն</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Խառը</td> <td></td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table> - Արևադարձային հողմի հետևանքով վնասված պաշտպանվող անտառային տարածքի համար հրատապ աջակցության հայտ՝ <table border="1"> <thead> <tr> <th></th> <th>Հրապարակաշակություն</th> <th>Նախապարտասրականաշակություն</th> <th>Պահպանություն և կառավարում*</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Մշակույթ</td> <td></td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Բնություն</td> <td>X</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>Խառը</td> <td></td> <td></td> <td></td> </tr> </tbody> </table>					Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*	Մշակույթ			X	Բնություն				Խառը					Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*	Մշակույթ				Բնություն	X			Խառը			
	Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*																																					
Մշակույթ			X																																					
Բնություն																																								
Խառը																																								
	Հրապարակաշակություն	Նախապարտասրականաշակություն	Պահպանություն և կառավարում*																																					
Մշակույթ																																								
Բնություն	X																																							
Խառը																																								

4.	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ a) Արդյո՞ք ծրագիրը կիրականացվի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի տարածքում: ☐ - այո ☐ - ոչ Եթե այո, ապա խնդրում ենք նշել հուշարձանի անվանումը: b) Արդյո՞ք ծրագիրը պարունակում է դաշտային բաղադրիչ: ☐ - այո ☐ - ոչ Եթե այո, ապա որտեղ և ինչպես: c) Եթե ծրագիրն իրականացվի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի տարածքում, ապա խնդրում ենք մատնանշել՝ արդյո՞ք Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մյուս հուշարձաններն օգուտ կքաղեն և եթե այո, ապա որոնք և ինչպես:	
5.	ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ (խնդրում ենք մատնանշել՝ արդյո՞ք այն ենթադրական է, թե ֆիքսված)	Խնդրում ենք մատնանշել ծրագրի մեկնարկի, ինչպես նաև ընթացքի առաջարկվող ժամկետները:
